


**ԿԻԼԻՉԱ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՔԻԼԻՍ**


ԱԼԻՇԱՆ Ա. ՊԱՅՐԱՍԵԱՆ




ԱԼԻՇԱՆ Ա. ՊԱՅՐԱՄԵԱՆ

Կ Ի Լ Ի Չ Ա
Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն
Ք Ի Լ Ի Ս

A II
86224



ԵՐԵՒԱՆ
2001



ԴՏՀ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

Պ 198

Պ 198

ՊԱՅՐԱՄԵԱՆ ԱԼԻՇԱՆ. Կիլիզա. Հայկական Բիլլիս: Պատմական Ուրուագիծ (Վաղ Միջնադարէն-1922 թ.): Եր.: Զանգակ-97, 2001թ. 268 էջ:

Տպագրվում է Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արևելագիտութեան Ինստիտուտի Գիտական Խորհրդի որոշմամբ:

«Կիլիզա. Հայկական Բիլլիս» Մենագրութիւնը կը բովանդակէ Դաշտային Կիլիկիոյ այդ Հայկական հաւաքականութեան ազգային-եկեղեցական, կրթամշակութային ու լեզուական և հասարակական-քաղաքական կեանքի ելևէջներու ուրուագծումը՝ Վաղ Միջնադարէն մինչև Կոտորածները, Եղեռնը և Կիլիկիոյ Հայութեան վերջնական հեռացումը իր բնօրրանէն:


Պ $\frac{0503020913}{0003(01)-2001}$ 2001

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99930-2-165-2

© «Զանգակ 97» հրատ.

© Ա. Պայրամեան



ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԻՇԱՆ Ա. ՊԱՅՐԱՄԵԱՆ

Կ Ի Լ Ի Զ Ա

A II
86224

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Ք Ի Լ Ի Ս

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԻԾ
(ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻՆ ՄԻՆԶԵԻ 1922 Թ.)

ԵՐԵՎԱՆ

2001



ԴՐՎԱՏԱՆՔԻ ԱՐԺԱՆԻ
ՈՒՇԱԳՐԱՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Պատմական Հայաստանի բնակավայրերի՝ գյուղերի, քաղաքների, շրջանների և «աշխարհների» պատմության ուսումնասիրությունը հայագիտության և հայ արևելագիտության առջև կանգնած կարևորագույն խնդիրներից է: Դրա կարևորությունն ավելի է ընդգծվում, եթե հաշվի առնենք մեր բնօրրանի հայաթափումը և վերապրողների թվաքանակի անկասելի նվազումը: Ուստի՝ հայկական բնակավայրերի ուսումնասիրության բնագավառում կատարվող ամեն մի քայլ արժանի է դրվատանքի և խրախուսանքի: Այս տեսանկյունից պետք է մոտենալ արևելագետ-պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու Ալիշան Բայրամյանի «Կիլիզա. Հայկական Քիլիս» աշխատությունը:

Ալիշան Բայրամյանը հայտնի անուն է հայ արևելագետների, ի մասնավորին՝ արաբագետների շրջանում: Նա հեղինակ է մի շարք արժեքավոր աշխատությունների, որոնց մեջ պետք է առանձնացնել նրա «Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.)» մենագրությունը, որը ջերմությամբ ընդունվեց մասնագետների կողմից: Չենք կասկածում, որ նույն ջերմությամբ կընդունվի Ալիշան Բայրամյանի սույն երկասիրությունը ևս, որը գրված է բանիմացությամբ, սիրով ու ջերմությամբ, և պարունակում է առատ, ինքնատիպ և օգտակար նյութ հայկական Քիլիսի պատմության, մշակութային և քաղաքական կյանքի, կոտորածների և ցեղասպանության, ինչպես նաև հարակից այլ հարցերի վերաբերյալ:

Հավատացած ենք, որ սույն ուշագրավ աշխատությունը կծառայի մեր հոգևոր-մշակութային արժեքները և պատմության առանձին էջերը մոռացությունից փրկելու ազնիվ գործին:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան
Հայաստանի Հանրապետության
գիտությունների ակադեմիայի
Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

10 փետրվարի, 2001 թ.
Երևան

ՉՕՆ

Հօրս ու Պայրամեան
Տոհմի Նախնիներուս

և

Հայկական Քիլիսի
Կրթա-Մշակութային Կեանքի
Երախտաւորներու
Յիշատակին

Հեղինակը

Գիրքը
կը հրատարակուի
հեղինակի պաշտօններու
նիւթական միջոցներովը

ինչո՞ւ այս գիրքը:

Քրիստոնէութեան առաջին դարերէն սկսեալ մինչև 1922 թուականը հայկական հաւաքականութիւն մը ապրած և դոյատեւած է Դաշտային Կիլիկիոյ և Հիւսիսային Ասորիքի սահմանագծին վրա գտնուող Կիլիզա (Ciliza) Քիլիս բնակավայրին մէջ:

Այս մասին կը վկայեն Հայր Ղևոնդ Ալիշանի «Միսուան» կոթողային երկասիրութիւնը, Հայր Հ. Ս. Էփրիկեանի «Պատկերապարզ Բնաշխարհիկ Բառարանը», Յ. Տէր Ղազարեանի «Հայկական Կիլիկիա» գիրքը, ինչպէս նաև Կիլիկիոյ վերաբերեալ հայերէն թէ օտարալեզու բոլոր հրատարակութիւնները:

Քիլիս քաղաքը միշտ «Կիլիզա» (Ciliza) դասական տարադարձման ձևով նշուած է Միջնադարեան հայ թէ օտար հրատարակութիւններու քարտէզներուն վրայ, յատկապէս Հ. Ղ. Ալիշանի ղեկավարութեան տակ իրագործուած և 1849-ին վենետիկ հրատարակուած՝ «Հայկական Աշխարհ» պատմական ձեռնակերտ քարտէզին վրայ¹:

Մեծանուն լեզուաբան Հրաչեայ Աճառեանը, Կիլիկեան Միջին Հայերէնի՝ Կիլիկեան Բարբառի մասին խօսելով, կը գրէ.

«Այսպէս է կոչուել Զէյթունի, Մարաշի, Հաճընի... Բիլիսի... մէջ խօսուած հայերէնը»:

«Յուշամատեան Քիլիսի Հայոց» ստուարածաւալ, ազգագրական-տեղագրական աշխատութեան մէջ կը կարդանք.

«Քիլիսի Սուրբ Յովհաննէս եկեղեցիին տեղը կը գտնուէր

1. Claude Mutafian, —La Cilicie au Carrefour des Empires, Paris, 1988, Tome 2, Carte No 75.

նոյնանուն վանքը, որ դարերու հնութիւն ունի: Սոյն վանքը եղած է աղօթատեղի և դպրատուն—գրչատուն, հասցուցած է քահանաներ, կուսակրօն եկեղեցականներ, որոնք ծառայած են Քրիլիսի և շրջակայ հայաբնակ գիւղերու, քաղաքներու մէջ»:

Հակառակ այս բոլոր պատմա—աշխարհագրական, լեզուաբանական փաստագրուած, արձանագրուած, կատարուած կենդանի իրողութիւններուն և աշխարհացրիւ տասնեակ հազարաւոր վերապրող Քրիլիսցի Հայերու սերունդներուն կենդանի առկայութեան, ժամանակակից որևէ տեղեկատուական, հանրագիտական—համայնագիտական հրատարակութեան մէջ ոչ մէկ յիշատակում չկայ Քրիլիսի կամ Քրիլիսի Հայոց գոյութեան վերաբերեալ: Նոյնիսկ 1974—էն 1986 թուականներուն լոյս տեսած «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի 12 մեծածաւալ ու հաստափոր հատորներուն մէջ ո՛չ մէկ խօսք՝ հայաբնակ Կիլիզա—Քրիլիսի մասին, մինչդեռ աշխարհի ամենալեւոտին հայաբնակ կամ այլ բնակավայրերու մասին յիշատակում կայ:

Զարմանալի է ու անհաւատալի, բայց փաստը կը մնայ փաստ... Բացէք Հայկական Սովետական Հանրագիտարանի 12—րդ հատորը՝ «Ք» տառով բառ—յօդուածները (էջ 380—էն մինչև 506): Ի դո՛ւր պիտի փնտռէք «Քրիլիս» բառ—յօդուածը: Չկայ ու չկայ... Մոռցուած է:

Այժմ, անկախ Հայաստանի Հանրապետութեան մէջ հրատարակուիլ սկսած է «Հայկական Համառօտ Հանրագիտարանը» չորս հատորով: Լոյս տեսած են արդէն առաջին երեք հատորները, չուտով լոյս կ'ընծայուի նաև 4—րդ հատորը: Այդ 4—րդ հատորին մէջ լոյս կը տեսնէ մեր կողմէ ուղարկուած «Կիլիզա—Քրիլիս» բառ—յօդուածը¹:


1. «Համառօտ Հանրագիտարան»ի խմբագրութեան ուղարկուած նամակիս և «Կիլիզա—Քրիլիս» բառ—յօդուածի պատճէնները տե՛ս սոյն գրքի վերջաւորութեան:

«Կիլիկիա—Ciliza—Հայկական Քիլիս» Պատմական Ուրուագիծ ուսումնասիրութիւնն ը նախափորձ մըն է Արևմտահայութեան Կիլիկեան հատուածի այդ «փոքր ածու»ի՝ Քիլիսի Հայութեան դարաւոր անցեալի պատմութիւնը կորուստէ փրկելու, միաժամանակ Արևմտահայ Կիլիկեան մշակոյթին ու դպրութեան քիլիսցի նուիրեալներուն մատուցած ծառայութիւնը վերապրողներուն ու յաջորդ սերունդներուն ներկայացնելու համար:

Պատմական այս Ուրուագիծը, ժամանակագրական առումով, չի տարածուիր 1922 թուականէն այն կողմ, երբ Հայութիւնը հարկադրուած լքեց իր բնօրրանը և տարածուեցաւ ի Սփիւռս աշխարհի:

Դեկտեմբեր, 2000 թ.

Հեղինակը



Քիլիսի համալսարանի կողմից (Նկարում՝ 1910-ին):

Ա. ՆԵՐԱԾ ՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԻԱ

ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

(Հին ԴԱՐԵՐԷՆ ՄԻՆՉԵԻ 1922 Թ.)

ԿԻԼԻՉԱ (CILIZA) ՔԻԼԻՍ—Քաղաք Դաշտային Կիլիկիոյ մէջ, սահմանակից Ասորիքի, Այնթապէն հարաւ, Հայէպէն 60 քիլոմետր հիւսիս, 1921 թուականի Ֆրանս-թուրքական Անքարայի պայմանագրի (Յօդուած-8) բերումով կը մնայ թուրքիոյ սահմաններէն ներս:

Եղած է հայաբնակ հնագոյն ժամանակներէն մինչև 1922 թուականը, երբ Հայութիւնը հարկադրուած, վերջնականապէս լքեց իր բնօրրանը:

Կիլիկա-Քիլիսի Հայութեան մասին պատմական ուրուագիծ մը տրամաբանական կ'ըլլայ սկսիլ պատմա-աշխարհագրական հակիրճ ակնարկով մը՝ ընդհանրապէս «Կիլիկիա» բնաշխարհի մասին:

Կիլիկիա (աքքատերէն, ասորա-բաբելերէն HILAKKU, յունարէն KILIKIA, լատիներէն CILICIA, ARMENIA, ARMENIA MINOR), Հ. Ղ. Ալիշանի կողմէ կոչուած՝ «Միսուան» իր նոյնանուն երկասիրութեան մէջ, երկրամաս՝ Փոքր Ասիոյ հարաւ-արևելքը, Միջերկրական ծովու հիւսիս-արևելեան ափին, Տաւրոսեան լեռնաշղթայի հարաւը, Ամանոսեան լեռներու երկու կողմերը մինչև Եփրատ գետի ոլորանը տարածուած: Աշխարհագրական կոորդինատներն են՝ Հիւսիսային լայնութեան՝ 36°—38° Արևելեան երկարութեան՝ 33°—38°:

Ն. Ք. (Նախքան Քրիստոսը) 1550—1350 թուականներուն այդ տարածաշրջանին վրա գոյութիւն ունեցած է Կիլիկեան Թագաւորութիւն մը KIZZUWATNA անունով ծանօթ, որը

շուտով կլանուած է ՀիթթիթԱԿԱՆ կայսրութեան կողմէ:

Ն. Ք. 1200-էն մինչև 8-րդ դար Նոր հիթթիթական անկախ իշխանապետութիւններ գոյատևած են այնտեղ:

Ն. Ք. 7-րդէն մինչև 5-րդ դար Իրանեան ենթակայութեան SYRENNESIS Թագաւորութիւնը գոյատևած է, որմէ յետոյ Ասորեստանը նուաճած է Կիլիկիան: Այնուհետև, մինչև 4-րդ դար Կիլիկիան կը դառնայ պարսկական ԱՔեՄենեան աշխարհակալութեան 4-րդ սադրապութիւնը: ՀԵՐՈՒՈՏԸ կը վկայէ, թէ Կիլիկիոյ Սադրապութիւնը Եփրատ գետով սահմանակից էր Հայաստանի:

Յոյն-պարսկական պատերազմներու ժամանակ (Ն. Ք. 5-րդ դար) Կիլիկեցիները կռիւներուն մասնակցեցան առանձին զօրամասերով՝ պարսկական բանակին մէջ և Կիլիկեցի զօրքերով ղեկավարուող հարիւրաւոր ռազմանաւերով:

Ն. Ք. 4-րդ դարու վերջաւորութեան Կիլիկիան գրաւուեցաւ Մակեդոնացիներու կողմէ: Աղեքսանդր Մակեդոնացիին մահուընէ յետոյ Կիլիկիան անցաւ Սելևկեաններուն՝ Սելևկիոս զօրավարի գլխաւորութեամբ:

Ն. Ք. 2-րդ դարու վերջաւորութեան Հռոմը գրաւեց Կիլիկիան և զայն դարձուց հռոմէական նահանգ (Provincia):

Յուստինիանոս պատմիչը կը վկայէ, թէ Ն. Ք. 83 թ. Հայոց Տիգրան Մեծ Թագաւորը, տեղուոյն բնակչութեան (Հայ, Յոյն) աջակցութեամբ, Դաշտային Կիլիկիան միացուց իր տէրութեան և Հիւսիսային Ասորիքի ու Դաշտային Կիլիկիոյ կառավարիչ նշանակեց Հայոց Բագրատ զօրավարը:

Ն. Ք. 66 թուականին հռոմայեցի Պոմպէոս զօրավարը պարտութեան մատնեց Կիլիկեցիներու 1000 նաւերէ բաղկացած նաւատորմը, որուն հետևանքով Կիլիկիան դարձեալ հռչակուեցաւ հռոմէական նահանգ:

Այս իրավիճակը տևեց մինչև մեր (քրիստոնէական) թուարկութեան 4-րդ դարի վերջերը, երբ հռոմէական կայսրութիւնը երկատուեցաւ և Կիլիկիան մնաց հռոմէական

արևելյան կայսրու թեան՝ Բիւզանդիայի կազմի մէջ:

Քրիստոնէութեան նախնական շրջանին Կիլիկիան ունեցաւ մեծ և առաջնակարգ կարևորութիւն, քանզի Պողոս Առաքեալը, որ բնիկ Կիլիկեցի էր (ծնեալ Տարսոն), իր առաքելութեան երեք մեծ ուղևորութիւնները Անտիոքէն սկսելով՝ անցած է Քիլիսի (Կիլիկացի) ու Այնթապի շրջակայքէն, ուր հաստատած է «եկեղեցիներ»՝ նոր հաւատացեալներու ժողովներ, ժողովարաններ—Ekleziaներ:

Քրիստոնէութեան 4-րդ դարու լատին պատմիչ Ամմիանոս Մարկեդոնիոս կը յայտնէ, թէ երբ Յովհաննէս Ոսկեբերան Կիլիկիա աքսորուած էր (405 թ.), ան այնտեղ հանդիպած է հայկական հոծ զանգուածներու, որոնք ունէին իրենց իշխանները, եկեղեցիները, եպիսկոպոսները: Արդարև, շարք մը հաւաստի աղբիւրներու տուեալներու համաձայն, հնագոյն ժամանակներէ ի վեր Կիլիկիոյ հիմնական բնակիչները եղած են Ասորիները, Հայերը, Յոյները, Հրեաները¹:

Արաբական նուաճողները 7-րդ դարուն թափանցեցին Հիւսիսային Ասորիք և Դաշտային Կիլիկիա, ուր հանդիպեցան հայ զանգուածներու դիմադրութեան: Արաբ Էմիր Ուպայտայի ձիաւորները հասան մինչև Կիլիկա—Քիլիսի շրջակայքը, Կուռիսի (CYRRHUS) վանականները անձնատուութիւն առաջարկեցին, ինչպէս շրջակայքի վասիլու ու թափայա վանքերու բնակիչները: «էմիր Ուպայտան ընդունեց անձնատուութեան առաջարկը և շնորհեց անոնց նոյն իրաւունքները, որ շնորհած էր Անտիոքացւոց»²:

Արաբ Էմիր Սեյֆ Էտ—Տէօվէ 963 թ. Յունուարին մտաւ Հայէս: Սակայն Բիւզանդիայի վասիլ Երկրորդի մրցակից հայազգի զօրավար Պառտաս Փոկասը (Bardas Phocas), որ

1. Հայ ժողովրդի Պատմութիւն, հատոր 3, Երևան, 1976, էջ 672:

2. Յուշամատեան Քիլիսի Հայոց (յետ աչտու՝ միայն Յուշամատեան...), Պէյրութ, 1969, էջ 14:

սկսած էր դէպի Հիւսիսային Ասորիք արշաւանքը՝ նպատակ ունենալով Հալէպ քաղաքը գրաւել Արաբներու ձեռքէն, 985 թուականին գրաւեց Կիլիկա-Քիլիսը, ինչպէս կը վկայէ Անտիոքի Եպիսկոպոս ու ժամանակագիր Եահիան (Yahia)¹:

Այս վկայութիւնը, փաստը շատ կարևոր է Կիլիկա-Քիլիսի պատմութեան համար, քանզի առաջին անգամն է, որ օտար, ասորական պատմագրութեան մէջ կը յիշատակուի Կիլիկա-Քիլիս քաղաքը:

Պառտաս Փոկասի խորհրդաւոր մահուընէ (989 թ.) յետոյ, Վասիլ Երկրորդ 995 թուին կը շարունակէ անոր սկսած արշաւանքը և կ'ազատագրէ Հալէպ քաղաքը Փաթիմիտ Արաբներու ձեռքէն և Հալէպի ու շրջակայքի բերդերուն մէջ կը տեղաւորէ Հայ զօրականներ²:

Առանձին ուշադրութեան արժանի է այս փաստը որպէս ապացոյց Հայ զանգուածներու կեդրոնացման՝ Հալէպի, ապա նաև Կիլիկա-Քիլիսի շրջակայքին մէջ: Արդարև, 8-րդէն 10-րդ դարերուն բիւզանդա-արաբական պատերազմներու հետևանքով շատ Հայեր նոր հաստատուեցան Կիլիկիոյ մէջ: Արդէն 10-րդ դարուն Կիլիկիոյ Հայ բնակչութիւնը այնքան ստուարացեր էր, որ Հայոց Խաչիկ Ս. Արշարունի կաթողիկոսը (973-992) այնտեղ ստեղծեց նոր եպիսկոպոսութիւններ: 11-րդ դարուն, Սելճուք Թուրքերու ներխուժման ժամանակ, Բիւզանդիայի Վասիլ Երկրորդ կայսրը 1021-22 թուականներուն Վասպուրականէն 15 000 ընտանիք Հայեր գաղթեցուց Կիլիկիա ու շրջակայքը:

Այնուհետև, Բագրատունեաց Թագաւորութեան կործանումէն յետոյ, բազմաթիւ հայ իշխանական տոհմեր՝ իրենց ենթակայութեան տակ եզոզ զինուորականութեան ու հարկատու բնակչութեան հետ միասին տեղափոխուեցան Կիլիկիա

1. Mutafian, *La Cilicie...*, Tome 1, p. 355.

2. Mutafian, *La Cilicie...*, Tome 1, p. 355.

ու մերձակայ վայրերը: Հայերը՝ տեղաւորուելով քաղաքներու և աւաններու մէջ, տիրելով ընդարձակ կալուածներու, բերդերու, ամրոցներու, վերջապէս իրենց ձեռքը առին Կիլիկիոյ կեանքի բոլոր ոլորանները:


1042-էն մինչև 1080 թուականները, Դաշտային Կիլիկիոյ կառավարիչն էր Աբլղարիբ Արծրունին: Գանձակեցի Իշխան Օշինը, Գող Վասիլը և Փիլարտոս Վարաժնունին տիրեցին Կիլիկիոյ միւս շրջաններուն: Փիլարտոսը գրաւեց Անտիոքը 1078-ին և որոշ ժամանակ անց տիրացաւ Ազազի, Քիլիսի և Կուռիսի: Եւ Այսպէս ինքնավար հայկական իշխանութիւններ գոյացան Կիլիկիոյ մէջ:

* * *

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ (1080-1198)

Ռուբէն իշխանը, մեծ յաջողութեամբ դիմակալելով բոլոր թշնամիներուն, 1080 թուականին հիմնեց Լեռնային Կիլիկիոյ մէջ Ռուբինեան իշխանապետութիւնը՝ բարեյաջող ապստամբութեամբ թօթափելով բիւզանդական գերիշխանութիւնը ու դառնալով անկախ Բիւզանդիայէն:

Այդ իշխանապետութիւնը յաջողութեամբ յարատեց մինչև 1198 թ., երբ արդէն հզօրացած իշխանապետութեան թագաւոր օծուեցաւ Ռուբէնի տոհմէն Լևոնը, որպէս Թագաւոր Հայոց: Թագաւորական օծումը տեղի ունեցաւ 1198 թ. Յունուար 6-ին, հայկական Ծնունդի օրը Տարսնի Մայր Եկեղեցոյ մէջ և Լևոնը կոչուեցաւ «Թագաւոր Ամենայն Հայոց և Նահանգին Կիլիկեցոց»:




Կիլիկիոյ Հայկական Պետութեանը (1080-1375 թթ.):

Մասշտաբ
 0 15 30 45 60 կմ

Յետագայ տարիներուն Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը երկար պայքար մղեց իր անկախութիւնը պահպանելու և գոյատևելու համար: Այդ պայքարը պէտք է մղուէր մէկ կողմէ խաչակիրներու տիրոջթիւններուն դէմ և միւս կողմէ՝ 11-րդ դարէն սկսեալ Փոքր Ասիա ներխուժող թուրք-Մոնղոլ, Սելճուքներու «սուլթանութիւններու» թշնամանքներուն, բարեկամական յարաբերութիւններու պայմաններուն մէջ իսկ: Մոնղոլներու հետ բարեկամական յարաբերութիւնները, աշխարհաքաղաքական առկայ պայմաններու բերումով վերածեցան տարիներու ընթացքին Հայ-Մոնղոլական դաշնակցային յարաբերութիւններու, որոնք պսակուեցան Հայ-Մոնղոլական բարեկամական պայմանագրով մը: Հետևաբար, 1256-էն 1262 Հայոց բանակը սանձեց Իկոնիայի Սելճուքներու և թուրքմեններու ոտնձգութիւնները և 1259-ին հայ-մոնղոլական զօրքերը թշնամիներէն մաքրեցին Դաշտային Կիլիկիոյ արևելեան կողմերը՝ Մարաշ, Այնթապ, Պէհեանի, Քիլիս ու շրջակայքը, գրաւելով նաև Հիւսիսային Ասորիքը, որուն մէկ մասը, Հալէպ կեդրոնով անցաւ Հայկական Կիլիկիոյ թագաւորութեան իշխանութեան տակ:

Յաջորդող տարիներուն Եգիպտոսի էյուպեան արաբական սուլթանութիւնը դարձեալ ներխուժեց Կիլիկիա: Այդ սուլթանութեան ղեկավարութիւնը անցած էր երկրի ռազմաաւատապետական վերնախաւը հանդիսացող «Մամլուքներու»՝ ձեռքը: Մամլուքները քրիստոնեայ խաչակիրներու դէմ պայքարի մահմետական գլխաւոր զինւորական ուժը դարձած էին և բնականաբար քրիստոնեայ Կիլիկիոյ թագաւորութեան թշնամի: Հայոց Հէթում թագաւորը սպասուած օգնութիւնը

1. «Մամլուքներ»,— Եգիպտոսի արաբական սուլթանութիւնը 13-րդ դարի սկզբին ստեղծեց յատուկ զինւորական ընտրանի «Մամլուքներէ» բաղկացած: Անոնք մահմետականացուած սպիտակամորթ ստրուկներ էին, որոնք զինւորական գործի համար յատկապէս վարժեցուած էին: Յետագային անոնք դարձան երկրի ռազմական աւագանին:



չստացաւ դաշնակից մոնղոլներէն, ստիպուած հաշտութիւն կնքեց Եգիպտոսի սուլթանութեան հետ, որոշ բերդեր զիջելով թշնամիին: Հայ-եգիպտական կռիւները փոփոխակի յաջողութիւններով շարունակուեցան շուրջ մէկ տասնամեակ և 1285-ին Եգիպտոսի Սուլթանին հետ կնքուեցաւ հաշտութեան պայմանագիր:

Քաղաքական իրադրութիւնը հիմնովին փոխուեցաւ, երբ արդէն Փոքր Ասիա մտած Լենկթիմուրի հորդաները հասած էին Կիլիկիոյ սահմանները և Հիւսիսային Ասորիք: Ճակատամարտ տեղի ունեցաւ Ազազ բերդաքաղաքին շուրջ 1287-ին Լենկթիմուրի հորդաներու և եգիպտոսի Մամլուք Սուլթան Մելիք-Ջահեր Պերքուքի զօրքերուն միջև: Լենկթիմուր կործանեց Ազազ բերդաքաղաքը և անոր բնակչութիւնը՝ Հայեր և ուրիշներ գաղթեցին ու հաստատուեցան Քիլիսի մէջ:

Լենկթիմուրի դեպի հիւսիս հեռանալէն յետոյ, 1300 թ. Եգիպտոսի Մամլուքները դարձեալ ներխուժեցին Դաշտային Կիլիկիա՝ Անթապ, Քիլիսէն մինչև Այաս, Փայաս՝ Հայոց (Ալեքսանտրէթի) Ծոցի մատոյցները: Հայոց զօրքերու ուժեղ դիմադրութեան հանդիպելով և Այասի ճակատամարտին խայտառակ պարտութիւն կրելով՝ Մամլուքները նահանջեցին և 1305-ին հաշտութիւն կնքեցին Հայոց Հեթում Բ. թագաւորին հետ:

Այս լարուած ու անորոշ իրադրութեան վերջ տալու և քրիստոնեայ Եւրոպայէն օգնութիւն ստանալու յոյսով, 1307-ին մայրաքաղաք Սիսի մէջ գումարուեցաւ «Ազգային Ժողով» և Արքունիքի ճնշմամբ ընդունուեցաւ Հռոմի կաթողիկէ եկեղեցիին միանալու Պապի առաջարկը: Սակայն ժողովուրդը մերժեց Կիլիկիոյ լատինասէր հոսանքին որոշումը և ներքին պայքար սկսաւ երկրին մէջ, որը հանգեցաւ ընդհանուր երկպառակութեան: Աւելին, այդ որոշումը աւելի սրեց թշնամանքը Կիլիկիոյ հայկական թագաւորութեան դէմ շրջակայ մահմետական սուլթանութիւններու և Եգիպտոսի

Մամլուքներու: Արդարև, անոնք այդ որոշումը ընդունեցին որպէս նոր փորձ քրիստոնեայ խաչակիրները Արևելք հրաւիրելու: Իրավիճակը սրուեցաւ յաջորդող իրադարձութիւններու հետևանքով և հայ-մոնղոլական զինակցութիւնը վերջ գտաւ:

1316-ին նոր Ազգային ժողով գումարուեցաւ Ատանայի մէջ և Պապի անձնական ճշմամբ որոշուեցաւ միանալ Հռոմի կաթողիկէ եկեղեցիին: Այսպիսով ներքին երկպառակութիւնը աւելի խորացաւ և հայկական Պետութեան դիմադրողականութիւնը թշնամիներուն դէմ շատ թուլացած վիճակի հասաւ:

1318-ին Եգիպտոսի Մամլուքները և իրենց դաշնակից Թիւրքմեն Քարամանները դարձեալ ներխուժեցին Կիլիկիա, սակայն Օշին Պալլ հայ զօրավարի ղեկավարութեամբ Հայերը ետ մղեցին թշնամի ներխուժողները: Օշինի մահուընէ յետոյ անոր յաջորդեց իր տասնամեայ որդի Լևոն Ե.—ը 1320 թուին: 1321-էն սկսեալ դարձեալ ներխուժում Եգիպտոսի սուլթանութեան և անոնց դաշնակից Թիւրքմեններու կողմէ և նոր հաշտութիւն կնքուեցաւ Գահիրէի մէջ 1323-ին:

Այնուհետև, Լևոն Ե. թագաւորը Եւրոպայէն օգնութիւն ստանալու յոյսերով նոր բանակցութիւններու սկսաւ Եւրոպացիներուն հետ: Այդ քայլերը դիտուեցան որպէս թշնամանք շրջակայ մահմետական պետութիւններու դէմ և Եգիպտոսի ու Հայկիի էմիրութեան զորքերը դարձեալ ներխուժեցին Դաշտային Կիլիկիա և ասպատակեցին ծովափնեայ շրջանները մինչև Քիլիա քաղաքը, որոնք անցան Եգիպտացիներուն ձեռքը:

Լևոն Ե. թագաւորը յանկարծամահ եղաւ և այսպիսով ընդհատուեցաւ Ռուբինեան-Հեթումեան տոհմի թագաւորական արական ճիւղը: Թագը անցաւ Ռուբինեան իգական ճիւղէն Կոնստանտին Ե.—ի ձեռքը, որը սպաննուեցաւ լատինասէր «Ունիտորներու» կողմէ, որոնք Կիլիկիոյ թագաւորական գահը հանձնեցին Լուսինեան Լևոն 2.—ին 1373 թուականին: Վերջինս իր լատինասէր քաղաքականութեամբ աւելի սրեց շրջակայ մահմետական պետութիւններու թշնամանքը:

Այսպիսի իրադրութեան հետևանքով անխուսափելի պիտի ըլլար ողբերգական վախճանը:

1375 թուականի Յունուար 5-ին, Եգիպտոսի սուլթան Մելիք Աշրաֆի 12 000 զօրքերը ներխուժեցին Կիլիկիա: Անոնց միացան Հալէպի էմիրութեան 15 000 զօրքերը:

Հայկական սակաւաթիւ ուժերը, ամրանալով Սիսի միջնաբերդին մէջ, շուրջ երեք ամիս դիմադրեցին թշնամիներու գրոհներուն և Ապրիլ 22-ին, արդէն ճարահատ, բերդը յանձնեցին թշնամիներուն: Լևոն Զ. թագաւորը, կեանքի ապահովութեան երաշխիք ստացած ըլլալով, գերի տարուեցաւ Գահիրէ, իր հետ տանելով արքունի աւագանին:

Սիսի գրաւումը Հայոց պատմութեան մէջ կը գնահատուի որպէս Հայոց պետականութեան կործանումը: Սակայն Կիլիկիոյ Հայ ժողովուրդը երբեք չհաշտուեցաւ պետական անկախութեան կորուստի հետ և յամառօրէն շարունակեց պայքարը օտար նուաճողներուն դէմ: Յաջողութեամբ դէմ դնելով թշնամիներուն, 1375-էն մինչև 1424 Հայկական Կիլիկիոյ կառավարումը իր ձեռքը առաւ Կոնստանտին Դ.-ի թոռ՝ զօրավար Կոնստանտինը: Լեռնային Կիլիկիոյ մէջ իրենց անկախութիւնը պահպանեցին իշխաններ Թորոսը, Ստեփաննոսը, Կարապետը և ուրիշներ: Մոտ կէս դարեայ հերոսական գոյամարտերու մէջ հիւժուած հայկական ուժերը իվերջոյ տեղի տուին գերակշռող թշնամի ուժերուն առջև: Որոշ հայ իշխանական տուներ, ամրանալով Կիլիկիոյ լեռնային բերդաքաղաքներուն մէջ՝ Ուլնիա, Զէյթուն, Հանըն, Մարաշ..., իրենց կիսանկախ գոյութիւնը պահպանեցին մինչև 19-րդ դարու կէսերը: 1441-ին Հայոց Կաթողիկոսական Աթոռը Սիսէն փոխադրուեցաւ էջմիածին, սակայն Սիսի Կաթողիկոսութիւնը շարունակուեցաւ յետագայ տարիներուն և մինչև օրս՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռ (այժմ՝ Անթիլիաս, Լիբանան):

* * *

Թուրքերը՝ Օսմանի «Պէյուրթիւն»ը աստիճանաբար ընդարձակելով արդէն գրաւած էին ամբողջ Փոքր Ասիան: Սուլթան Մահմուտ 2-ի օրոք, 1453-ին, գրաւած էին Կոնստանդնուպոլիսը և զայն դարձուցած էին Օսմանեան Պետութեան մայրաքաղաքը՝ Ստամպուլ: Կիլիկիան նույնպէս նուաճուեցաւ օսմանեան զորքերու կողմէ 1487-ին:

Սակայն, հետևյալ ժամանակաշրջանին՝ թէ՛ Կիլիկիոյ, թէ՛ Օսմանեան կայսրութեան մնացեալ շրջաններուն մէջ ամենուրեք կը տիրէր աւատապետական սանձարձակ կամայական բռնատիրութիւն՝ «Տերէ-Պէյի»ներու (Չորապետներու) իշխանութիւն:

Լեռնային Կիլիկիոյ մէջ գրեթէ ինքնիշխան էին «Գօպան-Օղլու»ներու Աւշարական թիւրք ցեղի տերէպէյիները: Դաշտային Կիլիկիոյ մէջ կը տիրէին այլ «ձորապետներ»: Քիլիսի մէջ կ'իշխէր «Ճան-Փոլատի» տոհմը մինչև 1585 թուականը: Ճան-Փոլատ անունը ձևափոխումն էր «ժան-Փօլի»: Ան ֆրանկ խաչակիր ասպետ մը եղած էր, հանգամանքներու բերումով մահմետականացած՝ և մնացեր էր որպէս Քիլիսի գաւառի տէր, մենատէր «Տերէ-Պէյի»: Վերջին տարիներուն Ճան-Փոլատի Քիլիսի տիրոջթը կը հասնէր մինչև Հալէպի Մեմլուք էմիրութեան սահմանները:

1506 թուականին Օսմանեան Սուլթան Յապուզ Սէլիմի գերագանց ուժերը պարտութեան մատնեցին Հալէպի էմիրութեան Մեմլուք թագաւոր Ղուրիի զօրքերը, Հալէպի էմիրութիւնը կործանեցաւ և Քիլիսը Հալէպի հետ անցաւ օսմանեան թուրք տիրապետութեան տակ:

Նոյն Յապուզ Սուլթան Սէլիմի վերջին տարիներուն օսմանեան տէրութեան ամբողջ տարածքին տեղի ունեցան «Ճէլայիներու» աղանդաւորական ապստամբութիւններ, խռովութիւններ Սուլթանի կառավարութեան դէմ: Այդ ապստամբական շարժման միացան շատ «Տերէ-Պէյիներ», ինչպէս Քիլիսի Տերէ-Պէյի Ճան-Փոլատը 1605-ին:

Յաջորդ տասնամեակներուն, Օսմանեան կեդրոնական կառավարութեան դէմ ապստամբութիւն բարձրացուց Եգիպտոսի վոիսարքայ Մեմլուք Մուհամմէտ-Ալին: Այնուհետև, անոր որդին՝ Իպրահիմ Փաշան շարունակեց կեդրոնական իշխանութեանց դէմ 1820-ին իր հօրը սկսած արշաւանքները և 1832-ին Հալէպը գրաւելէ յետոյ մտաւ Քիլիս ու կաթազօր դրաւ Քիլիսի մէջ և իշխեց շրջանին մինչև 1840 թուականը: «Ան իշխեց ութ տարի և ձգեց բռնակալութեան սարսափելի իշատակներ: 1840-ին երբ Իպրահիմ Փաշան քաշուեցաւ, Քիլիսը յանձնուեցաւ թուրք օսմանեան կառավարութեան իշխանութեան»¹:

Երբ Իպրահիմ Փաշան քաշուեցաւ հարաւային Թուրքիայէն ու հիւսիսային Սուրիայէն, Օսմանեան Սուլթան Ապտուլ Ազիզը աստիճանաբար ամրապնդեց կեդրոնական կառավարութեան իշխանութիւնը Կիլիկիոյ ու հիւսիսային Սուրիոյ վրայ: Վարչական նոր բաժանումներ կատարուեցան:

1864-էն 1865 Կիլիկիան բաժնուեցաւ Ատանայի ու Հալէպի «վիլայէթ»ներու² (նահանգներու) միջև:

1880-ին, Մարաշի «սանճաքը» անջատուելով Ատանայի վիլայէթէն, մտցուեցաւ Հալէպի վիլայէթի կազմի մէջ, որուն մաս կազմեցին Մարաշի, Այնթապի և Քիլիսի «քազա»ները (գաւառները)²:

Այսպիսով Քիլիսի գաւառը՝ քաղան մնաց Հալէպի վիլայէթի վարչական սահմաններուն մէջ 1865-էն մինչև 1921-ի Ֆրանս-թրքական Անքարայի Պայմանագիրը, որուն ծրուցով մնաց Քեմալական Թուրքիոյ սահմաններէն ներս:

Վերոյիշեալ Ֆրանս-թրքական Պայմանագրի հետևանքով

1. Թուշմատեան..., էջ 59:

2. Վիլայէթ, Սանճաք, Քազա, — Օսմանեան վարչական բաժանումներ են:

Քիլիսի ՀայուԹիւնը հարկադրուած լքեց իր դարաւոր բնօր-
րանը և տարածուեցաւ, Հալէպի վրայով, ի Սփիւռս աշխարհի,
1921 թուականի վերջին ամիսներէն մինչև 1922-ի առաջին
ամիսները, երբ վերջին Հայը հեռացաւ Կիլիզա-Քիլիսէն:

* * *

Բ. ԿԻԼԻԶԱ (CILIZA)–ՔԻԼԻՍ ՏԵՂԱՆՈՒԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՎԱՐԿԱԾՆԵՐ

«Յուշամատեան Բիլիսի Հայոց» ազգագրական-տեղագրական հատորին մէջ «Կարծիքներ Քիլիս քաղաքի և անունի մասին» բաժնին մէջ հեղինակ Համբարձում Պէրպէրեանը կը գրէ.

«Քիլիսի հիմնարկութեան կամ շինութեան թուականը ճշտել հնարաւոր չէ: Սակայն, Խաչակիրներու շրջանէն արդէն վաղուց հիմնուած քաղաք մը ըլլալը որոշ է: Այնպէս, որ Թ–րդ (9–րդ) կամ Ժ–րդ (10–րդ) դարուն գոյութիւն ունեցած է որպէս գիւղ կամ գաւառակ մը»¹:

Արդարև, Խաչակիրներու շրջանին (11–13–րդ դարեր) հայ միջնադարեան մատենագրութեան և քարտեզագրութեան մէջ Քիլիս քաղաքին անունը միշտ լիշատակուած է դասական «Կիլիպա» ձևով և հայկական Կիլիկիոյ պատմութեան մէջ առաջին անգամ լիշատակման արժանացած է 985 թուականին, երբ հայագրի բիւզանդական զօրավար Պառտաս Փոկասը (Bardas Phocas) կը գրաւէ Արաբներու ձեռքէն Կիլիզա–Քիլիսը, ըստ ժամանակագիր Եահյայի (Yahia), Անտիոքի Ասորի եպիսկոպոսին²:

Միջնադարեան Արաբ յայտնի պատմիչ–ժամանակագիր ու աշխարհագրագետ Ապուլ–Ֆէտան³, որը անձամբ մասնակցած է Կիլիկիոյ հայկական թագաւորութեան դէմ Մամլուք–

1. Յուշամատեան... էջ 3:

2. Mutafian, La Cilicie..., Tome 1, p. 355:

3. Ապուլ–Ֆէտա, Իսմայիլ Իպն Ալի (1273–1332), գրած է «Համառոտ Պատմութիւն Մարդկային Յեղի» ժողովածուն:

ներու արշաւանքներուն, կը յայտնէ հետեւեալ կարծիքը մեր քաղաքի՝ Քիլիսի անուան յառաջացման մասին.

«Քիլիս քաղաքը նախապէս «Քալճիս» կոչուած է և մի-քանի դար յետոյ այդ անունը փոխուած ու եղած է «Կիլզ», որովհետև քաղաքին հիւսիսակողմը գտնուող լեռան ստորոտի կրային հանքերէն մեծ քանակութեամբ կիր կը հանէին և հետևաբար «Կիլզ», որ կը նշանակէ կիր, փոխուելով եղած է «Քիլս» և «Քիլիս»¹:

Ապուլ—Ֆէտայի կարծիքը, ենթադրութիւնը ոչ մէկ գիտական հիմք չունի և արդիւնք է կեղծ-գիտական՝ հնչիւնային նմանակութեան վրայ հիմնուած «Ժողովրդական ստուգաբանութեան», որուն հերքման հանգամանօրէն կ'անդրադառնանք յաջորդ էջերով:

Մեր «Յուշամատեն»ի հեղինակն էլ նման կարծիքի է, երբ կը գրէ.

«Տկար և անհաւանական է Ապուլ—Ֆէտայի այս ենթադրական բացատրութիւնը: Մեր Քիլիսի պապերէն լսուած աւանդութիւնը տարբեր է, աւելի ստոյգ և հաւանական, ըստ մեզի»: Ուստի, կը շարադրուի «Մեր Քիլիսի պապերէն լսուած» աւանդութիւնը, որուն համաձայն մեր քաղաքին անունը կապուած է մեր միջնադարեան Սբ. Յովհաննէս վանք—եկեղեցիին—«Քիլիսա»յին հետ: Արդարև, այդ աւանդութիւնը հետևյալն է.

«Քիլիսէն դեպի արևելք, 15 վայրկյանի հեռաւորութեան վրայ կը գտնուի «Իլէզի» կոչուած աւերակոյտ մը, որ Քիլիսի գոյութիւն ունենալէն առաջ բնակչութիւն ունեցող աւան մը եղած է և որուն մեծամասնութիւնը Հայեր եղած են: Իսկ ներկայ Քիլիս քաղաքին տեղն ալ կար Սբ. Յովհաննէս անուանով վանք մը: ... Հայերը Իլէզիէն վանք—եկեղեցի կ'երթեկէին: Ճամբան հարցնող թուրք (ճիշտ այս բառը) դրացիներուն

1. Յուշամատեն..., էջ 3:

կ'ըսէին—եկեղեցի (քիլիսա) կ'երթանք, եկեղեցիէն (քիլիսայէն) կու գանք: Եւ այսպէս, ժամանակի ընթացքին վանքին շուրջը շինուող տուներէն առաջ եկած քաղաքը կոչուած է Քիլիսա, որ առաջ եկած է «քիլիսա» բառէն»¹:

Իսկ «Քիլիսա» բառի լեզուաբանական ստուգաբանութեան, լեզուական հարցին անցնելով, նախօրօք կրնանք յայտարարել, թէ թրքերէն չէ, թրքական ծագում չունի, ինչպէս կը հաւատայ, կ'ուզէ կարծել մեր «Յուշամատեան»ի յարգելի թրքագէտ հեղինակը, այլ՝ սեմական—ասորական ծագում ունի: Ահա՛ թէ ինչպէս: Սուրբ Գրոց աւանդած տեղեկութիւններէն գիտենք, որ Քրիստոսի հետևորդները առաջին դարուն իսկ հաւաքուելով Ասորիքի մեծագոյն ուստան Անտիոքի մէջ «հաւատացեալներու հաւաքոյթներ, ժողովներ» կազմակերպեցին և այդ հաւաքոյթները սկսան կոչել (*knishito*) «քնիշթօ»՝ Քրիստոսի ժամանակի ամենատարածուած սեմական խօսակցական լեզուով՝ արամայերէնով: Բանանք Հրաչեայ Աճառեանի Արմատական Բառարանը՝ հայերէն եկեղեցի բառի ստուգաբանութիւնը գտնելու համար. «Եկեղեցի»—ժողովուրդ, հաւատացեալների հաւաքոյթ, հաւատացեալների հաւաքատեղի, յետնաբար՝ եկեղեցի—տաճար, ... լատիններէն՝ *ecclesia*, յունարէն՝ *ἐκκλησία*, արաբերէն՝ *كنيسة*, ֆրանսերէն՝ *église*, պարսկերէն՝ *kilisa—kilise*, և այլն: Զարմանալի է, որ չէ տրուած հին—ասորերէն՝ արամայերէն ձևը «քնիշթօ», յոգնակի «քնիշթ» արմատ բառը, որը նոյնպէս բառացի կը նշանակէ՝ «մարդկանց, (հաւատացեալներու) հաւաքոյթ, քանզի արաբերէն «քնիսէթ—քնիսէ—քնիսա» բառը յառաջացած է արամայերէն «քնիշէթ արմատ—բառէն (համեմատել՝ եբրայերէն «քնիսէթ» բառի հետ—իսրայելի Ազգային ժողովը կը կոչուի «*knesset—բնետէթ*»): Նշենք, որ ասորերէն (սեմական) [չ] հնչիւնը արտայայտող նշանը եւրոպացիները փոխարինած են [ս] (լատինատառ) [s]

1. Յուշամատեան..., էջ 3—4:

հնչիւնը արտայայտող տառով, օրինակ՝ Շամիրամ—Semiramis, Շումերներ—Sumerians և այլն:

Ասորիները ուղղակի և անմիջական առնչութիւն ունեցած են քրիստոնէութեան հետ, որպէս առաջին քրիստոնեայ հին ժողովուրդներէն մէկը, ինչպէս Հայերս, երբ Արաբները դեռ որևէ առնչութիւն չունէին Քրիստոսի և քրիստոնէութեան հետ: Յայտնի է, որ մեր հայերէն «եկեղեցի» բառը պատճենումն է յունարէն [EKLESIA]—«էքլեսիա» բառի: Բաղաձայններու ձայնափոխութեան լեզուաբանական օրէնքով՝ լծորդ բաղաձայնները [լ] և [ն]=[լ/ո] շատ լեզուներու մէջ մէկը միւսին կը փոխարինեն: Հետևաբար՝ «քնիսա» կրնայ դառնալ «քլիսա»: Այդ օրինակաբար լեզուներէն «քնիշթօ»—«քնիշէթ»—«քնիսէթ»ը դարձած է «քլիսէթ»—«քլիսէ»—«քլիսա»—«քիլիսա»—KILISA: Յիշենք, որ սեմական լեզուներու մէջ բառի վերջին [T] կամ [H] հնչիւն—տառը կը գրուի, սակայն խօսակցական լեզուի մէջ, խօսուածքի ժամանակ չ'արտայայտուիր, չի հնչուիր:

Եզրակացնելով, կրնանք ըսել, որ «Մեր Քիլիսի պապերէն լսուած» աւանդութիւնը իր հոլթեան մէջ ոչ միայն հաւանական է և ստույգ, այլ՝ կը հանդիսանայ միակ տրամաբանական բացատրութիւնը Քիլիս տեղանուան ծագման ուղղութեամբ, մանաւանդ, որ Սուրբ Յովհաննէս վանքը շատ ավելի հին ժամանակներէ մնացած հիմնարկութիւն մը եղած է, քան Թուրք վաչկատուն ցեղերու հաստատուիլը արևելեան Միջերկրականի շրջանը: Բան մը, որ կատարուած է 11-րդ դարու կէսերուն: Ուրեմն, «Յուշամատեան»ի մէջ ներկայացուած Հ. Պէրպէրեանի շարադրանքը՝ «Մեր Քիլիսի պապերէն լսուած աւանդութիւնը» և յաջորդող լրացումները կարելի է ընդունիլ որպէս միակ ճիշտ բացատրութիւնը, ստուգաբանութիւնը մեր քաղաքի անունին ծագման մասին, միայն մէկ սկզբունքային ուղղումով մեր կողմէն՝ «Թուրք դրացիներ»ու կապակցութեամբ—«Յուշամատեան»ի վաստակաւոր

հեղինակը, անտեղեակութեան հետեանքով կատարած է լուրջ պատմա-աշխարհագրական խախտում, ժամանակագրական խախտում, հոգեբանական «տեղախախտում» (dislocation): Արդարև, մեր Սբ. Յովհաննէս վանք-գրչատուն-դպրատունը պետք է գոյութիւն ունեցած ըլլայ 6-րդ կամ 7-րդ դարէն սկսեալ, ըստ Կիլիկիոյ և Հիւսիսային Ասորիքի մասին ասորական, յունական, լատինական, նաև՝ հայկական աղբիւրներու¹: Դեռ քրիստոնէութեան առաջին դարերուն ըստ պատմիչ Ամմիանոս Մարկեղղիոսի, Յովհաննէս Ոսկեբերանը Կիլիկիա աքսորուած ժամանակ (405 թ.) այնտեղ հանդիպեր է հայկական հոծ զանգուածներու, որոնք ունէին իրենց ազգային իշխանները, եկեղեցիները և հոգևոր առաջնորդները, եպիսկոպոսները²: Պատմականօրէն հաստատուած ու քաջ յայտնի իրողութիւն է, որ հնագոյն ժամանակներէ իվեր Կիլիկիոյ և Հիւսիսային Ասորիքի հիմնական բնակիչները եղած են Հայերը, Ասորիները, Յոյները, Հրեաները³: Պատմական փաստ է նաև, որ Հայոց Խաչիկ Արշարունի Կաթողիկոսը (973-992 թթ.) այդ շրջանին մէջ ստեղծեց նոր եպիսկոպոսութիւններ: Ինչպէս վերևը գրեցինք, այդ տարիներուն և մինչև 11-րդ դարի կէսերը ո՛չ մէկ թուրք բնակչութիւն չէր տեղաւորուած, չէր հաստատուած Դաշտային Կիլիկիա կամ Հիւսիսային Ասորիք: Ահա թէ ինչու, «Մեր պապերէն լսուած աւանդութեան» բացատրութեան շարադրանքը կարելի է ընդունիլ «Թուրք դրացիներ» բառերուն տեղ դնելով՝ «Ասորի / Յոյն դրացիներ», քանի որ այդ ժամանակ ո՛չ մեկ թուրք չկար Քիլիսի և շրջանին մէջ:

1. Ա. Պայրամեան-Ալեքսանտրէթի Սանճաքի Հարցը և Միջազգային Դիւանագիտութիւնը 1918-1939 թթ., Անթիլիաս, 1999, էջ 69:

2. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 5, Երևան, էջ 407-408:

3. Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր 3, Երևան, 1976, էջ 672:

Այժմ բացատրենք, թէ ինչպէ՞ս և ինչո՞ւ ժամանակի ընթացքին Կիլիկիա դասական միջնադարեան մատենագրական ընդունուած գրութիւնը փոխուեցաւ Քիլիս-ձևի: Այդ կատարուեցաւ հետևյալ ձևով և լեզուա-հնչիւնային առօրեայ կարիքներու հիման վրայ:

Կիլիկեան հայերէնի (բարբառի) մէջ տեղի ունեցաւ, գրաբարեան-դասական հայերէնի համեմատութեամբ, բաղաձայններու ձայնաշրջութիւն, որը ըստ Հր. Աճառեանի «Ամէն մի լեզուի մէջ էլ մի սովորական երևոյթ է: Անոր (այս ձայնաշրջութեան) հետևանքով [պ, կ, տ, ձ, ճ] ձայնեղ-թրթռուն բաղաձայնները դարձան խուլ (հնչումով), իսկ 7 1 91 [բ, գ, դ, ծ, չ] բաղաձայնները դարձան ձայնեղ-թրթռուն (հնչումով) կիլիկեան հայերէնի մէջ»¹: [Կ] տառը կը հնչուէր այլևս որպէս լատինական [g] տառը:

Այս ձայնաշրջութեան հետևանքով Կիլիկիացի (և Կիլիզացի) Հայերը, որ արդէն կը խօսէին Կիլիկեան հայերէն բարբառով, դասական-գրաբարեան հայերէնի հնչիւնաբանութեան կանոններուն համաձայն տառադարձուած, գրուած անունը իրենց քաղաքին «Կիլիկա» ձևով, չէր համապատասխաներ իրենց արտասանած, հնչած ձևին, որը [Kiliza] էր: Հետևաբար հարկ եղավ քաղաքին անուան գրութիւնը փոխել և համապատասխանեցնել հնչումին, արտասանութեան, որը կատարուեցաւ [Կ] տառը փոխարինելով [Ք]ով: Ստացուեցաւ Քիլիկա, որը աստիճանաբար, ժամանակի ընթացքին դարձաւ Քիլիս:

Այժմ վերադառնանք Ապուլ-Ֆէտա Արաբ պատմիչաշխարհագրագետի առաջ քաշած վարկածի հերքման: Արդէն ըսինք, որ այդ ենթադրութիւնը, որ Քիլիս անունը ծագած (կիր «Կիլիզ-Քիլս-Քիլիս») հնչիւնային նմանակութեան հիման

1. Հր. Աճառեան, - Հայոց Լեզուի Պատմութիւն, հատոր 2, Երևան, 1951, էջ 239-240.

վրայ, բոլորովին զուրկ է իրականութեան հիմքէ, քանզի հակառակ Ասպուլ-Ֆէտայի յայտարարութեան, թէ՛ իբր «քաղաքին հիւսիսային կողմը գտնուող լեռան ստորոտի կրային հանքերէն մեծ քանակութեամբ կիր կը հանէին և հետևաբար «Կիլիս», որ արաբերէն կը նշանակէ կիր՝ փոխուելով եղած է «Քիլս», յետո՛յ՝ Քիլիս»:

Նախ յայտնենք, թէ քաղաքի հիւսիս-արևելեան կողմը գտնուող «լեռը» ոչ թէ լեռ է, այլ բլուր մը «Գարաթաշ» (Ղարա-Տաշ-Սևքար) կոչուող, որը հանդէած է ընդարձակ հողամասի մը վրայ՝ կազմուած ամբողջովին սև ժայռերէ, որոնք լավաներէ գոյացած և հրաբուխի արդիւնք ժայռեր են: Բլուրին գագաթը որոշապէս կը տեսնուի հրաբուխին բերանը (խառնարանը), որուն երբեմն ժայթքած ըլլալը կը վկայեն՝ իր շուրջը գտնուող մոխրանման ու տարածուն ավազները¹:

Բացի այդ բոլորէն, գիտենք, որ կիրը բնական վիճակի մէջ չի գտնուիր հանքերու մէջ, այլ կը ստացուի սպիտակ կրաքարը բարձր ջերմաստիճանի ենթարկելով, իսկ անունէն յայտնի «Գարաթաշ» բլուրին ստորոտը որևէ կրաքար չկայ, այլ՝ միայն սև-մոխրագոյն պազալիթ (basalt) ժայռեր: Ուրիշ կենդանի փաստ ունինք: Մեր Սբ. Յովհաննէս նոր եկեղեցին, տաճարը (օծուած 1873-ին) կառուցուած է Գարաթաշ բլուրի ստորոտէն արդիւնահանուած սև-մոխրագոյն պազալիթէ տաշուած զանգուածային սալերով (իրար ազուցուած երկաթեայ կեռերով) և ո՛չ թէ ճերմակ կրաքարէ սալերով:

Ասպուլ-Ֆէտայի՝ կեղծ, հնչիւնային նմանակութեան վրայ հիմնուած, ոչ-գիտական բացատրութիւնը, վարկածը որպէս հիմք ընդունելով, մինչև օրս արաբական (Սուրիական) պատմա-աշխարհագրական հրատարակութիւնները, այլ սխալ անուանումների կողքին, Քիլիս քաղաքի անունը որպէս

1. Յուշամատեան..., էջ 43:

KALLES (կիր) արձանագրած տպած են միայն վերջերս 1999-ին հրատարակուած Հալէպի նահանգի (Քիլիսի սահմանակից) զբոսաշրջիկային քարտէզին վրայ:

Իսկ, «Ըստ Ապուլ-Ֆէտայի (Քիլիս) քաղաքը նախապէս «Քալճիս» կոչուած է» պնդումը նոյնպէս հնչիւնային նմանակութեան վրայ հիմնուած շփոթմունքի արդիւնք է: Հալէպէն մօտ 20 քմ. հարաւ գտնուող «Քիննէարին» աւանի տեղը Միջին Դարուն կար *Chalcis* կոչուած հռոմէական բերդ-ամրոցը, որը շփոթուած է Քիլիս-Կիլիզայի լատինատառ անուանման *Ciliza*-ի հետ և ո՛չ մէկ կապ չունի Հալէպէն 60 քմ. հիւսիս գտնուող Կիլիզա-Քիլիսի հետ:

Եզրակացնելով, պետք է յայտարարենք, որ Կիլիզա-Քիլիս անուանումը առաջ եկած է Սբ. Յովհաննէս վանք-եկեղեցիի՝ սեմական արմատ բառով՝ *KNISHTO_KNISA-KINISA KILISA*=եկեղեցի յղածքը արտայայտող նոյն բառով:

* * *

Գ. ԿԻԼԻԶԱ-ՔԻԼԻՍԻ
ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ
ՎԱՆՔ-ԳՐԶԱՏՈՒՆ-ԴՊՐԱՏՈՒՆԸ ԵՒ
1873-ԻՆ ՕԾՈՒԱԾ ՆՈՐ ՍՈՒՐԲ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՃԱՐԸ

«Յուշամատեան Քիլիսի Հայոց» աղբիւրագիտական գրքին մէջ հեղինակ Համբարձում Պէրպէրեանը կը վկայէ.

«Քիլիսի Սուրբ Յովհաննէս եկեղեցիին տեղը կը գտնուէր նոյնանուն վանքը, որ դարերու հնութիւն ունի: Սոյն վանքը եղած է աղօթատեղի և դպրատուն: Մէջը աղօթած և գիտակ տարէց Քիլիսցիներէն լսած ենք, որ անիկա եղած է քարայրի ձևով և 3-4 աստիճաններով դետնալիոր վանք մը, ծածկուած՝ խոշոր սիւներով, գերաններով ու կղմինտրներով: Վանքը շրջապատուած եղած է քահանաներու խուցերով, գործատեղիներով և որպէս դպրատուն գործածուող սենեակներով, որոնց մէջ երիտասարդ ուսանողներ կը հետևէին դպրութեան, եկեղեցական ծիսագիտութեան և ընթերցանութեան»¹:

Այնուհետև կը հաստատուի, որ այդ վանքը հասցուցած է քահանաներ և կուսակրօն եկեղեցականներ, որոնք ծառայած են Քիլիսի ու շրջակայ գիւղերուն ու քաղաքներուն մէջ:

Սբ. Յովհաննէս վանքին մէջ ապրած և ստեղծագործած են միաբան գրիչներ, ծաղկողներ, ընդօրինակողներ և, իհարկէ, ընդօրինակելիք գրքեր, ձեռագրեր կային: Հետևաբար ճիշտ կ'ըլլայ հաստատել, թէ Քիլիսի դարերու հնութիւն

1. Յուշամատեան..., էջ 184:

ունեցող Սբ. Յովհաննէս վանքը եղած է կատարեալ վանք-ուսումնարան, գրչատուն: Արդարև, այդ դարաւոր վանք-ուսումնարանէն մնացած շատ մը ձեռագիր մատեաններ գտնուած են, որոնք 1856-ին նոր եկեղեցւոյ շինարարութիւնը սկսուած օրերուն ծրարներու մէջ փաթթուած դրուած են նոր եկեղեցւոյ չորս անկիւններու հիմնաքարերուն ներքև՝ շէնքը նուիրականացնելու, սրբացնելու սխալ և յանցապարտ նպատակով:

Այդ մատեաններէն մէկ հատ կը գտնուի Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի Ձեռագրաց մատենադարանին մէջ, (թիւ 1661) համարակալումով, ինչպէս կը գրէ 1930-ական թուականներուն Բերիոյ (Հալէպի) Թեմի առաջնորդ եղած Արտաւազդ Արքեպիսկոպոս Սիւրմէեան իր «Հալէպահայ Պատմութիւն» գրքին մէջ: Այդ թղթեայ կաշեկազմ, ծաղկուած, երկսիւն ձեռագիրը «Գրուած է 1680-ՌՃԻԹ թուին ի գիւղաքաղաքն է Քիլիս, ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյն ... ձեռամբ ... Մահտեսի Մկրտիչ Դպրին» (լուսապատճէնը տես էջ 35):

Շատ մը նման ձեռագիր մատեաններ կը մնային դեռ հին վանքին մէջ, երբ 1856 թուականին սկսած է շինարարութիւնը Սբ. Յովհաննէս փառաւոր նոր տաճարին: Բայց, դժբախտաբար, ինչպէս կը գրէ «Յուշամատեան»ի յարգելի հեղինակը, «անխոհեմ և տգէտ արարքով» այդ ձեռագիր արժէքաւոր մատեանները անհետացած, փճացած են, յաւիտեան կորուստեան մատնելով մեր այդ հինաւուրց վանքի և Կիլիզա-Քիլիս քաղաքի, բնակավայրի ու Հայրութեան ծագման ու կեանքին, գործունեութեան մասին շատ կենսական և թանկագին տեղեկութիւններ: Իրականութեան մէջ ի՞նչ կատարուած է... Կատարուածը հետևեալն է, -Նոր եկեղեցւոյ, տաճարի շէնքի շինարարութեան սկզբնական օրերուն, հիմնարկեքի ժամանակ (1856-ին), արդէն կիսաքանդ ու գործօն գոյութենէ դադրած հինաւուրց վանքին մէջ գոյութիւն ունե-

«Երուսաղէմի ձեռագրաց մատենադարանին մէջ (թիւ 1661) կայ թղթեայ, երկսիւն, կաշեկազմ, նծոր գիր, ծաղկուած, մասեր հին կտակարանի, դրուած՝ ի Քրիստ 1680 թուականին, Ձէյթունցի Մահտեսի Մկրտիչ Դպիրի ձեռամբ եւ Թէքիրտաղցի Մահտեսի փրիւպոս Դպիրի համար: Կը բովանդակէ նախադրութիւն Առակացն Սողոմոնի, Առակ Սողոմոնի, Ժողովողք, Երգ Երգոց, Երկոտասան Մարդարէք եւլն: Յիշատակարանս կը սկսի այսպէս. — Աւարտեցաւ մարգարէականքս ի թուին՝ Ռձիթ (= 1680), ի գիւղաքաղաքն է Քրիստ, ընդ հովանեաւ Ս. Յովհաննէս եկեղեցւոյն, որ աստ կայ ի յօգնականութիւն ամենայն հայկական սեռից, ի Կաթողիկոսութեան Սուրբ Տանն Կիլիկիոյ Տեառն Սահակայ, ի վայելումն Թէքիրտաղցի Մահտեսի փրիւպոս Դպիրին, որ ստացաւ դստերք դիրքս ի հալալ վաստակի իւրոյ. յիշատակ իւր եւ ծնողացն, որ հանգեալ են ի Քրիստոս, ով ոք հանգիսի սորա կարդալով կամ օրինակելով, լի սրտիւ Աստուած ողորմի ասացէ եւ Աստուած իւրն ողորմեսցի, ամէն: Գրեցաւ ձեռամբ Ձէյթունցի Տէր Յովհաննէսի որդի Մահտեսի Մկրտիչ Դպիրին: Ով ոք մի հայր մերիվ յիշէ՝ ինքն յիշեալ լիցի առաջի Աստուծոյ, ամէն: Հայր մեր որ յերկինս. . . . Քիչ մը անդին ըմ վայելումն Մհտ. ի Տիրացու Պետրոսին. թվ. . . . »

(թիւ 1661) Ձեռագրի լուսապատճէնը:

ցող մագաղաթները, ձեռագրերը դրուած են հիմնաքարերուն տակ: Նպատակը՝... Երևարարութեան հակող բարեպաշտ մեր ազգայինները, պատասխանատու աշխարհական թէ կղերական օրուայ ջոջերը, միամիտ ջերմեռանդութենէ մղուած ցանկացեր են սրբացնել, պատմականացնելով այդպիսով նոր կառուցուող տաճարը, առանց անդրադառնալու, որ կատարուածը տգիտութեան արդիւնք մշակութային ոճիր է: Ոչ ոք՝ ներկայ եղող կղերականներէն ու գիտակից ազգայիններէն, ոչ իսկ տաճարի շինարար-ճարտարապետ՝ Պոլսեցի Յակոբ Խալիֆէ-ին մտքէն չէ անցած, չէ անդրադարձած, որ կատարուածը ահաւոր սրբապղծութիւն է: Թանկագին արժեքաւոր դանձերու կորուստ: Արդարեւ, անկիւնաքարերուն տակ թաղուած այդ դանձերը յաւիտեան կորուստի, փճանալու դատա-

պարտուած էին, մեզ զրկելով շատ կարևոր ու կենսական պատմական տեղեկութիւններէ, ո՛չ միայն Քիլիսի ու հինաւուրց Սուրբ Յովհաննէս վանքին մասին, այլ նաև՝ Քիլիսէն դեպի արևելք 15 վայրկեանի հեռաւորութեան վրայ գտնուող «Իլէպի» կոչուած ու վերջին տարիներուն աւերակոյտի վերածուած բնակավայրի մասին, որը «Քիլիսի գոյութիւն ունենալէն առաջ (հոծ) բնակչութիւն ունեցող աւան մը եղած է և որուն (բնակչութեան) մեծամասնութիւնը Հայեր եղած են», ինչպէս արձանագրուած է «Յուշամատեան Քիլիսի Հայոց» բնագրային աշխատութեան մէջ¹:

Նոյն «Իլէպի» առեղծուածային անուան կը հանդիպինք նաև Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանի համայնագիտական արժեք ունեցող «Ազգապատում» երկասիրութեան մէջ, ուր կը գրուի, թէ «Սուլթան Սիւլէյման Գանունիի նուաճումներուն շարքին ... Կիլիկիոյ Իլէպի գաւառի նուաճումը 1526-ին և ... այս պատերազմներուն հետևանքով Սիս, Տարսոն, Ատանա և Կիլիկիոյ ուրիշ մեծ քաղաքներ վնասներ կրեցին»²:

Վերադառնանք հին վանքէն մնացած ձեռագիր մատեաններուն: Նոր տաճարի հիմնարկէքի օրերուն, բարեբախտ դիպուածով մոռացութեան հետևանքով, այդ մատեաններէն մաս մը մնացած եղած է նոր տաճարին մէջ մինչև 1913 թուականը: Այդ օրերուն, դեռ Արմաշի վանքի աւագ-սարկաւազ եղող երջանկայիշատակ Բաբգէն Կաթողիկոս Կիւլէսէրեանը իր ծննդավայր Այնթապ երթալու ճանապարհին մէկ-երկու շաբաթ Քիլիս մնացեր է ... և իր հետը տարեր է այդ մնացեալ ձեռագիր մատեանները: Զանոնք Արմաշի վաճառ տարաւ, թէ՞ Երուսաղէմի Սբ. Յակոբեանց վանք: Յայտնի չէ:

2000 թուականի փետրուարին, անձնական նամակ մը գրեցի իմ նախկին (ուսուցչական) պաշտօնակից Ամենապա-

1. Յուշամատեան..., էջ 3-4:

2. Յուշամատեան..., էջ 193:

տիւ Թորդոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Պատրիարք Հայոց Սբ. Երուսաղէմի, խնդրելով լուսապատճէնը Երուսաղէմի Զեռագրաց Մատենադարանի [Թիւ 1661] Զեռագիր մատենանի (անուանաթերթի) «Գրուած ի Քիլիս ՌձԻԹ-1680-ին», միաժամանակ յոյս յայտնելով, որ երջանկալիչատակ Նորայր Արքեպ. Պողարեանի կողմէ կազմուած Երուսաղէմի Զեռագրաց լիակատար ցուցակին մէջ գուցէ գտնուի հետքը Բաբգէն աւագ-սարկաւազի Քիլիսէն 1913-ին տարած ձեռագիր մատենաներու:

Քիլիսի Սբ. Յովհաննէս դարաւոր վանքը հասցուցած է քահանաներ ու կուսակրօն եկեղեցականներ, որոնք ծառայած են Քիլիսի ու շրջակայ հայաբնակ գիւղերուն և աւաններուն մէջ: Յաջորդ էջերով կ'անդրադառնանք այդ հարցին «Քիլիսցի Կաթողիկոսներ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Գահին» բաժինով:

Սուրբ Յովհաննէս դարաւոր վանքին հնութիւններէն մնացած էին երեք հատ արծաթեայ կամ արծաթախառն մետաղէ շինուած խաչեր, որոնք կը վկայեն Քիլիսի վանքին ու Հայութեան դարաւոր անցեալի մասին: Այս հնաբոյր եկեղեցական սպասքը 1915 թ. յանձնուած են Հայկալի Հայոց Առաջնորդարանին, ինչպէս արձանագրուած է «Յուշամատեան»ի 187-րդ էջին վրայ (լուսապատճէնը տես էջ 38):

Քիլիսի Սբ. Յովհաննէս վանքին մէջ ապրած ու ստեղծագործած վանական գրիչներու մասին վաւերական մի քանի տուեալներ կու տայ Բաբգէն Սրբազան Կիւլէսէրեանը՝ «Անթէպահայ պատմութեան» Բ. հատոր, էջ 445-446, որոնք առնուած են Անկիւրիոյ Կարմիր Վանքին պատկանող «Կանոնագիրք»է մը:

Այնտեղ արձանագրուած է. «Առաջին գրիչին անունը անծանօթ է: Երկրորդ գրիչը, որ եղած է շարունակող մը, կը կոչուի Փիլիպոս Երէց, վայր՝ Քիլիս, թուական՝ 1703, ստացող անծանօթ: Մաքուր նօտր գիր, կը պարունակէ 34 գլուխ յիշատակարաններ: Երկրորդ գրիչէն՝ ձիւղահամար հատուա-

Ս. Յովհաննէս վանքի հնութիւններէն գտնուած են երեք հատ արծաթեայ կամ արծաթախառն մետաղէ շինուած խաչեր, որոնց վրայի արձանագրութիւնները, զորս կը ներկայացնենք ստորեւ, ցոյց կու տան ևւ կը հաստատեն թէ՛ վանքն ու հայութիւնը Քիլիսի մէջ գոյութիւն ունեցած են հին օրերէն.

Ա. Ոսչ — Յշ. Սր. Օվանէս եկեղեցուն է, Բառնարայ Առաքելոյն մասն է:

Թվի. ՌՃԾԳ = 1183 + 551 = 1734:

Բ. Ոսչ — Հորդի Այ. Սրբ. Միածնի, ճշմրտ. Որդի Այ. Ած. ճշմարիտ Յս. Քս. Յշտկ. է Սր. Ոսչդ, Հասպաշի Որդի Մատութին Ի դուռն Սր. Օվանէսին, Թվին ՌՄԺԹ = 1219 + 551 = 1770: Ամն. Կիրակի ժամարն պարանոցն կախեսցէ
և Յիշեսցէ Տրն.

Գ. Ոսչ — Երմոզեայ Քհչ.ին մասն է:

Յշտկ. Տրն. Յօհաննիս Ի դուռն Ս: Օվանէս Յեկ.

ՌՄԻԱ = 1221 + 551 = 1772:

Ծանօթ. — Սոյն երեք խաչերը յանձնուած են Հալէպի Հայոց Առաջնորդարանին Տիար Համբարձում Պէրպէրեանի ձեռամբ:

Ս. Յովհաննէս վանքի հնութիւններէն՝ խաչերուն
վերաբերող ձեռագրի լուսապատճէնը:

Ժին ներքև «Թվին ՌՃՄԲ. Յունուարի ԺԹ, Ի Քիլիս ձեռամբ Փիլիպոս Երիցոյ, գայս Ճիւղահամար գրեցի: Յետին գրիչ Տէր Ներսիսէ. Ի Թվականիս հայոց ՌՄԻԹ (1780) եղև բարկութիւն Աստուծոյ Ի քաղաքիս Անթապի ... և Ի վերայ քաղաքիս Բիլիս ու Մարտի ամսոյն Թ. օրն սկսաւ պատերազմիլ: Հինգշաբթի օրն պատերազմեցաւ Ի հետ Բիլիսու... Ես անարժան և ոտից կոխան Տէր Ներսէսս գրեցի այս փոքրիկ Թվականս, Որոց փրկեսցէ Տէր Աստուած ամենայն փորձութենէ ամէն: Ես սակաւ գրեցի: Դուք շատ իմանայք»:

* * *


ՔԻԼԻՍԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԿԵՂԵՑԻՆ (1856-1873 թ.)

Ինչպէս նախորդ էջերով յայտնած ենք, Քիլիսի նոր եկեղեցին, տաճարը կառուցուած է նոյնանուն հինաւուրց վանքին տեղը, նոյն հողամասին վրայ, չորս անկիւնաքարերու, հիմնաքարերու ներքեւ վանքին սրբազան ձեռագրերը թաղելով՝ նորակառուց եկեղեցին նուիրականացնելու միամիտ բարեպաշտութեամբ:

Եկեղեցին կառուցուած է ոչ թէ հայկական ոճի նախագրծով, այլ բիւզանդական ոճով, Պոլսեցի Յակոբ Խէլֆէ անունով շինարար ճարտարապետի մը կողմէ, ինչպէս կը տեսնուի 40 էջի լուսանկարէն: Կառուցումը տեւած է 17 երկար տարիներ, 1856 մինչև 1873 թուականը, երբ օծումը կատարուած է Բերիոյ (Հալէպի) Թեմի Առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոս վեհապետեանի ձեռամբ, ի Հայրապետութիւն Մկրտիչ Ա. Քէֆսիգեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի:

Կառուցումը եղած է ամբողջովին սրբատաշ պազալթ քարերով, որոնք պէտք է բերուած ըլլան Քիլիսի հիւսիսարևելեան կողմը գտնուող Սև-Քարեր (Ղարա-Տաշ) բլուրներու հանքավայրէն: Դուրսի պատերու սրբատաշ, զանգուածային խորանարդ սալաքարերը իրարու ագուցուած էին երկաթեայ կեռերով և միացած սովորական շաղախէն գատարճիճէ-կապարէ «շաղախով»: Բարակ սիւներու վրայ հաստատուած՝ կեդրոնական և մուտքի գաւիթի գմբեթներով, բարձր և ընդարձակ, փառայեղ ու հոյակապ, յոյժ գեղեցիկ տեսք ունէր Սուրբ Յովհաննէս նոր եկեղեցին: Ունէր կանանց յատուկ երեք յարկանի վերնատուն: Կանանց մուտքը առանձին էր, արանցը՝ առանձին: Այր մարդիկ, վարը եկեղեցւոյ ընդարձակ տարածութեան վրայ՝ խսիրներու, կարպետներու կամ դորպերու վրայ ծնրաչոք կ'աղօթէին: Նստարաններ կամ



ԲԻԼԻՍԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՒԿՍ ԵԿԵՂԵՑԻՆ:

Շինութեան սկսուած է 1856-ին, աւարտած՝ 1872-ին և օծուած՝ 1873-ին.
քանդուած է 1925-ին...

աթոռներ չկային:

Յիշատակութեան արժանի է նաև եկեղեցւոյ մեծ ու զանգուածային զանգակը, որուն ղողանջը կը լսուէր մէկ ժամ հեռուներէն ալ: Որևէ տուեալ, արձանագրութիւն չկայ, դժբախտաբար, այդ զանգակին ու՞ր և որո՞ւն կողմէ շինուած, պատրաստուած ըլլալուն մասին:

Այս հոյակապ սրբավայր—տաճարը կառուցուեցաւ, շինարարական ծախսերուն մասնակցութեամբը անխտիր բոլոր Քիլիսցի ազգայիներու և անոնց անվերապահ զոհողութիւններով և անձնուէր ջանքերով ու անձնական, ինքնաբուխ ծառայութիւններով, ինչպէս Սուլթան Չափրաստեանինը և ուրիշներու: «Յուշամատենան Քիլիսի Հայոց»ի հեղինակակից հոգեւոյս Տէր Խորէն քինյ. Ներսէսեանը կը վկայէ, թէ Տիկին Սուլթան Չափրաստեանը «Քիլիսի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ շինութեան ժամանակ, տունէ—տուն շրջելով կը համոզէ Հայ տիկիները և անոնց սրտաբուխ նուէրները (ոսկի օղ, մատանի, ապարանջան ևն) հաւաքելով կը ծախէ ու կը վճարէ գործաւորներուն օրավարձերը»¹:

1873 թուականին Սբ. Յովհաննէս նորակառուց եկեղեցւոյ օծումը կը կատարուի Բերիոյ Թեմի Առաջնորդ Տէր Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեանի ձեռամբ: Նոյն առթիւ վեհապետեան Սրբազանը նոր տաճարի ճակատի մուտքի դռան վերևը կը գետեղէ մարմարակերտ «Յիշատակարան» մը՝ իր կողմէ գրի առնուած: (Յիշատակարանի լուսապատճէնը տե՛ս էջ 42):

Քիլիսի Հայտնութիւնը, իր գերագոյն զոհողութիւններով կառուցուած այդ սրբավայրը՝ Սբ. Յովհաննէս նոր եկեղեցին կրցաւ վայելել միայն 45 տարի՝ 1873—էն մինչև 1921, երբ քեմալական հրոսակները տէր դարձան քաղաքին և վերջին Հայը հեռացաւ իր բնօրրանէն՝ դէպի Հայկ և ի Սփիւռս աշխարհի:

Ինչպէս կը կգրէ մեր «Յուշամատենան»ի հեղինակ Հ.

1. Յուշամատենան..., էջ 585:

Ես յարկս չքնաղ, Անեղին տաճար
 Նորոգ կառուցայ արուեստիւք ճարտար,
 Ի վերուստ մինչեւ ի հիմն ի վայր
 Արդեամբ եւ տրօք հայոց բարերար,
 Ջերմ աշխատանօք Ազգայնոց համայն
 Քիլիս քաղաքի հայ ժողովրդեան,
 Անձնուէր ջանիւք Տոհմին Պայրամեան
 Ազնիւ աղայի՝ Կարապետ անուան,
 Յանուն Յովհաննու Մեծ Կարապետի
 Օծեալ կոչեցայ սուրբ եկեղեցի,
 Ի հայրապետութեան Տեառն Մկրտչի
 Վեհին Առաջնոյ Կիլիկիոյ դահի,
 Բնիկ միաբան Երուսաղէմի
 Արթուն եւ ընտիր քաջ հովուապետի:

(Յամի Տեառն՝ 1873)

Յիշատակարանի լուսապատճէնը:

Պէրպէրեանը, «Միայն ու միայն քանդելու համար ստեղծուած թրքական պիղծ ձեռքերը քանդեցին զայն ու հիմնահատակ կործանեցին 1925 թուականին»¹:

Քանդեցին ուժանակով (dynamite), այլ կերպ հնարաւոր չէր, քանի որ կառուցի զանգուածային պազալթէ սալաքարերը իրարու ադուցուած էին երկաթէ կեռերով և միացած իրարու՝ հալած կապարի-արճիճի շաղախով: Կ'ըսուի, թէ քանդողներէն ոմանք խենթացած, մեռած են տեղւոյն վրայ:

Թուրքերը քանդեցին Քիլիսի Սբ. Յովհաննէս հոյակապ տաճարը, որ կ'իշխէր իր վեհութեամբ ո՛չ միայն քաղաքի համայնապատկերին, այլ նաև ամբողջ շրջակայքին վրայ, որպէսզի Հայութեան քարեղէն ներկայութիւնն իսկ ջնջուի մեր բնագաւառի վրայէն ... «Մշակութային Եղեռն»ի սկզբնաւորութիւնն էր:

* * *

1. Յուշամատեան..., էջ 188:

Դ. ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ

ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԵՐԱԽՏԱԻՈՐՆԵՐԸ

Կրթութիւնը կը սկսի դպրոցով, ուսումով, կարգաւ-
գրել սորվելով, իսկ ուսումը կը տրուի, կը ստացուի ուսում-
նարաններու դպրոց—դպրանոց—դպրատուններու միջոցով: Աշ-
խարհի տարբեր կողմերը առաջին դպրոցները, դպրատու-
ները, ուսումնարանները, ուսման կեդրոնները ստեղծուած
են պաշտամունքի կեդրոններու՝ մեհեաններու, տաճարներու,
վանքերու, եկեղեցիներու կից ու անոնց շրջանակներուն մէջ:
Դեռ նախա—քրիստոնէական շրջանին Հայոց մօտ առաջին
դպրոցը, կրթարանը եղած է «Երապամոյն Տաճարի (այժմեան
Զուարթնոցի տարածքի վրայ) քրմական դպրոցը»:

Մերոպ Մաշտոց գրերու գիւտէն անմիջապէս յետոյ
առաջին դպրոց—վարդապետարանը հիմնեց Վաղարշապատի
(Էջմիածնի) մէջ: Այնուհետև, վանքերուն կից և տարբեր
քաղաքներու եկեղեցիներու հարևանութեամբ բացուեցան
դպրոցներ, ուսումնարաններ Հայաստանի ու Կիլիկիոյ տար-
բեր կողմերը—Անի, Կարս, Վան, Կարին, ինչպէս նաև՝ Սիս,
Տարսոն, Սկևռա, Հռոմկլայ: Վանքերուն կից գործող ու
նշանաւոր դարձած ուսումնարանները դարձան մեր առաջին
համալսարանները՝ Գլաձորի, Հաղբատի, Տաթևի, Սանահինի,
Տարսոնի, Սիսի:

Քրիստոնէայ աշխարհի, Հայաստանի, Կիլիկիոյ տարբեր
բնակավայրերուն նման՝ Կիլիզա—Քիլիսի Հայոց կրթական
կեանքը իր սկզբնաւորութիւնը առած է Քիլիսի Սբ. Յովհան-
նէս վանքին մէջ և շուրջը: Ինչպէս իր տեղին նշեցինք,

Որոշ և հաստատուած իրողութիւն է, որ Քիլիսի Սբ. Յովհաննէս վանքը հասցուցած է քահանաներ և կուսակրօն եկեղեցականներ, որոնք ծառայած են Քիլիսի ու շրջակայ հայաբնակ գիւղերուն և աւաններուն մէջ, հասնելով մինչև Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահին, ինչպէս Քիլիսի Յովհաննէս Գ. և Սահակ Ա. Կաթողիկոսները¹:

Արդարև, «Գիւղաքաղաքն Քիլիսի» Սուրբ Յովհաննէս վանք—դպրատան բեղմնաւոր գործունէութեան լաւագոյն ապացոյցն է անոր վանականներէն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական գահին բարձրացած Աթոռակալներ Յովհաննէս Գ. Կաթողիկոս Քիլիսցիին, (Կայծակն մականունեալ) (1525—1539) և Սահակ Ա. Կաթողիկոս Քիլիսցիին, Մէլիսանէճեան (1674—1686):

* * *

Կրթութեան, դպրոցական գործը, Կիլիկիոյ, ինչպէս նաև Օսմանեան Կայսրութեան մնացեալ շրջաններուն մէջ, ոչ-քրիստոնեայ, մահմետական համայնքներուն համար յանձնուած էր թուրք կրօնաւորներուն՝ «Շէյխ-իւլ-իսլամ»ի (իսլամներու Գլխաւոր)ի ղեկավարութեամբ, մզկիթներու կից բացուած «Մէքթէպ»ներու և «Մէտրէսէ»ներու մէջ, ուր կը պատրաստուէին «իմամ»ներ ու «ղատը»ներ: Մինչև 18-րդ դարի վերջերը Սուլթան Օսմանի ստեղծած Պետութեան սահմաններէն ներս ստեղծուած էր իրարու մրցակից և իրարամերժ «ձորասլետներու» (Տերէ-Պէյլիներու) բռնատիրական, կամայական փաստացի տիրապետութիւններ և սուլթանական կեդրոնական իշխանութիւնը դեռ առիթ ու հնարաւորութիւն չէր ունեցած երկրի կրթական—դպրոցական գործով զբաղուելու: Այս վիճակը տևեց մինչև 18-րդ դարի

1. Յուշամատեն..., էջ 184—185 և 190—195.

վերջերը, երբ Եւրոպայի մէջ Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան (1789) ստեղծած համայնակուլ ալիքէն ազդուելով Օսմանեան կայսրութեան Սուլթանները որոշեցին կարգի բերել իրենց երկրի ներքին կենսական խնդիրները՝ առաջին հերթին կրթական-դպրոցական գործը: Այսպէս, Սուլթան Սէլիմ Երրորդը 1790-ական թուականներուն նախաձեռնեց ստեղծմանը կրթական Բարենորոգչական ծրագրի մը:

Քանի որ Թուրքիան չունէր նման գործի իրականացման համար համապատասխան մարդու՝ ուսուցիչներ, մանկավարժներ ու այլ մասնագէտներ, Սուլթանը Եւրոպայէն (Ֆրանսայէն, Շուէտիայէն, Անգլիայէն) բերել տուաւ մասնագէտներ և յետագայ տարիներուն ստեղծուեցան աշխարհիկ դպրոցներ Թուրքիոյ մէջ:

1839 թուականին Սուլթանը հրապարակեց առաջին «Թանփիմաթ»ը¹ (խաթթը-հիւմայուն)-կայսերական հրովարտակը, որուն շնորհիւ 1852-ին ստեղծուեցաւ յատուկ յանձնաժողով՝ «կրթական Խորհուրդ» ուսումնասիրելու համար եւրոպական կրթական համակարգը: Այդ խորհրդի անդամ էր նաև Յակոբ Ամիրա Կրճիկեանը: Ինչպէս հայտնի է Ֆաթիհ Սուլթան Մուհամմէտի հրովարտակով դեռևս 1461 թուականին ստեղծուած էր Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը: Ուստի բնական էր, որ Թուրքիոյ հայկական համայնքներու դպրոցական, կրթական գործի տնօրինումը յանձնուէր Պոլսոյ Հայոց Պատրիարքութեանը: Հետևաբար, 1820-ին Պատրիարքարանը գաւառներու հայկական համայնքներուն տեղեկութիւն ուղարկեց Սուլթանի կողմէ հայկական ազգային դպրոցներ բանալու թույլտուութիւն տրուած ըլլալուն վերաբերեալ:

Գաւառները կարծես արդէն նախապատրաստուած էին այդ գործի համար: Վանի մէջ Խրիմեան Հայրիկը սկսած էր

1. Թանփիմաթ (արաբերէն՝ բարենորոգում)-Օսմանեան կայսրութեան մէջ անցկացուած չափաւոր բարենորոգումներ 1839-1876 թթ.:

ծավալուն կրթա-դաստիարակչական աշխատանք, որուն շնորհիւ 4 000 աշակերտներ կային վանի դպրոցները: Կարինի մէջ 1840-ական թուականներէն սկսեալ կրթա-դաստիարակչական գործը արագ թափ կը ստանայ և նոր կառուցուած Սբ. Աստուածածին եկեղեցւոյ կից կը բացուին Թարգմանչաց և Հռիփսիմեանց վարժարանները տղայոց և աղջկանց համար¹:

Խարբերդի Սբ. Յակոբ եկեղեցիին կից կը բացուի 1820-ի շուրջ առաջին ազգային վարժարանը 80-100 աշակերտներով: Ակնի մէջ Սբ. Աստուածածին և Սբ. Գէորգ եկեղեցիներուն կից բացուած ազգային դպրոցներուն մէջ 1840-ին արդէն կային 250 աշակերտներ, հինգ ուսուցիչներով: Մալաթիոյ մէջ 1839-ին նոր դպրոց կը բացուի մայր եկեղեցւոյ մօտ կառուցուած նոր շէնքին մէջ՝ Առաջնորդ Առաքել վարդապետի նախաձեռնութեամբ, մօտ 100 աշակերտներով:

Գալով Կիլիկիոյ կողմերը, Մարաշի մէջ 1820-ական թուականներէն սկսեալ Սբ. Յակոբ և Սբ. Թորոս վանքերը կը հանդիսանան ուսման առաջին կեդրոնները, իսկ 1828-30-ին Սբ. Գէորգ եկեղեցիին կից կը բացուի նոր դպրոց: Արդէն 1840-ին Մարաշի բոլոր վեց եկեղեցիներուն կից կը բացուին «Ծաղկոց» կոչուող նախակրթարաններ: 1862-ին կը բացուի Մարաշի բարձրագոյն կրթարանը՝ Ճեմարանը: 1850-ին Ամերիկացի միսիոնարները արդէն բացեր էին իրենց դպրոցը: Զէյթունի մէջ 1848-ին կը բացուի դպրոց մը Սբ. Յովհաննէս եկեղեցիին մօտ՝ Գառնեցի Յովհաննէս վարդապետին կողմէ: Հաճընի երեք եկեղեցիներուն կից կը բացուին ազգային դպրոցներ, ուր քահանաները Սաղմոս, Ժամազիրք և Աւետարան կարդալ կը սորվեցնեն աշակերտներուն: Քիլիսի հարեան Այնթապի մէջ վարժապետներ Մուրատը և Աբրահամը հիմքը կը դնեն ազգային վարժարաններու՝ Եւրոպայէն

1. Գ. Ա. Նազիկեան, Արևմտահայ Մանկավարժական Միտքն ու Դպրոցը (յետ այսու՝ միայն Արևմտահայ...), Երևան, 1969, էջ 118 և 126:

ու Պոլսէն դասագիրքեր բերել տալով: Հետաքրքրական է, որ Այնթապ կը հասնի նաև Մոսկուա տպուած հայատառ-թրքերէն Աւետարան, որ «Մոսկովի Աւետարան» յորջորջումը կը ստանայ: 1840-ին բողոքական միսիոնարները Այնթապի մէջ կը բանան դպրոց և եկեղեցի ու յետագայ տարիներուն կը բացուի «Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճը» (Central Turkey College), Այնթապի Ամերիկեան Գոլէճը¹:

Քիլիսի մէջ ժամանակակից դպրոցական ու կրթական գործին վերաբերեալ ունինք գրաւոր վկայութիւններ և որոշ տուեալներ «Յուշամատեան Քիլիսի Հայոց» արժէքաւոր աղբիւրագիտական աշխատութեան մէջ, ուր հեղինակ Համբարձում Պէրպէրեանը կը գրէ:

Մեզի հասած ու մեր քաղած տեղեկութեանց համաձայն, Քիլիսի մէջ մինչև Ս. Յովհաննէս (նոր) եկեղեցւոյն շինութիւնը, այսինքն 1873 թուականը կանոնաւոր դպրոց կամ և դպրոցական դրութիւն գոյութիւն չէ ունեցած: Եկեղեցւոյ շինութեանէն առաջ նոյն վայրին մէջ գտնուող Ս. Յովհաննէս վանքը, աղօթավայր մը ըլլալով հանդերձ, դարեր շարունակ եղած է նաև դպրատուն, գրչատուն, ուր կրթական աշխատանք կատարուած է: Եկեղեցական ուսուցիչներու մասին ստոյգ տեղեկութիւններ քաղել հնարաւոր չեղաւ: Իմացած ենք սակայն, որ անոնք կը բնակէին վանքապատկան խուցերուն մէջ և կ'ապրէին ջուլհակութեամբ, կտաւ գործելով և ուսուցչական չնչին վարձատրութիւններով²:

Իսկ նոր եկեղեցւոյ կառուցումէն ետք, 1873-էն յետոյ, դուրսէն, տարբեր հայաբնակ քաղաքներէն Քիլիս եկած «վարժապետ» ուսուցիչներու մասին Հ. Պէրպէրեան ունի արդէն փաստացի տուեալներ, անձնական յուշեր՝ «անոնց աշակերտած ըլլալով»:

1. Գ. Ա. Նապիկեան, Արևմտահայ... էջ 136, 138, 140.

2. Յուշամատեան..., էջ 116:

Այսպէս, ուսուցչական պաշտոնով Քիլիս եկած են նախ Անջլիդեցի Անտոն վարժապետը, յետոյ Չմշկածաղցի Սարգիս վարժապետը: Այնթապէն եկած Գասպար Խոճա Փիլաւճեանը մի քանի տարի ուսուցչութիւն ընելէ յետոյ, քահանայ օծուած է ու Տէր Ղուկաս կոչուած, հինգ տարի քահանայագործելէ յետոյ, վախճանած է ու թաղուած Քիլիսի մէջ: Գէորգ Խոճան նոյնպէս եկած է Այնթապէն որպէս ուսուցիչ, յետոյ՝ քահանայացած, դարձած է Տէր Ներսէս:

Յիշեալ այդ ուսուցիչներէն Քիլիսի մէջ ամենաերկար ժամանակ մնացողն ու գործողը եղած է Սարգիս վարժապետը, որուն տարիներ՝ 1884-էն սկսեալ աշակերտած ըլլալով, Հ. Պէրպէրեանը իր ականատեսի վկայութիւններն ու անձնական դիտումները, դատողութիւնները, տպաւորութիւնները, զորս ստացած է Սարգիս վարժապետէն, գրի առած է անկաշկանդ կերպով և ամենայն անկեղծութեամբ, առարկայօրէն:

Ընթերցողիս առանձին ուշադրութեանը կ'ուզեմ յանձնել այն հանգամանքը, որ յաջորդ տողերը առերևոյթ կ'ընան անյարիտ թուիլ ուսուցչութեան ու դպրոցական կրթական կեանքին, այսուհանդերձ նման մանրամասնութիւնները հետաքրքրական ու բարացուցական են տուեալ ժամանակաշրջանին Քիլիսի Հայութեան ազգային, ընկերային ու կենցաղային առկայ իրադրութեան և փոխադարձ յարաբերութիւններուն համար:

Այսպէս, աշակերտ Համբարձում Պէրպէրեանը կը յիշէ, թէ «Սարգիս վարժապետը կարճահասակ, նիհարակազմ, կորաքամակ, ճաղատ գլուխով, բարակ ձայնով և ճերմակ խառն՝ դեղին ու ցանցառ մօրուքով մարդ մըն էր: ... Վարժապետը կը բազմէր երկու—երեք աստիճանով բարձր և բարձերով ու բազմոցներով յարդարուած նստարանի մը վրայ: Վարժապետին առջևը գետեղուած էր գրասեղան մը, վրան՝ տրցակ մը գաւազաններ...»

Չմոռնանք, որ «Քիլիսի դպրոցը սովորութիւն դարձած

Տէր-Թողիկեան մեթոտով կը շարունակուէր», ինչպէս կը գրէ Քիլիսցի յայտնի առաջադիմասէր ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը¹, և գաւազաններու տրցակը գրասեղանի բարձունքէն պէտք է սաստէր սրահին յատակին՝ բազմոցներու վրայ ծալապատիկ նստած աշակերտները ... բաց «Սրահը տեւականօրէն աղմկալի, խառնակ ու եռուն վիճակ մը կ'ուեննար»: Վարժապետին ամբողջ ուշադրութիւնը կը կեդրոնանար հարուստ ընտանիքներու գաւակներուն վրայ, որոնք ամէն օր կը կերակրէին զինք առտու և կէսօր: Միւս կողմէ, «Ուշիմ ու աղքատիկ տղաք դժուարաւ և վախով կը մօտենային վարժապետի գահոյքին, կարդալու համար իրենց դասերը»: Գիտցող և չգիտցող չէին զանազանուէր և դասերը յաճախ կը կրկնուէին: Սարգիս վարժապետի օրերուն վարժարանը դասարանային դրութիւն չունէր, իսկ աշակերտները նստած կ'ըլլային ընդարձակ սրահին մէջ տունէն բերուած բազմոցներուն վրայ: Հետեւեալ, ո՛չ դասարան գոյութիւն ունէր և ո՛չ ալ դասամիջոց, դասացուցակի մասին մտածելու կարիք չկար, որովհետեւ այդ ժամանակ գործածուած դասագրքերն էին՝ Քերական, Կանոն, Սաղմոս ևայլն, իսկ տարիքոտ աշակերտները կը սորվէին «ճարտասանութիւն» ըսուած դաս մը, որուն ինչ ըլլալը, այդ օրերու աշակերտ Հ. Պէրպէրեան կ'եզրակացնէ, «մինչև հիմա չեմ գիտեր»:

Այսպիսին էր 1880-ական թուականներու սկիզբը Քիլիսի մէջ դպրոցական կեանքի և ընդհանրապէս ուսման, կրթութեան վիճակը, մինչև 1884, երբ Բերիոյ (Հայէպի) Թեմի Առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեանը ձեռնարկեց ազգային կրթական վարթօնքին:

Թէ՛ ինչպիսի՞ն էր Քիլիսի մէջ կրթամշակութային կեանքի վիճակը մինչև 1884 թուականին սկսուած վարթօնքը, իօսքը տանք Քիլիսի Հայոց կրթամշակութային նախա-

1. Յուշամատեն... էջ 126:

եղեռնեան կեանքի երախտաւորներէն, բազմամեայ վաստակաւոր ուսուցիչ և հասարակական գործիչ՝ Քիլիսցի Սմբատ Ղազէլեանին, որուն յուշերէն կը քաղենք հետևեալ տեղեկութիւնները.

«Քիլիսի դպրոցը, սովորութիւն դարձած Տէր-Թողիկեան մեթոտով կը շարունակուէր, ինչպէս Չմշկածագցի Սարգիս վարժապետին «Վարժոց»ին մէջ: Թաղական Խորհուրդ, դպրոցական հարցերով զբաղուող չկար դեռ: 1830_ական թուականներուն հարևան Այնթապ քաղաքին մէջ սկսած ազգային, կրթական շարժումը ոգևորիչ ու վարակիչ կը դառնայ Քիլիսի ազգային շրջանակներուն մէջ: Ակնէն Քիլիս եկած ու հաստատուած Քիւրքճեանները, Լուսարարեանները, մանաւանդ Յակոբ Ենիգօմշուեանը իր երեք որդիներով՝ Դաւիթ, Համբարձում, Աղեկ (Մտեփան), համախորհուրդ կը ծրագրեն զարկ տալ կրթութեան Քիլիսի մէջ»: Ս. Ղազէլեանը հետաքրքրական մանրամասնութիւններու մէջ մտնելով Ենիգօմշուեան ընտանիքին մասին կը գրէ. «Մտաւորապէս զարգացած ու պատուական Հայեր էին՝ քաղաքիս (Քիլիսի) մէջ միակն ըլլալով գրադարան ունեցողներ»¹:

Այդ երեք ընտանիքները համախորհուրդ կը կազմեն «Արուսեակ» Մշակութային Ընկերութիւնը և 1877_ին Եկեղեցւոյ թաղին մէջ յարմար շէնք մը վարձելով, Արաբկիր քաղաքի շրջանէն Անջրդեցի Անտոն վարժապետ Վահրամեանը կը բերեն որպէս ուսուցիչ: Օգնական ուսուցիչ կը դառնայ Սասունցի ծնողներէ Քիլիս ծնած Կարապետ Թովմասեանը, որը յետագային կը դառնայ քահանայ (Քիլիսի հանրածանօթ Տէր-Վահան Թովմասեանը): Դպրոցը հովանաւորող «Արուսեակ» Մշակութային Ընկերութիւնը լաւ ընդունելութիւն կը գտնէ Քիլիսի Հայութեան կողմէ: Ընկերութեան անդամները ունևորներ, նոյնիսկ հասարակ արհեստաւորներ,

1. Յուշամատեան..., էջ 126:

տարեվճար—ամսավճարներով կը սատարեն մշակութային ընկերութեան զարգացմանը: Սակայն, հանգամանքներու բերումով, ղեկավարութեան մէջ ստեղծուած տարաձայնութիւններու հետեանքով «Արուսեակ» վարժարանը կը փակուի 1884—ին: Միւս կողմէ, Սարգիս վարժապետը իր գործը կը շարունակէր իր «Վարժոց»ին մէջ:

«1884 թուականը, կրթական Զարթօնքի տեսակէտէն օրհնութիւն մը եղաւ Քիլիսի հայութեան համար», կը գրէ Սմբատ Ղազէլեանը իր Յուշերուն մէջ:

Արդարեւ, Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեանը, Հայէպի (Բերիոյ) Թեմի Առաջնորդը, 1884—ին, Սեպտեմբեր 1—ին բացումը կը կատարէ Լևոնեան Դպրոցասիրաց ազգային վարժարանին:

Մկրտիչ Եպիսկոպոսը՝ Քէֆսիզեան կաթողիկոսին հետ յաճախակի Քիլիս այցելած ըլլալով որպէս «պատիկ վարդապետ», արդէն Քիլիսցիներուն ծանօթ, տեղեակ ըլլալով Քիլիսի ազգային կեանքին ու ժամանակի պահանջներուն, ձեռնարկած էր կրթական զարթօնք մը յառաջ բերել Քիլիսի մէջ և արդէն յաջողած էր կազմել «Լևոնեան Դպրոցասիրաց» անունով մշակութային ընկերութիւն մը 500 անդամներով, որուն հետեւած էր նաև տիկնանց ընկերութիւն մը՝ «Չապէլեան», 300 անդամուհիներով: «Լևոնեան Ազգային Վարժարան»էն յետոյ բացուեցաւ առաջին անգամն ըլլալով «Չապէլեան» աղջկանց առանձին դպրոց, որը հաւանօրէն նորութիւն էր այդ օրերուն ամբողջ շրջանին մէջ: Մկրտիչ Սրբազանը Այնթապէն որպէս դպրոցի տնօրէն հրաւիրեց Պոլսեցի Յովսէփ Պատուելի Սիւսեանը: Այդ ժամանակներուն ուսեալ և որակաւոր ուսուցիչներուն, յարգելու և պատուելու համար կու տային «Պատուելի» տիտղոսը, որը «Բողոքական» (Պատուելի քարոզիչի) իմաստ չունէր, այլ՝ կը նշանակէր «պատուոյ արժանի»:

Վեհապետեան Սրբազանը ոչ միայն Քիլիսի կրթական-

դպրոցական զարթօնքին նախաձեռնողը հանդիսացաւ, այլ ան սատարեց նաև Քիլիսի Հայութեան ազգային գիտակցութեան զարգացմանն ու խորացմանը: Իր հովուական հերթական այցելութիւններուն առթիւ, Կիրակի կամ Շաբաթ երեկոները եկեղեցւոյ կից ընդարձակ սրահին մէջ «քարոզախօսութիւններ» կը կատարէր ժողովուրդին «ժողովուրդական» հասկանալի լեզուով ազգային բարոյական հարցերու շուրջ: Իր քարոզախօսութիւններուն այնքան մարդիկ կը հաւաքուէին, որ ամառնային եղանակին, ընդարձակ սրահը լեցուելէն ետք, եկեղեցիէն խսիրներ դուրս կը բերուէին ժողովուրդը բակին մէջ տեղաւորելու համար:

Մկրտիչ Սրբազանի նման դործունեայ և բարեկարգիչ էր նաև որպէս տնօրէն բերուած Յովսէփ Պատուելի Սվաճեանը: Ան մեծազոյն սատարողը եղաւ Քիլիսի դպրոցի բարեկարգման և միաժամանակ «վարժապետութեան»—տւուցչութեան անուան և վարկին բարձրացման, և դպրոցի ղեկավարման արդիականացմանը: Այսպէս, ան վերջ դրաւ աշակերտներուն բազմոցներու («միներ»ներու) վրա նստելու դրութեան: Շինել տուաւ նստարաններ, գրասեղաններ և կարգ ու կանոն մտցուց դպրոցէն ներս: Աշակերտներու կարողութեան, գիտելիքներու համաձայն դասարաններ, ժամանակացոյց և դասացուցակ կազմեց, սենեակները դասարաններու յատկացուց: Որպէս նորութիւն, աշակերտները խմբովին դասարան կ'երթային և պահ մը դաս ընելէ յետոյ, սրահ կը վերադառնային: Տնօրէնը անձամբ աշակերտներու ներկայութիւնը կը ստուգէր և բացականչելուն տունները կ'երթար ու կը հետաքրքրուէր, թէ ինչու բացակայ էր աշակերտը և դպրոց կը կանչէր: Լեոնեան Ազգային վարժարանի բացումը և տնօրէն Յովսէփ Սվաճեանի ներմուծած բարեկարգչական նորութիւնները խթան հանդիսացան, որ ուրիշ դպրոցներ ալ բացուին կամ վերաբացուին Քիլիսի մէջ:

Մկրտիչ Վեհապետեան Սրբազանը ազգային կրթական

զարթօնքին սատարեց նաև նախաձեռնելով Քիլիսի մէջ առաջին անգամ ըլլալով կազմութեանը Քիլիսի եկեղեցւոյ համայնքին Թաղական Խորհուրդի մը: Արդարև, համաձայն Հայոց Ազգային Սահմանադրութեան (հրապարակուած Պոլսոյ մէջ 1863-ին) տրամադրութեանց, Կիրակի օր մը Քիլիսի ամբողջ Հայութիւնը հրաւիրուեցաւ եկեղեցի և կից ընդարձակ սրահին մէջ հաւաքուած ժողովուրդը առաջին անգամ ըլլալով առիթը ունեցաւ կեանքի մէջ կիրարկելու Ազգային Սահմանադրութեան ժողովուրդավարական սկզբունքները: Այդ նախափորձ մըն էր և, ինչպէս ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը կը գրէ իր «Յուշերուն» մէջ, «Ուսուցիչներ, աշակերտներ «ըստ կամս» քուէներ կը գրէին և ներկայ եղող ժողովուրդէն ամէն մէկը այդ գրուած քուէաթղթիկներէն հաս մը առնելով կը նետէր քուէատուփին մէջ», ինչ որ միակ գործնական հնարաւոր միջոցն էր, հաշուի առնելով առկայ պայմանները և հասարակ ժողովրդի գրաճանաչութեան և կրթական մակարդակը:

«Ազգային Սահմանադրութեան տրամադրութեանց կիրարկումով, (ինչպէս Թաղական Խորհուրդի ընտրութիւնը) կը գրէ Ս. Ղազէլեանը, ջոջ աղաները գործէ քաշուած ըլլալնուն՝ միայն Քէֆսիզեան Մկրտիչ Կաթողիկոսը իր կողմէն Աթոռակալ նշանակած էր Պայրամեան Յովսէփ Աղան, որ պսակի արտօնագիր կու տար, կէս մէճիտ տուրք դանձելով ի հաշիւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռին: Դպրոց, թաղականութիւն, դանձապետութիւն աղաներու ձեռքէն առնուած էին¹:

Ազգային կրթական զարթօնքի, Ազգային Սահմանադրութեան տրամադրութիւններուն համաձայն Թաղական Խորհուրդի ընտրութեան և այլ նման ձեռնարկումներու հետեւանքով յառաջացած ընդհանուր ոգևորութիւնը խթան

1. Յուշամատեն..., էջ 133.

հանդիսացաւ Լևոնեան Ազգային Վարժարանի նմանողութեամբ ուրիշ դպրոցներ ալ բանալու կամ վերաբանալու:

1887—ին Պայրամեանները, իրենց համախոհ Գասարձեանները եկեղեցւոյ շրջափակին մէջ բացին «Հայկապեան» դպրոցը՝ «Հայկազեան» մշակութային ընկերութեան հովանաւորութեամբ: Այդ ընկերութիւնը շուտով ունեցաւ 150 անդամներ, ընդ որում Պայրամեան մեծ գերդաստանի չորս եղբայրները՝ իրենց 8—10 երիտասարդ զաւակները, նաև իրենց փեսաները, հեռաւոր ու մօտաւոր ազգականները, որպէս ուսուցիչ վարձելով Չմշկածագցի Սարգիս վարժապետ Բագրատեանը, որը սկսաւ իր գործին եկեղեցւոյ Առաջնորդարանի շէնքին մէջ: Ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը այս առթիւ կը գրէ.

«Պայրամեան շրջանակի ազգայինները և վաղեմի ուսուցչիս հեզ ու խոնարհ բնաւորութեան, բարեպաշտութեան ու եկեղեցասիրութեան հիացողները իրենց զաւակները սիրալոյսովար Արուսեակէն ու Լևոնեանէն քաշելով, Հայկազեան վարժարանը բերած էին, որով աշակերտութեան թիւը 150—ը անցած էր:

Հոգաբարձութիւնը պէտք կը տեսնէ օգնական ուսուցչի մը և Սարգիս վարժապետ Բագրատեանի հետ խորհրդակցաբար՝ յարմար կը տեսնեն զիս հրաւիրել պաշտօնի՝»:

1889—ին Տոքթ. Տիգրան Էնֆիէճեանի, Ղալիկեաններու, Քէշիշեաններու, Հելլունեաններու, Գայբեկեաններու և այլ համախոհներու խմբակցութեան կողմէ վերաբացուեցաւ «Արուսեակ» վարժարանը: Աղէկ Աղա Ենիգօմշուեանը իր տան դուրսի բակը տրամադրեց վարժարանին: Այնթապէն Գէորգ Պօյաճեան անունով մէկը որպէս ուսուցիչ բերին: Ան շրջանաւարտ էր Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանէն: Դպրոցի առաջին տնօրէնը եղաւ Այնթապի Գոլէճի կարող շրջանաւարտներէն Նիկողոս Սաթճեանը: Ուսուցիչ Գէորգ

1. Յուշամատեն..., էջ 133-134.

Պօյաճեանը քահանայ ձեռնադրուեցաւ ու դարձաւ Տէր Ներսէս Պօյաճեան: Տնօրէն Սաաթճեանը նուիրուած մանկավարժ մըն էր և շատ օգտակար ուսուցիչ մը եղաւ: Ան մեծ համակրանք վայելեց «Արուսեակ»ի շրջանակէն ներս, մանաւանդ իր տնօրինութեան օրով եկեղեցւոյ հիւսիսային կողմը կառուցուեցաւ «Արուսեակ» շէնքը, որուն վերևի յարկը կը գործածուէր ամառը, իսկ ներքևի յարկը՝ ձմեռը: Սաաթճեանը զրպարտուեցաւ հակառակ հատուածի մը կողմէ և կոտրած սրտով հեռացաւ ուսուցչական ասպարէզէն և գնաց, դարձաւ բժիշկ:

Սաաթճեանի հեռանալէն յետոյ, Քիլիս հրաւիրուեցաւ Այնթապի վարդանեան կրթարանի փայլուն շրջանաւարտներէն Պերճ Մոմճեանը, որ յետագայ տարիներուն դարձաւ Տէր Սահակ Մոմճեան:

Գալով «Հայկազեան» դպրոցին, այնտեղ ներքին ֆինանսական վիճակը դժուարութիւններ ստեղծեց և ուսուցիչներուն չնչին ամսականները սկսան մնալ անվճար: Ընկերութեան անդամները իրենց անդամավճարները անկանոն կը վճարէին և Սարգիս վարժապետին հին շրջանէն իվեր ձրի կարդալու վարժուած աշակերտներուն ծնողները ուսման վարձը չէին վճարեր: Դպրոցի հոգաբարձութիւնը, ճարահատ, կը դիմէ Պոլսոյ Միացեալ Ընկերութեան: Միացեալը, մի քանի ամիս յետոյ սնտուկ մը դասագիրք կը ղրկէ, որպէսզի ծախուի՝ աշակերտներուն և ուսուցիչներուն ամսականները վճարուին: Այդ ալ չօգնէր: Այդ վիճակէն դուրս գալու միակ միջոցը կը գտնուի—... Սարգիս վարժապետը հրաժարեցնել և դպրոցը յանձնել ուսուցիչ Սմբատ Ղազէլեանին:

Սարգիս վարժապետին մեկնումէն ետք Սմբատ Ղազէլեանը իր յարաբերութիւնները կը սերտացնէ «Արուսեակ» վարժարանի նոր ուսուցիչ—տնօրէն՝ Պերճ Մոմճեանի հետ:

Պերճ Մոմճեանը «դժուար առաջարկ» մը կը ներկայացնէ Սմբատ Ղազէլեանին հետևյալը ըսելով. «Հոս Քիլիսի մէջ երեք վարժարաններ կան (Արուսեակ, Լեոնեան, Հայկազեան):

Մենք, երիտասարդներս, պէտք է աշխատինք այս անջատ ուժերը միացնել: Այն վարժարանը, որ ուժ մը չի ներկայացնել և ... ազգին միասնականութեան արգելք կը հանդիսանայ, այդ հաստատութիւնը պէտք է մէջտեղէն վերցուի: Այդպիսին է Հայկազեան վարժարանը: Զգէ դպրոցը, թող գոցուի, յառաջիկայ շրջանին քովս կու գաս որպէս օգնական: Յետոյ մնացած երկու վարժարաններն ալ կը ջանանք միացնել՝ յարմար ժամանակին»:

1890-ի դարնան Սմբատ Ղազէլեանը իր հրժարականը կը ներկայացնէ Հայկազեան վարժարանի հոգաբարձութեանը, յետագային հոգաբարձութիւնն ալ կը ցրուի և Հայկազեան վարժարանը կը դադրի գոյութիւն ունենալէ: Բայց Ղազէլեանի և ուսուցիչ Պերճ Մոմճեանի միջև սերտ յարաբերութիւնները կը հասնին մտերմութեան և գաղափարական միասնական գործունեութեան՝ չափահաս երիտասարդներու համար գիշերային դասընթացքներու կազմակերպում և ազգասիրական-հայրենասիրական կազմակերպչական աշխատանք՝ «Հնչակեան» երիտասարդական միութեան ստեղծում:

Քաղաքական իրադրութեան վատթարացման հետեանքով, հետապնդումներէ խուսափելով Սմբատ Ղազէլեանը 1895-ին կը հեռանայ Քիլիսէն և կը հաստատուի Ֆրանսա, Անգլիա: Մինչ այդ, Արուսեակ վարժարանի պատասխանատուները գործէ կը քաշուին և դպրոցի գոյքերն ու գիրքերը կը յանձնուին Ազգային Լեոնեան վարժարանի պատասխանատուներուն՝ Թաղական Խորհրդին: «Արուսեակ»ի ուսուցիչ Պերճ Մոմճեանը քահանայացիեր ու Տէր-Սահակ Մոմճեան դարձեր էր:

Վրայ կու գան 1995-96 թուականներու չարաղէտ օրերը, Համիտեան կոտորածները ամբողջ երկրին մէջ, նաև Քիլիս: Այդ մասին կ'անդրադառնանք առանձին գլուխով՝ «Քիլիսի Հայութիւնը 1895-96 թթ. Կոտորածներու և 1909 թ. Ատանայի (Կիլիկիոյ) Կոտորածներու Օրերուն»:

Արհաւիրքին անցնելէն յետոյ, Քիլիսի Հայութիւնը իր վերջին տարիներու սարսափէն սթափած՝ դարձեալ ոտքի կանգնած էր: Ազգային կրթական գործերու ղեկավարութիւնը երիտասարդները իրենց ձեռքը առած էին: Ազգային վարժարանի հոգաբարձութիւնը կազմուած էր Հնչակեան երիտասարդներէ: Կրթական գործը դրուած էր լաւ հունի մէջ: Բնիկ Քիլիսցի Համբարձում Պէրպէրեանը Այնթապի Գոլէճը աւարտած ըլլալով, վերադարձած էր Քիլիս և տրամադիր էր ուսուցչական պաշտօն ստանձնել: Ալպսթանցի Գէորգ Պօյաճեան, գոլէճական, երաժիշտ-ձայնագրագէտ, ուսուցչութեան հրաւիրուած էր: Երուսաղէմի Ժառանգաւորացը աւարտած Յովհաննէս Ներսէսեանը կանչուած էր Քիլիս, իր ծնընդավայրին դպրոցը պաշտօնավարելու: Յովհաննէս Ներսէսեանի ղեկավարութեամբ Լևոնեան վարժարանը իր գոյութիւնը շարունակեց մինչև 1903-1904 ուսումնական տարին: Յ. Ներսէսեանին օգնական ուսուցիչն էր Քիլիսցի Յարութիւն Շիրինեանը: Մինչև 1903 թուականը Լևոնեան ազգային վարժարանին մէջ պաշտօն վարած են հետևեալ ուսուցիչները.

Սմբատ Ղազէլեան, Գրիգոր Խէլֆէ Նալպանտեան, Ալպսթանցի երաժիշտ-ուսուցիչ Գէորգ Պօյաճեան, Հասան-Պէլլիցի Ստեփան Քեշիշեան, Այնթապցի Սմբատ Տէր-Պօղոսեան, Վահան Պասթաճեան և Մարաշցի Տաճատ Տաքէսեան:

1903 թուականի սկիզբները ծնունդ առաւ նոր մշակութային միութիւն մը «Լուսասիրաց Մշակութային Ընկերութիւն» անունով՝ Պասմաճեաններու, Ենիօսմշուեաններու և Շամամեաններու նախաձեռնութեամբ: Անոնք Թաղական Խորհուրդէն խնդրեցին «Արուսեակ» դպրոցին շէնքը (Արուսեակ դպրոցը արդէն գոյութիւն ունենալէ դադրած էր): Թաղականութիւնը չմերժեց անոնց առաջարկը, հաշուի առնելով, որ նոր բացուելիք «Լուսասիրաց» դպրոցին մէջ պիտի պաշտօնավարեն չորս Քիլիսցի ուսուցիչներ՝ Այնթապի գոլէճէն շրջանաւարտ Համբարձում Պէրպէրեանը, փորձառու



Նստած՝ ձախէն աջ. 1. Գրիգոր Խէլֆէ Նալպանտեան (քիլիսցի), 2. Տաճատ Խոճա Տաքեւեան (մարաշցի), 3. Սմբատ Ղազէլեան (քիլիսցի):

Ոտքի՝ ձախէն աջ. 1. Յովհաննէս Խոճա Թիրինկէեան (քիլիսցի), 2. Արմենակ Ղալիկեան (քիլիսցի), 3. Գարեգին Խոճա— երաժիշտ (Ալպսթանցի):

ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը, Գրիգոր Խէլֆէ Նալպանտեանը և Յովհաննէս Թիրինկէեանը: Կազմուեցաւ Լուսասիրաց դըպրոցի հոգեբարձութիւն՝ Աղէկ Աղա Ենիգօմչուեան, Յակոբ Պասմաճեան և Յարութիւն Շամամեան: Դպրոցին տնօրէնութիւնը հանձնուեցաւ Համբարձում Խոճա Պէրպէրեանին: Որոշ ժամանակ անց, երբ Լեոնեան վարժարանը վերջ տուաւ իր դոյութեան, Լուսասիրացը մնաց որպէս Քիլիսի Միացեալ Ազգային վարժարան:

Լուսասիրացի գոլէճական տնօրէն Յամբարձում Պէրպէրեանը կը գրէ իր «Յուշեր»ուն մէջ.

Մեր առաջին գործը եղաւ կարգ ու կանոն հաստատել դպրոցէն ներս: Աշակերտութեան տարիքին և կարողութեան

համաձայն զատորոշեցինք դասարանները: Աղջկանց բաժինը առանձին և տղայոց բաժինը առանձին: Դասարանները կոչուեցան վարէն սկսեալ՝

1. Երեխայից
2. Կրտսերագոյն
3. Կրտսեր
4. Երէց
5. Երիցագոյն
6. Աւագ

Վեց դասարան նախակրթարանի բաժին, իսկ մանկապարտէզը առանձին, կը կոչուէր «Ծաղկոց»¹:

Լուսասիրացի այդ առաջին ուսումնական 1903-1904 տարին Հ. Պէրպէրեանի պաշտօնակից ուսուցիչներն էին հետեւեալները-Ստեփան Խոճա Քէշիշեան, Մարաշցի Մարտիրոս Հեղինեան, Գրիգոր Խէլֆէ Նալպանտեան, Յարութիւն Նալպանտեան, Գէորգ Նալպանտեան, Յակոբ Պօղոսեան, Սամուէլ Քէօշկէրեան: Ուսուցչուհիներն էին՝ Հայկանուշ Մանուշակեան և Զարուհի ու Ռահէլ Քէօշկէրեան քույրերը:

Աշակերտութեան թիւը հասած էր 1 500-ի՝ 1 000-ը մանչ, 500-ը աղջիկ:

Քիլիսի Լուսասիրաց Միացեալ Ազգային Վարժարանին մէջ կ'աւանդուէին հետեւեալ դասերը (առարկաները).

Լեզուներ՝ հայերէն, թուրքերէն և անգլերէն (տնօրէնը Այնթապի Ամերիկեան Գոլջճէն շրջանաւարտ էր) և ուսողութիւն (մաթեմատիկա), պատմութիւն և «գիտական դասեր»:

Լուսասիրաց Ազգային Միացեալ Վարժարանը 1903-էն 1909 բոլորեց վեց ուս-տարիներու փայլուն ու արդիւնաւէտ շրջան մը և բարձրացաւ, հասաւ բարձրագոյն նախակրթարանի մակարդակին, որուն շնորհիւ դպրոցի շրջանաւարտները դիւրութեամբ կ'ընդունուէին Այնթապի Ամերիկեան Գոլջ-

1. Յուշամատեն..., էջ 119-120:



Սոյն խմբանկարը կը ներկայացնէ Քիլիսի դպրոցին ուսուցչութիւնն ու աշակերտութիւնը, նկարուած՝ 1908-ին եկեղեցոյ բակին մէջ:

Ճը և Հալէպի Պետական Մանկավարժական Հիմնարկը՝
«Տար-էլ-Մաուլլիմին»:

* * *

Ստորև, պատմութեան համար կ'արձանագրենք Քիլիսի Հայուլթեան կրթական կեանքի կենդանի պատկերը ներկայացնող հետևյալ տուեալները:

1903-1909 ուսումնական տարիներու ընթացքին Քիլիսի Լուսասիրաց Բարձրագոյն նախակրթարանը տուած է հետևյալ չորս խումբ շրջանաւարտները.

Ա.-Գրիգոր Խորոզեան, Գրիգոր Մարաշլեան, Միհրան Զիլինկիրեան, Միհրան Վարպետեան, Թովմաս Թովմասեան:
Բ.-Գրիգոր Գայբէկեան, Յովհաննէս Մարաշլեան, Միհ-

րան Չափրաստեան, Միհրան Քէշիշեան, Կարապետ Պիւլպիւլեան, Հրանդ Պալեօզեան:

Գ.—Թորոս Խորոզեան, Յակոբ Ազէզեան, Կարապետ Տարազճեան, Եագուպ Շիթիլեան, Արամ Բչազճեան, Յովսէփ Ենիգօմչուեան, Լևոն Մխսի Կրպոյեան, Յակոբ Տէր Խորէնեան և Արամ Սոլազեան:

Դ.—Յակոբ Թ. Չաղլազեան, Տիգրան Հէքիմեան, Վահան Պասմաճեան, Յովհաննէս Խոսրովեան:

* * *

Վերոյիշեալ շրջանաւարտներէն քննութեամբ Այնթապի Ամերիկեան Գոլէճ ընդունուած են հետևեալները.

— Յովսէփ Ենիգօմչուեան, Եագուպ Շիթիլեան, Գրիգոր Մարաշլեան, Միհրան Չափրաստեան, Յակոբ Ազէզեան, Կարապետ Տարազճեան և Գրիգոր Խորոզեան:

Իսկ Հալէպի ուսուցչանոց—վարժապետանոց «Տալ-էլ-Մուալլիմ»ին ընդունուած և աւարտած են հետևեալները.

— Հրանտ Պալեօզեան, Միհրան Քէշիշեան, Վահան Ենիգօմչուեան, Սարգիս Ենիգօմչուեան, Թովմաս Թովմասեան, Միհրան Վարպետեան և Կարապետ Տէր Խորէնեան, որ 1914_18 թթ. ծառայած է որպէս թրքական բանակի սպայ:

* * *

1909_1910 ուսումնական տարին (Հ. Պէրպէրեանը՝ իրաւաբանական ուսման հետևելու կապակցութեամբ կը բացակայի) Քիլիսի Լուսասիրաց Ազգային Վարժարանի տնօրէնութիւնը կը ստանձնէ Յարութիւն Նալպանտեանը, այնուհետև 1910_1911 ուսումնական շրջանին տնօրէն կը դառնայ Գրիգոր Խորոզեանը: Անոնք կը ղեկավարեն ազգային վար-



Սոյն խմբանկարը կը ներկայացնէ 1907 տարուան Բ. խումբի շրջանավարտները, հոգևոր հովիւները, թաղականութեան անդամներն ու ուսուցիչները, հետևեալ կերպով.

Նստած՝ ձախէն աջ. 1. Տոքթ. Կարապետ Մխիթեան, 2. Թորոս Էֆ. Չաղրասեան, 3. Տէր Վստիան Ա. քինյ. Թովմասեան, 4. Տէր Սահակ քինյ. Մոմձեան, 5. Պրն. Համբարձում Պերպէրեան, 6. Ուսուցիչ Պրն. Մարտիրոս Հեղինեան:

Շրջանաւարտներ, ոտքի՝ ձախէն աջ. 1. Գրիգոր Գայրէկեան, 2. Յովհաննէս Մարաշլեան, 3. Միհրան Չափրաստեան (Տոքթ.), 4. Միհրան Բէշիշեան, 5. Կարապետ Պիւլպիւլեան, 6. Հրանտ Պալեոպեան:

Ժարանը մինչև 1915: Այդ տարիներուն՝ 1909-1915 Քիլիսի մէջ ուսուցչական պաշտօն վարած են Նալպանտեան երեք եղբայրները՝ Յարութիւն, Նազարեթ և Գէորգ: Վերջինս՝ Գէորգ Խոճան Քիլիսի երիտասարդութեան սիրելին դարձաւ՝ իր երաժիշտ-ուսուցչի հանգամանքով և իր ստեղծած փողային նուազախումբի (Ֆանֆար) շնորհիւ, որը մեծ խանդավառութիւն ստեղծեց Քիլիսի Հայութեան բոլոր խաւերուն մէջ: Նոյն տարիներուն շատ օգտակար ծառայութիւններ մատուցած է երաժիշտ-ուսուցիչ և եկեղեցւոյ դպրապետ՝

Յակոբ Տէր Խորէնեանը:

1918-ի վերջերը, պատերազմի ավարտէլէն անմիջապէս յետոյ Եղեռնէն վերապրած Քիլիսցի Հայերը վերադարձան իրենց հայրենի բոյնը և հազիւ ինքզինքնին գտած՝ անհրաժեշտ տեսան վերաբանալ Ազգային Վարժարանը, տնօրէնութեամբ արդէն Քիլիսի Հայութեան ծանօթ Տ. քթ. Կարապետ Միսիրեանի եղբօր՝ Փրոֆ. Յովսէփ Միսիրեանի: Այդ օրերուն ուսուցչական պաշտօն վարեցին Մանուկ Մարաշլըեանը, Վահան և Սարգիս Ենիգօմշուեանները, որոնք որպէս Հալէպի «Տար-Էլ-Մուալլիմին»ի շրջանաւարտներ որպէս սպա ծառայած էին օսմանեան բանակին մէջ, ռազմազերի ինկած էին Պաղեստինի ճակատին վրայ և 1916 թուականի Պօղոս Նուպար-Սայքս-Փիքօ համաձայնագրի շնորհիւ վերադարձած էին իրենց ծննդավայրը: Ուսուցիչ դարձաւ նաև Քիլիսցի Աարգիս Թաշճեանը, որ Հարաւային Ամերիկայէն գալով՝ միանալով կամաւորներու Հայկական Լեգէոնին, Կիլիկիա մտած էր դաշնակից զօրքերու առաջամարտիկներով ու եկած էր իր ծննդավայրը ուսուցիչ դառնալու համար: Ուսուցչուհիներ էին՝ օրիորդներ Լուսին Մուպահեաճեանը, Արուսեակ Պալեօզեանը, Նուարդ Աբիկեանը, Մարիամ Պասմաճեանը:

Ազգային Վարժարանը, քաղաքական իրադրութեան թոյլ տուած հնարաւորութիւններու սահմաններուն մէջ «միջակ տարողութեամբ» շարունակուեցաւ մինչև 1921-ի աշունը, երբ քեմալական հրոսակներու (չէթէներու) Քիլիս ներթափանցման և 1921-ի Հոկտեմբերին Փրանս-Թրքական Անքարայի Պայմանագրի ստորագրման հետեանքով, Քիլիսի Հայութիւնը, ամբողջ Կիլիկիոյ նման, սկսաւ վերջնականապէս արտագաղթել իր բնագաւառէն՝ դէպի Սփիւռոս աշխարհի:

* * *

ՔԻԼԻՍԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ (ԲՈՂՈՔԱԿԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Հայոց մէջ Աւետարանական շարժման տարածումը սկսած էր 1850-ական թուականներուն: Առաջին Աւետարանական (Բողոքական) քարոզիչները Քիլիս եկած են Այնթապէն: Հոգևոր քարոզչութիւններով և հոգևոր գրքեր ձրի բաժանալով ժողովուրդին, անոնք կը յաջողին հիմնել Աւետարանական եկեղեցին Քիլիսի մէջ:

Սկզբնական շրջանին ժողովարան մը չունենալով, տուներու մէջ կը կատարեն իրենց հանդիպումները, հաւաքական աղօթքները: Երբ հետևորդները կը բազմանան, անոնք կը խնդրեն Ազգային իշխանութիւններէն իրենց հաւաքոյթները կատարել Մայր Եկեղեցւոյ մէջ: Երբ կը մերժուին, 1860 թուականին կը կառուցուի Քիլիսի Հայ Աւետարանական եկեղեցւոյ սրբատաշ քարերով ներկայանալի շէնքը, կողքին դպրոցի համար սենեակներով: Ինչպէս ամէն տեղ, այստեղ ևս կը թական-դպրոցական գործունէութիւնը սկիզբ կ'առնէ եկեղեցիին կից, նոյն վայրին մէջ՝ հոգևոր-կրօնական գործունէութեան զուգընթաց:

Սկիզբը համայնքը կ'ունենայ նախնական փոքր դպրոց մը մի քանի դասարաններով: Այնուհետև, համայնքին ղեկավարները գիտակցելով, որ կը թական գործը հիմք կը ծառայէ կրօնական գործունէութեան և բողոքական համայնքին ու անոր դաւանանքին արմատաւորմանն ու զարգացմանը, շուտով այդ փոքր դպրոցը կը վերածուի լրիւ նախակըթարանի՝ վեց դասարաններով: Այնուհետև, ինչպէս առաջին քարոզիչները եկած էին հարևան ակելի մեծ հոգևոր ու մշակութային կեդրոն Այնթապէն, նոյն քաղաքէն կը հրաւիրուին կարող ու որակաւոր ուսուցիչ-ուսուցչուհիներ Այնթապի Աղջկանց



Վերապատուելի Գեորգ Գասարճեան

«Սէմինըրի»էն և Այնթապի Ամերիկեան Գոլէճէն: Շուտով նախակըթարանը կը բարձրանայ մինչև պետական «Իտատիէ»ի (տասնամեայ-երկրորդական վարժարանի) մակարդակը: Ինչպէս Քիլիսի Ազգային Միացեալ Վարժարանի շրջանաւարտները, Աւետարանական Վարժարանի շրջանաւարտները նոյնպէս դիւրութեամբ կ'ընդունուէին Այնթապի, Մարաշի և Հալէպի աւելի բարձր կըթական հաստատութիւնները: Յատկանշական է արձանագրել այն հանգամանքը, որ Քիլիսի Աւետարանական Վարժարանի կըթական մակարդակը իրեն կը քաշէ նաև քաղաքի Հայ-Կաթողիկէ և Յոյն-Ուղղափառ համայնքներէն աշակերտներ:

Քիլիսի Աւետարանական եկեղեցւոյն ծառայած են յաջորդաբար հետևեալ քարոզիչ-Պատուելիները՝ Զաքարիա Պետրոսեան, Լևոն Սողովմէեան, Կիրակոս Ժամկոչեան, որոնք երեքն ալ նահատակուած են 1909 թուականի (Ատանայի) ջարդերու ժամանակ: Ապա յաջորդաբար պաշտօնավարած են վերապատուելիներ՝ Յակոբ Գումրուեան, Մանուկ Միսիրեան, Սամուէլ Ինկիլիզեան, Ստեփան Թովմասեան և Միքայել Պիշմէեան:

Իսկ Քիլիսի մէջ պաշտօնավարող բնիկ Քիլիսցի պատուելիները եղած են հետևեալները.

Ա.—Գէորգ Գասարճեան, ծնած 1844—ին, պաշտօնավարած է նաև Այնթապ, Մարաշ և Քեսապ:

Բ.—Աբրահամ Գասարճեան, Գէորգի որդի, Մարաշի Աստուածաբանական ձեմարանը աւարտած, այնքա՛ն բարի եղած է, որ իր շրջանակի մարդիկ զինք կը կոչէին՝ Սուրբ Աբրահամ:

Գ.—Աւետիա Կոստանեան, ծնած 1845—ին, հոգևոր հովիւ ձեռնադրուած 1865—ին, յունարէնի ու եփրայեղէնի քաջահըմուտ թարգմանիչ Սուրբ Գրոց հրատարակչական ընկերութեան մէջ:

Դ.—Յովհաննէս Կոստանեան, ծնած 1850, ծառայած է նաև

Մուսա—Լերան Պիթիաս գիւղը:

Ե.—Յովհաննէս Աբգարեան, ծնած 1900—ին, ուսանած Մարաշի գերմանական որբանոցը, այնուհետև Տարսոնի Գոլէ-ճը և վերջապէս Աթէնքի Աստուածաբանական ակադեմիան, կը պաշտօնավարէ Զահլէ, Հալէպ, կը վախճանի ԱՄՆ 1967—ին:

Այստեղ հարկ կը համարեմ չիշատակել նաև Այնթապէն Քիլիս եկած որպէս քաղաքապետարանի բժիշկ Տքթ. Գէորգ Սարգիսեանը, որը քարոզիչ չէր, բայց մեծ աւանդ ունի Քիլիսի Հայ Աւետարանական համայնքի և եկեղեցւոյ կազմակերպչական ու զարգացման աշխատանքներուն մէջ: Ան շատ սիրուած ու յարգուած բժիշկ մը եղած է, որ ծառայած է Քիլիսացիներուն թէ՛ Քիլիսի մէջ, թէ՛ 1922—էն յետոյ հալէպաբընակ քիլիսացիներուն մինչև իր մահը:

* * *

ՔԻԼԻՍԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Քիլիսի Հայ Կաթողիկէ համայնքը, «Յուշամատենան Բիլիսի Հայոց»ի տուեալներով, բաղկացած էր 50—60 ընտանիքներէ:

Ունեցած են եկեղեցի մը և համեստ տարողութեամբ նախնական վարժարան մը: Այդ վարժարանի ուսուցիչները կը հանդիսանային այն վարդապետները, որոնք կը ծառայէին որպէս ուսուցիչ ու միաժամանակ՝ հոգևոր հովիւ:

Քիլիսի Հայ Կաթողիկէ եկեղեցին ժամանակին վարչականօրէն կապուած եղած է Պոլսոյ Հայ Առաքելական Պատրիարքութեան, մինչև 1867, երբ Հայ Կաթողիկէ Հասունեան Պատրիարք՝ Օսմանեան կառավարութեան կողմէ ճանչուած

ըլլալով, Քիլիս կը դրկէ Զմմառի վանքի միաբաններէն Հայր Միքայէլ Թահանեան վարդապետը, որ քսան տարիներ շարունակ կը պաշտօնավարէ Քիլիսի մէջ որպէս սիրուած հոգևոր հովիւ և հմուտ ուսուցիչ: Մինչև այդ թուականը Քիլիսի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ «Էֆօրի» հոգևոր հովիւն էր Քիլիսցի Յովհաննէս Վրդ. Փանոսեանը, որը նահատակուեցաւ 1896-ի կոտորածներու ժամանակ «Գալլէշ»ի իր սեփական այգիին մէջ:

Քիլիսի Հայ Կաթողիկէ եկեղեցիին ու դպրոցին մէջ պաշտօնավարած են հետևեալ ուսուցիչներն ու հոգևոր հովիւները.

1. Յովհաննէս Պէզճեան, աշխարհական ուսուցիչ մը, որ ծառայած է երկար տարիներ:

2. Ճորճ Խուտայեան, նմանապէս աշխարհական, երաժիշտ-ուսուցիչ:

3. Մկրտիչ վարդապետ, դնահատուած ուսուցիչ և հոգևոր հովիւ:

4. Մանուէլ վարդապետ, մարաշցի, մատուցած է օգտակար ծառայութիւններ:

5. Յովհաննէս վարդապետ Գարանֆիլեան, Զէյթունցի, որ եօթը տարի պաշտօնավարելէ ետքը, իր համայնքին մէջ երկպառակութիւն ստեղծած ըլլալուն՝ Պոլսոյ կեդրոնին կողմէ իրեն կը հրահանգուի լքել Քիլիսը և մեկնիլ Պէրէճիկ: Ան չ'ենթարկուիր այդ հրահանգին: Ուստի Գարանֆիլեան կը հրաժարի Կաթողիկէ համայնքէն, կ'երթայ Հաճըն և կը դառնայ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ վարդապետ ու կը ղրկուի Զէյթուն իբր առաջնորդ:

Քիլիսի մէջ ծառայած են նաև՝ Իգնատիոս վարդապետ, մարաշցի, Զմմառի վանքէն: Ան 1909-ին եկած է Քիլիս և մինչև 1915 ունեցած է բարուք ծառայութիւն մը, ինչպէս նաև Միքայէլ Վրդ. Ղատիտեանը:

Քիլիսի Հայ Կաթողիկէ համայնքէն Սրապեանները,

Սերոբեանները, Սէֆէրեանները, Գասպարեանները և ուրիշներ միշտ օգտակար եղած են Քիլիսի ոչ միայն Հայ Կաթողիկէ եկեղեցիին ու դպրոցին, այլ նաև՝ Քիլիսի համայն Հայու-թեան՝ եկեղեցիին, դպրոցներուն, մաշակութային կեանքին:

* * *

ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Քիլիսի Հայոց կրթա-մշակութային կեանքին մէջ իւրա-հատուկ տեղ կը գրաւէ 19-րդ դարի կէսերուն դեռևս ոչ-շատ տարածուած բան՝ Ժողովրդական Լսարանի դրութիւնը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ այդ դրութեան, նորա-րարութեան պատիւն ու արժանիքը կը պատկանի Բերիոյ Թեմի Առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեանին: Ար-դարև, 1860-ական թուականներուն Պոլսոյ մէջ Հայ Ազգային Սահմանադրութեան հռչակումէն իվեր Քիլիսը եղած է Բերիոյ (Հայէպի) Թեմի կազմի մէջ և Քիլիսի Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ աւագերէցը կը հանդիսանար թեմի Առաջնորդին փոխանորդը: Նախորդ էջերով գրեցինք, թէ Մկրտիչ Եպիս-կոպոսը կը հանդիսանար Քիլիսի Հայոց կրթա-մշակութային զարթօնքին մղիչ ուժը: Որպէս «հովիւ քաջ», երբ դեռ վար-դապետ էր և Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Մկրտիչ Կաթողիկոս Քէֆսիգեանի հետ որպէս փոքրաւոր՝ «պզտիկ վարդապետ» կ'այցելէր Քիլիսի Հայութեան, ան վերահասու եղած էր տեղի ազգայնոց հոգե-մտաւոր կարիքներուն, ցան-կութիւններուն, պահանջներուն և նախաձեռնած էր զարկ տալ ազգային կրթա-մշակութային զարթօնքի: Որպէս առա-ջին քայլ, այդ ուղղութեամբ Վեհապետեան Սրբազանը հիմ-նադիրը հանդիսացաւ Քիլիսի «Լևոնեան Դպրոցասիրաց Ընկերութեան» 1884 Սեպտեմբերի 1-ին: «Դպրոցասիրաց» ի

շուրջ շուտով հաւաքուեցան 500 ազգայիններ: Դպրոցասիրացին յաջորդեց «Ջապէլեան Տիկնանց Ընկերութիւնը» 300 անդամներով: Ճիշտ այդ օրերուն է, որ Մկրտիչ Վեհապետեան Սրբազանը, Քիլիս իր հերթական այցելութիւններուն առթիւ, թէ՛ Կիրակի, թէ՛ շաբթուան որոշ երեկոները կը կատարէր «Ժողովրդային քարոզախօսութիւններ» դպրոցի ընդարձակ սրահին մէջ: Այդ քարոզախօսութիւնները կը վայելէին այնպիսի ժողովրդականութիւն, որ անոնց ներկայ եղողները դպրոցի սրահէն դուրս կը յորդէին և բակին մէջ, խսիրներու վրա նստած, կը հետևէին Մկրտիչ Սրբազանի ժողովրդական լեզուով տուած բանախօսութիւն-դասախօսութիւններուն, ինչպէս կը գրէ այդ օրերու «Ժամանակագիր», Քիլիսի վաստակաւոր ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը:

– «Իր (Մկրտիչ Սրբազանի) քարոզախօսութիւններուն այնքա՛ն մարդիկ կու գային, որ սրահը լեցուելէն յետոյ, ամառնային եղանակ ըլլալուն կը ստիպուէին եկեղեցիէն խսիրներ հանել և ժողովուրդը տեղաւորել բակին մէջ»¹:

Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեանը այդ տարին Քիլիսի մէջ առաջին անգամն ըլլալով ձեռնարկեց Քիլիսի Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ ծուխի Թաղական Խորհուրդ ընտրել ժողովրդային բաց քուէարկութեամբ, որուն մասին տեղին անդրադարձանք հանգամանօրէն:

Սակայն Վեհապետեան Սրբազանին «վառած լուսաւորութեան ջահը հետզհետէ աղօտնալու սկսաւ ... գիտակից ղեկավարներու չգոյութեան հետևանքով» կը գրէ ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը, բայց կ'աւելցնէ. «Գիշերային ժողովրդային լսարանի դրութիւնը կը շարունակուէր Բողոքականներու ազգապետ հէքիմ Յակոբճանի ջանքերով: Ան՝ շաբաթը երեք գիշեր Լսարանին մէջ կը խօսէր Դանիէլ Մարգարէի, Յակոբ Նահապետի, Հռութի, Եսթերի մասին ու մեկնութիւններ

1. Յուշամատեն..., էջ 127.

կու տար ... Ժողովուրդը համ չառաւ այդպիսի քարոզախօսութիւններէն, բայց հէքիմ Յակոբճանը անվհատօրէն ու անձնուիրաբար շարունակեց իր քարոզախօսութիւնները»¹:

Յաջորդ տարիները, յատկապէս 1903—ին «Լուսասիրաց» Միացեալ Ազգային Վարժարանի ստեղծումէն սկսեալ հաստատուեցաւ Կիրակնօրեայ Ժողովրդային լսարանի դրութիւնը: Ամէն Կիրակի, դպրոցի ընդարձակ սրահին մէջ, խուռներամ ժողովրդի ներկայութեան տեղի կ'ունենար լսարան: Ուսուցիչներ, բժիշկներ, քահանաներ և հրապարակաւ խօսելու ընդունակ անհատներ, ազգայիններ կը խօսէին առողջապահական, կրօնական, պատմագիտական ու բարոյագիտական հարցերու մասին: Նորութիւն էր նաև՝ լրատուութիւնը: Կը կատարուէր լրագրական տեղեկութիւններու հաղորդում, քանի որ հայերէն լրագիր չէր հասներ Քիլիսի ժողովուրդին, թրքերէն լրագիր—տեղեկագիրներն ալ գրուած ըլլալով արաբատաութրքերէնով՝ մատչելի էին միայն հազուադիւտ անհատներու: Տեղի կ'ունենար նաև գեղարուեստական բաժին—աշակերտներ, բանիմաց երիտասարդներ ելուցթ կ'ունենային արտասանութիւնով, երգերով: Կիրակնօրեայ Ժողովրդային լսարանի դրութիւնը այնքա՛ն հետաքրքրութիւն բերած էր ժողովուրդի բոլոր խաւերուն, տարբեր տարիքի ազգայիններուն՝ արանց և կանանց մէջ, որ յաճախ երբ սրահը լեցուած կ'ըլլար, եկեղեցիէն դուրս կը բերէին նստարաններ և ունկնդիրները՝ բակը նստած կը հետևէին լսարանի ընթացքին:

Գլխաւոր խօսողները կ'ըլլային, այդ օրերուն, Լուսասիրաց ազգային վարժարանի նոր տնօրէն, Այնթապի գոլէճէն շրջանաւարտ Համբարձում Պէրպէրեանը, Հայէպի Պետական վարժապետանոցէն շրջանաւարտ Թովմաս Թովմասեանը և նախկին վաստակաւոր ուսուցիչ և այդ օրերուն արդէն քահանայ՝ Տէր Սահակ Մոմճեանը և ուրիշներ:

* * *

1. Յուշամատեան..., էջ 131:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ ՉԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Քիլիսիի Հայոց կրթամշակութային կեանքին մէջ, 1880-ական թուականներուն, յառաջադիմական նորութիւն էր, ո՛չ միայն Քիլիսիի, այլ նաև՝ ամբողջ Կիլիկիոյ շրջանին համար գիշերային դասընթացքներու դրութեան ստեղծումը չափահասներու համար: Այդ նորարարութեան նախաձեռնողները եղան բազմավաստակ ուսուցիչներ Պերճ Մոմճեանը (յետագային՝ Տէր Սահակ Մոմճեան դարձած) և բնիկ Քիլիսցի՝ Մոմճեանի երիտասարդ գործակից Սմբատ Ղազէլեանը, որ իր «Յուշերուն» մէջ կը գրէ.

— «Պարոն Պերճ իր ծրագիրներուն մասին բան մը չէր ծածկեր ինձմէ, ամէն ինչ կը ծրագրէինք խորհրդակցաբար: Որոշեցինք համեստ ծրագրով գիշերային դասընթացք մը բանալ և երիտասարդութեան սորվեցնել՝ հայերէն, թուաբանութիւն և գրել-կարդալ»¹:

Այդ նուիրեալ ուսուցիչները, իրենց գիշերային հանգիստը զոհելով կը հաւաքագրեն շուրջ 50 երիտասարդ աշակերտներ, 15-էն 50 տարեկան անհատներ, որ մինչ այդ ոչ մէկ ուսում չէին ստացած և զանոնք դասարաններու կը բաժնեն ըստ տարիքի և գիտելիքի: Անոնք որոշ ժամանակ այդ դասընթացքին հետևելով՝ «իրենց խանութին, արհեստանոցին տետրակները բռնելու չափ գրել-կարդալ և հաշիւ սորվեցան», կը հաստատէ Ս. Ղազէլեանը:

Այդ դասընթացքին նախաձեռնող յառաջադիմասէր և ազգասէր ուսուցիչներուն նպատակը այդ չափահաս աշակերտներուն միայն գիր և ընթերցանութիւն սորվեցնել չէր, այլ՝ միջոց մը իրար կապելու երիտասարդները և անոնց

1. Յուշամատեն..., էջ 136.

մէջ ազգասիրութիւն և հայրենասիրութիւն՝ «հայկականութեան» ոգին ներշնչելն էր:

Իսկապէս որ ճիշտ ուղի ընտրուած էր Սուլթանական ճնշող իրաւակարգի պայմաններուն տակ երիտասարդութեան առողջ և գործնական հայրենասիրութեան, ազգասիրութեան դաստիարակութեան համար:

Գիշերային դասընթացքին մասնակիցները կը վճարէին շաբաթական 10—20 փարա լամբարներու և կազի (նավթի) ծախքին համար: Դասը կը սկսուէր ու կը վերջացուէր Տէրունական աղօթքով: Ամէն աշակերտ պարտաւոր էր «Հայր Մեր»ը արտասանել առանձին: Բացի այդ, գիշերային դասընթացքին հետևող այդ երիտասարդներուն ընկերական և ազգային-հայրենասիրական ոգին զարգացնելու, խորացնելու նպատակով (և իրոք այդ դասընթացքին բուն նպատակը այդ էր) ուսուցիչները յղացած էին ինքնատիպ միջոցառում: Ամէն Կիրակի առտուները, գիշերային դասընթացքի բոլոր այդ 40—50 աշակերտները կը հաւաքուէին եկեղեցու շրջափակին մէջ գտնուող ազգային վարժարանի սրահին մէջ և այդտեղէն զոյգ—զոյգ շարուած, պատարագի սկզբնաւորութենէն առաջ կ'ուղղուէին դէպի եկեղեցի և տասնական հոգի, հինգ շարք՝ կը շարուէին դասին ետևը: Այդ բանը նոր և հիանալի ցուցադրական, դաստիարակիչ երևոյթ մըն էր ա՛յդ օրերուն և ա՛յդ տարիքի երիտասարդներով: Քիլիսի Հայութիւնը զարմանքով կը դիտէր, թէ այդ պեխաւոր երիտասարդները ինչպէս հլու—հնազանդ, կարգապահ, պատանի աշակերտներու պէս կարգի շարուած եկեղեցի կ'երթան և նոյն կարգով ալ դուրս կ'ելեն մինչև դպրոցին սրահը:

Երիտասարդներու նոյն խումբը Կիրակնօրեայ ժողովըրդային լսարանին ներկայ կ'ըլլար, ինչպէս իրենց ծնողքը: Ներկայ կ'ըլլային նաև Քիլիսի Հայոց համայն հետաքրքրասէր և ազգային—հայրենասիրական ոգիով սնանիլ ու զարգանալ փափաքող աւագ սերունդը:

Պարզ է, որ նման կազմակերպեալ վիճակ մը ստեղծել, գործնական կեանքի առօրեայի վերածել այնքան էլ հեշտ գործ է՝ որ այդ օրերուն, ա՛յդ ընկերային ու քաղաքական պայմաններուն տակ: Սակայն, շնորհիւ նուիրեալ և տեսիլք ունեցող, տեսլապաշտ այդ ուսուցիչներուն անխոնջ ու յարատև ջանքերուն և մանկավարժական հմտութեան, ընկերական վերաբերմունքին՝ այդ չափահաս աշակերտներուն հետ այդ նախաձեռնութիւնը յաջող ընթացք ունեցաւ և շարունակուեցաւ յաջորդ տարիներուն նոյն ուսուցիչներու և համախոհներու միջոցով:

Գիշերային այդ դասընթացքներու միջոցով երիտասարդները փոխադարձ շփման մէջ եղան երկար ժամանակ և կանոնաւոր կերպով, անոնց միջև ընկերային համերաշխութեան, սիրո ռգին զարգացաւ և սկսան մտածել ընկերային աշխատաւորական փոխօգնութեան միջոցառումներու, ձեռնարկումներու ստեղծման մասին, որը իրականացաւ Հնչակեան Երիտասարդական միութեան կեանքի կոչուելովը:

* * *

ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Քիլիսի Հայութիւնը՝ Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ համայնքը, ի հոգևորս մատակարարուած եղած է Բերիոյ (Հալէպի) Թեմի Առաջնորդարանի կողմէ երկար դարեր մինչև 1922 թուականը: Այդ կապակցութեամբ կան գրաւոր արձանագրութիւններ, վկայութիւններ՝ Արտաւազդ Արքեպիսկոպոս Միւրմէեանի «Հայկական Պատմութիւն» արժէքաւոր աշխատութեան մէջ: Արդարև, Քիլիսի Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ

աւագերէցը կը հանդիսանար Առաջնորդի փոխանորդ, վերջինը եղաւ Տէր Վահան քհնյ. Թովմասեանը¹:

Ինչպէս նախորդ էջերով արձանագրեցինք, 1880-ական թուականներուն Հալէպի Թեմի Առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Վեհապետեանը, ի հոգևորս իր մատակարարման ենթակայ Քիլիսի Հայութեան կրթամշակութային զարթոնքին նախաձեռնողն ու առաջամարտիկը հանդիսաւ՝ որպէս իր ազգային-հոգևոր ու վարչական պարտականութեանց արտայայտութիւն: Բացի այդ, նոյն Առաջնորդ Մկրտիչ Վեհապետեանն էր, որ անձամբ ինք նախաձեռնեց և գործնականօրէն կիրառեց Հայոց Ազգային Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն Քիլիսի մէջ առաջին անգամ ըլլալով Առաջնորդարանի իրաւասութեան ենթակայ Քիլիսի Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ Թաղական Խորհուրդի ժողովրդային քուէարկութեամբ ընտրութիւնը:

Իսկ ինչպիսի՞ն էր ազգային-եկեղեցական կեանքի ղեկավարման դրութիւնը Քիլիսի մէջ մինչև 1880-ականները:

Քիլիսցի վաստակաւոր ուսուցիչ ու ազգային գործիչ Սմբատ Ղազէյեանը իր «Յուշերուն» մէջ կը գրէ.

– «Քիլիսի դպրոցը սովորական դարձած Տէր-Թողիկեան մեթոտով կը շարունակուէր... Թաղական Խորհուրդ, հոգաբարձութիւն չկար, ազգային գործերով, դպրոցով հետաքրքրուող չկար: Չոջ աղաները վարժուած էին ազգային գործերը, եկեղեցին իրենց սեփականութիւնը, իրենց ազգային գործը համարել»²:

Վիճակը նոյնն էր Օսմանեան թուքիոյ բոլոր հայաբնակ քաղաքներուն, աւաններուն մէջ՝ որոշ չափով արտայայտելով ամբողջ երկրին ընկերային ու վարչա-քաղաքական անկազմակերպ դրութիւնը: Դրութիւնը աստիճանաբար բարելաւ-

1. Յուշամատեան..., էջ 383-384:

2. Յուշամատեան..., էջ 126-133:

ուեցաւ, երբ Սուլթանական կառավարութիւնը անհրաժեշտ համարեց կայսրութեան հայաբնակ քրիստոնեայ համայնքներու, մանաւանդ Հայոց ներքին համայնքային կեանքը իր հակակշռին տակ պահել՝ անոնց տալով որպէս եկեղեցակրօնական համայնք ներքին կանոնադրութիւններ: Այսպէս, 1863 Մարտ 3-ին հռչակուեցաւ Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան կողմէ Հայոց Ազգային Սահմանադրութիւնը: Հետեաբար, Պոլսոյ մէջ ստեղծուեցաւ Թուրքիոյ Հայոց Ազգային Ժողով և ներքին գործերը վարելու համար՝ Ազգային Գաւառական Ժողով, Ուսումնական Խորհուրդ: Վանքերն ու եկեղեցիները ղեկավարելու համար Թաւրական Խորհուրդներ, Հոգաբարձութիւններ ստեղծուեցան:

Ուրեմն, Քիլիսի մէջ, Ազգային Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն Թաղական Խորհրդի մը ընտրութիւնը կազմակերպեց Հալէպի Թեմի Առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոսը: Կիրակի օր մը, Քիլիսի ամբողջ Հայութիւնը հրաւիրուեցաւ հաւաքուիլ Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ մէջ և ազատ քուէարկութեամբ Թաղական Խորհուրդ մը ընտրուեցաւ, ինչպէս կը գրէ Ս. Ղազէլեանը, ուսուցիչներ, աշակերտներ, ըստ կամս քուէներ կը գրէին և ժողովուրդէն իւրաքանչիւր մարդ հատ մը առնելով կը նետէր քուէատուփին մէջ:

Թաղական Խորհուրդը պէտք է տնօրինէր, Առաջնորդի փոխանորդ աւագերէցի հետ խորհրդակցաբար, եկեղեցւոյ հետ կապուած ազգային գործերը: Ազգային վարժարանին գործերը տնօրինելու համար պէտք է ընտրուէր Հոգաբարձութիւն, որը հիմնական պատասխանատուն էր դպրոցի հետ կապուած գործերուն:

Մշակութային ընկերութիւնները իրենք կը կատարէին իրենց կողմէ ստեղծուած դպրոցներուն հոգաբարձութեան գործը: Օրինակ, «Արուսեակ» վարժարանին հոգաբարձութիւնը՝ այդ ընկերութիւնը նախաձեռնող Ենիգօմչուեան, Քիւրքճեան և Լուսարարեան ընտանիքներու ներկայացու-

ցիչներն էին: «Լեոնեան Դպրոցասիրաց Ընկերութեան» կողմէ բացուած Լեոնեան վարժարանը որպէս ազգային վարժարան Թաղական Խորհուրդին ենթակայ էր և կը ղեկավարուէր ուղղակի անոր կողմէն: Պայրամեաններու և Գասարճեաններու նախաձեռնութեամբ Հայկազեան Ընկերութեան վարժարանի հոգաբարձութիւնը կազմուած էր այդ ընտանիքներու ներկայացուցիչներէ: 1903–1904 ուսումնական տարին Լուսասիրաց Մշակութային Ընկերութեան ղեկավարած դպրոցը, որ դարձաւ Լուսասիրաց Ազգային Վարժարան, ունեցաւ հոգաբարձութիւն մը, որուն անդամներն էին Յակոբ Պասմաճեանը, Աղէկ Աղա Ենիգօմշուեանը և Յարութիւն Շամամեանը:

Ինչ կը վերաբերի Քիլիսի մէջ ստեղծուած տարբեր մշակութային միութիւններէ կողմէ հովանաւորուած դպրոցներու տնտեսա-ֆինանսական ապահովմանը, այդ հարցի կապակցութեամբ ստորգ կամ պաշտօնական տուեալներ գտնել հնարաւոր չեղաւ: Այդ ժամանակները, տիրող քաղաքական ու ազգային ընկերային պայմաններուն բերումովն իսկ, ինչպէս այլ համայնքային գործերը, ուսման, կրթութեան գործը նոյնպէս թողնուած էր ինքնահոսի, անորոշութեան: Հասկընալի է, որ Օսմանեան Թուրքիոյ մէջ քրիստոնեաներու եկեղեցիներուն կից համայնքային դպրոցներու պետական հովանաւորութիւն, նոյնիսկ օժանդակութիւն չկար, չէր կրնար գոյութիւն ունենալ:

Գաղափար մը կազմելու համար ուսուցիչներու աշխատավարձի, աշակերտներու ուսման վարձի և ընդհանրապէս ուսումնա-կրթական բնագաւառի տնտեսական ապահովման դրութեան մասին, այստեղ կը բերենք այդ ժամանակներուն թէ՛ աշակերտ և թէ՛ յետոյ ուսուցիչ դարձած Համբարձում Պէրպէրեանի վկայութիւնը.

– «Վարժապետին (Սարգիս) ամբողջ ուշադրութիւնը կը կեդրոնանար հարուստ ընտանիքներուն զաւակներուն վրայ, որոնք ամէն օր կը կերակրէին զինք առտու և կէսօր:

...Նուէր բերել պայման էր և կը բերէին դրամ, աքլոր մը, երբեմն՝ գառնուկ մը, ևն»¹:

Այդ կապակցութեամբ այլ վկայութիւն մը: Ուսուցիչ Սմբատ Ղազէլեան կը գրէ իր «Յուշերուն» մէջ՝

– «Դպրոցը բացի աշակերտաց կրթաթօշակէն, այլ եկամուտ չունէր: Ծնունդին և Զատկին քանի մը բարեասէր մարդիկ տունէ տուն կը պտտէին, դպրոցի կողմէն փոխան շնորհաւորութեան և յանուն աղքատ աշակերտաց կամաւոր նուէրներ կը հանգանակէին, որմէ կու գար եօթ–ութ հարիւր դահեկան: Աշակերտները որպէս կրթաթօշակ կը վճարէին 10–20 փարա, առաւելագոյնը՝ մէկ դահեկան (40 փարա) և ան ալ կը մնար անվճար»²:

Երբեմն նպաստի համար կը դիմուէր Պոլիս՝ Միացեալ Ընկերութեան: Մնտուկ մը դասագիրք կ'ուղարկուէր Պոլիսէն, որը ուսուցիչները աշակերտներուն կը ծախէին և գոյացուած գումարը ուսուցիչներուն աշխատավարձերուն կը յատկացուէր: Կամ Կիրակի և տօնական օրերուն՝ եկեղեցւոյ դրան առջև դրուած պնակի հասոցթը՝ սովորական Կիրակիները 8–10 դահեկան, տաղաւար օրերուն 40–50 դահեկան, կը յատկացուէր ուսուցիչներու աշխատավարձին:

«Գիշերային դասընթացքներու» աշակերտներէն կը գանձէինք շաբաթական 10–20 փարա լամբարներու և կազի (նավթի) ծախքին համար: Իսկ «Լուսասիրաց» վարժարանի աշակերտաց կրթաթօշակներէն և պատահական եկամուտներէն ինչ հասոցթ որ գոյանար, իւրաքանչիւր ուսուցիչ իր ամսականին (աշխատավարձին) համեմատ բաժին պիտի ստանար ու պիտի գոհանար: Բայց մնացած ամսականներուն համար, հոգաբարձութիւնը պատասխանատու պիտի ըլլար» կը գրէ ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը³:

1. Յուշամատենան..., էջ 117–118:

2. Յուշամատենան..., էջ 131:

3. Յուշամատենան..., էջ 139:

Տիկին Զապէլ Պէրպլեբեանը իր աշակերտութեան ժամանակի «Յուշերուն» մէջ կը գրէ.

— «1912-ին Քիլիսի Ազգային Վարժարանի Մաղկոց դասարանի աշակերտուհի էի և յաջորդ տարին պիտի անցնէի Աղջկանց նախակրթարանը: Նոր դպրոցի համար հարկ եղած գումարը ապահովելու պարտականութիւնը յանձն առած էր լուսահոգի Տէր Սահակ քհնյ. Մոմճեանը: Յիշեալ ազգասէր քահանան ամէն տեղ, ուր Քիլիսցի Հայեր կային՝ մօտակայ գիւղերն ու քաղաքները և մինչև «Բնթիլի»ի թունէլի (փապուղիի) շինարարական կեդրոնը գնաց, հանգանակութիւններ կատարեց և ապահովեց դպրոցին համար հարկ եղած գումարը»¹:

* * *

ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՉ ԳՈՐԾԱԾՈՒՈՂ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

«Լուսասիրաց» ազգային վարժարանի 1903–1904 ուսումնական տարեշրջանի տնօրէն Համբարձում Պէրպլեբեանը «Քիլիսի Հայութեան կրթական կեանքը» յուշերուն մէջ կը գրէ, թէ նոյն ուսումնական տարին «Դպրոցին մէջ աւանդուած դասերն էին՝ հայերէն, թրքերէն, անգլերէն լեզուներ, ուսողութիւն, պատմութիւն և գիտական դասեր», սակայն ո՛չ մէկ խոսք այդ տարին գործածուած դասագրքերուն մասին: Ուրիշ մէկ առիթով, խօսելով որպէս աշակերտ, Սարգիս վարժապետին «Վարժոց»ին մասին, կը յայտնէ. «Դպրոցին մէջ գործածուած դասագրքերն էին՝ Քերական, Կանոն, Սաղմոս ևն»²:

1. Յուշամատեան..., էջ 111–112.

2. Յուշամատեան..., էջ 118 և 121.

Քիլիսի վաստակաւոր ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը իր «Յուշերուն» մէջ կը գրէ.

— «Պարոն Պերճ վարի դասարաններուն հայերէնի, թուաբանութեան և ֆրանսերէնի դասերը ինծի յանձնեց»¹:

Ուրեմն, ֆրանսերէն լեզու ալ կը դասաւանդուէր, անգլերէնէ առաջ Քիլիսի մեր դպրոցներուն մէջ և... «վարի դասարանները» նոյնիսկ: Ուրիշ առթիւ, Պոլսոյ «Միացեալ Ընկերութեան» ղրկած դասագրքերուն մասին խօսելով, Ղազէլեան կը գրէ. «Աշակերտներուն ունեցածը Պոզաճեան թուաբանութիւնն էր, իսկ նոր եկածը՝ Գարթաշեան թուաբանութիւնն»:

Այսքանը միայն մեր վաստակաշատ երկու ուսուցիչ, ազգային գործիչներու յուշագրութիւններուն մէջ հաղորդուած է Քիլիսի Հայոց դպրոցներուն մէջ օգտագործուած դասագրքերուն մասին: Ուրիշ այլ մանրամասնութիւն, տեղեկութիւն գտնել հնարաւոր չեղաւ, այլ աղբիւրներու չգոյութեան հետևանքով:

Զպէտք է մոռնալ, որ խօսքը կը վերաբերի 1880-ական թուականներուն Արևմտահայոց դպրոցական կեանքին: Նկատի պէտք է ունենանք, որ 1880-90-ական թուականներուն Հայոց Ազգային Սահմանադրութեան հռչակումէն մէկ-երկու տասնամեակ յետոյ միայն թափ ստացած Արևմտահայ կրթամշակութային շարժման կեդրոնէն՝ Պոլսէն ճառագայթող լոյսի ալիքները հազիւ թէ հասած կ'ըլլային գաւառային-ծայրամասային հայկական բնակավայր հանդիսացող Քիլիսի դպրոցները: Այդ օրերուն դեռ չէին հրատարակուած Այբբենարանները, Հրանտ և Զապէլ Ասատուրեաններու թանգարանները (դասագրքեր) և Քիլիսի դպրոցները հարկադրուած՝ կը բաւարարուէին խեղճուկ Քերականներով, կանոններով, Սաղմոսներով:

* * *

1. Յուշամատեն..., էջ 135:

ՔԻԼԻՍՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԱՀԻՆ ՎՐԱՅ ԵՒ
ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԵՐԱԽՏԱՇԱՏ
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ
ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐ

Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ Բարդէն Աթոռակից
Կաթողիկոսին կը պարտինք «Պատմութիւն Կաթողիկոսաց
Կիլիկիոյ» արժէքաւոր երկասիրութիւնը, ուր կը գտնենք
անհրաժեշտ տեղեկութիւնները Քիլիսացի երկու կաթողիկոս-
ներու կեանքին ու գործունէութեան մասին:

Ա.— *Յովհաննէս Գ. Կաթողիկոս, Քիլիսացի, Կայծակն
մականուանեալ (1525–1539):*

Բ.— *Սահակ Ա. Կաթողիկոս, Քիլիսացի, Մէլիսանէճեան
(1674–1686):*

* * *

*Յովհաննէս Գ. Կաթողիկոս, Քիլիսացի, Կայծակն
մականուանեալ (1525–1539) Ստոյ Մաշտոցին մէջ (էջ 436),
իր ձեռքովն իսկ այսպէս արձանագրած է իր գահակալու-
թիւնը.*

– «Նուաստս, Յովհաննէս Կաթողիկոս Ամենայն Հայոց,
նստայ յաթոռ հայրապետութեան, ի Սիս քաղաքի, ԹՎին
հայոցն ԶԵԴ–1525, Մայիս ամսոյ Ա. աւրն. ԲՂ.ի»:

*Յովհաննէս Գ.—ի կեանքին և կաթողիկոսական գործու-
նէութեան մասին առ այժմ ստոյգ տեղեկութիւններ չունինք,
կը յայտնէ Բարդէն Կաթողիկոսը: Ստոյգ գիտենք իր գահակա-
լութեան և վախճանման թուականները: Բացի այդ, կարգ
մը չիշատակարաններու մէջ արձանագրուած է իր անունը,
որոնք ցոյց կու տան, որ անգործ կաթողիկոս մը չէ եղած
ան: Նախ, հաւանական է, որ ԹՎուրանցի Յովհաննէս, որդի*

Ղուկասու կաթողիկոսը, որ նախորդն է Քիլիսցի Յովհաննէս կաթողիկոսին, Երուսաղէմի դատարանին առջև դատ բացած էր Թիրոյիտացի Գէորգիէն դէմ: Այդ դատը երկար տևած է: Այդ դատի շահուելուն մասին արձանագրութիւն կայ թիկուրանցի կաթողիկոսի Երուսաղէմի գործերուն մէջ և թուականը կը յիշուի՝ 1532 թուականը և դատը շահողը՝ Յովհաննէս: Քանի որ թիկուրանցին վախճանած էր արդէն 1525-ին, դատին վերջնալէն 7 տարի առաջ, ուրեմն դատը շահողը՝ Յովհաննէսը պէտք է ըլլայ, Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոսը:

Այժմ քննենք այն յիշատակարանները, ուր կը յիշուի մեր Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոսը:

Առաջինը, ինքնագիր յիշատակարան մըն է: Ան գրուած է Հալէպի թիւ 4 ձեռագիր Աւետարանին մէջ, զայն գրաւէ ազատած է, իր քսակէն վճարելով պահանջուած 15 «ֆլորին»¹ և զայն նուիրած է Հալէպի Սբ. Աստուածածին և Սբ. Քառասնից Մանկանց եկեղեցիներուն 1526-ին, իր կաթողիկոսութեան երկրորդ տարին: Այս պարագան և այս դէպքը կրկնակի հետաքրքրութիւն և շահագրգռութիւն կրնան յառաջացնել ընթերցողին քով: Ինչո՞ւ Մեծի Տանն Կիլիկիոյ Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոսը Հալէպ և ո՛չ թէ Սիս կը գտնուէր 1526 թուականին, իր կաթողիկոսութեան երկրորդ տարին: Եւ, երկրորդ, ինչո՞ւ Հալէպի թիւ 4 ձեռագիր Աւետարանը գրաւէ ազատելու համար կը վճարէ վնենտիկեան Ֆլորին բսկեդրամ, ո՛չ թէ օսմանեան ոսկի:

Առաջին հարցումին կը պատասխանէ ինքը՝ «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ»ի հեղինակ Բաբգէն Աթոռակից կաթողիկոսը. «... Յովհաննէս կաթողիկոսը այդ միջոցին կը գտնուէր Հալէպ: Այս կէտը դիտել կու տանք անոր համար, որ Կիլիկիոյ կաթողիկոսները Հալէպը ավելի ապահով կը

1. Ֆլորին-վնենտիկի Հանրապետութեան ոսկէ դրամանիշ:

գտնելին քան Սիսը, որ Տաւրոսի ծոցը նշաւակ էր լեռնցի ձորապետներու հարստահարութեանց: Մինչ՝ Հայկալ բոլորովին տարբեր միջավայր մըն էր իբրև մայրաքաղաք Սուրիոյ, ապահով և առևտրական բանուկ կեդրոն մը և Հայութեամբ հարուստ»¹: Ի դէպ, վերջիշենք, որ այդ դարերուն Թուրքիոյ կեդրոնական իշխանութեան ներկայութիւնը զգալի չէր Պոլսէն դուրս, ուր սանձարձակ կը տիրէին ձորապետ-«Տերէ-Պէյլի»ները և «Ճելալի» ըմբոստները:

Երկրորդ հարցումին՝ «Թէ ինչո՞ւ վենետիկեան Ֆլորին դրամով վճարուեցաւ Աւետարանին գրաւէ հանելու փրկագինը», պատասխանը հետեւեալն է: Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան անկման հետեւանքով Կիլիկեան Այաս նաւահանգիստը Արևելք-Արևմուտք տարանցիկ (Թրանսլիթ) առևտուրի կեդրոն հանդիսանալէ դադրելուն հետեւանքով, 15-րդէն մինչև 20-րդ դարի սկիզբը Հայկալ քաղաքը դարձաւ Եւրոպայի և Արևելքի (Պարսկաստան, Հնդկաստան) միջև կատարուող միջազգային առևտրի միակ կեդրոնը, ուր ամէնօրեայ շրջանառութեան մէջ էին Արևմտաեւրոպական երկիրներու, յատկապէս, վենետիկեան դրամանիշերը: Հայկալի մէջ Արևմտաեւրոպական երկիրներու հիւպատոսարաններու գոյութիւնը նոյն հիմքերով կը բացատրուի:

Այս բոլոր բացատրութիւններէն յետոյ, տանք Յովհաննէս Գ. Քիլիսցի Կաթողիկոսի ինքնագիր, իր իսկ ձեռքով գրուած Յիշատակարանը, իր կողմէ գրաւէ ազատուած Հայկալի թիւ 4 ձեռագիր Աւետարանին մէջ.

– «Ի թվին Հայոց ՋՀԵ–1526, Աւետարանը գրաւական էր ԺԵ=15 Ֆլորայ, ես Յովհաննէս Կաթողիկոս, տուի և ազատեցի և ետի յիշատակ ծնաւրաց իմոց հոգւոյն, ի քաղաքն Հայկալ, ի դուռս Ս. Աստուածածնոյ և Ս. Քառասնից Լն»²:

1. Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ:

2. Յուշամատեան..., էջ 191–192.

Ուրիշ չիշատակարան մը, էջմիածնի Մատենադարանի ձեռագիր Մաշթոց մը, որ գրուած է Զէյթուն ԶԶԳ=1534-ին, կ'ոգեկոչէ նաև մեր Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոսը՝ «գրուած ի Զէյթուն ի Կաթողիկոսութեան Տեառն Յովհաննէս»ի:

Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոսի անունը արձանագրուած է նաև Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցոյ դրան վերև զետեղուած սպիտակ մարմարէ չիշատակարանին առաջին մասին մէջ, ուր այսպէս գրուած է.

– «Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ, մտցէ և ելցէ և ճարակ գտցէ: Նորոգեցաւ Ս. Աստուածածնայ եկեղեցիա ի թվին Հայոց¹, 984=1535-ին ... ի Հայրապետութեան Տոն. Յովհաննէս կաթողիկոսի»:

Հալէպի եկեղեցոյ ձեռագիր թիւ 154 Յայրապետութիւն նոյնպէս գրուած է Յովհաննէս Գ. կաթողիկոսի օրով:

«... Եղաւ գրաւորութիւն գրոյս ի ԶԶԵ=1536 թուականին ... ի գաւառս Սսոց, ի բերդն Զէյթուն, բայց Ե. մղոնաւ հեռի գրեցաւ գիրքս այս ի հայրապետութեան Տոն. Յովհաննէս կաթողիկոսին, ձեռամբ գրիչ Գաբրիէլի»:

Օրմանեան Սրբազան իր «Ազգապատում» աշխատութեան բազմահատորին մէջ (էջ 2225) կը չիշատակէ Սուլթան Սուլէյման Գանունիի նուաճումներու շարքին նաև գրաւումը «Իլէվի» գաւառին (Քիլիսէն արևելք) 1526-ին, դիտել տալով, որ այդ պատերազմներու հետևանքով Սիս, Տարսոն, Ատանա և Կիլիկիոյ ուրիշ քաղաքներ մեծ վնասներ կրեցին: Քանի որ Օրմանեանի ակնարկած թիկուրանցի Յովհաննէս Բ. կաթողիկոսը վախճանած էր 1525-ին, ուրեմն Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոսի օրերուն կ'իյնան այդ դէպքերը:

1. «Հայոց Մեծ Թուական» կամ «Թուականութիւն Ասքանազեան, Թորոմեան»ի հիմնադրումը 6-րդ դարի կէսին կը բացատրուի բիւզանդական-քաղկեդոնական եկեղեցիէն բաժանմամբ: Համապատասխան «Յուլիոս»եան-քրիստոնեական թուականը գտնելու համար «Հայոց Թուական»ին պէտք է գումարել 551 (552).

Սահակ Ա. Կաթողիկոս Քրիլիսցի, Մէլիսանէճեան (1674-1686):

Սահակ Ա. Կաթողիկոս Քրիլիսցիի գահակալութեան թուականի և ծննդավայրի մասին ստոյգ տեղեկութիւն կայ Չմմառի թիւ 331 ձեռագրին մէջ, որը առնուած է Սսոյ Մաշթոցէն.

– «Ի թվին Հայոց ՌձԻԳ=1674 կալաւ զաթոռս հայրապետութեանն Տէր Սահակ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, որ է ինքն Քրիլիսցի»:

Սահակ Ա. Կաթողիկոսէն մնացած է վաւերագիր մը, որ կ'ըսուի.

– «Յի. Քի. ծառայ Սահակ Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց և Պատրիարք Ս. աթոռոցն յԵրուսաղէմայ և սպասաւոր Սբ. Լուսաւորչի Աջոցն, գրեցաւ թվին Հայոց ՌձԻԹ=1680 և Օգոստոսի 2» և այս վաւերագիրը կնքուած է Սահակ Ա. Կաթողիկոսի ձեռքով:

Մաղաքիա դպիրի գրած կաթողիկոսաց ցանկին մէջ պարզապէս ըսուած է «Տէր Սահակ Մէլիսանէճի»: Օրմանեան Սրբազանը «Մէլիսանէճի» մականունին մասին կը գրէ «Ազգապատում» գրքին մէջ (էջ 2590).

– «Սահակ Մէլիսանէճի մականունին բացատրութիւնը չենք գիտեր, թէ՛ արդեօք գինեպանի զաւակ եղած էր, թէ՛ պարզապէս արբշիւ մը: Մէլիսանէճի կը նշանակէ՝ Մէլիսանէճեան, որ կրնայ ընտանեկան բուն մականունն ըլլալ, յառաջացած հօր արհեստէն: Ամէն պարագայի մէջ, երգիծանքի նիւթ չի կրնար ըլլալ և պատասխանատուութիւն չկայ իր գերդաստանին յորջորջումին կամ մականունին նկատմամբ»:

Այնթապի բոլորագիր ծաշոցին մէջ յիշատակուած է Սահակ Ա. Կաթողիկոսը՝ «Ի կաթողիկոսութեան Կիլիկիոյ Սահակի, որ ի Սիս, ՌձԻԶ=1677 թվին»:

Ունինք նաև հետևեալ լիշատակութիւնները Սահակ Ա. Քրիլիացի, Մէլխանէճեանի գահակալութեան տևողութեան մասին.

ա) Անկիւրիոյ կարմիր վանքի թիւ 77 Ձեռագրին մէջ.

– «Գրեցաւ Քարոզագիրքս ի թվին ՌՃԻԶ=1677 ի յերկիր Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքն Ձեթուն, ի կաթողիկոսութեան կիլիկեցոց Տէր Սահակին»:

բ) Երուսաղէմի թիւ 1712 բոլորագիր շարականին մէջ.

– «Ի թվին ՌՃԻԷ=1678 յերկիրն Գերմանիկոյ, ի գիւղաքաղաքն Ձեթուն, ... ի կաթողիկոսութեան կիլիկեցոց Տէր Սահակի»:

գ) Հայէպի թիւ 105 Տօնացոյցին մէջ.

– «Գրեցաւ տօնացոյցս ի թվին ՌՃԻԸ=1679, Ապրիլ Ամսոյ ի ԺԱ=11, ի մայրաքաղաքն Հայէպ ... ի Հայրապետութեան կիլիկիոյ Տեառն Սահակայ»:

դ) Երուսաղէմի թիւ 1661 նօտր գիր Ձեռագրին մէջ.

– «Գրեցաւ տօնացոյցս ի թվին ՌՃԻԹ=1680 ի Քրիլիս գիւղաքաղաքն ձեռամբ Ձեթունցի Մհի. Մկրտիչ դպրի, ի կաթողիկոսութեան կիլիկիոյ Տեառն Սահակայ»:

ե) Հայէպի թիւ 156 Ձեռագրին մէջ.

– «Գրեցաւ սբ. Աւետարանս ի թուականութեան Հայոց ՌՃԼԲ=1683, ի հայրապետութեան Սահակ կաթողիկոսին, ի Յունիս ամսոյն, ընդ հովանեաւ սբ. Ած. ամենին և սբ. Քառասունք եկեղեցոյ, ի քաղաքն ի Բերիա որ է Հալապ, գրեց վարդան Երէց ի վայելումն իւրոյ»:

Սահակի կաթողիկոսութեան տարին ստուգապէս կը ճշտուի իր պաշտօնական կնիքին թուականով ՌՃԻԳ=1674:

Իրեն յաջորդ եղած է Գրիգոր Բ. կաթողիկոս, դարձեալ պաշտօնական իր կնիքով՝ ՌՃԼԵ=1686:

Ուրեմն՝ Սահակ Ա. կաթողիկոս Քրիլիացի (Մէլխանէճեան) 12 տարի պաշտօնավարած պիտի ըլլայ:

Դժբախտաբար այդ բաւական երկար տարիներու գործունէութեան պատմութիւնը մութի մէջ է:

Քիլիսցի երկու երջանկայիշատակ կաթողիկոսներու մասին բացի վերոյիշեալ յիշատակարաններու արձանագրութիւններէն ուրիշ տեղեկութիւններ չունինք: Քիլիսցի այդ երկու հայրապետները նախապէս եղած պէտք է ըլլան Քիլիսի միջնադարեան Սուրբ Յովհաննէս վանքի միաբաններ, վանականներ: Նոյն այդ վանքի բազմաթիւ ձեռագիր մատեանները եթէ փճացած, ոչնչացած չըլլային (անփոյթ ու յանցաւոր «Չերմեռանդութեամբ» այդ սրբազան մատեանները թաղուեցան՝ ծրարներով զետեղուելով 1856—ին կառուցուելու սկսած Սբ. Յովհաննէս եկեղեցիին չորս անկիւններու հիմնաքարերու ներքեւը), շատ հաւանաբար որոշ լոյս սփռէին կաթողիկոսացած այդ նախկին վանականներու մինչև կաթողիկոսանալը ունեցած գործունեութեան և կեանքին մասին:

Քիլիսի ու շրջանի, գաւառի հոգևոր և կրթա-մշակութային կեանքի երախտաւորներէն, բացի Մեծի Տանն Կիլիկիոյ այդ երկու կաթողիկոսներէն, այստեղ կ'ուզենք ներկայացնել յիշատակութեան արժանի հոգևորական կամ աշխարհական այն գործիչները, որոնք իրենց վաստակաւոր գործունէութեամբ որոշակի հետք թողած են ո՛չ միայն Քիլիսի Հայոց կրթա-մշակութային կեանքի, այլ նաև՝ ամբողջ միջնադարեան Կիլիկիոյ Հայութեան կեանքին ու մշակոյթին վրայ:

Անոնցմէ առաջինը՝ միջնադարեան Կիլիկիեան հայկական մատենագրութեան եռագագաթ փաղանքէն՝ Ներսէս Շնորհալիին և Ներսէս Լամբրոնացիին ժամանակակից՝ առականագիր, մատենագիր Վարդան Մարաթացի—Այգեկցին է:

Քիլիս գաւառի սահմաններուն մէջ եղող՝ Մարաթա հայաբնակ աւանին մէջ ժԲ դարու վերջին յիսնամեակին ծնաւ վարդան Առակագիր վարդապետը՝

«Ողորմելի վարդանս, որ ի Մարաթայ, յերկրէն Կիւրիսոյ, ի գաւառէն Տլքոյ», ինչպէս ինք կը գրէ իր ծննդավայրին մասին՝

Ուրեմն վարդան ծնած է Տլուք գաւառին պատկանող Կիւրիս կամ Կոռիսու (այժմ՝ աւերակ Շէյխ—Խորոզ՝ Քիլիսէն արևմուտք) քաղաքին Մարաթա աւանին մէջ։ Տլուք գաւառը կիլիկեան հայկական ժամանակաշրջանին կը տարածուէր Այնթապի հիւսիսէն սկսելով մինչև Մարաշի մօտերը, իսկ բուն Տլուք քաղաքէն դէպի արևմուտք իր մէջ կ'առներ Քիլիսը, Կոռիսուն և Աֆրինը։ Աֆրին գիւղաքաղաքէն դէպի արևմուտք՝ 6 քիլոմետր հեռու է Մարաթա, այժմ քրտաբնակ գիւղը, Քիլիսէն 15—20 քմ հարաւ։ Տլուք գաւառը, նախքան Խաչակիրներու Կիլիկիա ներխուժելը, տիրոջթն էր Հայ իշխան Գոռ վասիլի ու մասամբ՝ հայազգի բիւզանդական զօրավար Փիլարտոսի։

Վարդան իր նախնական ուսումը ստացած է իր ծննդավայր ամբողջովին հայաբնակ աւանին՝ Մարաթայի մէջ։ Սիսի մօտ գտնուող «Սեան Լեռանց» Արքակաղին վանքին մէջ վարդապետական աստիճան ստանալէն ետք, որպէս ականաւոր առակաբան, քարոզիչ, կը շրջի տարբեր քաղաքներ՝ մինչև Եդասիա, Ամիթ։ Ինչ—ինչ պատճառներով հալածական ու թափառական կը հեռանայ հայրենի վայրերէն՝ «Ձի հարածական եղաք ի բնիկ ժառանգութենէ մերմէ յերկրէն Կիւրիսոյ և ի գաւառէն Տլքոյ»², ինչպէս կը գրէ վարդան

1. Յ. Տէր Ղազարեան, —Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966, էջ 183:

2. Յ. Տէր Ղազարեան, —Հայկական Կիլիկիա..., էջ 185:

Առականագիրը: 1206 թուականին ան վերջապէս կը հաստատուի Մարաշի մերձակայ (Տոսխ կոչուած այգեկետ ձորի մէջ 1166 թվին հիմնուած) Այգեկ վանքը, որտեղէն ալ Առականագիր վարդան վարդապետ Մարաթացին մատենագրութեան մէջ աւելի ծանօթ է Վարդան Այգեկցի անունով:

Այստեղ վարդանը կը սկսի զբաղուիլ գրական-մատենագրական գործունէութեամբ: Կը գրէ իր յայտնի քսաներկու ճառերը, Պաղտիկ իշխանին խնդրանքին վրայ: Այնուհետև կը գրէ «Խրատական թուղթեր» (նամակներ-թիւով հինգ հատ) իր հոգևոր սան՝ Անտիոքի Եպիսկոպոս Միքայէլին: Գրած է նաև ուրիշ թուղթեր, խրատական գրութիւններ: Այս բոլոր ճառերն ու խրատական թուղթերը գրելու ընթացքին, վարդան-Մարաթացի-Այգեկցին միշտ մտածեր է ժողովուրդէն աւելի հասկնալի դառնալ, ահա թէ ինչու իր խրատականները, գրոցները համեմած է առակներով, որոնք գրուած են Կիլիկեան Միջին հայերէնով՝ «ռամկօրէն»ով: Այսպիսով վարդան Այգեկցին հայ մատենագրութեան մէջ մտցուցած է գրական նոր սեռ՝ առակաւոր ճառեր:

Այգեկցին իր «Խրատականներուն» մէջ ներառած է Յոյն հռչակաւոր առականագիր Եվզոբոսի առակները: Յետագային, այդ առակները զատելով իր խրատականներէն ու ճառերէն, և զանոնք միացնելով Մխիթար Գօշի առակներուն, որպէս «Առականագիրք» կամ աւելի ծանոթ անունով որպէս «Աղուէսագիրք» առաջին անգամ կը տպագրուի Ամստերտամի մէջ 1668-ին, իսկ «Մխատք»ը լոյս կը տեսնէ Վենետիկի մէջ 1956-ին:

Վարդան Մարաթացի-Այգեկցիի գործերուն մէջ արծարծուած են կրօնա-բարոյական, ընկերային ու քաղաքական հարցեր: Մանաւանդ՝ ժամանակի, միջնադարեան քաղաքային միջավայրի առօրեայ կեանքը և ժողովուրդի կենցաղը: Օրինակ՝ այդ օրերուն օտար մահմետական իշխողներու նկատմամբ հայ ժողովուրդի վերաբերմունքը, նաև՝ Հայ իշխաններու, մեծատուններու (մեծահարուստներու) և ռամիկ, հասա-

րակ ժողովուրդի հետ յարաբերութիւնները և ընդհանուր դրութիւնը:


Իր «Հայկական Կիլիկիա» արժեքաւոր աշխատութեան մէջ Յ. Տէր Ղազարեանը բարձր գնահատելով Առակագիր վարդան Մարաթացի-Այգեկցիի գործը, հետևեալը կը գրէ անոր մասին.

– «Վարդան Այգեկցի, իսկական ու իրական Կիլիկեցի, յայտնի, նշանաւոր առակագիր, ըմբոստ ոգիով կղերական մըն էր: Իր քարոզները, մեծ ու պզտիկ խարազանող ոճով, խալթող բնոյթ մը ունէին, այդ պատճառով ալ շատ տեղեր գտնուեցին և միշտ ալ տհաճութիւն պատճառելով վրնատուած էր»¹:

Արդարև, Վարդան Այգեկցի վարդապետը, որպէս նուիրեալ «քաջ հովիւ», իր կոչումին անսալով շրջեցաւ քաղաքներ ու աւաններ, միշտ ուսուցանելով ու քարոզելով արդարութիւն, բարեգործութիւն և ռամիկ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւն: Այն խորհրդատուն եղաւ ժամանակակից Հայ և Խաչակիր իշխաններու ու անվախօրէն, խիզախօրէն քննադատեց ու այլանեց անոնց վատ և չար արարքը, անարդար վերաբերմունքը իրենց թւարկության տակ գլտնող ռամիկներուն հանդէպ: Միշտ թելադրեց իշխանաւորներուն, որ հոգածու ըլլան իրենց ենթակայ չքաւորին, որը և այրիին նկատմամբ և երբեք անիրաւօրէն չկողոպտեն անոնց արդար քրտինքով շահած վաստակը: Այգեկցին սուր քննադատութեան ենթարկեց իր «ձառ»երով հասարակութեան կենցաղային խոտոր բարքերը, ինչպէս պարզ կ'երևի անոնց անուանումներէն՝ «ձառ վասն շնութեան», «ձառ վասն որովայնամոլութեան», «ձառ վասն կախարդութեան», «ձառ վասն վառամոլութեան», նաև՝ ամբարտաւանութեան, արծաթասիրութեան, գողութեան, նենգութեան, հիշոցատվութեան ևն:

Բնականաբար, Այգեկցիի խարազանող ճառերն ու

1. Յ.Տէր Ղազարեան,–Հայկական Կիլիկիա..., էջ 202:



Վարդան Մարաթացիի ծննդավայր շրջանի կերտնը՝ Կիւրիւս (Cyrthus)
(Եղարմաձ՝ 1936-ին: Այժմ ավերակներ):

առակաները իրենց հակազդեցող թիւնը պիտի ունենային: Ահա թէ ինչու ան պիտի ենթարկուէր հալածանքի թէ՛ իշխանաւորներու, թէ՛ կրօնակից եղբայր բարձրաստիճան կղերականներու կողմէ, որուն հետեանքով ան նախ հեռացաւ իր ծննդավայր Մարաթայէն, նաև՝ Կուռիս-Կիւրիսոյէն, Տլուքէն, ինչպէս կը գրէ ինք. «Ձի հալածական եղաք ի բնիկ ժառանգու թեանէ մերմէ յերկրէն Կիւրիսոյ և ի գաւառէն Տլքոյ» և ապաստանեցաւ Այգեկ վանքը, ուր և կատարեց իր բեղուն մատենագրական գործունէութիւնը—իւր քսաներկու ճառերը, խրատական հինգ թղթերը և ուրիշ թղթեր ու խրատական ստեղծագործութիւններ:

Խրատներէն վերջինը գրուած է 1229—ին: Ծննդեան և մահուան թուականները անյայտ են, որովհետև վարդան Առակագիրի վերաբերեալ կենսագրական տեղեկութիւններ պահպանուած չեն: Իր ստեղծագործություններուն յիշատակարաններուն մէջ պահպանուած որոշ տեղեկություններէ գիտենք, որ ծնած է Մարաթա՝ «Վարդանս որ ի Մարաթա յերկրէն Կիւրիսոյ ի գաւառէն Տլքոյ», 12—րդ դարու երկրորդ յիսնամեկին (1150—էն յետոյ) և վախճանած պիտի ըլլայ 1229—ին գրուած վերջին իր խրատականէն յետոյ, հաւանականօրէն՝ 1240 թուականին:

Վարդան Այգեկցիի ստեղծագործութիւնները մեր Միջնադարեան գեղարուեստական արձակի գոհարներ են, կ'ըսէ Մանուկ Աբեղեան, միաժամանակ կարևոր աղբիւր են 12—13—րդ դարերու ժողովուրդի կեանքի այնպիսի կողմերուն համար, որոնց մասին լուռ են նոյն ժամանակաշրջանի մեր մատենագրութեան մնացեալ աղբիւրներն ու յուշարձանները: Աբեղեանը կը շեշտէ նաև Այգեկցիի ճառերուն՝ իր ժամանակաշրջանին համար խիզախ ու յառաջադիմական, ընդհուպ ընկերվարական հոգեբանական բնոյթը, որով կը բացատրուի անոր առականերուն մնայուն ժողովրդականութիւնը:

Վարդան Մարաթացի—Այգեկցիի ստեղծագործութիւնը

արժևորած ու բարձր գնահատած են Մխիթարեաններէն Հ. Տաշեանը, նաև՝ Յովսէփ Օրբելին, Նիկողայոս Մառը:

«Հայկական Կիլիկիա» հատորի հեղինակ՝ Յ. Տէր Ղազարեանը, վարդան Մարաթացիի նման ինքն ալ «իսկական ու իրական Կիլիկեցի» (ծն. Մարաշ) Մարաթացիին մասին իր հիացմունքը արտայայտելով կը բացականչէ.

«Այսքան մեծ համբաւի տէր վարդան Այգեկցիի մասին Սուրիոյ Հայութեան մեծամասնութիւնը տեղեկութիւն չունի, նոյնպէս չէ հետաքրքրուած անոր ծննդավայր Մարաթայով, որ այնքա՛ն մօտ է իրենց»¹:

Արդարև, Մարաթան Սուրիա-Թուրքիա սահմանագծին վրայ գտնուող Քիլիսէն մի-քանի մղոն հարաւ-արևմուտք և Հալէպէն գրեթէ նոյն հեռաւորութեամբ՝ հիւսիս-արևմուտք գտնուող Աֆրին գիւղաքաղաքին մօտն է (Քիւրտ-Տաղի շրջան): Այժմ քրտաբնակ այդ գիւղը Յ. Տէր Ղազարեանը անձամբ գացեր, այցելեր է 1960-ական թուականներուն և իր ականատեսի դիտարկումները գրի առած է այսպէս.

– «Գիւղին մէջ և շուրջը փլած շէնքերու ավերակոյտեր անպակաս են, նեղ տարածութեան մը վրայ կը տեսնուին յղկուած քարեր, թրծուած աղիւսներ: Գիւղէն քիչ հեռու ժայռերու մէջ փորուած ձեռակերտ քանի մը քարայրեր կան, որոնք «ծերպակենացներու» մենաստաններ եղած են»²:

Իր հիացմունքին ու շահագրգռութեան որպէս եզրակացութիւն, «Իրաւ և իսկական» Կիլիկեցի, բժիշկ Յ. Տէր Ղազարեանը կ'առաջարկէ. «Կ'արժէ, որ Հալէպահայ Ուսուցչական Միութիւնը և կամ Ուսանողական Միութիւնը այցելեն անոր (Մարաթացիին) ծննդավայրը և յիշատակի օր մը յատկացնեն անոր ի պատիւ և երթան Մարաթա: ...Աւելին ըլլալով, ակնածանքով մօտենան Այգեկցիի ծննդավայր

1. Յ. Տէր Ղազարեան, «Հայկական Կիլիկիա...», էջ 192:

2. Յ. Տէր Ղազարեան, «Հայկական Կիլիկիա...», էջ 184:

Մարաթային, իւրացնեն փոքր ծաւալով հողաշերտ մը նոյն գիւղին մէջ, վրան կառուցելու համար Յիշատակարան (Յուշակոթող) մը՝

«ՀԱՅ ԱՌԱԿԱԳԻՐ ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻԻ
ԾՆՆԴԱՎԱՅՐ՝ ՄԱՐԱԹԱ»

վերտառութեամբ»¹:

Ձենք գիտեր, թէ՛ նման նախաձեռնութիւն կատարուած է, թէ՛ ոչ մինչև օրս: Յամենայն դէպս, նման նախաձեռնութիւն մը, ըստ մեզի, առաջին հերթին Քիլիսի Հայրենակցական, կամ Կրթասէր Երիտասարդաց Միութեան սրբազան պարտաւորութեանց ծիրէն ներս պէտք է գտնուէր:

* * *

Եզրակացնելով՝ Քիլիսի Հայութեան կրթամշակութային երախտաւորներէն՝ մեծ Առակագիր վարդան Մարաթացի-Ալգեկցիի մասին մեր ակնարկը, ստորև կը ներկայացնենք անոր առակներէն մի քանիները՝ արտատպելով Յ. Տէր Ղազարեանի «Հայկական Կիլիկիա» բնագրային հատորէն, քաղուած, ըստ հեղինակին, «Հին գրչագիր «Ճառընտիրէ» մը, որոնք կը կարծեմ, թէ մատչելի չեն եղած հանրութեան»²: Առակները գրուած են ժողովուրդական խօսակցական լեզուով, որ Հրաչեայ Աճառեանի դնահատմամբ Կիլիկեան Միջին հայերէնն է³:

* * *

Գայլին Աւետարան

Գայլուն խրատ տային և Աւետարան կարդային թէ ա՛յ ոչխար և պարխէ մի խեղթեր: Եւ ասէ գայլն, շտապէ ու

1. Յ.Տէր Ղազարեան, Հայկական Կիլիկիա..., էջ 192:

2. Յ.Տէր Ղազարեան, Հայկական Կիլիկիա..., էջ 180-182:

3. Հ. Աճառեան, Հայոց Լեզուի Պատմութիւն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 238:

չուտ կարդայ զԱւետարանդ զի գեհն (ոչխարի հոտը) անցաւ ընդ սարն:

Յուցէ (առակա) թէ այսպէս են որդիք մարդկան, որ ոչ լսեն խրատու աւետարանին, այլ՝ միտք նոցա ի չարութեան և յափշտակութեան են, որպէս զգայլն զայն:

* * *

Ճառ վասն երկչոտութեան

Աղուեսն ու նապաստակն և այլ մանր անասունքն ելան գնացին թէ ի ծովն լցվինք և խեղթուինք, քանի զմեզ որսան մարդիկ և շունք: Եւ տեսին ի ծովեզերն զսոքա գորտք և կրեայք անկան ի ծովն սոքայ: Տեսին որ քան զիւրեանքն վախկոտ այլ կային և դարձան ի լեառն: Պարտ է մարդոց որքան զինքն ի վայր նայի և փառք տայ Աստուծոյ:

* * *

Առակ մը՝ «Ճառ վասն որովայնամոլութեան»էն

Եւ արդ ահա տեսանեմք զմեծատունսն որ ի ձեռն մշակաց գործեն և փշովք պատեն և պահեն զայգիս և սղբախտս և ի ժամ ճաշակման ողկուզիցն և պտղոցն ո՛չ զմշակսն լիշեն և ոչ զփուշն, այլ՝ տանու տեառն շնորհակալ լինին և նմայ յերկար կեանք և խաղաղական հացեն Աստուծոյ:

Նոյնպէս փառագարդ մեծ իշխանին ի ձեռն շունց և գիշակեր թռնոցն որսան զերեսն և զթռչունսն: Իսկ ի ժամ ճաշակման պարարտ և անուշահամ մսոյն ո՛չ զշունն լիշեն և ոչ ալ թռչունսն, այլ՝ իշխանին լինին շնորհակալ և յԱստուծոյ խնդրեն երկար ժամանակօք վարել նմայ իշխանութիւն:

* * *

Ճառ վասն վատի ընկերութեան

Այլ ոմն սիսեռ և բակլայ ցանեաց և գային սագերն ու բադերը և ուտէին: Եւ գնաց հողագործն և լարեաց շուրջ զցանովն ակնատք (թակարդ) և մի օր երթեալ ետ և ակնատքն ընկալեալ էին սագեր, բադեր և արագիլ մի և սկսաւ հարկանել զարագիլն: Եւ նա ասէ մարդկային բարբառով.

— «Իմաստուն հողագործ, մի սպանանէր զիս, զի ես քո բարեկամ եմ և զքոյ անդաստանն կու սրբեմ ի ժժմանց (որդերէն, ճճուներէն) և դու աղէկ գիտես, որ ես հնդակեր (հունդեր ուտող) չեմ, ո՛չ բակլա կուտեմ, ո՛չ ալ սիսեռն, ողորմեա՛ց ինձ»: Եւ ասէ հողագործն—«Որովհետեւ ընդ չարակամս իմ ըմբռնեցար, ընդ նոցին և մեռցես: Երբ դուն բարի հաւ ես, ի հետ չար հաւերուն է՞ր ես», և սպան զնա:

Յուցանէ առակս թէ մարդ որ գող ու պոռնիկու հետ վատ է, երբ վատի ընկեր լինի, մեռանի ի հետ վատին որպէս մեռավ արագիլն հետ սագերուն և բաղերուն:

* * *

ՄԿՐՏԻՉ ԿԱՂՆ (ՍԱՐԿԱԻԱԳ)

Այս վերնագրի տակ «Յուշամատեան Քիլիսի Հայոց» բնագրային աշխատութեան մէջ հետևեալը գրուած է. «Ժէ դարու վերջաւորութեան և ԺԼ դարու սկիզբը Հայկալի մէջ ապրած է ծագումով Քիլիսցի սարկաւազ մը, Մկրտիչ Կաղն, որ եղած է արաբական (Սուրիա—լիբանանեան) զարթօնքի մշակներէն մին, գրելով արաբերէն քարոզագիրք մը: Իր մասին գրուած է հետևեալը.

«Մկրտիչ Կաղն, ծնած Քիլիս, Հայ սարկաւազ, ապրած՝ ի Հայկալ, եղած է արաբական զարթօնքի մշակներէն ԺԸ դարուն (1670—1732): Նիկողայոս Սայեղի և Ֆերմանոս Ֆարհատի գործակից եղած է և 1713—ին գրած է գիրք մը՝ «Al Tibir al Maknus li Mansáat al Karus» (Թրգմ. Զտեալ ոսկի յօգուտ աղանդաւորաց)՝

Նկատի ունենալով, որ «Մկրտիչ Կաղն» եղած է «Արաբական Զարթօնքի» մշակներէն մին, ենթադրեցի, որ անոր մասին անդրադարձած կ'ըլլայ Սիսակ վարժապետեանը իր

1. Յուշամատեան..., էջ 196:

«Հայերը Լիբանանի Մէջ» պատմագրական աշխատութեան մէջ, լոյս ընծայուած Պէյրութ, 1956-ին: Եւ իրոք Ս. Վարժապետեանի գրքին մէջ գրուած է հետևեալը այդ մասին.

«Քիլիսցի Հայ Ապտուլլայի (Կիւրեղի) զաւակը՝ Մկրտիչ Քեսիհ (անդամալոյծ) Արաբական գրականութեան փայլուն աստղերէն մին եղած է, որ Հայ է ծագումով, անշարժութեան դատապարտուած: Հօրը անունը Կիւրեղ էր (Ապտուլլա) ճանչուած: Մանկութեան հասակին (հիւանդութեան պատճառով) Հայէպ եկած, ուր սերտած ու կատարելագործած է արաբերէնը, ժամանակի յայտնի արաբագէտներու մոտ, որոնցմէ է Խուրի (քահանայ) Պութրոս էլ-Թուլավի (Մարօնիթ): Ապա ինքնաաշխատութեամբ աւելի կատարելագործած է արաբերէնը և նուիրուած արաբական մշակոյթին»¹:

Վարժապետեանը կը յայտնէ, թէ այս տեղեկութիւնները քաղած է Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի «Աւետիք» պաշտօնաթերթին մէջ լոյս տեսած՝ Գաբրիէլ Վարդապետ Գասպարեանի մէկ յօդուածէն և նոյն վարդապետին հետ իր ունեցած տեսակցութիւններէն:

Ահա՛, այսպիսին էր Քիլիսի Հայ Կաթողիկէ համայնքի արժանաւոր զաւակ ու պարծանք՝ Մկրտիչ Անդամալոյծն («Մկրտիչ Քեսիհ էլ էրմէնի» յորջորջումով ծանօթ Սուրիական արաբական զարթօնքի ռահվիրաներու շարքին), որ հակառակ ի մանկուց հաշմանդամ, անդամալոյծ ըլլալուն, այս հոգևորական-գիտնականը շնորհիւ իր հոգևոր եռանդին և ի ծնէ տաղանդին, հասաւ բարեկամ Սուրիացի ժողովուրդի 17-18-րդ դարի գրական ու մշակութային զարթօնքի ռահվիրաներէն մէկը դառնալու բարձունքին: Ահա թէ ինչու իրաւունք ունինք Քիլիսցի Կիւրեղ Ապտուլլայի որդի, Մկրտիչ Անդամալոյծ սարկաւազը դասելու մեր Քիլիսի կրթամշակութային կեանքի երախտաւորներու շարքին:

* * *

1. Ս. Վարժապետեան, Հայերը Լիբանանի Մէջ, Պէյրութ, 1956, էջ 230.

ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

Բերիոյ (Հալէպի) Թեմի Առաջնորդ Վեհապետեան սրբազանը երախտաշատ հոգևորական եղած է Քիլիսի Հայութեան համար, թէև ծնունդով ոչ Քիլիսցի: 1880-ական թուականներուն սկսած կրթամշակութային զարթոնքի նախաձեռնութիւնն ու գործնական քայլերով կեանքի կոչուելը անոր կը պարտինք:

Որպէս Բերիոյ Թեմի Առաջնորդ՝ ան սերտ կապերով կապուեցաւ իրեն ենթակայ Քիլիսի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ համայնքին հետ: Մինչ այդ՝ նա ծանօթ էր Քիլիսի Հայոց ազգային կեանքին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Մկրտիչ Քէֆսիզեանի (1871-1894) հետ յաճախակի այցելած ըլլալով Քիլիս և արժանացած ըլլալով Քիլիսցիներու մտերմական «պստիկ վարդապետ» յորջորջումին: Արդարև 1884, Սեպտեմբեր 1-ին, Վեհապետեան սրբազանի ջանքերուն շնորհիւ է, որ հիմնադրուեցաւ Քիլիսի «Լեոնեան Դպրոցասիրաց Ընկերութիւնը», որը շուտով իր 500 անդամներով ժողովրդական զանգուածային կազմակերպութիւն մը դարձաւ: Լեոնեան Դպրոցասիրացին յաջորդեց շուտով «Ջապէլեան» տիկնանց ընկերութիւնը 300 անդամներով, որոնց շնորհիւ ու միջոցով հիմնադրուեցաւ առաջին Աղջկանց վարժարանը, որը այդ տարիներուն խիզախ նորամուծութիւն էր ո՛չ միայն Քիլիսի, այլ նաև ամբողջ այդ շրջանի Հայութեան կեանքին մէջ:

Լեոնեան Դպրոցասիրացը կազմակերպեց և բացաւ Լեոնեան Ազգային վարժարանը, որուն հետեւելով իրականութիւն դարձաւ յաջորդ տարիներուն նաև Արուսեակ, Հայկազեան և Լուսասիրաց վարժարաններուն բացուելը:

Դպրոցաշինական գործունեութեանը զուգընթաց՝ Մկրտիչ սրբազանը դիմեց նաև ազգային եկեղեցական կազմա-

կերպչական քայլերու: 1860—ական թուականներուն Պոլսոյ մէջ հրապարակուած Հայոց Ազգային Մահմանադրութեան տրամադրութեանց համաձայն Քիլիսի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ համայնքին համար կազմակերպեց և ժողովրդական ազատ ընտրութիւններով ստեղծեց, ո՛չ թէ նշանակեց, առաջին թաղական խորհուրդը: Ինքն է, որ հիմը դրաւ «Ժողովրդական լսարանի» դրութեան: Կիրակի թէ շաբթուան որոշ օրերը՝ երեկոները Ազգային վարժարանի ընդարձակ սրահին մէջ «քարոզախօսութիւններ (ո՛չ թէ՛ քարոզներ) տալով, որոնք լայն ժողովրդականութիւն վայելեցին: Այդ քարոզախօսութիւնները խթան դարձան յետագայ տարիներուն, 1900—էն սկսեալ, դպրոցի սրահին մէջ ամէն կիրակի ժողովրդային լսարանին կանոնաւոր կերպով շարունակուելուն: Այդ կիրակնօրեայ ժողովրդային լսարանի ժամանակ, ուսուցիչներ, բժիշկներ, քահանաներ և այլ մտաւորականներ զեկուցումներ, դասախօսութիւններ, բանախօսութիւններ կու տային պատմական, կրօնա—բարոյական, հոգևոր և առօրեայ հարցերու շուրջ: Այդ ելույթներէն յետոյ տեղի կ'ունենար լրագրական տեղեկատուութիւն և գեղարուեստական բաժին:

Վեհապետեան սրբազանը, հետամուտ ու նախանձախընդիրը ըլլալով նոր սերունդի ազգային դաստիարակութեան և ազգային ոգիի, ազգային լեզուի, մշակոյթի և ազգային արժանապատուութեան ոգիի մշակմամբ, անձամբ կ'այցելէր դպրոցները և ներկայ կ'ըլլար դասերուն: Այս կապակցութեամբ ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը կը յիշէ.

«Վեհապետեան սրբազանի վերջին գործը եղաւ անուանափոխութեան խնդիրը: Օր մը դպրոց այցելեց և աշակերտները քննութեան ենթարկել ուզեց: Ուսուցիչը կանչեց, բնականաբար յաջողակ աշակերտները.—Լուծֆիկ Ղազէլեան, Լուծֆիկ Բչաքճեան ... և երբ երրորդ Լուծֆիկը պիտի կանչէր.—«է՛հ ... հերիք է», ըսաւ, այս ո՞րչափ Լուծֆիկ է, պէտք է փոխել անունները, և հրապարակաւ՝

— «Այսօրու ընէ սկսեալ Ղազէլեանը՝ Սմբատ է, Բչաքճեանը՝ Արմենակ է և մնացեալը քեզի կը յանձնեմ, Պրն. Տնօրէն» ըսաւ և կարևորութեամբ բացատրեց օտար անուններուն տեղ հայկական անուններ դնելու անհրաժեշտութիւնը: Վեհապետեան եպիսկոպոսը ջանք թափեց նաև չափահասներու անունները հայացնելու ուղղութեամբ: Լևոնեան Դպրոցասիրաց Ընկերութեան անդամներէն մէկուն «Գարա Օղլան» կ'ըսէին: Սրբազանը լսարանին մէջ քարոզախօսած պահուն ըսաւ.— «Այս մարդուն ասկէ յետոյ ով որ «Գարա Օղլան» կ'ըսէ, տուգանք պիտի վճարէ: Այդպէս ալ եղաւ և այլ մարդը յետ այնու ստիպուած՝ Յոլակեան ստորագրեց»¹:

Վեհապետեան Մկրտիչ եպիսկոպոսը եղաւ այսպիսի նուիրուած, նորարար ու յառաջադիմասէր, մտաւորական հոգևորական մը: Ան իրաւամբ կը հանդիսանայ Քիլիսի Հայութեան կրթամշակութային կեանքի երախտաւորներէն մին:

* * *

ՏԻՐ ՎԱՀԱՆ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Քիլիսի Հայոց նախա-Եղեռնեան՝ 1900—ական թուականներու շրջանի պատմութեան հիմնական դէմքերէն մէկը հանդիսած է կարապէտ Խալֆէ Թովմասեանը, ծնեալ ի Քիլիս, Սասունցի ծնողներէ, 1857 թուականին: Ան իրաւամբ Քիլիսի Հայոց երախտուոր ու երախտաշատ հոգևորականներէն մէկն էր: Իր ուսումը ստացած է 1800—ական թուականներու Քիլիսի առաջին ուսուցիչներ Անտոն և Սարգիս վարժապետներուն քով և յատկապէս օգտուած է բարեկարգիչ Յովսէփ Պատուե-

1. Յուշամատեն..., էջ 129—130:

լիէն, ինչպէս կը գրէ իր կենսագիր Հ. Պէրպէրեանը¹:

Ան գրաբարագէտ էր և օսմաներէնի (թրքերէն) հմուտ: Կարապետ «Խալֆէ»² եղած է Քիլիսի Լևոնեան վարժարանի ուսուցիչ, տեսուչ, տնօրէն՝ կրթական վաստակաւոր մշակ 20 տարիներ ի երկայնքին:

Ան քահանայ ձեռնադրուեցաւ 1891-ին և 32 տարիներ ծառայեց ազգին՝ բարօք ծառայութեամբ պաշտօնավարելով որպէս Բերիոյ Թեմի Առաջնորդական փոխանորդ Քիլիսի Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ աւագերէցի հանգամանքով: Ան Քիլիսի Հայոց ներկայացուցիչը կը հանդիսանար պետութեան՝ Քիլիսի կառավարական իշխանութեանց մօտ:

Քահանայ ձեռնադրուելէն անմիջապէս յետոյ եղաւ Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ Թաղական Խորհրդի նախագահ, և միաժամանակ կրօնական-եկեղեցական և դպրոցական-ուսումնական ժողովներուն վարիչը: Տէր վահան քահանան իր քահանայական և ազգային գործերը, բոլոր պարտականութիւնները կը կատարէր ձեռնհասութեամբ և լուրջ ու շինիչ գործունէութեամբ:

Որպէս զարգացած, լեզուագէտ քահանայ, ժամերգութեան ընթացքին որևէ գիրք ու Աւետարան գրաբարէ թրքերէնի թարգմանելով ուղղակի, սահուն և ճշգրիտ կերպով կը կարդար ի լուր ժողովրդեան: Փոքր տարիքէն եկեղեցւոյ մէջ հասակ առած ըլլալով, շարականներուն մեծագոյն մասը և ժամագիրքը գրեթէ ամբողջութեամբ գոց, անգիր գիտէր և յաճախ առանց գրքին նայելու կը կարդար, կ'երգէր: Տէր վահանը կենցաղագէտ էր, խօսելու, քարոզելու բարձր կարողութեամբ օժտուած, ծանրագլուխ ու պատկառազդու, անբասիր կեցուածքով հազուագիւտ հոգևորական մըն էր ան:

1. Յուշամատենան..., էջ 207-208

2. Խալֆէ-Խէլֆէ (արաբերէն՝ խալիֆա), փոխանորդ, տեղակալ: Որպէս գնահատական տիտղոս կը տրուէր հմուտ ուսուցիչներու, արուեստագէտներու: Նաև՝ արհեստաւոր վարպետի օգնական:

Թէ՛ որպէս երկարամեայ վաստակաւոր ուսուցիչ, Թէ՛ որպէս ժողովրդական պարկեշտ քահանայ, ան կը վայելէր Քիլիսի Հայոց բոլոր խաւերուն սէրն ու յարգանքը: Տէր վահան Աւագ քահանայ Թովմասեանը եղած է կնուսք-մկըրտութիւնը կատարողը տողերուս գրողի և իմ սերունդի գրեթէ բոլոր նորածիններու: Ան մեծապէս դնահատուած և յարգանքի արժանացած էր Բերիոյ Թեմի Առաջնորդարանին կողմէ և Քիլիս քաղաքի պետական-կառավարական շրջանակներուն մէջ՝ իր հազուագիւտ կենցաղավարութեան շնորհիւ:

Տարաբախտօրէն, Տէր վահան Թովմասեանը իր կեանքի վերջին տարիներուն մատնուեցաւ ցաւալի վիճակի մը: Նախ՝ իր անդրանիկ զաւակը՝ Թովմաս Թովմասեանը 1915 թ. Յունիսին կախաղան բարձրացուեցաւ իր Հնչակեան 19 միւս գաղափարակից ընկերներուն հետ, Պոլսոյ մէջ: Տխուր լուրը Տէր հօր հաղորդելու և զինք սփոփելու համար Հայէպի Առաջնորդարանին կողմէ Քիլիս կ'ուղարկուի Տէր Մկրտիչ քհն. Մուրատեանը: Յաջորդ կիրակի օր անհնար կ'ըլլայ վշտահար Տէր վահանը եկեղեցի երթալէն ետ պահելը: Պատարագէն յետոյ, երբ քարոզի ժամանակը կուգայ, Տէր վահանը անզուսպ կերպով ոտքի կ'ելլէ և լայով ու գոռալով՝ «Թովմասս կախեր են անգութ Թուրքերը» ըսելով, անէծքներ կը տեղացնէ Օսմանեան պետութեան հասցէին:

Տարագրութեան, Եղեռնի օրերուն տէր վահանը ականատես կ'ըլլայ իր հօտի ցիրուցան ըլլալուն՝ դէպի մահուան ճամբաները: Ինք ևս կ'աքսորուի Պասյ՝ Տէր-Զօրի ճանապարհին և ցմրուր կը քամէ դառնութեան բաժակը: Այս բազմաբեղուն ու տառապակոծ Քիլիսցի երախտաւոր հոգևորականին թաղումը կը կատարուի Հայէպ, 1923-ին:

* * *

ՏԷՐ ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ Մ ՈՄ ՃԵԱՆ

Քիլիսի Հայոց կրթա-մշակութային, ազգային-եկեղեցական կեանքին մէջ, 1890-էն մինչև 1915 թուականները—բացառիկ տեղ կը գրաւէ այս օրինակելի Հայ հոգևորականը:

Այնթապ ծնած 1868-ին, Պերճ Մոմճեանը Այնթապէն Քիլիս հրաւիրուեցաւ 1890-ին Քիլիսի «Արուսեակ» վարժարանին մէջ պաշտօնավարելու համար և իր կեանքին մնացած 25 տարիները անցուց Քիլիսի մէջ՝ ի ծառայութիւն Քիլիսի Հայ ժողովուրդին:

Պերճ Մոմճեանը ունեցաւ բեղուն ու երկարատև ուսուցչական գործունէութիւն մը Քիլիսի մէջ, որի մասին հանգամանօրէն անդրադարձած ենք «Քիլիսի Հայոց կրթա-մշակութային կեանքը» բաժնին մէջ: Անոր կենսագիր Համբարձում Պէրպէրեանը հետևեալ բնութագրումը կուտայ «Պարոն Պերճի» ուսուցչական գործունէութեան մասին.

«Ան իր բոլոր կարողութեամբ աշխատեցաւ ազգային ոգի ներշնչել ամէնուն: Ծառայասէր էր և անխոնջ ուսուցիչ մը: Աշակերտները վարժեցուց հայախօսութեան, գիշերային դպրոց բացաւ երիտասարդներուն համար և կարելիութեան սահմանին մէջ անոնց սորվեցուց հայերէն և ուսողութիւն: Հայկական ոգևորութիւնը չափազանցօրէն հրահրուած էր Պարոն Պերճի հոգիին մէջ, այնպէս որ դասերէն ավելի դասապահները կը յատկացնէր Բաֆֆիի գրուած քներուն ընթերցանութեան»¹:

«Պարոն Պերճ»ի նախ աշակերտ, յետագային պաշտօնակից դարձած Քիլիսացի յայտնի ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը կը գրէ.

«Պարոն Պերճին անկեղծ նուիրումը կը մագնիսացնէր

1. Յուշամատեն..., էջ 209-210.

երևտասարդութիւնը: Հիանալի էր նաև պարոն Պերճի դպրոցավարութիւնը: Զբոսանքներուն՝ աշակերտներուն հետ կը խաղար իբր ընկեր և հասակակից, իսկ դպրոցի ժամանակ խիստ և պատկառելի: Ան միայն ուսում չէր ջամբեր աշակերտներուն, այլ՝ անոնց մէջ կը կերտէր նաև նկարագիր: Ան միշտ առիթ կը ստեղծէր աշակերտները դաստիարակելու»¹:

Իսկական ազատախոհ և յառաջադիմասէր ազգային, կրթական մշակ եղած է պարոն Պերճ Մոմճեանը՝ 19-րդ դարու վերջին տարիներուն, բան մը որ հազուադէպ էր այդ օրերուն և այդ, ամէն բանէ վեր, լաւագոյն գնահատականն է ժամանակակից Հայ մանկավարժի մը համար:

Պերճ Մոմճեանը միայն օրինակելի հայ մանկավարժ մը չեղավ, այլ՝ դարձաւ նաև «քաջ հովիւ» նուիրեալ քահանայ մը Քիլիսի Հայութեան համար ու տիպար հոգևորական մը: Ազգին ծառայելու ինքնաբուխ մղումով՝ քահանայ ձեռնադրուեցաւ 1910-ին և կոչուեցաւ Տէր Սահակ Մոմճեան: Այդ տարիներուն հռչակաւոր՝ Արմաշի վանք-ընծայարանը դնաց ուսանելու և կատարելագործուելու համար: Որոշ ժամանակ Ալեքսանտրէթ և Այնթապ քահանայագործելէ յետոյ, 1904-ին Տէր Սահակ Մոմճեան Քիլիս հրաւիրուեցաւ քահանայագործելու Սբ. Յովհաննէս եկեղեցին:

Տէր Սահակը իր պաշտօնին ձեռնարկեց մեծ եռանդով և գործեց լարուած աշխատանքով:

«Բացառիկ անհատականութիւն ունեցող անձ մըն էր Տէր Սահակը, կը գրէ իր կենսագիր Համբարձում Պէրպէրեանը: 1903-1909 դպրոցական տարեշրջաններուն Քիլիսի բարձրագոյն նախակրթարանի տնօրէն ըլլալովս, մօտէն բարեկամ, գործակից և խորհրդակից էի իրեն հետ: Ազգասէր քահանայ մըն էր ան, գիշեր-ցերեկ աշխատող, իր ժողովուր-

1. Յուշամատեն..., էջ 136-137:

դին բարօրութեան համար զոհուող, ժողովներ կազմակերպող, հանգանակութիւններ յաջողցնող և արդիւնաւոր ծառայութիւններով լեցուն կեանք մը ունեցաւ ան: Մինչև հեռաւոր գիւղեր, ջաղացքներ կ'երթար և իր ժողովուրդին նիւթական կ'ապահովէր»¹:

Ահա՛, անկողմնակալ ու արդար ընութագիր մը և աւարկայական գնահատական մը Տէր Սահակ Մոմճեանի ազգասիրական, իրապէս առաքելատիպ քահանայազործութեան մասին՝ պահպանողական ու չափաւորական ազգային գործիչ և ուսուցիչ Հ. Պէրպէրեանի կողմէ, որ միաժամանակ հարցականի տակ կը դնէ Տէր Սահակ դարձած պարոն Պերճ Մոմճեանի ուսուցչութեան ժամանակաշրջանը և կը գրէ:

– «Պարոն Պերճի ուսուցչութեան շրջանը ավելի օգտակարութի՞ւն ունեցաւ, թէ՛ վնասակարութիւն, այդ մասին ըմբռնումները կը տարբերին և դատումները գիրար կը հակասեն»²:

Նկատել տալով հանդերձ, որ պարոն Պերճ Այնթապի վարդանեան կրթարանէն ընթացաւարտ է և Հնչակեան է, վարդանեանականներէն շատերուն նման, դառնութեամբ կը հետևցնէ Հ. Պէրպէրեանը:

«Մեր անձնական համոզումով, դպրոց մը երբ հակակրօնական ուղղութեան կը հետևի ... այդ դաստիարակութեամբ յառաջ եկած պատանեկութիւնը կամ երիտասարդութիւնը չի կրնար օգտակար ըլլալ ո՛չ ազգին, ո՛չ ալ եկեղեցիին»:

Այնուհանդերձ Տէր Սահակի քահանայազործութեան շրջանին վերաբերեալ միայն դրուատանք ունի Հ. Պէրպէրեանը:

«Ան (Տէր Սահակը) եղաւ միևնոյն ատեն շինարար քահանայ մը: Իր շրջանին էր, որ զնուեցաւ քաղաքին մօտիկ ըն-

1. Յուշամատեն..., էջ 211.

2. Յուշամատեն..., էջ 211.

դարձակ հողամաս մը, որ եղաւ Հայոց գերեզմանատունը: Եկեղեցւոյ դուրսի դուռը շինուեցաւ սրբատաշ մարմար քարով, կառուցուեցան եկեղեցւոյ համար չորս ընդարձակ վաճառատուն—խանութներ: Գնուեցաւ քարաշէն ձէթի—հնձան գործարան մը (մահսերէ) եկեղեցւոյն եկամուտի համար: Վերի հայկական թաղէն ընդարձակ բակ մը գնուելով Աղջկանց դպրոցին յատկացուեցաւ: Այս բոլորին շինարարութեան կամ գնուելու գործերուն յաջողութեանց գործին մէջ Տէր Սահակի անխոնջ ջանքը վճռական դեռ ունեցած է: Եզրակացնելով՝ անվերապահօրէն կրնանք ըսել, որ Տէր Սահակի գործունէութիւնը ոչ միայն գնահատելի, այլ նաև՝ օրհնութիւն մը եղաւ Քիլիսի եկեղեցւոյ և դպրոցին համար»¹:

Տէր Սահակի քահանայագործութեան օրերուն կատարուած բարի ու ժողովրդանուէր գործերուն մասին, իր յուշերուն մէջ կը գրէ, այդ օրերուն Աղջկանց վարժարանի աշակերտուհի Տիկին Զապէլ Պէրպէրեանը.

«Հոգաբարձութիւնը որոշած էր աղկջանց «Զապէլեան» վարժարանը փոխադրել քաղաքին կեդրոնը: Գնուելիք նոր դպրոցին համար հարկ եղած գումարը ապահովելու պարտականութիւնը յանձն առած էր լուսահոգի Տէր Սահակ քհնյ. Մոմճեանը: Յիշեալ ազգասէր քահանան ամէն տեղ ուր Քիլիսցի Հայեր կային, գնաց հանգանակութիւն կատարեց և ապահովեց դպրոցին համար հարկ եղած գումարը»²:

Նոյն Զապէլ Պէրպէրեանը կը յայտնէ նաև, որ այդ նոր գնուած դպրոցին բակին բարեկարգման համար Տէր Սահակը անձամբ մասնակից եղած է աշխատանքներուն, աշակերտներուն հետ միասին: «Տէր հայրը դպրոց կու գար եկեղեցիէն ելլելով: Փակեղն ու վերարկուն մէկ կողմ կը դնէր, թևերը կը սոթթէր, գոգնոց մըն ալ կապելով, կը սկսէր գործի:

1. Յուշամատեան..., էջ 212:

2. Յուշամատեան..., էջ 142:

Ձմեռնամուտին, նոյն դպրոցին համար ղրկուած վառելիք փայտը դասաւորելուն ալ, դարձեալ Տէր հայրը մէկդէի դրաւ իր քահանայական զգեստը, իջաւ փայտանոց և բերուած փայտերը իր ձեռքով շարեց ու տեղաւորեց: Աշխատած ժամանակ շարականներ կ'երգէր և օրհնութիւններ տալով՝ աղջիկներուն կ'ըսէր, «Աշխատեցէք, աղջիկներս, աշխատանքը օրհնուած է»¹:

Ի լրացումն բոլոր վերոգրեալի, կենսագիր Հ. Պէրպէրեանը կ'եզրակացնէ իր գնահատականը Տէր Սահակի մասին.

«Ժողովուրդին մէջ հաւատքի, կրօնի զարգացման հոգ տանիլ ... երկրորդական հարցեր էին ըստ իրեն: Ինքը գործի մարդ էր, աշխատող և վազող՝ որպէսզի աղքատները հաց ունենան, եկեղեցին՝ հասոյթ և դպրոցը՝ կայուած և հայ ժողովուրդին մէջ մշակուի ազգասիրական ոգի: ... Տէր Սահակի անձանձիր և անձնուէր գործունէութեան շուրջ գրուելիք ընդարձակ պատմութիւններ կան, որ զանց կ'ընենք, այն յատուկ խնդիր է: Կը բաւականանանք ամփոփելով միայն հետեւեալը», կ'եզրակացնէ Հ. Պէրպէրեան.

«Տէր Սահակ սիրեց իր հոտը և անձնուիրաբար ծառայեց անոր, յաճախ մոռնալով իր ընտանիքի հոգսերն ու իր հանգիստը, նոյնիսկ՝ իր անձը: Հոգով սրտով փարեցաւ այլոց ծառայութեան գաղափարին: ... Չէր գիտեր շողոքորթել, յաճախ երեսին կու տար մարդոց թերութիւնները և իր ըմբռնումով՝ տեսած սխալները: Յախուռն բնաւորութիւն ունէր լուսահոգին և այդ իսկ պատճառով բախումներ ունեցաւ քաղաքի մեծահարուստ ազգային դէմքերուն հետ: Ան հոգիով ազնիւ, ազգանուէր, ծառայապաշտ և անձնուրաց եկեղեցական մըն էր»²:

Ատանայի (Կիլիկիոյ) 1909 թ. կոտորածներէն յետոյ, Տէր

1. Յուշամատեան..., էջ 143:

2. Յուշամատեան..., էջ 212:

Սահակը, որպէս ազգանուէր «հովիւ քաջ», անձնական բնական մղումով գնաց Անտիոք¹ ու շրջակայ Մուսա Լերան հայկական գիւղերը և գնահատելի ծառայութիւններ ունեցաւ հոն՝ կոտորածներէն անդամահատուած հայ ընտանիքներուն բարոյական և նիւթական օժանդակութիւն ապահովելով:

Վերջապէս 1915-ի տարագրութեան նախօրէին, երբ Զէյթունի, Մարաշի ու շրջակայքի բռնազաղթը սկսուած էր դէպի Տէր Զօր, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի (Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի) առաջարկին սիրով ընդառաջելով, Տէր Սահակ Մոմճեանը կը հետևի տարագիրներու խումբերուն, «խաչատանջ կարաւաններու» իր եղբայրներուն, քոյրերուն օգնելու և միւսիւթարելու զանոնք:

Ականատես ըլլալով այդ գեհեհային բնաջնջումի ծրագրին գործադրմանը, Տէր Սահակ լրիւ քայքայուած ֆիզիքականով վերադարձաւ Հայէսլ և «ազգին դառն ցաւերովը ընկճուած» ան վախճանեցաւ 1915 Ապրիլ 22-ին և մարմինը ամփոփուեցաւ Հայէսլի Ազգային Գերեզմանատունը: 1919-ին լուսահոգիին աճիւնը փոխադրուեցաւ Այնթապ՝ իր ծննդավայրը, իր ընտանեկան գերեզմանատունը:

Ահա՛, Այնթապ ծնած և իր ամբողջ գիտակցական կեանքը Քիլիսի Հայութեան նուիրաբերած՝ «հովիւ քաջ», հայ ազգային գործիչ, օրինակելի, առաջաւոր ուսուցիչ, հայ աննման հոգևորական Պերճ-Տէր Սահակ Մոմճեանը:

* * *

1. Յիշենք, որ այդ օրերուն Անտիոք քաղաքի շուրջ 5000 Հայ բնակչութիւնը գրեթէ լրիւ կոտորուած էր:

**ՀԱՄ ԲԱՐՁՈՒՄ ՊԷՐՊԷՐԵԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿ,
ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ, ԻՐԱԻԱԲԱՆ ԵՒ
«ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ»Ի ՀԵՂԻՆԱԿ**

Համբարձում Պէրպէրեանը Քիլիսի Հայոց 19-րդ դարի վերջին տասնամյակներուն կրթամշակութային զարթոնքը իր անմիջական մասնակցութեամբ կեանքի կոչող, ղեկավարող ազգային-հասարակական ամենաակնառու գործիչը կը հանդիսանայ, յատկապէս «Յուշամատեան Քիլիսի Հայոց» պատմա-ազգագրական, տեղագրական կրթողային աշխատութիւնը հեղինակելու հանգամանքովը: Քիլիսի Հայոց կրթամշակութային կեանքի երախտաւորներու առաջին շարքին պիտի դասուէր ան, եթէ միայն հեղինակած ըլլար այդ հատորը, գործ մը, որ մեր ազգային-մտաւորական իր սերունդի գործիչներէն միայն ինքը՝ Հ. Պէրպէրեանը կրնար իրականացնել՝ հաշուի առնելով իր բազմակողմանի զարգացումը և ազգային կրթական-ուսումնական իր բեղուն գործունէութիւնը: Երկար տարիներու տքնաջան աշխատանքի և առողջ և անկողմնակալ դիտարկումներու, դատումներու արգասիք այդ աղբիւրագիտական ու բնագրային ուսումնասիրութեան յաճախակի անդրադարձեր ենք ներկայ «Պատմական Ուրուագիծ» աշխատութեանս մէջ և անհրաժեշտ չիշատակումները կատարած ենք անկէ:

Համբարձում Պէրպէրեանը ծնած է Քիլիս 1879 թուականին: Հայրը՝ Յովսէփ, որդի Գրիգորի, ժամանակին Կիւրին քաղաքէն Քիլիս հաստատուած զինագործ պապի սերունդէն էր:

— «Հայրս արհեստով սափրիչ էր և ունէր միջակօրեայ կեանք մը», կը գրէ ան իր ինքնակենսագրութեան մէջ: «Մայրիկս՝ Սէյտէ, Հելլունենց կամ Գալէմքեարեանենց աղջիկը,



ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՅ

(ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՋԵՆԻ 1968 ԹՈՒԱԿԱՆԸ)

• ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ •

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ԻՐԱԻԱՐԱՆ ՀԱՄԱՐՁՈՒՄ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԵՒ

ԽՈՐԷՆ ԱԻԱԳ ԳՀՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

1969

Տպարան ՍԵՒԱՆ
ՊԵՐՐՈՒՅ

* * *

«Յուշամատենան Քիլիսի Հայոց»ի անուանաթերթը:

աւետարանական բացատրութեամբ և իմաստով բարեպաշտուհի մըն էր: ... Դպրոց դրուած եմ 5 տարեկանիս: Առաջին ուսուցիչս Անջրդեցի Սարգիս վարժապետն էր, որուն քով կարդացի Քերական և Կանոն»¹:

Աշակերտ Համբարձումը, յետագայ տարիներուն, իր հեղինակած «Յուշամատեն»ին մէջ կ'անմահացնէ իր առաջին ուսուցիչ «Սարգիս վարժապետը» որդիական ակնածանքով ու վառ, կենդանի գոյներով գծելով անոր նահապետական չնաշխարհիկ կերպարը և անոր «վարժոց»ին Տէր Թողիկեան միջնորդը:

Այնուհետև, մանուկ Համբարձումը կ'աշակերտէ «ԼԼոնեան վարժարան»ին մէջ Կարապետ Խէլֆէ Թովմասեանին (յետագային՝ Տէր Վահան Աւագ քահանայ Թովմասեան), որմէ յետոյ կը փոխադրուի «Արուսեակ» վարժարան, ուր ուսուցչութեան հրաւիրուած էր Պերճ Մոմճեանը (յետագային՝ Տէր Սահակ քհնյ. Մոմճեան), գոյգ քահանաներ, գործիչներ, ազգային-մշակութային, որոնց գործակիցը դարձաւ տարիներ յետոյ մանուկ Համբարձում Պէրպէրեանը:

Հազիւ տասն և հինգ տարեկան, Համբարձումը կը դառնայ ուսուցիչ «Ծաղկոց» դասարանի: Պատանի ուսուցիչ Համբարձումը հինգ տարի կը շարունակէ այդ գործը համբերութեամբ, միաժամանակ յարատեօրէն կը խորացնէ իր գիտելիքները ինքնաաշխատութեամբ, ինքնազարգացումով հայերէն և թրքերէն լեզուներու և թուաբանութեան մէջ:

«Փափաքս ու նպատակա եկեղեցական կամ վարդապետ ըլլալն էր», կը գրէ իր ինքնակենսագրութեան մէջ: Սակայն, Գէորգեան ձեմարան (Էջմիածին) և Երուսաղէմի ժառանգաւորած վարժարանը ընդունուելու դիմումները յաջողութիւն չեն գտներ, մանաւանդ՝ «Ընտանիքիս միակ մանչ զաւակը ըլլալուս՝ հօրս բուն ընդդիմութեան ու արդելքին հանդիպե-

1. Յուշամատեն..., էջ 290-292.

ցայ և ծրագիրս ձախողեցաւ», կը գրէ ինք:

1898—ին Հ. Պէրպլէրեանը կ'ընդունուի Այնթապի «Կեդրոնական Թուրքիոյ Ամերիկեան Գոլէճը», որը յաջողութեամբ կ'աւարտէ 1903—ին: Իրեն պաշտօններ կ'առաջարկուին նոյն գոլէճին մէջ և ուրիշ տեղեր: Սակայն, ինք կ'որոշէ իր ծննդավայր Քիլիսի դպրոցին տնօրէն—ուսուցչութեան պաշտօնը ընդունիլ և իր ծննդավայր քաղաքին վարժարանին բարձրացման վսեմ գործին նուիրուիլ:

— Մեր առաջին գործը եղաւ կարգ ու կանոն հաստատել դպրոցէն ներս, կը գրէ ան, աշակերտներուն տարիքին ու կարողութեան համեմատ զատորոշեցինք դասարանները՝ «Երեխայից, Կրտսերագոյն, Կրտսեր, Երէց, Երիցագոյն և Աւագ» վեց դասարան նախակրթարանի բաժին: Մանկապարտեզը առանձին՝ կը կոչուէր «Մաղկոց»:

Քիլիսի մէջ առաջին անգամ ըլլալով, Հ. Պէրպլէրեանի ջանքերուն շնորհիվ կ'իրականանայ առանձին Աղջկանց դպրոց ունենալ և Ազգային վարժարանը կ'ունենայ 1 500 աշակերտ, Մանչերու բաժին՝ 1 000, Աղջկանց բաժին՝ 500: Որպէս Այնթապի Ամերիկեան Գոլէճի շրջանաւարտ, ան աւանդուած դասերուն ցանկին կ'աւելցնէ անգլերէն լեզուն, հայերէն ու Թրքերէնի հետ միասին, որպէսզի Քիլիսի Բարձրագոյն Նախակրթարանի շրջանաւարտները կարողանան դիւրութեամբ ընդունուիլ Այնթապի Ամերիկեան Գոլէճը: Եւ իրօք, այդ տարիներուն Ամերիկեան Գոլէճը կ'ընդունուին ու կ'աւարտեն յետագայ տարիներուն հուշակաւոր բժիշկփրոֆեսորներ դարձած Յովսէփ Ենիգօմշուեանը, Միհրան Չափրաստեանը, Թորոս Վարպետեանը և ուրիշներ:

«Անմար սէր մը կար սրտիս մէջ դէպի ուսուցչութիւնը, աշակերտութիւնը և դպրոցը», կը գրէ ան իր ինքնակենսագրութեան մէջ ու կը շարունակէ. «Կեանքիս ամենամեծ մխիթարութիւնը և կարևոր արժէքը Քիլիսի դպրոցին բարձրացման և արդիւնաւորման համար կատարած աշխատանքս էր»:

Վեց երկար տարիներ, 1903—1909, ան կը ծառայէ որպէս Քիլիսի Ազգային Միացեալ վարժարանի թէ՛ որպէս տնօրէն, թէ՛ որպէս ուսուցիչ, թէ՛ որպէս Կիրակնօրեայ ժողովրդային լսարանի բանախօս—տեղախօս, միաժամանակ Հանդիսանալով Սբ. Յովհաննէս ելեղեցւոյ թաղականութեան խորհրդատու:

Երբ 1908 թուականին հռչակուած Օսմանյան Սահմանադրութեան հետեանքով երկրին ընդհանուր հասարակական ու քաղաքական ներքին դրութիւնը հիմնովին կը փոխուի, Հ. Պէրպէրեան կը մտածէ հեռանալ ուսուցչական ասպարեզէն, քանզի «գործը ապագայ չունի, կը մտածէ ան, և ուսուցիչը կապուած կը մնայ հոգաբարձութեան կամ թաղականութեան ընդհանրապէս տգէտ քմահաճոյքին», բան մը, որ հայկական իրականութեան մէջ տխուր աւանդութիւն դարձած է դժբախտաբար:

Հ. Պէրպէրեանը կ'որոշէ հետևիլ իրաւաբանութեան և տարիներու ծանր ու տքնաջան աշխատանքէն յետոյ, 1911 թ. Կ. Պոլսէն կ'ստանայ փաստաբանութեան վկայական և արտօնագիր, կը բանայ իր փաստաբանական գրասենյակը Քիլիսի մէջ և շուտով կը կանչուի նախնական դատարանի անդամութեան և մի քանի ամիս յետոյ Քիլիսի ընդհանուր դատախազի փոխանորդ կը դառնայ: Սակայն նա երբեք չի մոռնար իր ազգային գործիչի պարտականութիւնը և թաղականութեան խնդրանքին ընդառաջելով, կը ստանձնէ Ազգային Միացեալ վարժարանի տեսչութեան և վերահսկողութեան պաշտօնները՝ որպէս ինքնակամ, անվճար ազգային ծառայութիւն:

Համաշխարհային ընդհանուր պատերազմը կը ծագի և ամէն ինչ հիմնովին կը փոխուի: Հ. Պէրպէրեանը որպէս հայ պետական ծառայող, վերին ընդհանուր հրամանագրերու հետեանքով արդէն պաշտօնազուրկ է և կեանքը ապահովելու համար կը զբաղի «կառավարութեան յանձնառութեանց գործերով», ինչպէս կը գրէ ինք:

1918-ին, Եղեռնէն վերապրողներու շարքին ինքն ալ կը վերադառնայ ծննդավայր Քիլիս: Արդէն ստեղծուած միջ-յարանուանական Քիլիսի Հայոց «Ազգային Միութեան» ղեկավարութեան, ժողովուրդին կողմէն ընտրուած անձնակազմին անդամներու առաջին շարքին վրայ է: Օրուայ ամենահրատապ ազգային գործը ամէն կողմէ Քիլիս հասած որբերու, այրիներու, անտէրներու պատսպարման գործն է: Հ. Պէրպէրեանը այդ գործի պատասխանատուներէն մէկն է, ինչպէս նաև կապը՝ Հ.Բ.Ը.Մ.—ի Հալէպի Մասնաժողովին միջոցով վերապրողներուն ֆինանսական օժանդակութիւն ապահովելու հարցին: Ան ամենօրեայ օժանդակութիւն կը ցուցաբերէ Ազգային Միացեալ վարժարանի հոգաբարձութեան գործերուն:

Ի դէպ, Համբարձում Պէրպէրեանը Հ.Բ.Ը.Մ.—ի Քիլիսի Մասնաժողովի ընտրեալ անդամ հանդիսացած է թէ 1912, թէ 1919-1920-ին: 1922-էն (Կիլիկիոյ պարպումէն) յետոյ, Հալէպի մէջ Բարեգործականի Որբանոց-արհեստանոցի տեսուչ կը նշանակուի, պաշտօն, որ ձեռնհասութեամբ կը վարէ մինչև որբերուն Հայաստան փոխադրուելը: Յետագայ տարիներուն թէ՛ Հալէպի, թէ՛ Ադէզի մէջ Հ.Բ.Ը.Մ.—ի մասնաժողովներուն մէջ ղեկավար դիրքեր կը զբաղեցնէ և կ'արժանանայ Հ.Բ.Ը. Միութեան վեթերան և Պատուոյ անդամի կոչումներուն:

Վերջին տարիներուն, յատկապէս Ադէզի մէջ իր փաստաբանի մասնագիտութեան կիրարկումին զուգահեռ՝ կը վարէ Թաղականութեան ատենապետի և Ազգային վարժարանի կամաւոր, առանց վարձատրութեան ուսուցչի ու տնօրէնի պաշտօնները, ինչպէս նաև Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ դպրոցներու ամէն տեսակի ծառայութեանց մէջ մասնակցութիւն կ'ունենայ:

1949-ին, տարիքի բերումով, իր խնդրանքին վրայ «փաստաբաններու ցանկէն կը սրբուի և կ'արձանագրուի

հանգստեան կոչուածներու ցանկին», ինչպէս կը գրէ իր կենսագիրը՝ Տէր Խորէն Ա. քահանայ Ներսէսեանը:

Համբարձում Պէրպէրեանի բազմաբեղուն, բազմաբովանդակ երկարատեւ ազգային, կրթամշակութային կեանքին որպէս կենդանի ու խօսուուն և յարատեւող վկայ պիտի մնայ իր հեղինակած պատմա-ազգագրական, տեղագրական կոթողային աշխատասիրութիւնը՝ «Յուշամատեան Քիլիսի Հայոց» հատորը, որուն լոյս ընծայման մէջ իր պատուաւոր բաժինը ունի հեղինակակից Տէր Խորէն Աւագ քահանայ Ներսէսեանը, որուն մասին «Շնորհակալիքի Խօսք»ին մէջ Քիլիսի Հայրենակցական Միութեան պատգամին մէջ նշուած է.

— «Տիար Համբարձում Պէրպէրեանի կիսատ թողած գործը ... Արժ. տէր Խորէն Ա. քհնյ. Ներսէսեանը իր յարատեւ ու տքնաջան աշխատանքով յաջողեցաւ ի լոյս ընծայել սոյն «Քիլիսի Հայոց Յուշամատեանը»:

* * *

ՍՄԲԱՏ ՂԱԶԷԼԵԱՆ, ՔԻԼԻՍՅՅԻ ՎԱՍՏԱԿԱԻՈՐ ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻԶ

Ղազէլեան Սմբատ (մկրտութեան անունով՝ Լուծֆիկ) ծնած է Քիլիս 1871 թուականին, համեստ ընտանիքի մը յարկին տակ: Թէ՛ ինչպէ՞ս իր մկրտութեան «Լուծֆիկ» անունը «Սմբատ»ի փոխուած է, այդ մասին ինք կը գրէ իր «Յուշեր»ուն մէջ, վերլիշելով Քիլիսի կրթամշակութային զարթօնքի նախաձեռնող՝ երջանկայիշատակ Մկրտիչ Եպիսկոպոս վեհապետեանը.

«Վեհապետեան Սրբազանին վերջին գործը եղաւ անուա-

նափոխութեան խնդիրը: Օր մը դպրոց այցելեց և աշակերտները քննութեան ենթարկել ուզեց: Ուսուցիչը կանչեց, բնականաբար, երես ճերմկցնող յաջողակ աշակերտները:— Լուծֆիկ Ղազէլեան, Լուծֆիկ Բչաքճեան ... երբ երրորդ Լուծֆիկը պիտի կանչէր՝ «է՛հ, հերիք է», ըսաւ, «Այ՛ս ո՞րչափ Լուծֆիկ է, պէտք է փոխել անունները», և հրապարակաւ՝ — «Այսօրու ճէ սկսեալ՝ Ղազէլեանը՝ Սմբատ է, ... »¹:

Նախնական ուսումը Քիլիսի Ազգային վարժարանին մէջ ստանալէ ետք կը մեկնի Այնթապ և հոն հռչակաւոր վարդանեան կրթարանին մէջ ստանալէ յետոյ անհրաժեշտ ուսումն ու կրթութիւնը կը վերադառնայ իր ծննդավայրը՝ Քիլիս և տասնյակ տարիներ կը պաշտօնավարէ ազգային վարժարաններուն մէջ թէ՛ որպէս ուսուցիչ, թէ՛ որպէս նորարար կրթա—մշակութային գործիչ, սերտօրէն համագործակցելով իր ազատախոհ ու յառաջադիմասէր նախկին ուսուցիչ, յետագային՝ գործակից, պաշտօնակից Պերճ Մոմճեանի հետ, որուն մասին Ս. Ղազէլեանը կը գրէ իր «Յուշեր»ուն մէջ.

— «Պարոն Պերճը խիզախ ու անվհատ երիտասարդ մըն էր ... Անոր անկեղծ նուիրումը կը մագնիսացնէր երիտասարդութիւնը: Հիանալի էր նաև Պարոն Պերճի դպրոցավարութիւնը: Ան միայն ուսում չէ որ կը ջամբէր աշակերտներուն, այլ՝ անոնց մէջ կը կերտէր նաև նկարագիր»:

Իր կեանքին ու գործունէութեան տիպարը դարձած ուսուցչին պէս, Ս. Ղազէլեանը «Աւելի քան քառասուն տարիներ իբր կրթական մշակ ծառայելով՝ սպառած է շունչ ու ջիղ և բազում երկսեռ աշակերտներու, սաներու սրտին ու հոգևոյն մէջ ցանելով ազատասիրութեան, հայրենասիրութեան և ծառայասիրութեան ազնիւ սերմեր, թողած է բարի չիշատակներ», կը գրէ իր կենսագիր Խորէն Ա. քհնյ.

1. Յուշամատեն..., էջ 129.

Ներսէսեանը¹:

Եւ իրօք, իր կեանքին նպատակ, իտէալ դարձնելով իր համերկրացի, Քիլիսցի հայ նոր սերունդին ուսման ու կրթութեան գործը, Ս. Ղազէլեանը միշտ մտահոգուած եղած է ոչ միայն դպրոցական տարիքի երեխաներու ուսման ու կրթութեան մասին, այլ նաև՝ դպրոց չտեսած և արդէն աշխատանքի ասպարէզ իջած չափահաս երիտասարդներու՝ «բնաւ կարդալ չգիտցող» աշխատաւորներու վիճակով, կը գրէ ինք.

«Պրն. Պերճին հետ որոշեցինք համեստ ծրագրով գիշերային դասընթացք մը բանալ և երիտասարդութեանը սորվեցնել հայերէն, թուաբանութիւն և կարդալ-գրել ... Բնաւ կարդալ չգիտցողներ իրենց խանութի տետրակները բռնելու չափ կարդալ, գրել և հաշիւ սորվեցան»: Միայն այդքանով չէր կրնար բաւարարուիլ նորարար ու յառաջադիմասէր կրթական հայրենասէր մշակը, այլ՝ «Մեր նպատակը անոնց միայն գիր և ընթերցանութիւն սորվեցնել չէր, այլ՝ միջոց մը երիտասարդութիւնը իրար կապելու և անոնց մէջ ազգասիրական ու հայրենասիրական ոգի ներշնչելու»²:

Գիշերային դասընթացքները պէտք է ծառայէին նաև այդ չափահաս աշակերտները դաստիարակելու, անոնց առողջ նկարագիրը կերտելու՝ համակողմանի զարգացում տալով անոնց:

Արդարև, Սմբատ Ղազէլեան կը գրէ իր բնագրային արժէք ունեցող «Յուշեր»ուն մէջ, որոնք ոչ միայն 1880-ական թուականներուն Քիլիսի մէջ յառաջ եկած կրթա-մշակութային զարթոնքի և դպրոցաշինութեան ու մշակութային ընկերութիւններու ստեղծման մասին գրեթէ միակն վաւերագրական աղբիւրներն են, այլ նաև՝ Քիլիսի Հայութեան աշխատաւոր խաւերուն նոր սաղմնաւորուող ընկերային ու

1. Յուշամատեան..., էջ 308:

2. Յուշամատեան..., էջ 136:

քաղաքական գարթօնքի իրական, անձնական ու առարկայական վկայութիւններ: Այսպէս.

– «Գիշերային դպրոցի միջոցաւ երիտասարդներու հետ շփման մէջ ըլլալով, անոնց բնաւորութիւնը, նկարագիրը և զգացումները լաւ մը ուսումնասիրելէ ետքը, անոնցմէ վստահելի և յարմար եղողները կ'ընտրենք իբր թեկնածու ընկերութեան սուրբ գործին»¹:

Յայտնի կը դառնա, որ այդ «ընկերութեան սուրբ գործի» մասին առաջին անգամ ըլլալով կը լսեն գիշերային դասընթացքին մասնակցող Արաբկիրցի պանդուխտ՝ Առաքել անունով երիտասարդի մը կողմէ, թէ՛ «Հնչակեան կուսակցութիւն անունով ընկերութիւն մը կայ և ինք անոր անդամ է»: Փաստօրէն այդ գիշերային դասընթացքները դարձան Քիլիսի մէջ Հնչակեան երիտասարդական միութեան շարժման դարբնոցներէն մին, ինչպէս կը վկայէ այդ շարժման առաջին նուիրուած ու գործուն անդամուհի՝ Տիկին Սուլթան Չափրաստեանը.

– «Հնչակեան կուսակցութեան կազմութենէն երկու տարի վերջ, 1890 թուականին Քիլիսի մէջ պէտք կը զգացուի յառաջ բերել կուսակցական կազմակերպութիւն մը և Տքթ. Տիգրան Էնֆիէճեանի միջոցաւ և Չափրաստեան ընտանիքի զաւակներէն Մկրտիչի, Սարգիսի, Կայծակի և Յովհաննէսի, ինչպէս նաև՝ Յակոբ Պասմաճեանի և Սմբատ Ղազէլեանի նախաձեռնութեամբ հիմքը կը դրուի Քիլիսի Հնչակեան կուսակցութեան»²:

Համիտեան տխրահռչակ խժղժութիւններու, կոտորածներու տարիներն են: Յայտնի երիտասարդ մտաւորականը, հասարակական գործիչ դարձած Ս. Ղազէլեանը բոլորի աչքի փուռն ու չար նախանձի նշաւակ դարձած է արդէն: Մօտալուտ

1. Յուշամատեան..., էջ 137.

2. Յուշամատեան..., էջ 585.

վտանգը նախազգալով ան կը հեռանայ իր ծննդավայրէն ու երկրէն և կ'ապատանի նախ Ֆրանսա և անկէ ալ կանցնի Անգլիա: Երեք տարիներ պանդուխտի կեանք վարելով՝ ան կը հարստանայ Արևմտեան Եւրոպայի հասարակական ու քաղաքական կենսափորձով և ենթադրելով, որ իրադրութիւնը փոխուած է և վտանգը անցած՝ կը վերադառնայ Քիլիս: Սակայն շատ չանցած ան կը ձերբակալուի որպէս «Գոմիթաճի» և ամիսներով բանտ կը մնայ: Բանտէն ազատ արձակուելուն պէս, դարձեալ կը շարունակէ իր սիրած մանկավարժական ասպարէզը՝ նախ Քիլիս, որոշ ժամանակ յետոյ Այնթապ: Սակայն, իր դէմ հետապնդումները կը շարունակուին և ուսուցիչ Ս. Ղազէլեանը կը մտադրէ մեկուսանալ Քիլիսէն հեռաւոր վայր մը, միշտ մտածելով հայ մատաղ սերունդի կրթութեան գործի մասին:

1905-ին կը ստանձնէ Կիլիկիոյ հարաւային Ծայրամասի հայկական գիւղերու կեդրոն Քէսապի Ազգային վարժարանի տնօրէնութիւնը: Որպէս կոչումով դաստիարակ ու կրթական գործիչ՝ Ս. Ղազէլեանը անձնուրաց ու նուիրուած աշխատանքով հիմնական ու արմատական փոփոխութեան կ'ենթարկէ Քէսապի Հայոց դպրոցական դրութիւնը՝ այնտեղ ալ կեանքի կոչելով Քիլիսի դպրոցին մէջ իր և Պերճ Մոմճեանի կողմէ կատարուած առաջաւոր նորամուծումները՝ գիշերային դասընթացքներ, լսարանական դրութիւն բոլոր չափահասներուն համար: Այդ բոլորը կը կատարուի որպէս ազգային «սուրբ գործին» նուիրուած մարտիկի հոգու ու սրտի պարտք և կ'արժանանայ բոլորի երախտագիտութեան և անհուն սիրոյն ու յարգանքին:

Եղեռնին նախորդող տարիներուն Սմբատ Ղազէլեան դարձեալ Այնթապ է և ի շարս բոլոր Հայերու կը տարագրուի հարաւային Սուրիոյ կողմերը՝ Համալի շրջակայքը, ուր կը մնայ մինչև պատերազմի վերջաւորութիւնը:

Յետեղեռնեան տարիներուն արդէն, հիւանդութիւններէ

ու տառապանքէ տկարացած, կքած՝ իր վերջին տարիները կ'անցնէ Հալէպ, մեկուսացած և անտեսուած ու մահկանացուն կը կնքէ 1946-ին՝

«Խաղաղ հոգիով ու հանդարտ մտքով, իր ազգին ու անոր մատաղ սերունդին դաստիարակութեան սրբազան պարտականութիւնը կատարած ըլլալու համոզումով», ինչպէս կը գրէ իր կենսագիր Խորէն Ա. քահանայ Ներսէսեանը¹:

Այսպէ՛ս, լուռ ու մենաւոր, վերջ գտաւ Քիլիսցի բազմավաստակ ու երկարամեա՛յ դաստիարակ ու ազգային գործիչ Սմբատ Ղազէլեանի բազմաբեղուն կեանքը:

Ուսուցչի ապերախտ ասպարէզի տխուր ու անչնորհակալ վախճան Հայերուս մէջ:

* * *

1. Յուշամատեան..., էջ 308:

Ե. ՀԱՅՈՑ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԵՐԸ ՔԻԼԻՍ ՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

«Քիլիսի գրեթէ բոլոր արհեստավորները՝ երկաթագործ, պղնձագործ, բրուտ, ատաղձագործ, ոսկերիչ, դերձակ, կօշկակար, շինանար Հայեր էին—քաղաքին սրտի երակը Հայ ժողովուրդն էր», կը կարդանք «Յուշամատեան Քիլիսի Հայոց» ընագրային, աղբիւրագիտական աշխատութեան մէջ¹:

Արդարև, ինչպէս Թուրքիոյ բոլոր հայաբնակ քաղաքներուն և Կիլիկիոյ մէջ, Քիլիսի մէջ նոյնպէս տուեալ քաղաքի «սրտի երակը», կեանքի, ստեղծագործ աշխատանքի, հետևաբար՝ տուեալ ընակավայրի ժողովուրդի առօրեայ կեանքի ու քաղաքակիրթ կենսամակարդակի ստեղծողները, անհրաժեշտ կենսամիջոցները մատակարարողները Հայերն էին:

Առողջապահութենէն, կրթական ասպարէզէն սկսեալ մինչև ամէնօրեայ կենսական միջոցներ, անհրաժեշտ առօրեայ ծառայութիւններ ստեղծող, հայթայթող մարդիկը եղած են գրեթէ բացարձակօրէն Հայերը—բժիշկներ, դեղագործներ, ուսուցիչներ, փաստաբաններ, մանր ու մեծ առևտրականներ և ժամանակակից կեանքի համար անհրաժեշտ եղող ծառայութիւնները ստեղծողներ:

Հալէպի պետական_նահանգային Ուսուցչանոց_Վարժապետանոցի շրջանաւարտ Քիլիսցի Հայեր 1910_1913 թթ. պաշտօնավարած են Քիլիսի «Ռիւշտիէ_Իտատիէ» պետական վարժարանին մէջ որպէս Թուրքերէն (Օսմաներէն) լեզուի ու գրականութեան պետական ուսուցիչներ: Անոնց շարքին յիշատակութեան արժանի են Վահան և Սարգիս Ենիօզնուեան եղբայրները, Թովմաս Թովմասեանը, Հրանտ Պալեօզեանը, Միհրան Քէշիշեանը, Կարապետ Տէր Խորէնեանը և ուրիշներ:

1. Յուշամատեան..., էջ 257.

ՔԻԼԻՍԻ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Քիլիսի քաղաքապետարանի միակ բժիշկը 1883-էն մինչև 1895 եղած է Տքթ. Տիգրան էնֆիլէճեանը: Ան իր պետական դիրքը, պաշտօնը միշտ ի սպաս դրած է Քիլիսի Հայոց ազգային կեանքին, ազգայիններուն և օգտակար եղած է որպէս հանրային գործիչ, դպրոցասէր անձնաւորութիւն, նոյնիսկ կամաւոր ուսուցիչ-դաստիարակի ժամեր տրամադրած է Ազգային վարժարանին:

Այնթապցի բժիշկ Գրիգոր Պողոսեանը նոյնպէս գործած է Քիլիսի մէջ 1890-էն մինչև 1894, իսկ բժիշկ Գէորգ Սարգիսեանը, նոյնպէս Այնթապցի, Քիլիս հրաւիրուած է որպէս քաղաքապետարանի բժիշկ 1897-ին և մնացեր է Քիլիս մինչև 1915 թուականը: Ան հանդիսացած է Քիլիսի մէջ Աւետարանական համայնքի կազմակերպիչներէն մէկը և յարգուած ու սիրուած եղած է բոլորի կողմէ՝ Հայ թէ՛ այլազգի: 1922-ին կիլիկիոյ պարպումէն յետոյ Հալէպի մէջ ալ հալէպաբնակ Քիլիսցիներուն ծառայել շարունակած է երկար տարիներ: Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի բժշկական ճիւղէն 1907-ին ընթացաւարտ՝ Այնթապցի Տքթ. կարապետ Միսիրեանը եկած է Քիլիս և հանդիսացած է քաղաքին միակ վիրաբույժը, մեծ համբաւի տիրացած է և ծառայած Քիլիսի բոլոր բնակիչներուն անխտիր մինչև 1915 թուականը:

Պէյրուսի նոյն Ամերիկեան Համալսարանէն 1918-ին շրջանաւարտ Տքթ. Յովսէփ Ենիգօմշուեանը որոշ ժամանակ ծառայած է իր ծննդավայրին մէջ և հանգամանքներու բերումով (Քեմալական հրոսակների Քիլիս ներթափանցում) ընտանեօք վերադարձած է Պէյրուս՝ դառնալով յետագայ տարիներուն նոյն համալսարանի ամենահռչակաւոր տոքթոր փրոֆեսորը՝ որպէս ներքին հիւանդութիւններու ախտաճա-

նաչման մեծագոյն մասնագէտը:

Տքթ. Յակոբ Պայրամեանը, նոյնպէս Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն շրջանաւարտ, պատերազմի ժամանակ որպէս զինուորական բժիշկ ծառայած է օսմանեան բանակին մէջ: Գերի ինկած ըլլալով Պաղեստինի ճակատին վրայ 1917-ին, Թուրքիոյ պարտութենէն յետոյ Եգիպտոսէն վերադարձած է իր ծննդավայրը և ծառայած Քիլիսի բնակչութեան մինչև 1922:

Բնիկ Քիլիսցի Տքթ. Հայկազուն Նալպանտեանը, 1914-ին ժնեւի Համալսարանէն շրջանաւարտ եղած ըլլալով հնարաւորութիւնն չէ ունեցած ծառայելու իր ծննդավայրին մէջ, բայց ծառայած է որպէս բժիշկ Հայկական Լեգէոնին մէջ և նահատակուած՝ Կիլիկիոյ Հայութեան պաշտպանութեան ղիրքերուն վրայ:

Ինչպէս Արևելքի բոլոր երկիրներուն մէջ, Թուրքիոյ մէջ նոյնպէս միշտ գործած են «Հէքիմներ» (Արաբերէն՝ բժժիշկ), ի բացակայութեան համալսարան ակարտած բժիշկներու և այդպիսիներէն շատ առաջ: Հէքիմները ինքնուս բժիշկներ էին, հմտացած կեանքի փորձառութեամբ ձեռք ձգած գիտելիքներով, կամ ալ՝ վկայեալ բժիշկներու մօտ երկար ժամանակ ծառայած ըլլալով:

Քիլիսի մէջ ամենահռչակաւոր հէքիմը եղած է «Յակոբճան Հէքիմը» (Յակոբ Պաղտոյեան), որուն առասպելական դարձած համբաւը հասած է մինչև տողերուս գրողի մանկութեան տարիները: Այնթապի Գոլէճը ակարտելէ ետք որոշ ժամանակ կ'աշակերտէ համբաւաւոր բժիշկներու ու յետագային ասպարէզ կ'իջնէ որպէս «Յակոբճան Հէքիմ» և ... հոգևոր (Աւետարանական) քարոզիչ: Քիլիս կու գայ 1880-ին և կը գործէ մինչև 1910 իր մահը՝ արկածի հետևանքով: Երեսուն տարիներու երկարութեան Հակոբճան Հէքիմը Քիլիսի մէջ հռչակ կը հանէ որպէս բարեսէր ու ծառայասէր, հիւանդներ կը դարմանէ ձրիաբար, բոյսերով պատրաստած իր դեղամիջոցներով: Թէ՛ Հայերէն, թէ՛ այլազգիներէն ան-

խըտիր կը յարգուի ու կը սիրուի, նոյնիսկ ազատ մուտքի արտօնութիւն ունէր թուրք «խարէմ»ներէն (կանանոցներէն) ներս, ուր թէ՛ կը բժշկէր, թէ՛ հաշտարարի դեր կը կատարէր մրցակից կանանց միջև: Յակոբճան Հէքիմը իր համբաւաւոր գրաստին հեծած, կը շրջէր Քիլիսի շրջակայ գիւղերը՝ իր բաճկոնի երկու կողմերու տաս-տասներկու գրպաններուն մէջ լեցուցած պատրաստի տարբեր դեղեր, տարբեր հիւանդութիւններու համար նախատեսուած: Գիւղի մուտքին կամ կեդրոնը Յակոբճան Հէքիմը սպասող մարդկանց՝ կին, երեխա, կը հարցնէր՝ «Ի՞նչ ցաւ ունիս, ո՞րտեղդ կը ցաւի», և բաճկոնի գրպաններու մէկնումէկէն կը հանէր իր կողմէ պատրաստուած դեղօրայքի թղթէ ծրարիկ մը և կ'ըսէր, «Ա՛ռ, ասիկա խմէ, կը լաւանաս ...»: Եւ կ'երթար յաջորդ գիւղը, աւանը:

Ահա՛, այսպիսին էր Քիլիսի հանրածանօթ, ժողովրդական Յակոբճան Հէքիմը:

Այս հէքիմը, ինչպէս վերը նշեցինք, միաժամանակ հոգևոր (Աւետարանական) քարոզիչ էր, եկեղեցական գործիչ, Քիլիսի Աւետարանական Հայերու եկեղեցւոյ տեղապահ հովիւի իր հանգամանքով, կը կատարէր հովուական այցելութիւններ և Կիրակնօրեայ դպրոցէն ներս՝ ուսուցչական ծառայութիւն: Որպէս ժողովրդական մարդ և ազատախոհ Հայ, ան խորութիւն չէր դներ Բողոքականի և ոչ-Բողոքականի միջև: Ան յարգանքով կը վերաբերէր Մայր եկեղեցւոյ հանդէպ, հմուտ էր Առաքելական եկեղեցւոյ ծէսերուն և, կարիքի պարագային, միշտ պատրաստ կը գտնուէր իր օժանդակութիւնը բերելու անոր:

Բնիկ Քիլիսցի հէքիմներ եղած են նաև՝ Աւետիս Սէֆէրեանը (Հայ Կաթողիկէ համայնքէն), որը շատ սիրուած ու յարգուած էր իր օգտակար ծառայութիւններուն համար և իր հրապուրիչ արտաքինին շնորհիւ թուրք կանանց կողմէ յորջորջուած էր «Կիւզէյ Հէքիմ» (գեղեցիկ հէքիմ):

Քիլիսի գաւառին մէջ 1880-1890-ական թուա-

կաններուն գործած են նաև՝ Մուսա-Լեռցի կարապետ Գայրգ-
ճըեան և Յովհաննէս Գայրգճեան հէքիմները և Սեբաստացի
Հէքիմ Մարտիրոսը 1883-էն 1906:

* * *

ՔԻԼԻՍԻ ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԸ

Քիլիսի պետական դեղարանին միակ վկայեալ (Դամաս-
կոսի Համալսարանէն) վարիչ դեղագործը եղած է Յովհաննէս
Գ. Էքմէքճեանը 1900-ական թուականներէն մինչև 1921-ի
վերջերը: Ի դէպ Եղեռնի տարիներուն ալ ան պահուած է
Քիլիսի մէջ, հակառակ իր ցանկութեան և փոխարինող
Թուրք դեղագործ չգտուելու պատճառով: Այնուհետև, երբ
1921-ի վերջերը Կիլիկիոյ պարպումին հետևանքով Քիլիսի
վերապրող ամբողջ Հայութիւնը դարձեալ ու վերջնականօրէն
կը հեռանար իր ծննդավայրէն, քեմալական հրոսակներու
իշխանութիւնները թոյլ չեն տար, որ Յովհաննէսը մեկնի
Քիլիսէն իր հարազատներուն հետ և կը պարտադրեն, որ
մնայ դեղատունը վարելու համար: Ծատ չանցած դեղագործ
Յովհաննէս Էքմէքճեանը զգալով, որ իր կեանքին սպառնալիք
կայ, փախուստ կու տայ Քիլիսէն, սակայն ճամբան յարձակ-
ման կ'ենթարկուի Թուրքերուն կողմէ, որուն հետևանքով
զոհ կը դառնայ հիւժախտ-թոքախտ հիւանդութեան և կը
վախճանի Հալէպի մէջ:

Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն շրջանաւարտ
Իսկէնտէր Պայրամեանը Եղեռնի տարիներուն Հալէպ կը
ծառայէ որպէս զինուորական դեղագործ: 1919-ին Քիլիս,
իւր ծննդավայրը կը վերադառնայ: Սակայն շուտով զգալով

Քեմալական ներխուժման վտանգը, կը վերադառնայ Հալէպ, կը բանայ իր սեփական դեղարանը Հալէպի Խանտէք պողոտայի վրայ և կը ծառայէ ժողովուրդին մինչև խոր ծերութիւն:

Դամասկոսի Համալսարանէն վկայեալ դեղագործ կիրակոս Քէահքէճեանը մինչև 1921 կը գործէ Քիլիսի մէջ, որմէ յետոյ՝ Հալէպ:

1897-էն մինչև 1903 Քիլիսցիներուն իր ծառայութիւնները կը մատուցանէ բնիկ Այնթապցի, Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն շրջանաւարտ դեղագործ Պաղտասար Պարսումեանը:

Ինչպէս բժշկութեան պարագային, դեղագործութեան պարագային ևս գոյութիւն ունեցած է փորձառական դեղագործութիւն: Բժիշկներու մօտ կամ անոնց հետ աշխատելով՝ դեղագործութեան մէջ հմտացած մարդիկ, ինչպէս ամէն տեղ, Քիլիսի մէջ ալ կիրարկած են դեղագործութիւն: Այսպէս կեանքի փորձով դեղագործութիւն սորված ու յետոյ այդ մասնագիտութիւնը կիրարկած են հետևեալ Քիլիսցի Հայերը.

– Տէր Յարութիւնեան Սրապիոն, Յարութիւն և Իսկէնտէր եղբայրները, ազգականները 1887-էն մինչև 1896: Անոնք գործած են ոչ միայն Քիլիս քաղաքին մէջ, այլ նաև՝ եղած են շրջուն դեղագործ-հէքիմներ Քիլիսի գաւառի գիւղերն ու աւանները շրջելով:

Այսպէս՝ կեանքի փորձառութեամբ հմտացած դեղագործներ եղած են նաև Ղուկաս Տէր Ղուկասեանը, որ դեղագործութիւն սորված է վկայեալ դեղագործ Պաղտասար Պարսումեանի մօտ: Յիշատակութեան արժանի է նաև վկայեալ դեղագործ Յովհաննէս Հէքիմեանը, որ գարծած է թէ՛ Քիլիսի, թէ՛ յետագային Ազգէլի մէջ:

Քիլիսի միակ ատամնաբոյժը եղած է Յովհաննէս Պերթիկեանը, հայ կաթողիկէ համայնքէն, որ գործած է նախ Քիլիսի մէջ, իսկ Եղեռնէն յետոյ՝ Հոմսի և Համայի կողմերը:

* * *

ՔԻԼԻՍԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱԻՈՐՆԵՐԸ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ

«Յուշամատեան Քիլիսի Հայոց» աշխատասիրութեան երախտաշատ հեղինակը՝ Հ. Պէրպէրեան, «Քիլիսի Հայ Արհեստաւորներն ու Վաճառականները» ենթագլուխի տակ կը լիշատակէ ոսկերիչներէն մինչև յետին արհեստներն ու արհեստաւորները և կ'եզրակացնէ.

– «Քիլիսի բոլոր արհեստաւորները Հայերն էին և ... քաղաքին սրտի երակը Հայ ժողովուրդն էր»¹:

Վաստակաշատ մեր իրաւաբան հեղինակը արդեօ՞ք նախասիրութեան պակասի հետեանքով զանց առած է լիշատակել, կամ գոնէ երկու խօսք ըսել Քիլիսի Հայ շինարարներու մասին: Այդ համեստ ու անանուն «եւրուճի»-շինարարներու՝ յաւերժութեան համար թափած քրտինքին ու ջանքին արգասիքը եղող այն բազմաթիւ շէնքերն ու կառուցները Քիլիս քաղաքի, որո՞ւն աշխատանքի արդիւնք էին: Նամանաւանդ այն հոյակապ ու «արուեստիւ ճարտար» կառուցուած, վայելչաքեղ, փառաւոր տեսքով գմբէթաւոր սրբավայրը, կոթողը՝ Սուրբ Յովհաննէս եկեղեցի-տաճարի շէնքը, որ կը տիրէր Քիլիս քաղաքի ու շրջակայքին համայնապատկերին վրայ, որպէս վկայ հայ աշխատաւոր մարդու հոգիի, մտքի ու ձեռքի աշխատանքի արգասիք:

«Յուշամատեան»ի հեղինակը կը գրէ նաև, որ Քիլիսը ունեցած է բազմաթիւ ու բազմապիսի շէնքեր՝ եկեղեցիներ, մզկիթներ, դպրոցներ, գործատուններ, գործարաններ, բաղնիքներ, վաճառատուններ, գոց շուկայ, այլ և այլ կառուցներ: Միթէ՞ այդ բոլորը արդիւնք է աշխատանքին, նոյնինքն Հ. Պէրպէրեանի բառերով «միայն ու միայն քանդելու համար

1. Յուշամատեան..., էջ 257.

ստեղծուած թրքական պիղծ ձեռքերու»¹ և ոչ թէ Հայ և Յոյն շինարարներու քրտնաջան աշխատանքին:

Այդ անանուն բազմաթիւ շինարարներէն՝ որմնադիր, քարակոփ, ծեփող, նախագծող ևն ... ո՛չ մէկի մասին չիշատակուծ չկայ դժբախտաբար «Յուշամատեան»ին մէջ, բացի Սուրբ Յովհաննէս նոր տաճարը «շինող» «նշանաւոր երկրաչափ Պոլսեցի Յակոբ Խէլֆէ» անունով մէկէ:

Հաւանօրէն Հ. Պէրպլէրեանի համար անհրաժեշտ չէ եղած Քիլիսի շինարար-կառուցող արհեստաւորներու անունները չիշատակել ի շարս այլ արհեստաւորներու, ինչպէս երկաթագործ, պղնձագործ, ատաղձագործ-հիւսն և այլք:

Այսպէս, կը չիշատակուին կահագործ-ատաղձագործ արհեստաւոր-արուեստագէտներ՝

1. Եորկի-Գէորգի Տէր Գէորգեան: Ան նուրբ վարպետ կահագործ ըլլալով, շինած է երգեհոն, սազ, քանոն, գլարինէթ ու ջութակ և իր շինած բոլոր նուագարաններուն վրայ նուագել գիտէր:

2. Պէշիր Սէֆէրեանը, Յակոբճան Հէքիմի երկրորդ որդին, եղած է նշանաւոր վարպետ մը՝ իբր նուրբ կահագործ, փորագրող և նուագարաններ շինող ու նուագող: Ան ոսկերչական արհեստին մէջ յեղաշրջում կատարած է հնարելով, փորձելով ու կատարելագործելով ոսկերչական բարձրաքանդակի նմուշ քանդակիչ կնիքներ:

Քիլիսի մէջ վարպետ երկաթագործները եղած են.

1. Պետիկ Պէնլեան (Պէնլի Պետիկ), որ թէ՛ որպէս արհեստաւոր, թէ՛ որպէս եկեղեցուց Աղքատախնամի անդամ ծառայած է Քիլիսցիներուն և որուն որդիները, թոռները յետագային դարձած են նշանաւոր երկաթագործներ և մեքենագէտներ:

2. Աւետիս և Տիգրան Զապլնեանները, Գէորգ Տարագ-

1. Յուշամատեան..., էջ 191.

ճրեանը (ՉիլՕղլան), Աստուրեան եղբայրները և տասնեակ այլ վարպետ երկաթագործներ, որոնք ծառայած են թէ՛ Քիլիս քաղաքի, թէ՛ շրջակայ բնակավայրերուն ամէն ազգի բնակիչներուն:

Կարապետ և Գրիգոր Գասարճեանները, յետագային նաև՝ իրենց զաւակները եղած են յայտնի երկաթագործներ, որոնք տարիներ յետոյ դարձան երկաթի վաճառականներ Հայէպի մէջ:

* * *

Մեքենագէտներ եղած են Գրիգոր Պալեանը և մանաւանդ Յովհաննէս Տաղլեանը, որ Քիլիսցիներին ծանօթ «Մաքինիստ Յովհաննէսն» է:

Հարկ կը համարեմ տալ հետևեալ մանրամասնութիւնները անոր կեանքին և գործունէութեան վերաբերեալ: Ան եղած է միակ մեքենագէտը, որ կ'աշխատցնէր Քիլիսի մէջ գործող չորս մեքենական ալրաղացները տարիներ շարունակ: Ծնած է Քիլիս, 1885-ին: Բախտը չէ ունեցած ուսում ստանալու: Եղած է աշակերտ հնակարկատի, չէ հաւնած այդ գործը և գացած է աշակերտելու պղնձագործի մօտ, այնուհետև՝ զինագործի: Կարուճ անունով մէկուն քով միայն 20 օր աշխատելով կը սորվի արհեստը և կը բանայ, ինքնավստահ ու համարձակ, զինագործի իր առանձին խանութը: Որոշ ժամանակ յետոյ կը ծանօթանայ Չափքընօղլու Սիմոն անունով Յոյն վարպետի մը հետ, որը Քիլիս եկած էր «կազով աշխատելիք» (մեքենական) ալրաղաց մը հիմնելու: Երիտասարդ Յովհաննէսը կը գոցէ իր զինագործի խանութը և Յոյն վարպետ Սիմոնին կը հետևի՝ տարբեր քաղաքներ աշխատանքով անոր շրջագայութեան ընթացքին: Այսպիսով, Յովհաննէսը կը տիրանայ «Մաքինիստի» արհեստին և տարբեր քաղաքներ (Տէր-Ձօր, Իտլիպ, Պապ) մեքենական ալրա-

ղացներ հիմնել է յետոյ, կը վերադառնայ իր ծննդավայրը՝ Քիլիս և կը հիմնէ իր սեփական ալրաղացը: Նոյնխակ Եղեռնի տարիներուն կը պահուի Քիլիս, որովհետև Քիլիսի ալրաղաց մեքենաները աշխատցնող ուրիշ մարդ չի գտնուիր: 1921-ին, Կիլիկիոյ պարպումի օրերուն, կը փոխադրուի Հալէպ, ուր կը ձեռնարկէ ալրաղացի գործերու: 1927-ին Ազէզի մէջ կը հիմնէ ալրաղաց մը: «Սառուց շինող» մեքենաներուն ծանօթանելէ յետոյ, իր ալրաղացին կից կ'աւելցնէ «սառուց շինող» մեքենայ մը:

* * *

ՈՍԿԵՐԶՈՒԹԻՒՆԸ ՔԻԼԻՍԻ ՄԷՋ

Ոսկերչութիւնը հանդիսացած է Հայերու մասնագիտութիւնը Արևելքի բոլոր երկիրներուն մէջ, քանզի հինէն իվեր այդ արհեստ-արուեստը զարգացած է Հայկական Բարձրավանդակի վրայ, ինչպէս ցոյց կու տան վերջին տասնամեակներուն կատարուած հնագիտական պեղումներուն արդիւնքները՝ էրեբունիի (Երևան), Արմաւիրի, Կարմիր Բլուրի, Թէյքեպաինիի:

Նախաքրիստոնէական ժամանակաշրջանի մեր Արարատեան Թագաւորութեան (Ուրարտուի) տիրակալներու դամբարաններու պեղումներու ժամանակ միշտ յայտնաբերուած են ոսկեղէն, արծաթեղէն նրբահիւս ու նրբակերտ զարդարանքներ: Այդ արհեստ-արուեստի զարգացումը յարատևեղած է հայկական լեռնաշխարհի վրայ և բարձր մակարդակի հասած է Կիլիկեան Հայաստանի մէջ, որը 10-14-րդ դարերուն գլխաւոր կամուրջն էր հին Արևելքի երկիրներու՝ Պարսկաստան, Հնդկաստան և Միջնադարեան Եւրոպայի՝ Արևմուտքի վաճառաշահ քաղաք-հանրապետութիւններու՝ Վենետիկի, Ճենովայի միջև:

Կիլիկիոյ միւս քաղաքներուն նման, Կիլիզա-Քիլիսի ՀայուԹիւնը, հայաչատ Հալէպ վաճառաշահ մեծ կեդրոնի հարեանութեամբ, շարունակած է հայկական այս աւանդական արհեստ-արուեստի՝ ոսկերչութեան ազգային աւանդը Կիլիկեան թագաւորութեան ժամանակաշրջանէն մինչև մեր օրերը: Կրնանք ըսել, որ այսօր իսկ ոսկերչութեան համաշխարհային համբաւ վայելող Հալէպի ոսկերչական կեդրոնը զգալի չափով իր համբաւը կը պարտի հալէպաբնակ Քիլիսցի Հայերու յաջորդական սերունդներուն, որոնցմէ առաջին կարգի վրայ կու գան Քիլիսի ոսկերիչներու նախահայրը համարուող Յովհաննէս Սիւմպիւլեանը (Տէրվիչ) և Սիւմպիւլեան արուեստագէտ ոսկերիչներու յաջորդական սերունդները¹:

Յովհաննէս Սիւմպիւլեանը «Տէրվիչ» (արաբերէն՝ մենակեաց, սրբակեաց, սուրբ, մաքուր ապրող) յորջորջուած է իր պարզունակ, մաքուր կենցաղին, ապրելակերպին համար: Յովհաննէսը և իր եղբայրը՝ Սիւմպիւլը միւսնոյն խանութ-արհեստանոցին մէջ աշխատելով, մեծ համբաւի տիրացած էին ոչ միայն Քիլիսի, այլ նաև՝ շրջաններուն մէջ, մինչև Հալէպի կեդրոնը, որպէս հմուտ արուեստագէտ ոսկերիչ վարպետներ:

Տէրվիչի որդին Գէորգը, իր հօրմէն ժառանգած տաղանդը աւելի զարգացնելով և իր բնածին ընդունակութիւններու շնորհիւ դարձած է փորագրիչ, գծագրիչ, նմուշներ (մոտէլներ) պատրաստող և «Անթիքա»ներու մասնագէտ-հնագէտ և անուանի վարպետներու—վարպետ արուեստագէտ ոսկերիչ:

Կը պատմուի, թէ դեռ 10—12 տարեկան պատանի Գէորգը, աչակերտելով ոսկերիչ—վարպետ Արթինին, աչակերտութեան առաջին օրն իսկ, դիտելով միայն իր վարպետի շինած արծաթէ մատանին, կէս ժամուայ մէջ կրցած է վարպետին շինած արծաթեայ մատանիին նմանը շինել անոր բացակայութեանը:

1. Յուշամատեան..., էջ 252—254.

Չորս-հինգ տարիներու ընթացքին, հնարամիտ նոր գործերով Գէորգը կը հռչակուի որպէս նրբաճաշակ արուեստագէտ ոսկերիչ-վարպետ: Իր սեփական ոսկերչատան մէջ առնելով նաև իր եղբայրները, անոնք՝ «Տէրվիշի Տղաքը» համայն Քիլիսի ու շրջակայքի մէջ կը հռչակուին որպէս արուեստագէտ վարպետ-ոսկերիչներ:

Գէորգի մասնագիտութիւնը եղած է նաև պողպատի վրայ փորագրել կնիքի, դրամանիշի, որևէ «Անթիքա»յի, հին առարկայի տիպարը (մոտէլը) և անկէ պատրաստել կաղապարը: Եկեղեցւոյ խաչերը, սկիհները, Աւետարաններու արծաթեայ ծաղկազարդ կողքերը Գէորգի նուրբ և արուեստագէտ մատներու արգասիքն են:

Սիւմպիւլեան արուեստագէտ ոսկերիչներու յաջորդ սերունդները այսօր տարածուած են Հայկական մինչև Պէյրութ և Նոր Աշխարհ՝ Գանատա, Միացեալ Նահանգներ:

Քիլիսի մէջ Սիւմպիւլեաններէն բացի եղած են նաև նշանաւոր ոսկերիչներ՝

Արթին Գուլումձեանը, Յարութիւն Շամամեանը և Մելքոն Շամամեանը, Յակոբ և Նուրիկ Տէր Յովհաննէսեանները, Պաղսար Պաղտասարեանը, Յարութիւն Մելքիսէթեանը, Յովհաննէս Շիթիլեանը և ուրիշներ:

Պղնձագործութիւնը նոյնպէս Հայերու մասնագիտութիւնը եղած է ամէն տեղ՝ կաթսաներ, մեծ ու պզտիկ, սաներ՝ ցորեն և այլ արմտիք խաչելու համար (ձաւար-«պուլղուր»)ի պատրաստութեան) անհրաժեշտ և այլ պղնձեայ խոհանոցային պիտոյք և սպասք, երբ չժանգոտող պողպատէ սեղանի սպասք Քիլիս հասած չպէտք է ըլլար այդ տարիներուն: Զարմանալի կերպով մեր «Յուշամատեան»ը լուռ է Քիլիսի Հայ պղնձագործ վարպետներու մասին, ո՛չ մէկ անուն չի չիշատակուի: Նոյնպէս, շատ համեստ, բայց պղնձեայ ամանեղէնի հետ կապուած անհրաժեշտ արհեստ մը՝ կլայեկագործութիւն՝ (ղարայճը) մենաշնորհն էր Քիլիսցի Հայերու, որոնք ո՛չ միայն

Քիլիս քաղաքի, այլ նաև շրջակայ գիւղերու, աւաններու տուները կը շրջէին կլայեկաթափուած պղնձեայ ամանեղէնը նորէն մաքրելու, կլայեկելու, փայլեցնելու համար: Այդ կապակցութեամբ նոյնպէս լուռ է մեր «Յուշամատեան»ը և ո՛չ մէկ անուն չի տրուիր, նոյնիսկ կլայեգործութեան անունն իսկ չի տրուիր՝ ամօթխած համեստութեամբ նպատակայարմար չի նկատուիր նման «հասարակ» մասնագիտութեան մը մասին գրել, խօսիլը:

Ձանց առնուած է նաև Ջինագործութիւն կարևոր արհեստը: Համիտեան բռնակալութեան պայմաններուն տակ հասկնալի էր զգուշաւոր պահպանողականութեամբ լուել այդ մասին: Սակայն «Յուշամատեան»ը լոյս ընծայուած է 1969 թուականին Պէյրութի մէջ և հարկ էր լրացում կատարել Հ. Պէրպէրեանի ձեռագրին վրայ, քանի որ փաստօրէն զինագործութիւն գոյութիւն ունեցած է Քիլիսի Հայոց մէջ: Արդարև, Յովհաննէս Տաղեանը (Մաքինիստ Յովհաննէսը) վիսագործութիւն սորված է կարուճ անունով զինագործ Հայու մը քով¹:

Գրիգոր Ճ. Խորոզեանը, իր գաղափարակից Յակոբ Պասմաճեանի մասին կը գրէ.

– «Յակոբը քաջ զինավարժ ու զինագործ (թիւֆէնկճի) մը ըլլալով, քաղաքը գտնուած հին հրացանները գործածելի ձևի մը տակ «Մարթին»ի կը վերածէր զինելու համար Հնչակեան երիտասարդներու խումբերը կարելի եղածին չափ լաւ կերպով»²:

Այս կապակցութեամբ կարելի է յիշատակել դանակագործ վարպետներ Յովհաննէս Զէնկոյեանն ու իր երկու որդիները, նաև՝ «Շաշը Եագուպ» մը, որոնք կը շինէին ամէն չափի ու տեսակի խոհանոցի դանակներ, սղոցներ, դաշոյններ (գուցէ նաև՝ զէնքեր)³:

1. Յուշամատեան..., էջ 572:

2. Յուշամատեան..., էջ 108:

3. Յուշամատեան..., էջ 256:

Քիլիսի Հայ արհեստաւորներու այս ենթագլխին տակ կը յիշատակուին ժամագործ Ճօրճ Թէքէկէօզեանը, դերձակներ Գարեգին Քէշիշեանը, Տիրան Թէրզեանը, Խաչեր Քէշիշեանը, Կորիւն Մէյխանէճեանը և Սուրեն Պաղտոյեանը:

Կօշկակարներու մասին ո՛չ մէկ խօսք, երևի կօշկակարներ չկային:

Քիլիսի հռչակաւոր ու բուրումնաւէտ ձիթաիւղը պատրաստող՝ ձիթհանքերու (մահսէրէ) աշխատաւոր վարպետներու մասին նաև լուրթեամբ կ'անցնի մեր «Յուշամատեան»ը: Քիլիսի ու շրջակայքի անծայրածիր ձիթաստաններու, ձիթենիներու անտառներու անհատնում, ամէնամեայ բերքը Քիլիսի ձիթաիւղի վերածողները (ձիթաիւղ, որը կը փնտռուէր ու կը վաճառուէր ամբողջ Հայէսի նահանգին մէջ), իհարկէ Հայերն էին մեծ մասով, և ոչ թէ նախկին վաչկատուն Թուրքերը:

Քիլիսի և շրջակայքի խաղողի այգիներու, անծայրածիր այգեստաններու ամէնամեայ առատ բերքը իհարկէ կը սպառուէր նախ թարմ վիճակով, յետոյ նաև աշնան՝ չամիչ, ռուպ, պաստեղ ու շարոց պատրաստելու համար: Սակայն բերքի մնացեալ մասովը կը պատրաստուէր նաև գինի և մանաւանդ խաղողի (անխօսուով) օղի: Այդ գործի մասնագէտ վարպետները իհարկէ Հայերն էին և ո՛չ թէ մահմետական Թուրքերը, որոնց արգիլուած էր նման գործով զբաղուիլ կրօնական պարտաւորութիւններու հարկադրանքով (չնայած Հայերու պատրաստած գինին և օղին կը խմէին ... գաղտնի կերպով):

Յատկանշական է, որ մեր Քիլիսցի երկու կաթողիկոսներէն մէկը, Սահակ Ա. Կաթողիկոսը Մէյխանէճեան (Գինեգործեան) մականուանեալ է: Երևի մեր «Յուշամատեան»ին մէջ «անպատուաբեր համարուած է խօսիլ գինեգործութեան և օղի պատրաստելու «մեղաւոր» մասնագիտութեան մասին:

Քիլիսի մէջ զարգացած էր նաև օճառաշինութիւնը: Զիթաստաններու առատ բերքի ձիթհանքերէն ելած առաջին երեսը որպէս սնունդ կը սպառուէր, իսկ երկրորդ երեսը,

որպէս «լեղի ձիթաիւղ», բնականօրէն բուրումնաւէտ, կը գործածուէր օճառաշինութեան մէջ: Քիլիսի ձիթաիւղով պատրաստուած բուրումնաւէտ օճառը անուն և համբաւ շահած էր Հալէպի նահանգին մէջ և կը տարածուէր Կիլիկիոյ բոլոր կողմերը: Պարզ է, որ այս գործին մէջ ևս վարպետարհեստաւորները մեծաւ մասամբ Հայերն էին:

Հիւսուածեղէնի գործը նոյնպէս զարգացած էր Քիլիսի մէջ: Քիլիսի մէջ պատրաստուած կտակեղէն, բամբակեղէն և բրդեղէն հիւսուածեղէնը կը փնտռուէր և հռչակ շահած էր շրջակայ քաղաքներուն, աւաններուն մէջ: Քիլիսի մէջ պատրաստուած բարակ, մաքուր և տոկուն կերպասները շատ յարգի էին Հալէպի շուկային վրայ: Հաստատուած էին ջուլհականոցներ, ուր այլ նուրբ, համբերատար ու նստակեաց գործերուն մասնագէտները, վարպետները, նախադժող-նախապատրաստող արուեստագէտ-վարպետները անշուշտ Հայերն էին և ոչ թէ ծագումով թափառական թուրք-թաթարները:

Քիլիսի Հայերը հասկնալի է, որ գործունեայ էին նաև Քիլիսի գոց շուկային («Պետեթէն») առևտրական կեանքին մէջ: Այնտեղ կերպասեղէնի առևտուրով, վաճառականութեամբ զբաղած են Քիլիսի հետևեալ ազգայինները.

– Յակոբ Քէլէշեան, Գրիգոր Շիլզէորզեան, Սարգիս Զափրաստեան, Սարգիս և Յարութիւն Մարաշլեաններ, Կրպօ Ամմի Մուպահեան, Գէորգ Ղալիկեան, Յարութիւն Գայբէգեան և ուրիշներ:

Շրջուն վաճառականներ եղած են Յովհաննէս Պարոնեան և Պետիկ Պէրպէրեան: Անոնք ջորիներու վրայ ապրանքները բեռցնելով գիւղէ-գիւղ, քաղաքէ-քաղաք շրջելով առևտուրը բերած են:

* * *

ՔԻԼԻՍԻ ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ

Քիլիսի Հայերը բնական է, որ քաղաքի և գաւառի կառավարման և դատարանական կեանքին մէջ, գէթ ձևականօրէն, իրենց տեղն ու ձայնը պէտք է ունենային, քանի որ քաղաքի հիմնական բնիկները ըլլալու հանգամանքով, քաղաքի կեանքին կենսական բաղկացուցիչ տարրն էին, ինչպէս ցոյց տրուեցաւ նախորդ էջերով: Պատմա-քաղաքական պայմաններու բերումով է, որ Հայերը դարձեր էին թուաքանակով փոքրամասնութիւն:

Հայերու մասնակցութիւնը թուրքիոյ հայաբնակ քաղաքներու կառավարման գործին «օրինականացուած», կարգաւորուած էր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան ջանքերով: Օսմանեան պետութիւնը 1865-ին որոշում կայացուցած էր՝ իւրաքանչիւր հայաբնակ քաղաքին մէջ մէկ մէկ աթոռ տալ Հայերուն քաղաքապետարանէն ներս (Մեծիսի Իտարէ) և մէկ մէկ աթոռ դատարանէն ներս:

Դատարաներէն ներս խօսք ունենալու համար և իրենց իրաւունքները գէթ օրէնքի սահմաններուն մէջ կարողանալ պաշտպանելու համար Քիլիսի Հայերը պէտք է ունենային իրենց Հայ փաստաբան-իրաւաբանները: Քիլիսի հայ փաստաբաններէն ամենայայտնին և փաստաբան-իրաւաբան, ազգային կրթական գործիչ եղած է «Յուշամատեան»ի հիմնական հեղինակ և Քիլիացիներու վերջին սերունդին (1900-1921 թթ.) սիրուած ու յարգուած «Համբարձում Խոճան»: Ան վկայուած էր Պոլսէն 1911-ին և գործած է Քիլիսի մէջ մինչև 1921 թուականը:

Քիլիսի վկայեալ միւս փաստաբանը եղած է, Հայկաթողիկէ համայնքէն, Յովհաննէս Սրապեանը:

Այնպէս, ինչպէս բժիշկներու ու դեղագործներու պարագային, Քրիլիսի մէջ գործած են նաև կեանքի փորձառութեամբ հմտացած փաստաբաններ: Քրիլիսի Հայ փորձառական փաստաբաններ եղած են.

1. Յակոբ Պասմաճեան (էկուշ էֆէնտի) ... 1906_1914:

2. Գրիգոր Շիլգէորգեան (Քրիլիսցի) 1905_1914:

3. Գրիգոր Նիզիպլեան (Այնթապցի) 1906_1908:

4. Աւետիս Սիլահեան (Քրիլիսցի) 1909_1913:

Քրիլիսի քաղաքապետարանի (Մէճլիսի Իտարէ) անդամ եղած են, երկու տարուայ հերթական կարգով, հետևեալ ազգայինները.

1. Յովհաննէս Բամբակեան 1885_1904:

2. Գէորգ Աղա Պայրամեան 1885_1905:

3. Ղազար Պասմաճեան 1885_1914:

4. Հաննուշ Մկրտիչեան 1900_1908:

5. Աղէկ Աղա Ենիգօմշուեան 1905_1914:

6. Թորոս Էֆ. Չաղլասեան 1909_1911:

7. Տիգրան Աղա Պայրամեան 1910_1912:

8. Ծիրճի Գուլումճեան 1908_1912:

9. Յովհաննէս Հաննուշեան 1912_1914:

10. Յակոբ Աղա Պայրամեան 1910_1912:

11. Յովհաննէս Աղա Պայրամեան .. 1913_1915:

Դատական կամ այլ պետական մարմնի անդամ եղած են հետևեալ ազգայինները.

1. Համբարձում Պէրպէրեան—Ընդհանուր դատախազի տեղակալ:

2. Մարկոս Ետալեան—դատախազի պաշտօնեայ:

3. Խաչեր Խորոզեան—դատարանի պաշտօնեայ:

4. Հաւօ Հեքիմեան—դատարանի պաշտօնեայ:

5. Մարտիրոս Ճանսըզեան—հանրային պարտուց տնօրէն 1905_1912:

6. Յովհաննէս Ետալեան—Երկրագործական դրամատան

տնօրէն_1907_1918:

7. Արամ Պալեան_Ֆինանսի քննիչ 1908_1915:

8. Արմենակ Պասմաճեան_Ֆինանսի գանձիչ..1900_1910:

9. Արմենակ Քէշիշեան_Ֆինանսի գանձիչ .. 1906_1910:

10. Մանուկ Մարաշլեան_Երկրագործական դրամատան
գանձիչ_1906_1912:

11. Յովհաննէս Սիլահեան_Ֆինանսի գանձիչ..1908_1911:

12. Ծօրճ Իշեաղրեան_Ֆինանսի գանձիչ 1901_1905:

Ծանոթ.— Այս ցուցակը կազմուած է Խորէն Ա. քհնյ.
Ներսէսեանի կողմէ: Տե՛ս «Յուշամատեան» ..., էջ 250_251:

* * *

2. ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԽՕՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Քիլիսի Հայոց խօսակցական լեզու¹ն ...: Ի՞նչն էր: Առաջին հայացքին նման հարցադրումը անհեթեթու թիւն կ'երևի: Քիլիսի Հայոց խօսակցական լեզուն, իհարկէ, հայերէնն է պիտի ըսէր ուէ անհատ, որ ծանոթ չէ Հայ ժողովուրդի վերջին դարերու պատմութեանը, ժողովուրդը, որ հարիւրաւոր տարիներ ապրած է օսմանեան—թրքական բռնակալութեան քաղաքական, տնտեսական և ընկերային ճնշման տակ:

Մեր «Յուշամատեան»ի հեղինակը կը գրէ.—«Քիլիսի ժողովուրդը ընդհանուր առումով թրքախօս է ... Ուշագրաւ է Հայերուն գործածած թրքերէնը, որ շատ կը տարբերի թուրքի թրքերէնէն՝ ձևով, ոճով և քերականական օրէնքներով: Այնպէս որ Հայու մը խօսած թրքերէն նախադասութեան մը բառերը եթէ թարգմանենք, վերածենք հայերէնի, պիտի տեսնենք, որ ան համապատասխան է հայերէնի ոճին և քերականական օրէնքներուն: Հետևաբար, շատ հաւանական է, որ Քիլիսի Հայութիւնը նախապէս հայախօս եղած է և յետոյ, գուցէ Ենիչէրիներու շրջանին բռնութեամբ հարկադրուած է ձգել մայրենի լեզուն և խօսիլ թրքերէն: Սակայն մտածելու և խօսելու ձևը պահած է հայերէնի ձևով»¹:

Նոյն տեղը, ձալալիներուն և Ենիչէրիներուն (16—17-րդ դարեր) կը վերագրուի Պրուսայէն մինչև Քիլիս ... քաղքենի Հայութեան թրքախօս դառնալը: «Ենիչէրիք կ'ըսէին,—«Կէս-վուրճա սէօլէմէն, անլամայօրուխ ... Տիլիսիզի քէսէրուխ» (հայերէն մի խօսիք, չենք հասկնար, լեզունիդ կը կտրենք),

1. Յուշամատեան..., էջ 8:

այսպէս կը սպառնային հայերէն խօսողներուն»¹:

Նոյնը կը վկայէ նաև Մ. Կ. Զուլայեանը իր «Ճալալիների Շարժումը և Հայ Ժողովրդի Վիճակը Օսմանեան Կայսրութեան մէջ» (16—17-րդ դարեր) աշխատութեան մէջ, ակնարկելով Հայերու թրքախօսութեան նախադրեալներուն²:

Հ. Պէրպէրեանը վստահ չէ, որ Քիլիսի Հայութիւնը նախապէս հայախօս եղած է, յետոյ՝ թրքախօս դարձած և կը գրէ,—«Շատ հաւանական է, որ ...», չնայած իր միտքը կը լրացնէ և կ'եզրակացնէ՝ «Սակայն մտածելու և խօսելու ոճը պահած է հայերէնի ձևը»:

Փաստօրէն մտածելակերպն ու խօսուածքը օրկանապէս, անքակտելիօրէն իրար հետ կապուած են և քու ազգային իւրայատուկ մտածելակերպն է, որ կրնաս արտայայտել օտար բառերով, օտար լեզուներով: Այսօր օտար երկիրներ հաստատուող Հայը (եթէ դեռ կը շարունակէ մտածել հայերէն), նախ իր հայերէն մտածելակերպը կ'արտայայտէ անգլերէն, ֆրանսերէն, սպաներէն բառերով, մինչև որ հասնի այն օրուան, երբ կը սկսի մտածել անգլերէն, ֆրանսերէն ... ու միայն այն ատեն կը դառնայ անգլիախօս, ֆրանսախօս, սպանախօս ևն: Նոյն ձևով Քիլիսի, ինչպէս նաև Թուրքիոյ հայաբնակ վայրերու Հայերը նախ և որոշ ժամանակի համար իրենց հայերէն մտածածը սկսած են արտայայտել թրքերէն բառերով և աստիճանաբար արտաքին ազդակներու հարկադրանքով սկսած են մտածել թրքերէն և ժամանակի ընթացքին աստիճանաբար լքելով, մոռնալով մայրենի լեզուն, դարձած են թրքախօս, դեռ որոշ ժամանակ պահպանելով հայերէն լեզուամտածողութեան ձևն ու ոճը՝ կախուած արտաքին շրջապատի

1. Յուշամատեն..., էջ 18

2. Մ. Կ. Զուլայեան,—Ճալալիների Շարժումը և Հայ Ժողովրդի Վիճակը Օսմանեան Կայսրութեան մէջ (16—17 դարեր), Երևան, 1966, էջ 63—65, 81—85:

և ազգային մշակութային ժառանգութեան ազդեցութիւններէն:

Արդարև, մարդկային որևէ հաւաքականութեան ձուլումը այլ, տիրող հաւաքականութեան մը կողմէ կը սկսի աստիճանական մշակութային ձուլումով: Իսկ մշակութային ձուլումը կը սկսի նախ և առաջ, լեզուական ձուլումով: Զուլման ենթակայ հաւաքականութիւնը կը սկսի տիրող քաղաքական հաւաքականութեան մշակոյթի լեզուն, տունեալ պարագային, թրքերէնը գործածել ընտանիքէն, տունէն դուրս, շուկայի, գործի մէջ, ընտանիքէն, տունէն ներս դեռ պահպանելով մայրենի լեզուն, հայերէնը: Այնուհետև, մէկ-երկու սերունդ ցետոյ, երբ ընտանիքէն ներս ալ տիրողի լեզուն գործածուիլ կը սկսի, տունեալ հաւաքականութեան լրիւ ձուլումը կը սկսի առ հասարակ, եթէ չկան բացառիկ հակազդող ազդակներ, հանգամանքներ, Հայերուս պարագային՝ եկեղեցի-դաւանանք, ազգային մշակութային հարուստ անցեալ ու գաղափարախօսութիւն: Այսպէս է, որ պատմականօրէն քրիստոնեայ շրջապատի մէջ առաջացած մեր հարուստ գաղթօճախներու ձուլումը աւելի արագ ու աւելի կատարեալ տեղի ունեցած է: Նոյնը կարելի է նկատել նաև Նոր Աշխարհի մէջ կազմաւորուող մեր նոր գաղթօճախներուն մէջ:

Ընդհակառակը, տարբեր եղած է պարագան մեծամասնութեամբ Հայերով բնակեցուած գիւղերու, գիւղերու խումբերու, կղզիացած հայկական աւաններու մէջ, ուր Հայերը մինչև վերջ մնացեր են հայախօս՝ վկայ Զէյթունի, Հաճընի, Մուսա-Լերան, Քէսասլի ու շրջակայ գիւղերը (Քէսասլ, Այն-ճար, նոյնիսկ Թուրքիոյ սահմաններուն մէջ մնացած Վազըֆ-Վազըֆը գիւղին մէջ), ուր Հայերը մինչև օրս կը խօսին հայերէն (Կիլիկեան Միջին Հայերէնի հայաբարբառներով): Բնորոշ պարագայ է այն փաստը, որ նոյնիսկ հայրենի բնագաւառէն դուրս ապրելու դատապարտուած Հայ հին սերունդը շարունակած է ընտանիքէն ներս կենդանի պահել մայրենի բարբառը, որուն վկայ եղած է տողերուս գրողը, երբ

1930-ական թուականներուն Կիլիկիայէն Հայէպ արտագաղթած Մարաշցի, Ջէյթունցի, Պէյլանցի Հայ հին սերունդը դեռ կը խօսէր մայրենի բարբառով հայերէն՝ ընտանիքներէն, տուներէն ներս:

Այսպէս, վերը նշուած յաջորդական փուլերով Քիլիսի Հայութիւնը, որ ի սկզբանէ հայախօս եղած է (ո՛չ թէ հաւանաբար, ինչպէս կը կարծէ Հ. Պէրպէրեանը, այլ՝ հաստատապէս, ու բնականօրէն), երբ Հայերը եղած են ընդհանրապէս Կիլիկիոյ, նաև Քիլիսի հիմնական բնակիչները Ասորիներու, Յոյներու ու Հրեաներու հետ միասին: Թուրք-Թաթարները այդ կողմերը թափանցեցին միայն 11-րդ դարէն սկսեալ և թրքախօսութիւն չէր կրնար գոյութիւն ունենալ, երբ ոչ մէկ թուրք կար: Քիլիսցի Հայը, ընտանիքէն դուրս, շուկայի մէջ, առօրեայ կեանքի ու գործերու, հարցերու կապակցութեամբ հարկադրուած սկսաւ խօսիլ թրքերէն, երբ արդէն տիրապետող էր թրքական ներկայութիւնը 16-17-րդ դարերուն: Այնուհետև, բռնութեան սաստկացման հետևանքով՝ Ենիչէրիներու, Ճալալիներու խժոժութիւններուն պատճառով ընտանիքէն ներս ևս Հայութիւնը սկսաւ խօսիլ թրքերէն, թրքախառն հայերէն, վերջապէս միայն թուրքերէն, պահելով հանդերձ հայերէն մտածողութեան, մտածելակերպի ձևը, ոճը՝ շարադասութիւնն ու շարահիւսութիւնը, պահելով հանդերձ նաև բառապաշարի զգալի մասը իր ամէնօրեայ թրքերէն խօսուածքին մէջ: Այդ հարցին կ'անդրադառնանք յաջորդէջերով տալով, այբբենական կարգով ցուցակը Քիլիսցի Հայերուն թրքերէնին մէջ գործածութեան մէջ եղած (մինչև 1922 թուականը) հարիւրաւոր հայերէն բառերու:

Քիլիսի Հայերուն ի բնականէ և ի սկզբանէ հայախօս և հայագիր ըլլալուն մասին, բացի Քիլիսի հնադարեան Սուրբ Թովհաննէս վանք-գրչատան-դպրատան գոյութեան պատմական փաստէն, տանք այդ կապակցութեամբ մեծանուն հայ լեզուաբան, ակադեմիկոս Հրաչեայ Աճառեանի վկայութիւնը:

«Հայ Բարբառագիտութիւն» գիտական ուսումնասիրութեան մէջ խօսելով Կիլիկեան Միջին Հայերէնի, Կիլիկեան Բարբառի մասին, Հ. Աճառեանը կը գրէ.

— «Այս ընդհանուր անուան տակ կ'ուզենք ամփոփել Զէյթունի, Հաճընի, Մարաշի և անոնցմէ աւելի հարաւ՝ Քիլիսի (ընդգծումը՝ մերն է Ա. Պ.), Փայասի, Ալեքսանտրէթի (Պէյլանի), Անտիոքի և Սուետիոյ (Մուսա-Լերան) մէջ խօսուած հայերէնը: ... Այժմ (1910 թ.) Քիլիսի բարբառը կը շարունակուի Սուետիոյ Հաճի-Հապիպլի գիւղի խօսուածքին մէջ»¹:

Ի դէպ, մեծ լեզուաբանը կը յիշեցնէ, որ «Մեր լեզուաբանութեան մէջ պէտք է զանազանել Գրաբար կամ Հին Հայերէն, Ռամկօրէն կամ Միջին Հայերէն և Աշխարհաբար կամ Նոր Հայերէն: Միջին Հայերէնը միայն մէկ բարբառ էր, այլ՝ ունէր իր զանազան ձևերը ... Կիլիկեան Միջին Հայերէնը մէկ ճիւղն է ընդհանրապէս Միջին Հայերէնի, որ է Կիլիկեան Հայերէն կամ Բարբառ»²:

Ինչ կը վերաբերի Հ. Աճառեանի այն յայտարարութեան, թէ «Քիլիսի բարբառը այսօր (1910 թ.) կը շարունակուի Սուետիոյ Հաճի-Հապիպլի գիւղի խօսուածքին մէջ», առանձնապէս մեր առանձին ուշադրութեան ու շահագրգռութեան պիտի արժանանար: Մեր ուսումնասիրութեանց ու հետազօտութեանց ընթացքին արձանագրած ենք պատմական փաստեր և անձնական վկայութիւններ ունինք, որոնց համաձայն Քիլիսի Հայերը միշտ սերտ յարաբերութեան մէջ եղած են Մուսա-Լերան (Սուետիոյ) հայկական գիւղերու (ինչպէս նաև Պէյլանի ու Զէյթունի Հայութեան հետ): Ենթադրաբար, 16-17-րդ դարերուն, Ենիչէրիներու, Ճէլալիներու հալածանք-

1. Հ. Աճառեան, — Հայ Բարբառագիտութիւն, էմիսեան Ազգագրական Ժողովածու, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 199—213:

2. Հ. Աճառեան, — Հայոց Լեզուի Պատմութիւն, հատոր 2, Երևան, 1951, էջ 238:

ներու և խժղժութիւններու հետևանքով Քիլիսի Հայութեան մէկ մասը Քիլիսէն հեռանալով ապաստանած է աւելի հայահոծ Սուետիոյ հայկական գիւղերու միջավայրը և հոն Հաճի-Հապիպլի կամ հարևան գիւղերուն մէջ շարունակած է Քիլիսի հայերէն խօսուածքը՝ շատ նման Սուետիոյ գիւղերու բարբառին: Աւելի խորը տանելով այս ուղղութեամբ իմ լեզուագիտական-բարբառագիտական հետաքրքրութիւնը, 1950-ական թուականներուն այս հարցով դիմած եմ Երևան բնակող՝ Սուետիոյ Հաճի-Հապիպլի գիւղի ծնունդ, գրասէր ու գրագէտ Տէր Վարդան քահանայ Վարդերեսեանին: Հարցուցի իր կարծիքը վերոնշեալ հարցի շուրջ: Տէր հայրը հաստատեց Քիլիսի Հայութեան սերտ կապերը Սուետիոյ Հայութեան հետ և հաւանական նկատեց Քիլիսի հայերէն բարբառի-խօսուածքի շարունակութիւնը Մ. Լերան գիւղերուն մէջ:

Այս կապակցութեամբ շահագրգռուած ըլլալով՝ բացի նաև հայ մեծ բարբառագէտ-լեզուաբան Ակադեմիկոս Արարատ Ղարիբեանի 1958 թուականին Երևան հրատարակուած «Հայերէնի Նորայայտ Բարբառների Մի Նոր Խումբ» գիրքը: Ի միջի այլոց, Ա. Ղարիբեանը յատուկ ուսումնասիրութեան ենթարկած է Մուսա-Լերան (Սուետիոյ) Բաբուսիէ (Քէպուսիէ) գիւղի բարբառը: Այդ մասին ան կը գրէ.

«Լինելով Սվեդիո (Մ. Լերան) շրջանի գիւղերի սահմաններում Քաբուսիէի բնակչութիւնը խօսում է Սվեդիո բարբառից տարբեր բարբառով ... Բայց զգալի չափով ազդուած է Սվեդիո բարբառից»¹:

Մեր ենթադրութիւնը այն է, որ Քիլիսի բարբառը գուցէ շարունակուած է ո՛չ թէ Հաճի-Հապիպլիի, այլ՝ նոյն գիւղերու շրջանի հարևան գիւղի՝ Քէպուսիէի խօսուածքի մէջ, փոքր աշխարհագրական նրբութիւն, որը ներելի կրնայ

1. Արարատ Ղարիբեան, — Հայերէնի Նորայայտ Բարբառների Մի Նոր Խումբ, Երևան, 1958, էջ 78:

ըլլալ Սուետիոյ (Մ. Լերան) գիւղերէն շատ հեռու ապրող Հ. Աճառեանի համար և բարբառագիտական—լեզուաբանական այդ նրբութիւնը աննկատ մնացած կրնայ ըլլալ ոչ—լեզուաբան՝ Հաճի—Հապիպլիցի Տէր Վարդան քահանայ Վարդերեսեանի կողմանէ:

Եզրակացնելով, պէտք է յայտարարենք, որ Քիլիսի Հայութիւնը եղած է ի սկզբանէ, բնականաբար, հայախօս՝ Կիլիկեան Միջին Հայերէնի Քիլիսի բարբառով և միայն 17—րդ դարի վերջերուն աստիճանաբար դարձած է թրքախօս, պահպանելով հայերէն մտածողութեան ձևն ու ոճը և հայերէն բառապաշարի առօրեայ գործածական զգալի մասը:

Ստորև կը ներկայացնենք Քիլիսի հայերէնով (բարբառով) հետևեալ նմուշները—արձանագրութիւնները.

— «Ի թվին Հայոց ՋճԵ=1526, Աւետարանս գրաւական էր ԺԵ=Յլորայ, ես Յովհաննէս Կաթողիկոս, տուի և ազատեցի եւ եղի յիշատակ ծնաւդաց իմոց հոգւոյն, ի քաղաքն Հալապ, ի դուռս Ս. Աստուածածնայ և Ս. Քառասնից»:

Քիլիսցի Յովհաննէս Գ. Կաթողիկոսի, Կայծակն մականուանեալ (1525—1539) կողմէ իր ձեռքովն իսկ գրուած Յիշատակարան Հալէպի թիւ 4 ձեռագիր Աւետարանին մէջ, զոր գրաւէ ազատած է իր քսակէն վճարելով պահանջուած 15 Ֆլորին դրամը¹:

Երուսաղէմի Ձեռագրաց Մատենադարանին մէջ պահուող (թիւ 1661) ձեռագրէն, գրուած Քիլիսի մէջ 1680—ին, հատուածներ.

— «Աւարտեցաւ մարգարէականքս ի թվին ՌճԻԹ=1680, ի գիւղաքաղաքն է Քիլիս, ընդ հովանեաւ Ս. Յովհաննէս եկեղեցւոյն, որ աստ կայ ի յօգնականութիւն ամենայն հայկական սեռից, ի Կաթողիկոսութեան Սուրբ Տանն Կիլիկիոյ Տեառն Սահակայ (Քիլիսցի), ի վայելումն Մահտեսի Փիլիպպ—

1. Յուշամատեն..., էջ 191—192:

պոս դպրին, որ ստացաւ զսուրբ գիրքս ի հալալ վաստակի իւրոյ»¹:

– «Ի Թուականին Հայոց ՌՄԻԹ=(1780) եղև բարկութիւն Աստուծոյ ի քաղաքիս Անթափ: Փաշա մի եկաւ, անուն կոչի Խպտի փաշա օղլի ... շատ ենիչէրի խըխտեց, շատ տուն թալանեց, եթէ աղքատի, եթէ հարուստի, եթէ հայու և եթէ տաճկի: Եւ ետ նորէն եկաւ ի վերայ քաղաքիս Քիլիս ու Մարտի ամսոյն ի. օրն սկսաւ պատերազմիլ: Հիգշաբթի օրն պատերազմեցաւ ի հետ Քիլիսու, ցորեկն քուն գիշերն արթուն, եւ սկսաւ թօփ գարնել»

Հատուած «Կանոնագիրքէ» մը գրուած «Ի Քիլիս ձեռամբ Փիլիպպոս Երիցոյ՝ Թվին ՌՃՄԲ Յունվարի ԺԹ»²:

– «Աղուեսն ու նապաստակն և այլ մանր անասունք ելան, գնացին թէ ի ծովն լցվինք եւ խեղթուինք, քանի զմեզ որսան մարդիկ և շունք: Եւ տեսին ի ծովեզերն զսոքա գորտք և կրեայք անկան ի ծովն սոքայ: Տեսին որ քան զիւրեանքն վախկոտ այլ կային և դարձան ի լեառն: Պարտ է մարդոց որքան զինքն ի վայրն նայի և փառք տայ Աստուծոյ»:

13-րդ դարուն Քիլիսի գաւառի Մարաթա հայաբնակ աւանին մէջ ծնած Վարդան Մարաթացի-Այգեկցի հռչակաւոր առակագիրի «Աղուեսագիրք»էն առակ մըն է վերը տըրուած գրութիւնը³:

* * *

1. Յուշամատեան..., էջ 5:

2. Յուշամատեան..., էջ 18:

3. Յ.Տէր Ղազարեան, Հայկական Կիլիկիա..., էջ 181:

ՅՈՒՅԱԿ

ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԽՕՍԱԾ ԹՐԲԵՐԷՆԻՆ
ՄԷՁ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՂԱԻԱՂԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ
ԲԱՌԵՐՈՒ

Ա. Ազատ (օլմագ)	ազատուիլ:
Ալըճ	ալոճ:
Ախըր	ախոռ:
Աղկատ	աղքատ:
Ախտել (էթմէք)	հաղթել, համոզել:
Աղօթ	աղօթք:
Աճիբ	աճուբ, վարունգի տեսակ մը:
Ամմենի	ամէնը:
Ամպար	ամբար:
Այլասզ	այլազգի, թուրք:
Այլակերտ/կերպ	այլանդակ:
Անգահ	ազահ, անյազ:
Անդամալոզ	ամդամալոյծ:
Անիզազ	անիծած, անիծեալ:
Անկուտի	անխելք, դրամ չունեցող:
Անղայ	ապուշ, անխելք:
Աննուխ	անանուխ:
Աննուշ	անուշ:
Անչնորք	անչնորհք:
Աշխառ	մոխրաջուր:
Ապէ/Ապա	կապայ (բրդեղէն թիկնոց):
Առօք/Փառօք	փառաւորապէս:
Ասկասէր	ազգասէր:
Ասվազ	Աստուած:
Աստառ (լամագ)	պաստառ:

Աստը բարէն	Աստուծոյ բարին:
Աստըգօ կօտի	Աստուծոյ գօտի, ծիածան:
Արդար	արդար, անմեղ (մանուկ):
Աւէնէկ	աւանակ, անխելք մարդ:
Ափըգ սափըգ	ափեղցփեղ:
Ափլըփեկ(լէմէք)	լափլփելով ուտել, խարխափել:
Ավտիս	Աւետիս:
Աւօ-շաւօ	Աւետիս:

Բ. Բաղլայ	բակլայ:
Բակլախորան	փակեալ խորան:
Բա'հ (օլտու)	հատաւ, ա'լ չկայ (մանկական):
Բաղաճ	բաղարճ (անթթխմոր հաց):
Բաճ	բաժ, բաժին:
Բամբասել	պարսաւել:
Բանճար	բանջար:
Բին	բոյն, հաւնոց:
Բին(էկլէմէք)	դեպի հաւնոց քշել (հաւերը), կամ կէս քուն մտնել:
Բիչպիրիկ (աչք)	բժոտ, պչրոտ (աչքեր):
Բուխսիրտ	զգայուն, դիւրազգած:
Գ. Գանսանակ	զանձանակ:
Գարշելի	զարշելի, տգեղ, չար:
Գոռուժ-գոչում	աղմուկ-աղաղակ:
Գորգարան	գործարան, արտաքնոց:
Գունտ ու կլոր	գունտ ու կլոր, կլորիկ, թոմպլիկ:
Դ. Դալկաթ	առջինեկ կաթ:
Դարպաս	Առաջնորդարան, վեհարան:
Դդում կլուխ	անխելք:
Դէտիրկին	դատարկուն, թափառական:

Դէօք
Դըխթափ

դէգ (մարդ, խոսք):
տեղթափ, կտրուկ:

Ե. Ելփիք

ելփուք:

Զ. Զահթէր
Զանուսում
Զառզարդար
Զատիկ
Զաւար
Զավըր (լամաք)
Զէմպիլ
Զընունդ

ծոթոր (*արաբ. զահ'թէր):
ծանուցում (եկեղեցւոյ)
Ծաղկազարդ:
Սր. Յարութեան տօն:
ձաւարի խոշորիկ:
մեծ-մեծ ջարդել, սպառնալ:
զամբիւղ:
Սբ. Ծնունդի տօն, (պզտիկ
Զատիկ):

Զըռ-զըռ...

զռալու պէս (լալ):

Զըռ տելի

բացորոշ խենթ:

Զըրկել

զրկել

Զուրսեկէմէք

զրուցել, խօսակցիլ:

Զօւլու

ուժեղ, բռնաւոր:

Է. Էկաւ (լատը)

եկաւ

Էկլաս

եկլաց (հսկում):

Էսթաս պարով

երթաս բարով:

Էրթէլէտի

զնաց («երթալ»ի անցեալ
ժամանակը):

* Էօրնէկ

օրինակ, նմոյշ:

Ընքէմէր

կնքամալր:

Ընքէպապ

կնքապապ, կնքահալր:

Ըշղըն

իշխըն, ընձիւղ:

Ըշմար

նշմար:

Ըշմար (էթմէք)

աչքով (նշան) անել:

Ըսկում

հսկում:

Թ. Թաթիկ	Թաթիկ
Թանաղը	Թոնիր:
Թափան	տափան:
Թափթփեկ (օլմագ)	Թափթփած, վրան գլուխը աղտոտ:
Թեթևօլիկ	Թեթևաբարոյ:
Թէլ	դերձան, թէլ:
Թէշտ	տաշտ (պղնձէ, մետաղեայ տաշտակ):
Թէփուր	տեփուր, ծուխ:
Թիռ—թիռ	սրափալ, թրթռալ (վախէն, դարդէն):
(Թիթրէմէք)	ձիւնախառն քամի:
Թիփի	Թոռոմիլ:
Թոռմեկ (օլմագ)	Թութ (պտուղը), թթենի:
Թութ	Թմրած:
Թրմեկ (օլմուշ)	
Ժ. Ժամ	եկեղեցի:
Ժամկոս	ժամկոչ:
Ի. Իլիկ	իլիկ, կոճակ անցնելու ծակ:
Իպիճիզ (աթմագ)	վիճակ ձգել:
Իպիպիկ	յոպոպ (թռչունը):
Իպպիկ—սիպպիկ	մաքուր ու կոկիկ:
Իսնակ	յիսնեակ:
Իրէնկ	երանգ:
Իրիսկին	երէցկին:
Իւիք—տիւիք...	ծակ ու ծուկ (փնտուել):
Իքինտին	կէսօր, ետինքին:
Լ. Լաթ	լաթ, շոր:
Լակոս	Թուրքի տղա:

Լափլըփեւ
Լէյէն
Լէյինչէ
Լէնկէրի
Լըփըր—լըփըր...

Լիվան

Լող

Լողտուր

Լոս

Լոսարար

անճարակօրէն քալել:
լական, պղնձէ մեծ աման:
փոքր լական:
տափակ, պղնձէ լայն պնակ:
լափլփեւ, նաև՝ մաս—մաքուր
(բան):

(*Արաբ. «Լիվան»), առջևը
բաց սենյակ:

լողքար:

լողտար, լողափայտ:

լոյս:

լուսարար:

Խ. Խըզան
Խանդեւ (օլմուշ)
Խէչ—խաչ
Խառմախոր
Խաւ—խաւ
Խավարըմ
Խամըրլաթ
Խափանեւ (էթմէք)
Խենթանոս

Խեւ

Խընճ (օլմագ)

Խըրթ(մագ)

Խուլթում

Խճմտանք

Խմեւ(լէմէք)

Խնամը

Խնտեւ(լէմէք)

Խշտէկ

խածան (շուն):

խանձուած:

խաչ, տառապանք:

խառնիխուռն:

խաւ ի խաւ:

խաւարում:

խմորլաթ:

խափանեւ չարը:

խենթ, ապուշ, չիմար,

խենթանոց:

փախուկ, խենթուկ:

խոնջենաւ, շատ չողնիլ:

խրտչիլ:

խթում:

խղճմտանք:

խմեւ, ըմպել:

խնամ ի:

խնդալ:

խշտեակ, խշտիք:

խոշորեկ-	խոշոր աղացուած ձաւար:
խոշորիկ	
խոռ(լամագ)	խորրդալ:
խոտիկ	խոտելի, անհաճոյ:
խորան	խորան:
խորթ(լամագ)	խորրդալ, խումփալ:
խուղ	հիւղ, խուղ, հիւղակ:
խուրճ	խուրջիչ:
խըռըֆ(լամագ)	խոֆիլ, զառամիլ:
խրտել (օլմագ)	քունէն կէս արթննալ:

Մ. Մափիկ-ծափիկ ծափ զարնել:

Կ. Կադաղ	դագաղ:
Կաթաղկոս	Կաթողիկոս:
Կամսուկ	կամացուկ, դանդաղաշարժ:
Կամքընը (...էթ)	կամքը կատարէ:
Կառավարել (էթմէք)	կառավարել:
Կարչելի	զարչելի:
Կէզման	զերեզման:
Կէնճ ու կէնէչ	երիտասարդ ու կանաչ (հասակ ...)
Կէչ (մարդ)	զէչ ...:
Կէսկէսի	խլամացած Հայ (քրիստոնեակ):
Կէօճէկ	կոճակ, նոր կանաչած ցանք:
Կիտոր	կտոր, դրամ:
Կիւլտիւր-կիւլտիւր	գլտոր-գլտոր, բարձրաձայն:
Կիւտիւք	կոտակ, կարճահասակ:
Կմկմ(լամագ)	կմկմալ:
Կողնել(լէմէք)	գողնալ:
Կոնտակ	կոնդակ:

Կորկոտ
Կուտու պակաս
*Կրտեղ (օլմագ)
Կրող

Ծեծած և աղացուած ցորեն:
կուտը պակաս, անխելք:
շատ կեղտոտած (լուացք):
գրող, դե, չար ոգի:

Հ.

Հայնոս
Հանէակ
Հատիկ
Հարկաւոր

Հարսունսու
Հարսնքիւր
Հէգէն
Հէնկ, հէնկէմէ
Հէօնկիւր-հէօնկիւր
Հիմ
Հին օղլու հին
Հոգգըտաս (օլմագ)

Հուղ
Հօրքիւր

Հայնոց, ազատութիւն:
հանաք, կատակ:
հատիկ, խաշած ցորեն:
*պէտքարան, զուգարան,
արտաքնոց:
հարսնցու:
հարսնքոյր:
հեծան, հաստ գերան:
հանաք, ուրախ կատակ:
հոնգուր-հոնգուր (լալ):
հիմք, տուն:
վարպետորդի:
հոգեդարձ ըլլալ (մահամեր-
ձի):
հիւղ:
հօրաքոյր:

Ճ.

Ճաճըգ

Ճատը (կին)
Ճկնաւոր
Ճգնել (օլմագ)
Ճերմակ ճուր
Ճէնկեարը

Ճըղընը (սայմագ)
Ճիցէր կոտրում

Ժաժիկ, սխտորախառն մա-
ծուն:
Չատուկ (կին):
ճգնաւոր, մենակեաց:
ճգնիլ, առանձին նստիլ:
օղի, (ճերմակ Չուր):
ժանգոտ, պղինձի կանաչ
ժանգը:
ճիւղահամար ընել:
սիրտ կոտրում, յուզող,

Ճիւլհէ
Ճոռ
Ճուրոռն

յուզիչ:
Չուլհակ, ոստայնանկ:
Ճառ, խօսք, խօսակցութիւն:
Չրոռն, գուռն, բարդիքի մէջ
քարէ աւազանիկ:

Մ. Մաթիւ
Մալէզ
Մալիլ (օլմագ)
Մանիճ
Մանուկ(ընա-
աղլամագ)
Մատնի
Մատնոս
Մէզպաք
Մեղօք

փոքրիկ ոջիլ:
շատ եփած կերակուր:
զմայլիլ, հմայուիլ:
մանիչ, ջահրակին կոթը:
իւր մանուկը (անձնական
ցաւը) պատմել:
մատանի:
մատնոց:
Մեծ պահք:

Մեռլոս
Մեռոն
Մեռոնլաթ
Մէլէտ
Մէնթիվառ

մորթն *անօրէն ամուս-
նութիւն:
մեռելոց:
միւռոն:
միւռոնլաթ:
միլէտ, Տեառնընդառաջ:
Համբարձման տօն, վիճակի
օր:

Մէճիկ
Մէրթէք
Մէքիք
Մըշըլ-մըշըլ
Միամիտ
*Մում
Մօրքիւր

միջինք, մեծ պահոց կէսը:
մարդակ, մեծ գերան:
մաքոք, կկոց:
մշիկ-մշիկ (քնանալ):
միամիտ, պարզամիտ:
մոմ:
մօրաքոյր:

Ն.	Նազլը	նազելի:
	Նախըր	նախիր:
	Նիչէ	նչայ, *օւլայ:
	Նշղար	նշխար:
Շ.	Շալ	շալ, սփսի (*այծի մագէ հիւսուածք) գոտի կամ գլխի ծածկոց:
	Շալվար	անդրավարտիք, տաբատ:
	Շան լակոտ	շան ձագ, *թուրքի լակոտ:
	Շան քարոզ	շունի քարոզ (կարդալ), *յումպէտա խոսք:
	Շապիկ	եկեղեցական, (*ղպրաց դասի թիկնոց):
	Շէլէկ	շալակ, բեռ:
	Շէն	զուարթ, ուրախ:
	Շընըֆօր	շնորհաւոր:
	Շէնքլը-շնորքլը	շէնքով-շնորհքով:
	Շուղառ	շողհար, քրտինքէն քրքըր- ուած մորթ:
Ո.	Ողջում	ողջոյն:
	Ուխտ-էհտ (էթմէք)	ուխտել:
	Ուռ	ուռեցք:
	Ուտիք	պահք չեղող օր, ուտելու օր:
Չ.	Չարել(լէմէք)	նախանձիլ, *խանդել:
	Չարէ	ճար, *սպեղանի, *բուժում:
	Չարչարանք	չարչարանք, տանջանք:
	Չըրայ	ճրագ, *կանթեղ:
	*Չիւքիւնտիւր	ճակընդեղ:
	Չիպիք	ծափիկ:
	Չիբիչ	չրէգ:

Չոռ**հարբուխ:****Պ. Պակաս**

Պակաս (օ՛ւլ)

*Պակաս (օլսուն)

Պամպասանք

Պաստըղ

Պարլոս

Պարկընտաք

Պարկուն սեզ

Պարով սեզ

Պաք

Պէլոր

Պէրտի

Պիւլպիւլ

Պիւլպիւկ

Պուլղուր

*Պուխարը

Պսակ

Ջ. Ջեյտ

Ջէօրթէն

Ջըխրըղ

Ջըղսինիր

Ռ. Ռէհէն**Ս. Սիւզէկ**

Սխտորզէզ

խելքը պակաս, *թեթևաբար-
րոյ:

պակսի՛ր, մեռիր:

թող մեռնի, *թող կորսուի:

բամբասանք:

պաստեղ:

բարի լոյս:

բարեկենդան:

բարիրկուն ձեզ:

բարև ձեզ:

պահք:

ապակի, լամբային ապակէ
խողովակը:պրտու (բոյս որմէ փսիաթ
կը հիւսեն):

բլբուլ:

պլպուկ, կոկոն:

պլղուր, ձաւար:

բուխերիկ, ծխնելոյզ:

կնքուած ամուսնութիւն,

*պսակադրութիւն:

Ջալլատ, չարածձի մանուկ:

Ջրյորդան:

Ջահրակ, (ճախարակ):

Ջղուտ, *նիհար, բայց ուժեղ:

ռահան, *աննուխի տեսակ մը:

սուզակ, քամոց, քմոց:

սխտործեծ, սխտորկէզ:

Սողարանս
Սուտ փարխսեցի
Սրբութիւն
*Սրչագուն

սոխայրած:
կեղծաւոր:
Սուրբ հաղորդութիւն:
չրջած ծու (միայն Չատկուայ
առթիւ պատրաստուած
ձուածեղ՝ ազատքեղով, սխտո-
րով, ևն):

Վ. Վաստակ
Վաստակլը

Վարնոս
*Վարպետօրդի
Վարտիկ

չահ, *աշխատավարձ:
չահաւոր, *աշխատավարձ
ունեցող, շահաւէտ:
վարնոց, ստոր մարդ:
խորամանկ, աչքը բաց:
վարտիք:

Տ. Տահրա
Տապաստ
*Տապկազ

դահրակ, յոտոց:
տապազդ (մորթացին ախտ):
տապկած (բանճարի, ճակըն-
դեղի տերևներով ձէթով
տապկուած ճաշ ...):

Տարոս ...

բարեմաղթութիւն (որոշ
ուրախութեան հասնելու):

Տավար
Տարազ, տարազ
Տարպաստ

դուար, եզ, կով:
տարածուն, ցիրուցան:
դարպաս:

Տէհլիզ
Տէպէլ տէպէլ

դահլիճ, նրբանցք:
թաւալ, թաւալ (դառնալ):

Տէվ
Տըռ տըռ (ընել)

դեւ, հրէշ:
տրտրալ, տրտնջալ:

*Տէրտէր

քահանայ, ծխատէր:

Տկկոս

անքուն, *քնատ նստած պա-
ռաւ:

Փ. Փամպլըք	բամբակ:
Փարթ	փորոտիք:
Փէթէկ	փեթակ:
Փէրչէմ	վարսամ, ճակտին՝ մազերու փունջ:
Փինթի	փնթի, * թափթփած:
Փիրփիրիմ	փրփրիմ, բոյս մը:
Փիւշիւրիւկ	փշուրիկ:
Փոխնորդ	փոխանորդ, հին շոր՝ լուաց- քի, գործի օրը հազնուած:

Ք. Քաջալ	քէջէլ, տաճիկ, այլազգի:
Քառկին	քեռկին:
Քարկօզէլ	քարկոծէլ, կշտամբէլ:
Քէլէ՛	քլա՛ (ձայնարկութիւն իգա- կան սեռի անձ մը կանչելու համար):
Քէլիկ	քալիկ, մանկանց լատուկ ոտնաման:
Քէրվան	կարաւան:
Քէօզ	կաջծ, * հրաշեկ կրակի կտոր:
Քէօսէի	խանձողատ, կէս այրած փայտ:
Քիւշիւմ	քշում, ամոթխածութիւն:
Քշտէլ(լէմէք)	քշտէլ, զարնէլ:
Օղորմութիւն	ողորմութիւն:
Օտընպլայ	ոտնլուաց:
Օշնեա Տէր	Օրհնեա ի Տէր:
Օջիլ	ոջիլ:

Օրնոս
Օսկի

ոռնոց, վարնոց, գրեհիկ:
ոսկի:

Սոյն ցուցակը կազմուած է Տէր Խորէն Ա. քհնյ. Ներսէսեանի կողմէ (Տե՛ս.—«Յուշամատեան Քիլիսի Հայոց», էջ 633-643): Աստղանիշով (*) բառերը մեր կողմէ կատարուած լրացումներն են:

(Հեղինակը)

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ՝ ՔԻԼԻՍԻ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌՈՎ

Աբրահամ

Աւետիս

Գէորգ

Թրվանտա

Իսկուհի

Կարապետ

Հռիփսիմէ

Մարիամ

Մանուէլ

Մարտիրոս

Մկրտիչ

Յակոբ

Յարութիւն

Յովհաննէս

Յովսէփ

Ոսկի

Պետրոս

Սարգիս

Վարդուհի

Աբօ, Ապոճ

Ավտիս, Ավօ, Հաւօ

Կիվրիկ, Կէվուշ

Թրվօ

Ուսկուլ

Կարուճ, Կրպիչ

Հոռիկ

Մայրամ, Մէննուշ

Մանյել

Մէրտիւրիս

Մկըր, Միլիբ

Էկոպ

Արթին

Օվանէս, Օվիկ

Ըսէպ, Իսէփ

Օսկի

Պետօ, պետիկ

Սագօ

Վարտէ, Ֆէրիտէ

Է. ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տասնիններորդ դարի երկրորդ կեսին Եւրոպայի մէջ առկայ աշխարհաքաղաքական և ընկերային իրավիճակը անպայմանօրէն իր անդրադարձը պիտի ունենար Կովկասէն մինչև Պալքանները տարածուած Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող ժողովուրդներու կեանքին վրայ, յատկապէս Սուլթաններու բռնակալական լուծի տակ հեծող ժողովուրդներու պարագային, ինչպիսիք էին Հայերը:

1880-ական թուականներուն Քիլիսի Հայոց մօտ սկսած դպրոցական, կրթամշակութային զարթօնքը տակաւ զարգացաւ յաջորդ տարիներուն և վերածեցաւ ազգային զարթօնքի՝ ազգային ինքնագիտակցութեան, ազգասիրութեան, հայրենասիրութեան գաղափարախօսութեան արմատաւորմանը, որուն իբր արդիւնք յառաջացաւ ազգային ազատագրական պայքարի գաղափարախօսութիւնը: Ազգային ազատագրական պայքարի միջոցներու որանման ընթացքին՝ առաջին հերթին քաղաքական կազմակերպութիւններ ստեղծելը անհրաժեշտութիւն դարձաւ: Օսմանեան լուծի տակ ապրող Արևմտահայութեան, ներառեալ Կիլիկիոյ Հայութեան համար, ազգային ազատագրական պայքարի առաջին պոռթկումը հանդիսացած էր Զէյթունի հերոսական ապստամբութիւնը 1860-ական թուականներուն:

Քիլիսի Հայոց մօտ ազգային-քաղաքական զարթօնքը սկսաւ 1880-ական թուականներու կրթամշակութային զարթօնքին հետ զուգընթաց: 1884 թուականի Սեպտեմբերին Բերիոյ Թեմի Առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոս վեհապետեանի

կողմէ ստեղծուած «Լեւոնեան Դպրոցասիրաց» մշակութային ընկերութեան յաջորդեց «Ջապէլեան Տիկնանց Միութիւնը»: Մինչ այդ ստեղծուած էր «Արուսեակ Մշակութային Ընկերութիւնը», այնուհետեւ նաև՝ «Հայկազեան Մշակութային Ընկերութիւնը», որոնց հովանիին տակ բացուեցան ազգային վարժարաններ: Բնիկ Քիլիսցի վարժապետներու շարքերը համալրեցին հարեան Այնթապէն ու այլ հայաբնակ քաղաքներէն հրաւիրուած գոլեճական, պատրաստուած ուսուցիչներ, մանկավարժներ:

Անոնցմէ մէկն էր քաղաքական պատրաստականութեամբ, յառաջադիմական գաղափարներով զինուած, խիզախ ու գործունեաց խառնուածքով, օրինակելի նկարագրով երիտասարդ Պերճ Մոմճեանը: Այնթապի յայտնի «Վարդանեան կրթարան»ի շրջանաւարտ՝ ան Քիլիս հրաւիրուեցաւ որպէս «Արուսեակ» վարժարանի ուսուցիչ: «Պարոն Պերճը Բաֆֆիի վէպերը վերծանութեան դաս անունով կը կարդար թարգմանաբար», կը չիշէ ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը և կը շարունակէ. «Պարոն Պերճը միայն ուսում չէր ջամբեր աշակերտներուն, այլ՝ անոնց մէջ կը կերտէր նկարագիր»: Քիլիսի մէջ առաջին անգամ ըլլալով երիտասարդներու համար «Գիշերային դասընթացք» ստեղծելով, Պերճ Մոմճեանը և Սմբատ Ղազէլեանը, որպէս ուսուցիչներ, ստեղծեցին սաղմերը յետագայ ընկերային—քաղաքական կազմակերպութիւններու:

— «Գիշերային դպրոցի միջոցով երիտասարդներու հետ շփման մէջ գտնուելով, անոնց բնաւորութիւնը, նկարագիրը և զգացումները լաւ մը ուսումնասիրելէ ետքը, անոնցմէ վստահելի և յարմար եղողները կ'ընտրենք իբր թեկնածու ընկերութեան սուրբ գործին»¹:

Այդ երիտասարդներէն Արաբկիրցի Առաքել անունով, մէկուն բերնէն առաջին անգամ ըլլալով կը լսեն «Հնչակեան

1. Յուշամատեն..., էջ 136—137.

կուսակցութիւն» անունով ընկերութեան մը մասին, որուն անդամն էր ինք:

Այդ տարիներուն Քիլիսի կրթա-մշակութային զարթոնքի օրերուն տեղի կ'ունենային Հայէպի Թեմի Առաջնորդ Մկրտիչ Եպիսկոպոս Վեհապետեանի ժողովրդական հրապարակային «քարոզախօսութիւնները» Ազգային վարժարանի սրահին մէջ: Ժողովուրդին շահագրգիռ ուշադրութեան արժանացած այդ հրապարակային լսարանները շարունակուեցան յաջորդ տարիներուն նոյն սրահին մէջ, ամէն կիրակի խոսուներամ ունկնդիրներու ներկայութեան: Ժողովուրդը կու գար լսելու ուսուցիչներու, քահանաներու, բժիշկներու կողմէ տրուող բանախօսութիւն-դասախօսութիւնները՝ պատմական, գիտական և այլ նիւթերու շուրջ: Յատկանշական է, որ կը կատարուէր նաև լրատուութիւն: Այս կէտը կ'արժէ շեշտել յատկապէս այն պատճառով, որ այդ ժամանակները ուրիշ որևէ լրատուական միջոց (հայերէն թերթ) հասանելի չէր Քիլիսի Հայութեան, իսկ հասած հատուկենտ թուրքերէն թերթերը մատչելի էին միայն թրքերէն (արաբատառ) գրելկարդալ գիտցողներուն: Հետևաբար, այդ ժողովրդական լսարաններու միջոցով տրուած լրագրական տեղեկատուութիւնը միակն էր Քիլիսի Հայութեան մեծամասնութեան համար որպէս քաղաքական զարգացման միջոց: Արդարև, քաղաքական գիտակցութիւնը կը հիմնաւորուի ու կը զարգանայ աշխարհի կեանքին հետ տեական կապ պահպանելով: Հարկ է ընդգծել նաև, որ այդ կիրականօրեայ ժողովրդական լսարաններու գլխաւոր խօսողները եղած են, բացի դպրոցի տնօրէն Համբարձում Պէրպէրեանէն, նախկին ուսուցիչ ու յառաջդիմասէր ազգային գործիչ Պերճ Մոմճեանը, որ Տէր Սահակ քահանայ դառնալէն յետոյ ալ որպէս «քաջ հովիւ» արժանաւոր կղերական, այդ կիրականօրեայ լսարաններուն մշտական ելույթ ունեցողներէն էր: Վերջին տարիներուն, ամէն կիրակի կը բանախօսէր նաև խօստուժնայից երիտասարդ հռետոր,

Հայէպի Պետական Վարժապետանոցէն փայլուն շրջանաւարտ եղած Թովմաս Թովմասեանը, Տէր Վահան Թովմասեանի որդին:

Պերճ (Տէր Սահակ) Մոմճեանը, ծնեալ Այնթապ 1868–ին, 1888–ին ընթացաւարտ եղած էր «Վարդանեան Կրթարան»էն, դասընկեր եղած էր յայտնի Հնչակեաններ դարձած Հրանտ Սիւլահեանի և Արմենակ Նազարանի հետ: Պերճ Մոմճեանը Քիլիս իր ուսուցչութեան առաջին օրերէն սկսեալ ազգասիրական–հայրենասիրական ու յառաջդիմական գաղափարներու քարոզչութիւն կը կատարէր՝ յատկապէս Բաֆֆիի հայրենասիրական վէպերը աշակերտներուն ծանօթացնելով: Քահանայ դառնալէն յետոյ ալ Տէր Սահակ Մոմճեանը աւետարանչական քարոզչութիւնը երկրորդական գործ համարելով՝ որպէս ամէնօրեայ կեանքի, գործի մարդ՝ «Կաշխատէր, որ աղքատը հաց ունենայ, եկեղեցին՝ հասոյթ, դպրոցը զարգանայ և ժողովուրդի մէջ մշակուի ազգասիրական, հայրենասիրական ոգին»¹:

Պերճ (Տէր Սահակ) Մոմճեանի անձանձիր ու անձնուէր գործունէութեան և անոր գաղափարակից, գործակից աշակերտ և ուսուցիչներու ջանքերով «Մեր բնագաւառ Քիլիսի մէջ ևս յառաջ եկան երիտասարդական կազմակերպութիւններ ... Ամենագօրաւոր կազմակերպութիւնը եղած է Հնչակեան երիտասարդական ընկերութիւնը, որուն անդամներուն թիւը հասած է մինչև 500–ի: Որքան գաղտնի ու սեղմուած, սակայն ունեցած է որոշ գործունէութիւն մը», կը գրէ մեր «Յուշամատեան»ի հեղինակակից Տէր Խորէն Ա. քհնյ. Ներսէսեանը²:

Քիլիսի Հնչակեան ընկերութեան վարչական ու գործոն անդամները եղած են՝ Թորոս Չաղլասեան, Յակոբ Պասմաճեան Թովմաս Թովմասեան, Պերճ Մոմճեան, Սմբատ Ղազէլեան

1. Յուշամատեան..., էջ 212:

2. Յուշամատեան..., էջ 169:

Չափրաստեան Մկրտիչ և Կայծակ, Աբրահամ Պէնլեան, Գրիգոր Խորոզեան, «Կէօյ Օղլան» և ուրիշներ:

«Յուշամատեան Քիլիսի Հայոց» հատորին մէջ շատ գուսպ ու հակիրճ կերպով արձանագրուած է հետևյալը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մասին (կ'արտագրեմ բառ առ բառ).

— «Դաշնակցութեան փոքրաթիւ ընկերութիւն մը ևս գոյութիւն ունեցած է Քիլիսի մէջ, որուն գլխաւոր անդամները եղած են՝ Արմենակ Ղալիկեան, Ղուկաս Տէր Ղուկասեան, Գրիգոր Մարաշլեան, Դաւիթ Ճիւլհէ Մանուկեան, Մանուէլ էֆ. Պայրամեան: Սոյն ընկերութիւնը սակայն ապրած է սեղմուած և ինքնամփոփ շրջանակի մը մէջ»¹:

Իսկ Ռամկավար քաղաքական կազմակերպութիւն չէր կրնար գոյութիւն ունենալ Քիլիսի մէջ 1922-էն առաջ պարզ աչն պատճառով, որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ստեղծուեցաւ 1921, Հոկտեմբեր 1-ին Կ. Պոլսոյ մէջ:

Քիլիսի Հնչակեան կազմակերպութեան գործունէութիւնը յաճախ կապուած եղած է հերոսական Չէյթունի կեանքին հետ: Կիլիկիոյ տարբեր քաղաքներու շարքին, Քիլիս ևս այցելած են Չէյթունի 1895 թ. հերոսամարտի գործիչներ՝ Աղասին, Մլեհը և Վարդանը: Քիլիսը հանդիսացած է դէպի Չէյթուն զէնք ու ռազմամթերք հասցնելու ճամբայ և միջոց: Քիլիսցի երիտասարդներ Ալեքսանտրէթ (Իսկէնտէրուն) եկած զէնքերը փոխադրած են մինչև Այնթապի մօտերքը: Մկրտիչ և Կայծակ Չափրաստեան եղբայրները յանդուգն գործեր կատարած են այդ ճակատագրական և բախտորոշ օրերուն: Քիլիսցի Աբրահամ Պէնլեանը, փերեզակի տարագով, տասնհինգ օրեր, հետիոտն, ճամբորդութիւն կատարած է ոտնամանին մէջ պահած նամակներ հասցնելով Չէյթունէն Քիլիս ու անկէ ալ Ալեքսանտրէթ, ուրկէ նամակները ղրկուած են Եւրո-

1. Յուշամատեան..., էջ 170:

պայ: Քիլիսցի Հնչակեան նուիրեալ «Կէօյ Օղլանը», տասնեակ Քիլիսցի երիտասարդներու գլուխը անցած՝ հասած է Զէյթուն ազատագրական շարժման և կռիւներուն մասնակցելու համար:

Քիլիս—Զէյթուն փոխադարձ եղբայրական օգնութեան կապերու առնչութեամբ շահեկան է յիշատակել հետևեալ եղելութիւնը:

Քիլիսի Պայրամեան և Սիւլահեան ազգային ջոջերը 1844—ին Զէյթունի Եպիսկոպոսին նամակով մը կը յայտնեն, թէ՛ Քիլիս ապրող, բնիկ Կիւրիւնցի Սէֆէր անունով Հայ մը իր երկու զաւակներով ու հարսներով իսլամական—մահմետական կրօնը ընդունած է և կարևոր պաշտօնի մը արժանանալով՝ թուրք կնոջ մը հետ ամուսնացած է: Ուստի կը խնդրեն, որ Զէյթունցիք միջոց մը գտնեն այդ ընտանիքը քրիստոնէութեան վերադարձնելու համար: Զէյթունի Առաջնորդը վանք կը կանչէ Զէյթունի իշխանները և «Տէլի Քէշիշ» վարդապետը: Կ'որոշուի տասը Զէյթունցի քաջեր ղրկել Քիլիս, այդ հաւատուրաց ընտանիքը Զէյթուն փախցնելու համար: Քաջերը 20 ջորիներու վրայ երկաթ ու պայտ բեռցուցած, իբր թէ ծախելու համար, կ'երթան Քիլիս: Հոն ուրացողի տունն ու շրջակայքը լաւ մը ուսումնասիրելէ ետք, քաղաքէն դուրս տեղ մը կը սպասեն կէս գիշերուան հասնելուն: Երբ քաղաքը խոր քունի մէջ կ'ըլլայ, մեր քաջերը կ'երթան ուրացողին տունը, սանդղաձև իրարու վրայ բարձրանալով կը մտնեն բակ և «Հրդեհ կա՛յ ... հրդեհ» պոռալով, «Դուրս ելէ՛ք, ձեզ ազատելու եկած ենք» կը պոռան: Քանի մը բառերով իրենց նպատակը կը հասկցնեն և կը հրամայեն շուտով պատրաստուիլ՝ ճամբայ ելլելու իրենց հետ: Արագ—արագ ընտանիքին վեց անդամները, նաև Սէֆէրին նոր թուրք կիինը՝ Յաթիմէն ջորիներու վրայ կը նստեցնեն և դէպի Զէյթուն, լեռներու վրայով, առանց Այնթապ և Մարաշ հանդիպելու կը հասնին Զէյթուն և

ուրացող ընտանիքը կը յանձնեն Առաջնորդ Եպիսկոպոսին: Առաջնորդը վանք կը հրաւիրէ Ձէյթունի ժողովուրդը, կը մկրտէ Սէֆէրն ու Ֆաթիմէն, զոր կ'անուանէ Մարիամ: Մկրտելէ յետոյ կը պսակէ զանոնք: Այդ ընտանիքը կը բնակեցնեն Եագուպեան թաղին մէջ: Անոնց սերունդը կ'աճի, կը զարգանայ, կը ճիւղաւորուի, կոչուելով՝ Քիււրքճեան և Թէրզեան, իսկ նոր Մարիամը կ'ըլլայ Չերմեռանդ քրիստոնեայ: (Առնուած Ձէյթունի Պատմութեանէն)¹:

* * *

«Քիլիսի Հայոց Կրթա-Մշակութային Կեանքը» բաժնին մէջ իր տեղին մանրամասնօրէն անդրադարձանք Քիլիսի Հնչակեան երիտասարդութեան կազմակերպութեան ամենագործոն անդամներուն ազգօգուտ, գնահատելի ու ժողովրդանուէր գործունէութեան մասին՝ որպէս ուսուցիչ, քահանայ, մշակութային ընկերութեան անդամ, դպրոցի հոգաբարձու, թաղական Խորհրդի անդամ և: Պերճ (Տէր Սահակ) Մոմճեանի մասին արդէն արժանին հատուցեցինք՝ տալով անոր կեանքին ու գործունէութեան մասին Համբարձում Պէրպէրեանի համակողմանի և առարկայական գնահատականը: Թովմաս Թովմասեանը և Յակոբ Պասմաճեանը Քիլիսի Հայութեան և իրենց գաղափարին՝ Հայոց սրբազան երազին՝ Անկախ Հայաստանի տեսլականին իրենց կեանքովը հատուցեցին, երբ 1915 թ. Յունիսին նահատակուեցան Պոլսոյ Պայազետի հրապարակին վրայ իրենց գաղափարակից միւս տասնութ Հնչակեան նուիրեալներուն հետ:

Քիլիսցի մեր երկու նահատակներուն մասին ձեռքի տակ ունինք այդ նահատակութեան յաջորդ տարին իսկ,

1. Յուշամատեն..., էջ 95-96: Տե՛ս նաև՝ Պողոս Մեկքոնեանի «Ձէյթուն՝ Քաջերու Օրրան», Երևան, 2000, էջ 122-123:

1916-ին, իրենց գաղափարկից ու գործակից, Քիլիսցի յայտնի Հնչակեան մտաւորական Գրիգոր Ճ. Խորագեանի կողմէ ստորագրուած գրութիւն մը, զոր կու տանք ստորև (որոշ կրճատումներով):

* * *

Թովմաս Թովմասեան:

Թովմաս Թովմասեանը, Քիլիսի աւագ քահանայ Տէր վահան Թովմասեանի անդրանիկ որդին, նահատակուեցաւ, երբ հազիւ 26-27 գարուններ բոլորած էր:

1907-ի Յուլիսի 15-ին, տեղույս Ազգ. բարձրագոյն նախակրթարանէն շրջանաւարտ ըլլալով, երկու տարի իբր օգնական ուսուցիչ կը պաշտօնավարէ նոյն կրթարանին մէջ: 1910-ի Սեպտեմբերին կ'արձանագրուի Հալէպի մէջ բացուած կառավարական ուսուցչանոցին՝ ինքզինքը կրթութեան գործին նուիրելու բարձր և ազնիւ նպատակով: Դպրոցի ուսման շրջանը երեք տարի ըլլալուն՝ 1913 Յուլիսին կ'ընթացաւարտէ հանդիսանալով միշտ իր դասարանին առաջինը և շահելով ջերմ համակրութիւնը թէ՛ իր դասընկերներուն և թէ՛ թուրք ուսուցչաց, նոյնիսկ Հալէպի կրթական տնօրէնին:

1913 Սեպտեմբերին Քիլիսի Ազգ. կրթարանին ուսուցիչ կը կարգուի՝ աւանդելու օսմաներէն լեզու և ընդհանուր ու ազգային պատմութիւններ վարժարանի երիցագոյն և աւագ դասարաններուն: Ազգային պատմութիւնը և մասնաւորապէս ազգային պատմութեան բաղդատական ուսումնասիրութեամբ և քննադատութեամբ, կը դասաւանդէ ան, օգտուելով իրեն տրամադրուած հայերէն, անգլերէն և ֆրանսերէն գրքերէն ...: Ապագան մեծ պատմաբան մը պիտի տեսնէր ողբացեալ Թովմասին մէջ:

1913-ին Հալէպէն Քիլիս վերադարձին՝ Հնչակեան մասնաճիւղին մէջ գործոն դեր կը ստանձնէ, նախ՝ իբր անդամ և ապա՝ քարտուղար: Իր գործունէութեան ասպարէզը այլևս եղած էր Հնչակեան երիտասարդութեան կրթական գործը:

Քիլիսը թէև հայաշատ կեդրոն մը չէր, այնուամենայնիւ Հնչակեան մասնաճիւղը 500-է աւելի անդամներ ունեցող պատկառելի մարմին մըն էր: Մասնաճիւղը ունէր մասնաւոր ու կոկիկ գրադարան մը: Ամէն Կիրակի, կէսօրէն յետոյ կ'ունենար անդամական գումարումներ ու ժողովներ, իրեն հետ, նպատակ ունենալով կրթութեան գործը, այսինքն գիտական ընկերութեան դասաւանդութիւնը: Կրթական գործէն զատ, տեղուոյն հայ արհեստաւորներու շահերու պաշտպանութիւնը՝ թուրք և քիւրտ աղաներու հետ իրենց ունեցած գործերուն մէջ: Կրթական այս գործին միջոցաւ իւրաքանչիւր արհեստաւոր դասակարգ միութիւններ կազմեց պաշտպանելու համար իրենց շահերը շահագործողներու դէմ, միանգամայն յարմարեցնելով իրենց պահանջները օրուան կացութեան համեմատ:

Մասնաճիւղը երկրորդական քայլ մը ևս առնելով ի շահ գործաւոր և արհեստաւոր դասակարգերու, կարգ մը խնայողական ընկերութիւններ կազմեց, որոնց կատարած գործը խիստ զգալի եղաւ Քիլիսի հայ կեանքին մէջ: Թովմասը համայնական այս շարժումին մէջ ազդող ջիղն էր, գործելու մէջ՝ կրակոտ, խորհելու, դատելու մէջ՝ արագ: Այս իսկ պատճառով Քիլիսի երիտասարդական շարժման ղեկավարները քաղաքի թուրք բնակչութեան, ազդեցիկ աղա-էֆէնտիներու աչքի փուշը դարձան:

15 Յունիս 1915-ին Պոլսոյ մէջ կախաղան բարձրացող տարաբախտ թովմասի ձերբակալութեան պատճառը և կրած չարչարանքները ներկայ պայմաններուն տակ (1916 թ.) անծանօթ են մեզի: Սա չափը միայն գիտենք, որ ազգային ազատութեան համար վառուղ հոգի մըն էր ան: 1913-ին Ազգային վարժարանի սրահին մէջ, լսարանին՝ «Հայութեան Տառապանքները և Պատճառները» նիւթին շուրջ պատմական վերլուծում մը կ'ընէր: Իր վերջաբանին մէջ ըսաւ. «Ով ամենագէտ Աստուած, կ'անգիտանա՞ս հայ մարտիրոսներու քու

սուրբ անուանդ համար կրած խաչերը, չե՞ս գիտեր հայ ազգին կրած տառապանքները... Ա՛լ բաւ է, մի՛ փորձեր մեզ...»:

Ազնիւ դասընկեր, քու անժամանակ ու անբնական մահը շանթահարեց մեզ, անշուշտ գաղափարի վեհութիւնը և խոտալի սրբութիւնը այդ մահը անմահութեան կը փոխէ:

(Ստորագրուած 1916—ին՝ Գրիգոր Ճ. Խորոզեանի կողմէ)՝

* * *

Մեր տրամադրութեան տակ ունինք նաև, նոյն Գրիգոր Ճ. Խորոզեանի կողմէ ստորագրուած գրութիւն մը Քիլիսի Հնչակեան կազմակերպութեան հիմնադիրներէն՝ Յակոբ Ղ. Պասմաճեանի կեանքին ու գործունէութեան մասին, որ կուտանք ստորև (որոշ կրճատումներով):

Յակոբ Ղ. Պասմաճեան:

—«Յակոբ Ղ. Պասմաճեան, Քիլիսի մեջ, ճիւղաւորուած Պասմաճեաններու մեծ ընտանիքին կը պատկանի: Այս ընտանիքը, ուրիշ քանի մը ընտանիքներու հետ միասին Քիլիսի Հնչակեանութեան հիմնադիրն է:

Յակոբ Ղ. Պասմաճեան, հազիւ 40 տարեկան (երբ նահատակուեցաւ ...) անձնուրաց Հնչակեան մըն էր: Իր փոքր տարիքին յարած է կուսակցութեան, Արուսեակ վարժարանի երիցագոյն անդամներէն ըլլալով, Հնչակեան ուսուցիչ Պերճ Մոմճեանի ներշնչումներուն տակ Հնչակեան գաղափարներով տողորուած է: ... Իր դասարանին անդամները տեղուցն Հնչակեան մասնաճիւղին սիւներն են, սակայն Յակոբ անոնց մէջ առաջնակարգութեան դաբնին խլած է, որովհետև իր կեանքին ամբողջ գործունէութիւնը երկու գաղափարներու իրագործման նուիրած է անշահախնդրաբար՝ Հնչակեան խոտալը և Ազգային դաստիարակութիւնը: Ան 1900—էն իվեր (Քիլիսի) բարձրագոյն նախակրթարանի ամէնէն նւիրուած ու գործոն

1. Յուշամատեն..., էջ 102—105:

անդամը և Հոգեբարձութեան ալ գրեթէ հոգին եղած է: Անդամ մը, Յակոբը ձեռքը գտնուող յեղափոխական վէպը գոցելով, այսպէս ըսաւ.

– «Այս աշխարհէն վազ անցած եմ, գոնէ անունս մեր համայնքին մէջ յիշատակելու և միանգամայն անոր ծառայութիւն մը մատուցած ըլլալու համար, դրամովս ընդունակ և նկարագրի տէր որք երիտասարդի մը համալսարանական կրթութիւն տալ կ'ուզեմ»:

1902-ին Յակոբ և քանի մը ուրիշ կրթասէր ազգայիններ, իրենց ղեկավարութեան տակ, տեղւոյն թաղականութենէն անկախ, «ԼՈՒՍԱՍԻՐԱՅ» անունով բարձր նախակրթարան մը բացին: Երէց և երիցագոյն կարգերու ուսողութեան դասերը ինք կ'աւանդէր, կրթութեան նուիրուած դասատուի եռանդով: ... Յետոյ ընկերութեան թաքուն նախտակները մի ոմն Հայու միջոցով կառավարութեան հաղորդուեցան: Դպրոցին ամբողջ մարմինը և ուսուցչական կազմը բանտարկուեցան: Ութ ամիս զնտաններուն մէջ մնալէն ետքը, ... վերջապէս Կիլիկիոյ Կաթողիկոսի Քիլիս այցելութեան կապակցութեամբ ազատ արձակուեցան: Յակոբ չ'ընկրկեցաւ այդ դժբախտութեան առջև, այլ՝ աւելի նախանձախնդրութեամբ փարեցաւ կրթական գործին մինչև վերջին վայրկեան:

Յակոբ Պասմաճեանի կեանքին ամէնէն գործոն մասը Հնչակեան անուան հետ լծորդուած է: 1895-ի հայկական ընդհանուր ջարդերու ատեն, երբ Կիլիկիոյ հայաչատ կեդրոնները թուրք բարբարոսական խուժաններու զազանային արարքներուն կ'ենթարկուէին, Քիլիսը իր արհաւիրքի օրերը կ'ապրէր: Արհաւիրքի այդ օրերուն Հնչակեան մասնաճիւղը ինքնապաշտպանութեան խումբեր կը պատրաստէր: Յակոբ, քաջ զինավարժ ու զինագործ (թիւֆէնկճի) մը ըլլալով, քաղաքը գտնուած հին հրացանները գործածելի ձևի մը տակ «Մարթին»ի կը վերածէր զինելու համար այդ խումբերը: Վերջապէս կառավարութիւնը խուզարկելով երևան հանց

այդ դադարների և Յակոբ բանտարկուեցաւ:

Սահմանադրութեան (Օսմանեան) հռչակումէն ետքը (1908-ին) Քիլիսի մէջ Հնչակեան դադափարները տարածող և նոյն մարմինը պատկառելի թիւի մը հասցնող անձնաւորութիւնը Յակոբը եղած է:

Ատանայի ջարդի միջոցին (1909), երբ Հասանպէյլիի և Օսմանիյէի ջարդերը տեղի կ'ունենային, Հալէպէն արգելուած գէնքեր բերել տալով՝ երիտասարդութեան բաշխողը և ինքնապաշտպանութեան խումբեր պատրաստողը Հնչակեան մասնաճիւղը եղաւ, որուն ղեկավարը ինքը՝ Յակոբն էր:

Առանց չափազանցութեան, սա իւրողութիւն է, թէ 1909-ին Քիլիսը Ատանայի բախտին ենթարկուելէ փրկողը Յակոբ Պասմաճեանը եղաւ, հետեւեալ պարագաներու տակ (կը տրուին մանրամասն հանգամանքները այդ «պարագաներուն», Ա. Պ.):

Հնչակեան կուսակցութեան սնուցած ու արտադրած մաքուր և դադափարական զինւորներէն մին էր Յակոբը ... Յեղափոխականի մը ամբողջ յատկանիշները իր անձին վրայ ցոլացնող Հնչակեան զինւոր մը:

(Ստորագրուած 1916-ին ձ. Խորոզեանի կողմէ):

* * *

Կը պատմուի, թէ 1915-ին, երբ Յակոբ Պասմաճեանն ալ ձերբակալուեցաւ Մեծն Մուրատի, Փարամազի, Թովմասի և քսաններու խումբին հետ տարուեցաւ Պոլիս, հոն թուրք ընդհանուր ոստիկանապետ Ալի Րիզա փաշայի հարցումներուն պատասխանելով յայտարարած է.

«Պոլիս եկած եմ քե՛զ և ընկերներդ սպաննելու համար...»:

Յակոբ Պասմաճեանը մասնակցած է 1914, Յուլիս 24-ին Պոլսոյ մէջ գումարուած Հնչակեան կուսակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովին:

(Ստորագրուած՝ Խորէն Ա. քհնյ. Ներսէսեան)¹:

* * *

1. Յուշամատեան..., էջ 106-110:

Քիլիսի մէջ քաղաքակական կազմակերպութիւններուն տարած քաղաքական դաստիարակչական աշխատանքին և ազգասիրական, հայրենասիրական քարոզչութեան որպէս արգասիք եղող Թովմասեաններու, Պասմաճեաններու նման նուիրեալներու կողքին յառաջ եկան նաև գործի, զէնքի, կռուի հերոսներ՝ անձնուրաց հայդուկներ, որոնցմէ ամենայայտնի ու խիզախը հանդիսացած է հերոս Աւետիս Օհանեանը՝ «Շաշը Աւետիս» (Շիլ Աւետիս) յորջորջեալ, քանզի ան՝ Ղղայնացած պահուն աչքերը թեթևօրէն ծռելով՝ «չաշը» (շիլ) երևոյթ կը ստանային անոր աչքերը:

Հերոս Աւետիս Օհանեան՝ «Շաշը Աւետիս» ծնած էր Քիլիս 1878 թուկանին, Տաւրոսեան լեռներու լանջերէն Քիլիս իջած, հաստատուած Աւետիս անուն Հայու մը թոռան թոռն էր: Պատանի հասակէն սկսեալ գործ ունեցած ըլլալով զէնքի հետ, Աւետիսը դարձած էր յանդուզն և անվախ, խիզախ գործերու մէջ նետուող երիտասարդ մը: Ան շատ գործոն դեր ունեցած է Քիլիսի Հնչակեան կազմակերպութեան գործունէութեան տարբեր բնագաւառներուն մէջ: Իր ձիով թամբին մէջ կուսակցական նամակագրութիւններ ղետեղելով՝ փոխադրած է Քիլիսէն Տէօրթ Եօլ (Զորք Մարգպան), անկէ Ալեքսանտրէթ, երբեմն՝ Քիլիսէն Զէյթուն, Խարբերդ, Տիգրանակերտ: Իր առաքելութիւնները կատարած է միշտ ձի հեծած և յաճախ հանդիպումներ ունեցած է թուրք հրոսակներու հետ, միշտ սպաննած ու փախուստի մատնած է զանոնք: Թրքական զուլումի ու բռնակալութեան դեմ պայքարելու ճամբին Աւետիսը նետուած է ֆէտայական կեանքի մէջ: Իր գլխաւորութեամբ կազմած է մարտական խումբեր և Ամանոսեան լեռներուն լանջերուն վրայ, ձորերու մէջ, յատկապէս Տէօրթ Եօլի շրջանին մէջ, միշտ յաջողութեամբ մաքարած է թուրք ակազակներուն դեմ՝ ապահովելով շրջանի հայկական բնակավայրերու ժողովուրդի խաղաղ կեանքն ու աշխատանքը: 1905-էն մինչև 1915 Աւետիս Օհանեանը իր կեանքը

անցուցած է լեռներու վրայ, որպէս «Լեռան որդի, սարի զաւակ», կազմակերպելով ու զինելով 500 Հայ ֆէտայիներ: Աւետիսի ֆէտայիներուն խումբին համբաւը կը հասնի մինչև Պոլիս, ուրկէ հրահանգ կու գայ տեղական իշխանութեանց՝ դիմել ամանախիստ միջոցառումներու հերոս Աւետիսը ձերբակալելու համար: Սակայն, բոլոր այդ միջոցառումները ապարդիւն կ'անցնին և Աւետիսը կը շարունակէ իր պայքարը: Եղեռնի տարիներուն ալ ան կը շարունակէ իր քաջագործութիւնները Ամանոս լեռներուն վրայ՝ ազատելով հայ կիներ, աղջիկներ, պաշտպանելով լեռներուն վրայ թափառող անզէն Հայերը:

Եղեռնէն յետոյ հերոս Աւետիս Օհանեանը ընտանեօք կը հաստատուի Հալէպ, ուրկէ կ'անցնի արդէն Տէօրթ Եօլցի վերաբնակեցուած Հայերով ճոխացած հայաբնակ Ալեքսանտրէթ քաղաքը, ուր կը վախճանի 1922-ին:

Հերոս Աւետիս Օհանեանի մարտական ժողովրդանուէր գործունէութեան դաշտը առաւելաբար եղած է Տէօրթ Եօլն ու շրջակայքը: Զինք մօտէն ճանչցող Տէօրթ Եօլցի-Չորք Մարզպանցիք ներբողական տողեր հիւսած են՝ ձօնուած մեր հերոսին, զինք կոչելով՝

«Աւետիս Փաշա»

Ստորև կը ներկայացնենք այդ ներբողական գովերգէն մի քանի տուն—քառեակ (թրքերէնէ հայերէնի թարգմանուած Տէր Խորէն Ա. քահանայ Ներսէսեանի կողմէ¹:

Քիլիս քաղաքի ծնունդ հարազատ,
Աւետիս փաշան ունէր լոկ մէկ դատ,
Պաշտպանել Հայը ընդդէմ ոսոխին,
Լուծել վրէժը որբ ու այրիին:

1. Յուշամատեն..., էջ 165—166:

Ներբողական սոցն գիրն կարդացէ՛ք,
Եւ տիպար հերոս, հայորդին ճանչցէ՛ք,
Հայութեան անտէր Տէօրթեօլին համայն,
Եղաւ փրկիչը՝ Աւետիս փաշան:

Այրած սիրտ ունէր, Աւետիս փաշան,
Նժոյգ ձի տակին, տեսքով առնական,
Լեռ, սար ու ձորեր իր ոտից կոխան,
Համբաւը հասաւ Փարիզի ոստան:

* * *

Քիլիսի մէջ Հնչակեան Կուսակցութեան Մասնաճիւղի ստեղծման, հիմնադրութեան և յետագայ գործունէութեան մէջ լիշարժան տեղ ու դեր ունի Չափրաստեան ընտանիքը, մանաւանդ՝ ընտանիքին մայրը՝ Սուլթան Չափրաստեանը: Այդ ընտանիքի կենսագիր և «Յուշամատեան»ի հեղինակակից Տէր Խորէն Ա. քահանայ Ներսէսեանի գրութենէն կ'արտատպենք հետևեալ տողերը¹.

– «Տիկին Սուլթան Չափրաստեանի կեանքին յատկանշական գիծը ի յայտ կու գայ իր ընտանիքէն ներս կատարուած կուսակցական գործունէութեան շրջանին: ... Տքթ. Տիգրան Էնֆիլէճեանի (Քիլիսի քաղաքապետարանի բժիշկ) միջոցով և Չափրաստեան ընտանիքի գաւակներէն՝ Մկրտիչի, Սարգիսի, Կայծակի և Յովհաննէսի, ինչպէս նաև Յակոբ Պասմաճեանի ու Սմբատ Ղազէլեանի նախաձեռնութեամբ հիմը կը դրուի Քիլիսի Հնչակեան Կուսակցութեան Մասնաճիւղին: ... Չափրաստեաններու տան մէջ 18 երիտասարդներով գումարուած գաղտնի ժողովի մը ընթացքին Մասնաճիւղը կը ստանայ կազմակերպեալ ու պաշտօնական հանգամանք:

1. Յուշամատեան..., էջ 584–585:

... Զափրաստեաններու տունը կը դառնայ կուսակցութեան կեդրոնը: ... Ժողովները հոն կը գումարուին: ... Դուրսէն եկած գործիչները կ'իջևանեն այս տան մէջ: Տիկին Սուլթան Զափրաստեանը, թէև անուս, մեծապէս օգտակար կը հանդիսանայ կուսակցութեան գործերուն և կը քաջալերէ իր զաւակները և միւս երիտասարդները:

Տիկին Սուլթանը, իբր ծառայասէր Հայուհի, կ'ընտրուի Քիլիսի Ազգային վարժարանի հոգաբարձութեան անդամուհի և կը մատուցանէ կարևոր ծառայութիւններ՝ հանգանակութիւններ կատարելով ի նպաստ դպրոցին ... յաճախ իր քսակէն հոգալով չքաւոր աշակերտներուն կրթաթօշակները:

Քիլիսի Սբ. Յովհաննէս (նոր) եկեղեցիի շինութեան ժամանակ, տունէ-տուն շրջելով, հայ տիկիներու ոսկեղէն սրտաբուխ նուէրները կը ծախէ և կը վճարէ գործաւորներուն օրավարձը:

Տիկին Սուլթան Զափրաստեան, իր տան մէջ 30-40 հոգիներով գումարուած (գաղտնի) ժողովի ընթացքին եկող խուզարկու ոստիկանները իր ճարպիկութեամբ, սրամտութեամբ վերադարձնելով՝ կը կատարէ պահապան հրեշտակի դեր:

Սուլթանի որդիները, Մկրտիչ (Մըկըր) և Կայծակ՝ յանդուզն գործեր կատարած են Զէյթունի 1895-ի հերոսամարտի օրերուն՝ զէնք, ռազմամթերք փոխադրելով Ալեքսանտրէթէն Քիլիս, յետոյ Քիլիսէն Զէյթուն:

Սուլթան Զափրաստեանը Քիլիսի ազգային կեանքին մէջ կը թողու ազգասիրութեան տիպար օրինակ մը՝ իր կեանքովն ու գործունէութեամբը:

* * *

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄ ԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ

Քիլիսի Հայոց կեանքին մէջ կրթամշակութային զարթոնքի սկզբնաւորութենէն իվեր, երբ Հալէպի (Բերիոյ) Թեմի Առաջնորդի նախաձեռնութեամբ 1884-ին կը ստեղծուի Լևոնեան Դպրոցասիրաց մշակութային ընկերութիւնը, նոր թափ կը ստանայ ընկերային, հասարակական եռուզեռը՝ Լևոնեանին կը յաջորդեն Զապէլեան, Հայկազեան, Արուսեակ, Լուսասիրաց կրթական, մշակութային ընկերութիւնները, որոնց մասին հանգամանօրէն խօսուեցաւ սոյն աշխատութեան «Քիլիսի Հայոց կրթամշակութային կեանքը» բաժնին մէջ: Այստեղ, վերլիշելով այդ բոլորը, հարկ կը համարենք ընդգծել, որ, արդարեւ, այդ ընկերութիւն-միութիւնները լինելով հանդերձ ընկերային-հասարակական կազմակերպութիւններ, ինքնուրոյն հասարակական կազմակերպութիւններ չէին հանդիսանար, իրենց առանձին բնոյթով ու նպատակով, ծրագրով, այլ միայն նոյնանուն վարժարաններու ղեկավար, հովանաւորող ազգային մարմիններ: Անոնք առաւել կամ նուազ չափերով, ուղղակի կամ անուղղակի կերպով կապուած էին Քիլիսի Սբ. Յովհաննէս Եկեղեցւոյ ազգային-եկեղեցական կառույցին հետ, որը վերջին հաշուով Հալէպի Թեմի Առաջնորդարանի վարչական իրաւասութեանը ենթակայ կը գտնուէր:

Ահա՛, թէ ինչու Քիլիսի Հայոց մօտ միակ ինքնուրոյն կրօնա-եկեղեցական ենթակայութենէ ազատ հասարակական կազմակերպութիւնը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Քիլիսի Մասնաժողովն էր:

1906-ին Գահիրէի մէջ Պօղոս Նուպար Փաշայի և խումբ մը երևելի ազգայիններու կողմէ ՀԲԸ Միութեան հիմնադրութենէն հինգ տարի յետոյ՝ 1911 թ. Յուլիս 1-ին, խումբ

մը ազգայիններ (25 հոգի) կը կազմեն ՀԲԸ Միութեան Քիլիսի Մասնաժողովի վարիչ մարմինը հետևեալ կազմով.

Տիարք Տքթ. Կ. Միսիրեան՝ Ատենապետ, Յակոբ Ղ. Պամանեան՝ Ատենադպիր, Արմենակ Պէտիրեան՝ Գանձապահ և խորհրդականներ՝ Տէր Վահան քհնյ. Թովմասեան և Դաւիթ Ենիգօմշուեան:

Շրջանակին ժողովուրդը նիւթական շատ համեստ կացութիւն մը ունի, բայց կրկին կը մասնակցի Սասունի սովեալներուն ի նպաստ հանգանակութեանը:

1912 Նոյեմբեր 24-ին կը վերակազմուի Մասնաճիւղը, ուրկէ վիճակով կը դադրին Ատենապետն ու Գանձապահը և անոնց տեղ կ'ընտրուին Տիարք Համբարձում Պէրպէրեանը և Գրիգոր Աթթարեանը:

Տարի մը ետք, նոր ընդհանուր ժողով մը հետևեալ կազմը կու տայ վարիչ մարմնին.

Տիարք Դաւիթ Ենիգօմշուեան՝ Ատենապետ, Արժ. Տէր Վահան քհնյ. Թովմասեան՝ Ատենադպիր, Գրիգոր Աթթարեան Գանձապահ և խորհրդականներ՝ Տիգրան Վարդանեան և Կարուճ Վարպետեան:

Միութեան կեդրոնը այս առթիւ կը ղրկէ 22 ոսկի գումար մը, 12 ոսկին Ազգային վարժարանին և 10 ոսկին Հայ Բողոքականաց վարժարանին համար: Մասնաճիւղը կ'ունենայ 30 անդամներ: 1914-ին պատերազմն ու տեղահանութիւնը վերջ կու տան իր գոյութեան:

1919 Յուլիսին, վերապրող Քիլիսցիները մեծ մասամբ վերադարձած են բոլորովին թշուառ վիճակի մէջ: Հողագործները ո՛չ գործիք ունին, ո՛չ լծկան, ո՛չ սերմնացու, արհեստաւորներն ալ գործիքէ ու դրամագլուխէ զուրկ են, այրիներ ու որբեր կան մեծ թիւով և ուրիշ վայրերու վերապրողներ ալ տակաւին կը խռնուին Քիլիս, որուն Միութեան կեդրոնը կը նպաստէ Հայէպի Մասնաճիւղին միջոցաւ:

Այս կացութեան մէջ կը վերաբացուի Միութեան

տեղական Մասնաճիւղը նոյն Յուլիս ամսուն, նախաձեռնութեամբ Տիար Դաւիթ Աղամեանի և կ'ընտրուի հետևեալ վարիչ մարմինը՝ Տիարք Յովհաննէս Պայրամեան՝ Ատենապետ, Տքթ. Յովսէփ Մահտեսեան՝ Ատենադպիր, Գրիգոր Աթթարեան՝ գանձապահ և խորհրդականներ՝ Տիգրան Պայրամեան, Յովհաննէս Հէքիմեան, Աւետիս Պայրամեան, Յարութիւն Քեչիշեան, Յարութիւն Շամամեան:

Մասնաճիւղը առաջին առիթով Որբանոց-Պատասպարան մը կը հաստատէ՝ բոլորովին անոք և որբ ու այրիներու համար: Միւս կողմէ իր հսկողութեան տակ կ'առնէ տեղւոյն վարժարանները, որոնք մինչև 1920-ի Ապրիլը նպաստ կը ստանան անգլիական և ֆրանսական զինւորական իշխանութիւններէն: Կեդրոնը այդ օրերուն նախընտրութիւն կու տայ վերապրող ժողովուրդին տնտեսական պէտքերուն և որբերու հոգատարութեան: Ան՝ իր կողմէ Հալէպի Մասնաճիւղին միջոցով մինչև 1920 տարուան վերջը Քիլիս ղրկած աւելի քան 1 600 ոսկիի գումարը մեծ մասամբ կը յատկացնէ Միութեան Որբանոց-Պատասպարանի մատակարարութեանը:

1920 Նոյեմբերին Քիլիսի Մասնաճիւղին վարիչ մարմինը կը վերակազմուի հետևեալ կերպով.

Տիարք Յովհաննէս Պայրամեան՝ Ատենապետ, Համբարձում Պէրպէրեան՝ Ատենադպիր, Նուրիկ Տէր Յովհաննէսեան՝ Գանձապահ և խորհրդականներ՝ Յակոբ Շիլ Գէորգեան և Արմենակ Պէտիրեան:

Կեդրոնը տարուան վերջը կը խորհի իր հոգածութեան տակ առնել Քիլիսի որբերը և անոնց մանրամասն ցուցակը կը խնդրէ, բայց 1921-ի Կիլիկեան տխուր դէպքերը, որոնց թատերավայր պիտի ըլլար նաև Քիլիսը, յարաբերութիւնները կը խզուին Կեդրոնին և Մասնաճիւղին միջև:

Զինադադարին հետևող վերակազմութենէն ետք Քիլիսի Մասնաճիւղը կ'ունենայ 88 անդամներ:

* * *

Ը. ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՒԹՒԻՒՆԸ
 1895-96 թ.թ. ԵՒ 1909 թ.
 ԱՏԱՆԱՅԻ (ԿԻԼԻԿԻՈՅ)
 ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ

«Մեծ ջարդերուն»՝ 1895-96 թուականներուն կատարուած Համխտեան կոտորածներու օրերուն Քիլիսի Հայոց վիճակի մասին որոշ պատկերացում կազմելու նպատակադրուած հետևեալ էջերուն մէջ պիտի ջանանք տալ միայն դէպքերու, եղելութիւններու, կենդանի փաստերու մասին երկու ականատես վկաներու՝ Քիլիսի ուսուցիչներ, ազգային գործիչներ Համբարձում Պէրպէրեանի և Սմբատ Ղազէլեանի անձնական փորձառութիւնները, իր ժամանակին գրի առնուած իրենց անձնական Յուշերուն մէջ:

Մեր վաստակաւոր երկու հայրենակիցներուն համապատասխան դատումներուն ու եզրահանգումներուն պիտի մօտենանք անաչառ քննադատութեամբ՝ մօտ հարիւր տարուայ հեռաւորութենէն դիտելով պատմական այդ տխուր դէպքերը, որոնց մասին մեր հայրենակից և դէպքերուն ժամանակակից ազգային գործիչները անհրաժեշտաբար պիտի ունենային ենթակայական մօտեցում և դատում: Արդարև, այդ օրերուն տիրող ազգային-քաղաքական հոգեվիճակը անպայման պէտք է ճնշէր առողջ դատողութեան վրայ և դատումներն ու եզրահանգումները պէտք է անցնէին զգայնութեան և զգացմունքայնութեան պրիսմակի միջով:

Պիտի խուսափինք, հնարաւորին սահմաններուն մէջ, անոնց նեղ-անձնական զգացմունքային զեղումները կրկնելէ, որոնք այդ օրերուն Օսմանեան բռնակալութեան լուծին տակ երբեմն «չախտենական զոհ» երևալու հոգեբանական բարդոյ-

Թէն կ'առաջանային:

Ազգային գործիչ, ուսուցիչ, իրաւաբան Համբարձում Պէրպէրեանը 1890-ական թուականներու «Հայկական ջարդերու» դրդապատճառներու մասին իր կարծիքը գրի առնելով, կ'ըսէ իրաւամբ.

– Վեց նահանգներու (հայաբնակ վեց կուսակալութիւնները Օսմանեան կայսրութեան՝ Վան, Կարին, Բաղէշ, Խարբերդ, Տիգրանակերտ, Սեբաստիա) մէջ կատարուելիք ծանօթ բարենորոգութեանց կապակցութեամբ ... Հայուն պահանջքը լռեցնելու համար որոշուած էր Հայութիւնը մէջտեղէն վերցնել:

Արդարև, «համիտեան ջարդեր» յորջորջուած տխրահռուչակ այդ կոտորածները փաստօրէն հանդիսացան սկզբնաւորութիւնը Հայոց ցեղասպանութեան, քանզի փանթիւրփիզմը ներքին թէ արտաքին իրենց քաղաքականութեան առանցք դարձուցած Օսմանեան ղեկավար շրջանակներու գաղափարա-խօսութիւնը կը թելադրէր «Հայկական Հարցը՝ Հայոց ազգային ազատութեան պահանջատիրութիւնը մէջտեղէն վերցնելու միակ և ամենակտրուկ միջոցը՝ Հայերը մէջտեղէն վերցնելը, Հայերը բնաջնջելն էր: Այդ առաքելութիւնը իրականացնելու ձեռնարկեցին յաջորդ տարիներուն արդէն Օսմանեան տէրութեան ղեկը իրենց ձեռքը առած «Ժէօն Թուրքերը»՝ «Հրեայ ցեղէն մահմետականացած Սելանիկցի վաճառականները»–Իթթիհատականները¹, ինչպէս կը գրէ Հ. Պէրպէրեան:

Ժէօն–Թուրքերու՝ Իթթիհատականներու էութեան մասին իր բնութագրումը կու տայ Ջ. Կիրակոսեանը իր «Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ» աշխատութեան մէջ.

«Իթթիհատականները, թրքացած Հրեաները (տէօնմէններ)

1. Յուշամատեն..., էջ 99:

սլատկանում էին ֆրանսիական «Ազատ Որմնադիրներին» (Ֆրիմասոններին) օթեակներին: ... 1908–1914 Երիտթուրքական պետական ու քաղաքական կառավարման մտաւորապէս վեց տարիներին ընթացքում որոշակի դարձաւ նրանց փանթուրքիստական գաղափարաբանութիւնը: ... (Երիտթուրքական) Սալոնիկի համագումարը (1911–ին) որոշեց, որ Թուրքիան պէտք է լիովին իսլամական երկիր դառնայ, ... միւս ազգերից պէտք է խլել ինքնուրոյն կազմակերպուելու իրաւունքը¹:

Ինչպէս յայտնի է, Ժէօն-Թուրք-Իթթիհատականները 1915–էն մինչև 1918 և 1920–էն մինչև 1923, նոյնպէս Իթթիհատական, Սալոնիկցի «տէօնմէ» (մահմետականացած) Հրեայ Մուսթաֆա Քեմալը Հայկական Հարցին «վերջնական լուծում» տալ փորձեցին թէ՛ Արևելեան Հայաստանի, թէ՛ Արևմըտեան Հայաստանի, թէ՛ Կիլիկիոյ մէջ:

Քիլիսի Հայոց Չարդի մասին իր «ականատեսի վկայութիւնները թուղթին յանձնելէ առաջ», Համբարձում Պէրպէրեանը բնականօրէն որպէս իրաւաբան-ժամանակագիր «կը տարուի խորհելու Հայոց Չարդերու պատճառներու մասին» և կը գրէ:

Մեր ազգակիցները անիրատես և անհեռատես ելոյթներ ունեցան, թէև ազգասիրական գերազանց զգացումներէ տարուած² ու կը թուէ Չէյթունի, Մասունի դէպքերը, «Համիտիէ» Չարդարար զօրագունդերու ստեղծումը, «Պանք Օթթոման»ի գրաւումը 1896 Օգոստոսին: Այնուհետև կը չիշատակուի Պոլսոյ Հայոց Պատրիարք Իզմիրլեան Սրբազանը՝ «ազգասէր, բարեսիրտ ու անձնուէր եկեղեցական մը, որ կը շարժէր զգացումով ... շրջապատուած ըլլալով Հնչակեան կուսակցու-

1. Չ. Կիրակոսեան, Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ, Երևան, 1982, էջ 195 և 204–205:

2. Յուշամատենան..., էջ 60–62:

Թեան խորհրդականներով»: 1895 թ. Սեպտեմբեր 18-ին, Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին մէջ գումարուած «խառն ժողով»-ի մը որոշումով, ժողովրդային դիմում կը կատարուի Բարձրագոյն Դրան (Սուլթանական կառավարութեան), որպէսզի փութացուի «Բարեկարգութեանց Ծրագրի» գործադրութիւնը: Իսկ Բարձրագոյն Դուռը, զինեալ ցոյց մը նկատելով այդ դիմումը, կը դիմէ բռնութեան, որով կը սկսի Պոլսոյ Հայերու ջարդը բոլոր թաղերուն մէջ:

– «Օրը օրին կը տեղականայինք ջարդերու ու թալանի մասին, կը գրէ Հ. Պէրպէրեանը, որ կը տարածուէր Տրապիզոնէն Կիւմիւռ, Բաբերդ, Կարին, Մուշ, Սասուն, ... Արաբկիր, Խարբերդ, Տիարպէքիր, Եդեսիա, Կիւրիւն, Հաճըն, Գերմանիկ (Մարաշ), Այնթապ ...»: 1895 Նոյեմբեր 6-ին տեղի կ'ունենար Այնթապի Հայոց ջարդը: Նոյն օրը, շրջակայ գիւղերէ յարձակում մը կը փորձուի Քիլիսի վրայ և բազմամարդ խուժան մը կը շրջապատէ Քիլիսը և վայրկեանէ վայրկեան կը սպասուէր դէպքի սկզբնաւորութեան: Քաղաքի հարաւային թաղերը, որ ամբողջութեամբ թրքաբնակ էին, ... սկսան խլրտիլ: Գայմագամը (կառավարիչը), որ ոճրածին մէկն էր, մատնուած էր օր առաջ քաղաքի Հայերը կոտորել տալու մոլուցքին: Նոյեմբեր 7-ի դիշերը Քիլիսի Հայերը հալեցան ու մաշեցան ... անքուն լուսցուցին գիշերը»¹:

Գաղտնիք մնաց, թէ այդ օրերուն ինչո՞ւ և ինչպէ՞ս Հայոց ջարդ տեղի չ'ունեցաւ: Դուրսէն եկած ջարդարար խուժանը հեռացած էր արդէն և որևէ դէպքի առիթ չ'տրուեցաւ քաղաքէն ներս: Երևի, Քիլիսի մէջ Հայոց ջարդ կատարելու հրաման չ'էր եկած վերէն, քանի որ, մտածեցինք, Քիլիսի գաւառը սահմանամերձ Հալէպ քաղաքին, կը նկատուէր Սուրիոյ մէկ գաւառը:

Այնթապի կոտորածէն չորս ամիսներ անց, գրգռութիւն-

1. Յուշամատեն..., էջ 65 և 70:

ներ և միջադէպեր ստեղծելու առիթները, դէպքերը յաճախակի դարձան և վերջապէս 1896 Մարտի 8-ին պայթեցաւ սպասելի դէպքը: Գիլիսի դայմագամը և այլ պետական պատասխանատուներ, ծրագրուած ջարդի գործողութիւնը ծրագրելէ և պատրաստելէ ետք, «պաշտօնական» պատասխանատուութենէ խուսափած ըլլալու մտօք, զանազան գործերու պատրուակով մեկներ էին Հալէպ կամ շրջակայ գիւղերը:

Ուսուցիչ Սմբատ Ղազէլեան իր կարգին, Յուշերուն մէջ կը գրէ իր ականատեսի տպաւորութիւնները.

– «Մարտի 8-ին (հին տոմարով) Սարայի (կառավարական տուն, կեդրոն) մօտի պազարին մէջ սկսաւ ջարդը ու տարածուեցաւ թաղերուն մէջ: Գայմագամը, ոստիկանապետը, ևն քաղաքէն հեռացեր էին, որպէսզի քաղաքը անիշխանութեան մատնուած ատեն իրենք բացակայ գտնուին և պատասխանատուութեան տակ չմնան և անպաշտպան մնացած Հայերը անարգել ջարդուին ու կողոպտուին ... Թուրք երևելիներուն մէկ մասը համամիտ չէր ջարդարարութեան և իրենց ձեռքէն եկած պաշտպանութիւնը ըրին»¹:

Ի հեճուկս նման անձնական միջոցառումներու, զինուած խուժանը պազարէն կ'ողողուի Հայոց եկեղեցուց թաղը և քանի որ եկեղեցուց բակի դուրսի դուռը՝ դարպասը ամրացուած չէր, ջարդարարները ներս կը խուժեն: Անակնկալի եկած ուսուցիչները, աշակերտները կը փախին եկեղեցուց ետևի՝ հարաւային կողմը, ուրկէ մեծ աշակերտները պատերու, տանիքներու վրայէն կը փախին դէպի մօտի հայկական տուները: Իսկ փոքր աշակերտները, անկարող պատերէն վեր մագլցելու, ուսուցիչներ՝ Համբարձում Պէրպէրեանի և Սմբատ Ղազէլեանի ու միւս ուսուցիչներու օգնութեամբ, բոլորը՝ «Մօտ 150 աշակերտներ, բոլորա եկեղեցուց տանիքը ելանք, երբ խուժանին յառաջապահ լակոտները արդէն հասած էին

1. Յուշամատեն..., էջ 82:

և մեր գլխուն քարեր կը տեղացնէին: Մինչ այդ ... Անակնկալ ... Տաս հոգիէ բաղկացեալ խումբ մը արաբախօս «ռէտիֆներ» (պահեստային զինակոչիկներ) հասան և խուժանը ցրուեցին: Անոնցմէ մին հրացանը ինծի ուղղելով՝ «ինզե՛լ» (արաբերէն՝ իջի՛ր) պռուաց: Ես անմիջապէս վար ցատկեցի: Այդ «ռետիֆներ»-ը եկեղեցւոյ դրան առջև պահակ կեցան և մենք զմեզ ապահով զգացինք: Եկեղեցւոյ բակը խուժող ամբոխը չկրցաւ հետապնդել մեզ, սակայն հրաձգութիւնները դեռ որոշ ժամանակ կը շարունակուէին, կը լսուէին: Յետոյ իմացանք, որ «ժանտարմները» (գաւառի ոստիկանները) Քիլիս քաղաք հասեր են և Հայերը պաշտպանող կարգ մը Թուրքերու օդնութեամբ խուժանը ցրուեր ու ետ դարձուցեր են: Տանիքէն վար ցատկելով, իջանք Տէր Վահան քահանային բակը»¹:

Ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը կը շարունակէ իր Յուշերը.

– «Բոլորա եկեղեցւոյ մէջ էինք արդէն՝ աշակերտներ, ուսուցիչներ: ... Յայտնեցին, թէ Պալատեան Գէորգ Աղային կողմէն երկու ժանտարմներ եկած են աշակերտները իրենց տունները տանելու և ծնողաց յանձնելու համար: Կասկածեցանք և չուզեցինք վատահիլ, սակայն նկատելով, որ անոնք տեղացի ու ծանօթ ժանտարմներ էին, երդումով վատահեցուցին, որ յատկապէս այդ պաշտօնով դրկուած են, տեղի տուինք: ... Ամենավերջը կարգը եկաւ «Լեռնցւոց» (Պալատեաններու) թաղին, որ քաղաքի հիւսիս արևմտեան ծալրամասն էր: Ժանտարմները մերժեցին հոն աշակերտ տանիլ, յայտնելով, թէ այդ թաղը կողոպտուած, ջարդուած ու ամալացած է, ողջ մնացածներն ալ այլ և այլ թաղեր փախած ու պահուրտած են»²:

Այժմ լսենք մեր միւս ականատեսի վկայութիւնները.

– «Տէր Վահանին եղբօր՝ Յարութիւնին կիներ Նուարդ,

1. Ս. Ղազէլեանի Յուշեր, Յուշամատեան..., էջ 84:

2. Նոյն տեղը, էջ 84:

որ շատ վաղելու է, գեղեցկադէմ և միանգամայն առիւծասիրտ, քաջ կիւն մըն էր, սկսաւ մեզ քաջալերել: Վազեց ու քանի մը զէնքեր և կացինի նման հատու առարկաներ բերաւ և. «Մի՛ վախնաք տղաք, մէկի տեղ տաս չսպաննած չենք մեռնիր» ըսաւ և նման ներշնչող խօսքերով մեզի հոգի տուաւ: «Կէօյ Օղլան»ը (Յովհաննէս Ինճէեան), որ Սուեախոյ (Մուսա Լերան) և այլ վայրերու մէջ Հնչակեան խումբերով Թուրքերու դէմ կռիւներ մղած անուանի մէկն էր և եկեղեցու մէջ ըլլալով մեր մէջ կը գտնուէր, նոյնպէս ինքն ալ հրահրուեցաւ տիկին Նուարդի խօսքերէն, որով ամէնքս միասին առինք զէնքերը, ամրացուցինք Տէր Հօր տունին դուռը և կազմ ու պատրաստ կեցանք գալիք յարձակումին դէմ»¹:

Եկեղեցուց ու բակին մէջ եղող աշակերտները ժանտարմներու հսկողութեան տակ իրենց տուները ղրկելէն յետոյ, Հ. Պէրպէրեանը, Ս. Ղազէեանը և ուսուցիչ Տրդատ Սէմէրճեանը, նաև՝ «Կէօյ Օղլան»ը, չորսով կը մնան եկեղեցիին մէջ և դուռները ամրացնելէ յետոյ, կը բարձրանան եկեղեցու տանիքը: Տանիքը եզերուած ըլլալով բարձրկեկ պատնէշով շուրջբոլոր, անոնք կը տեղաւորուին պատնէշին ներքեւ և ունեցած մի քանի զէնքերը լարելով՝ պատրաստ ու դիրքաւորուած՝ կը սպասեն: «Դուրսէն, քաղաքի կողմերէն դեռ կը լսուէին զէնքերու կրակոցները, մարդոց աղաղակները, ողբերը: Մահասարսուռ տպաւորութիւն կը տիրէր ամէն կողմ», կը գրէ Հ. Պէրպէրեանը²:

Յաջորդ օրը, Մարտ 9-ին, եկեղեցու դուռը կը զարնուի: Տանիքը դիրքաւորուածները ձայն չեն հաներ ... Ձեն գիտեր թէ ովքե՞ր են: Բայց երբ վարէն Տէր Վահանին ձայնը կը լսեն, կ'իջնեն, կը բանան դուռը: Զինուորական հսկողութեան ներքո, եկեղեցուց բակը կը բերուին բոլոր վիրաւորուածները

1. Յուշամատեան..., էջ 71:

2. Յուշամատեան..., էջ 72 և 73:

և կողոպտուածները: Անոնք կը տեղաւորուին դպրոցին սրահին ու սենեակներուն, դասարաններուն մէջ: Յաջորդ օրերը, Տէր Վահանը եկեղեցւոյ բակը բերաւ այն հայ ընտանիքները, որոնք Չարդէն խուսափելու համար, իրենց տուները լքած՝ ապաստանած էին դրացի բարեկամ թրքական տուներ: 40 ընտանիքներ, մօտ 200 անձ, մերկ ու անօթի, իրենց թալանուած ու կողոպտուած տուներէն հեռու: Անոնք 2-3 ամիսներ մնացին եկեղեցւոյ շրջաբակին մէջ և կերակրուեցան Քիլիսի հայ ժողովուրդին կողմէն առատօրէն բերուած նպաստներով, ուտեստեղէնով և պահպանուեցան հոն մինչև որ քաղաքը խաղաղի ու կարողանան վերադառնալ իրենց տուները, որոնք լրիւ թալանուած և ամէն ինչէ դատարկուած էին¹:

1896 թուականի Մարտի 8-ին Քիլիսի մէջ կատարուած կոտորածներու ընթացքին կատաղած թուրք բորենիներու ճիրաններով յօշոտուած ու նահատակուած Հայերուն թիւը կը գնահատուի 75 հոգի, որոնցմէ 15-ը բուն քաղաքին մէջ, իսկ այգիներուն, ձիթաստաններուն մէջ և ճամբաներուն վրայ սպանուեցան մօտ 60 Հայեր:

Ինչո՞ւ Չարդեր և ինչո՞ւ այդքան անմեղներու կորուստ: Այս կապակցութեամբ լսենք Համբարձում Պէրպէրեանի դատումները.

– «Հայերը ինքնապաշտպանութեան պատրաստ չէին, պատրաստուիլ կարելի չէր», կը խորհի Հ. Պէրպէրեանը և ինչո՞ւ, ըստ իրեն՝ որովհետև՝

– «Թրքութիւնը ներսէն թէ դուրսէն, պետական զօրութեամբ և անհամեմատ առաւելութեամբ անդիմադրելի էր: Ի՞նչ կրնար ընել ասի մը Հայութիւնը, որ կազմակերպուած իսկ չէր»²:

Թէ՛ «Ի՞նչ կրնար ընել ասի մը Հայութիւնը» և թէ՛

1. Յուշամատեն..., էջ 85 և 75:

2. Յուշամատեն..., էջ 73:

«Ինչո՞ւ կազմակերպուած իսկ չէր», կը թողում ընթերցողիս վճռին: Գալով կոտորածներէն յետոյ քաղաքին մէջ վերահաստատուած երևութական հանդարտութեան, բնականօրէն սպասելի էր, որ «օրինական» իշխանութիւնները պատժեն յանցաւոր և պատասխանատու ջարդարարները և վնասուց հատուցում տան զոհուածներու, թալանուածներու ու բոլոր տուժածներու ընտանիքներուն: Իսկ Օսմանեան թուրքիոյ մէջ նման բան երեակայելն իսկ անիմաստ էր: Ընդհակառակը, «Խաղաղութիւնը վերահաստատուելէն ետք, կառավարութիւնը, կը գրէ Հ. Պէրպէրեան, փոխանակ պատժելու յանցաւոր ոճրագործ թուրքերը, ձերբակալեց ու բանտարկեց կարգ մը ծանօթ ու պատուաւոր Հայեր: Բանտարկուեցաւ Դաւիթ Աղա Ենիգօմշուեանը, որ բնիկ Ակնցի էր և Քիլիս հաստատուած՝ դէպքէն 25 տարի առաջ: ... Նոյնպէս ձերբակալուեցան Պայրամեան Յովհաննէս Աղան և Ջաղլասեան Թորոս Էֆէնտին և այլ հարուստ ազդեցիկ Հայեր»¹:

Բացի այդ, հաջ ժողովուրդի ողբերգութիւնը զաւեշտական թատերախաղի հասնող քաղաքական խաղի վերածուեցաւ, երբ Հալէպէն Եւրոպական երկիրներու հիւպատոսներ եկան Քիլիս ... «Դէպքին մասին քննութիւն կատարելու և աղէտեալները տեսնելու համար»: Անոնք թելադրեցին, որ աղէտեալներէն իւրաքանչիւրը, անհատապէս, դատ բանալ թուրքական կառավարութեան մօտ (Sic! ճիշտ այդպէս!!), ոճրագործներուն, կողոպտիչներուն և մարդասպաններուն դէմ», կը գրէ ուսուցիչ Սմբատ Ղազէլեանը² և կ'աւելացնէ.

– «Թրքերէն (գրել) գիտցողները սկսան աղերսագրեր խմբագրել՝ իւրաքանչիւրին ենթարկուած աղէտին համաձայն՝ ենթադրելով, հաւատալով, որ լուրջ և դրական գործ է...: Սակայն, նոյն Ս. Ղազէլեանը յաջորդ էջին վրայ կը գրէ.

1. Յուշամատեն..., էջ 75–76:

2. Ս. Ղազէլեանի Յուշեր, Յուշամատեն..., էջ 86–87:

– «Բողոքարկուններու դիմումները կը մնան անհետևանք և յայտնի բան էր այս, որովհետև հիւպատոսները խաբելու համար կառավարութիւնը իր սովորական աճաբարութիւնն էր, որ կ'ընէր: Արդարութիւն սպասել չիմարութիւն էր», կ'եզրակացնէ Ս. Ղազէլեանը իրաւամբ, մոռնալով աւելցնելու, որ յարգարժան հիւպատոսները գիտակցաբար մեղսակից կը դառնային այդ քաղաքական աճաբարութեան՝ իրենց դիւանագիտական շահերէն ելնելով:

– «Կառավարութիւնը իմացած ըլլալով, որ այս բողոքարկուններուն ղեկավարը Գէորգ Աղա Քէշիշեանն է, որոշեր էր որևէ զրպարտութեամբ զինք բանտարկել, որպէսզի կասեցուցած ըլլայ դատ բանալու խնդիրը: Գ. Քէշիշեանը գիշերով Հալսպ կը փախի, իր հետքը կորսնցնելու մտահոգութեամբ:

Կատարուած ջարդերով ու թալանով դեռ չյագեցած թուրք մոլեռանդութիւնը Հայոց հալածանքը կը շարունակէր Հայ երևելիները կեղծ ամբաստանութիւններով բանտարկելով: Այսպէս, Դաւիթ Աղա Ենիգօմշուեանի տունը կողոպտեցին ու զինք բանտարկեցին, զրպարտելով, թէ՛ երեք կամաւորներ դրկած է Ձէյթուն: Նման ամբաստանութեամբ ու զրպարտութեամբ բանտարկուած էին նաև Յովհաննէս աղա Պայրամեանը և ուրիշներ:

Կոտորածներէն 2–3 շաբաթ անց, Քիլիսի պետական իշխանութիւնները ցոյց տալու համար, որ ամէն ինչ խաղաղած է և ... մոռցուած, կը հրամայեն բանալ երկար ժամանակէ իվեր գոց պահուած Ս. Յովհաննէս եկեղեցին, կը ստիպեն եկեղեցու զանգակը զարնել տալ և եկեղեցական արարողութիւնները կատարել ըստ սովորութեան, այնպէս որ ցոյց տրուի, թէ «բնականոն կեանքը վերսկսած է»¹:

«Բնականոն կեանքը» երբեք չպիտի վերսկսէր Քիլիսի Հայ 75 նահատակներուն համար, որ զոհ գացած էին թուրք

1. Յուշամատեն..., էջ 90:

խուժանին զազանային մոլուցքին 1896 թուականի Մարտ 8-ին, ճամբաներուն վրայ, Քիլիսի շրջակայ այգիներուն և ձիթաստաններուն մէջ և յատկապէս քաղաքին կեդրոնը՝ 19 հոգի, որոնց անունները կու տանք ստորև, քաղելով Սմբատ Ղազէլեանի Յուշերէն¹.

1. Յովհաննէս Զիլինկիրեան, ընտանիքի և զաւակներու տէր, 40 տարեկան:

2. Աբրահամ Աբիկեան, Հնչակեան, ընտանիքի և զաւակներու տէր, 40 տարեկան:

3. Սրապիոն Տ. Յարութիւնեան, Հնչակեան, դեղագործ և ամուրի, 30 տարեկան:

4. Յովհաննէս Կիւլիւմեան, Հնչակեան, դարբին և ամուրի, 30 տարեկան:

5. Միհրան Ենիգօմշուեան, գոլէճէն կիսաւարտ, ամուրի, 25 տարեկան:

6. Գրիգոր Ենիգօմշուեան, գոլէճէն շրջանաւարտ, ամուրի, 23 տարեկան:

7. Տիգրան Ենիգօմշուեան, ամուրի, 20 տարեկան:

8. Սարգիս Շիլգէորդեան, ընտանիքի և զաւակներու տէր, 45 տարեկան:

9. Նազար Շիլգէորդեան, ընտանիքի և զաւակներու տէր, 40 տարեկան:

10. Գրիգոր Տ. Ներսէսեան, ընտանիքի և զաւակներու տէր, 45 տարեկան:

11. Սաչլը Օվիկ, ընտանիքի և զաւակներու տէր, 35 տարեկան:

12. Պետրոս Պօյաճը Հաճեան, գանձապետ, ընտանիքի և զաւակներու տէր, 60 տարեկան:

13. Սիմոն Պայրամեան, ընտանիքի և զաւակներու տէր,

1. Ս. Ղազէլեանի Յուշեր, Յուշամատեան..., էջ 90-91:

55 տարեկան:

14. Ապուտ Պայրամեան, ընտանիքի և զաւակներու տէր,
45 տարեկան:

15. Կրպօ Չաղլասեան, ընտանիքի և զաւակներու տէր,
50 տարեկան:

16. Մարաշցի (մօրաքրոջս ամուսինը), ընտանիքի և
զաւակներու տէր, 30 տարեկան:

17. Յովհաննէս վարդապետ (կաթողիկէ Հայերու հոգևոր
հովիւ), 50 տարեկան:

18. Գասպար Մելիք-Յակոբճանեան, ընտանիքի և
զաւակներու տէր, 40 տարեկան:

19. Սողոմոն (Գալիպչի թորոսի որդի), նորասպակ, 28
տարեկան:

Մնացեալներուն անունները չեմ յիշեր, բայց գիտեմ որ
սպաննուածներուն թիւը մօտաւորապէս 75 հոգի էր:

(Քաղուած Սմբատ Ղապիւեանի Յուշերէն)¹:

* * *

ԱՏԱՆԱՅԻ (ԿԻԼԻԿԻՈՅ) 1909 Թ. ԿՈՏՈՐԱԾ ԵՒ ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՑՈՒՑԱԾ ՏԱԳՆԱՊԸ

Այս վերնագրի տակ «Յուշամատեան Քիլիսի Հայոց»
գրքին մէջ գրուած է.

— «Երկրորդ ջարդը, որուն ենթակայ եղաւ թուրքիոյ
Հայութիւնը՝ ծանօթ է «Ատանայի կոտորած» անունով, որ
պատահեցաւ մեր օրերուն», կը գրէ Հ. Պէրպէրեանը և օգտուե-
լով Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան Պատրիարքի
«Ազգապատում» գրքի Գ. հատորէն, «կոտորածին շուրջ
ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդած ըլլալու փափաքով»,

1. Յուշամատեան..., էջ 90-91:

կ'արձանագրէ դէպքին նախորդող խնդիրները, անոնց ընթացքը, պատճառները և տարողութիւնը: Այնուհետև, կը յայտնէ, թէ Պոլիսն ու գաւառները կը հեծէին Ապտուլ Համիտի բռնակալութեան ներքև: ... «Իսլամ տարրին մէջ ևս սկսած էր դժգոհութիւնը և կը զօրանար ըմբոստութեան ոգին: Իսլամներու մէջ հիմնուած էր «Իթթիհատ վէ Թէրազզը» (Միութիւն և Յառաջադիմութիւն) կուսակցութիւնը, որուն սրտանց միացած էին նաև մեր կուսակցութիւնները», կը յայտնէ մեր յարգելի հեղինակը «Յուշամատեան»ի («մեր կուսակցութիւնները», ընդգծումը մերն է, Ա. Պ.):

Այնուհետև թուրք զինուորականութիւնը կ'անցնի ընդհանուր դժգոհութեան ալիքին գլուխը, քանզի ժողովուրդին կողմէ կատարուող ամբոխային շարժումներուն գլուխը անցած էին, ինչպէս կը շեշտէ Հ. Պէրպէրեանը, «Հրեայ ցեղէն մահմետականացած Սելանիկցի վաճառականները»: Նոյն ուժերուն կողմէ ղեկավարուող զինուորականութիւնը առաջնորդութեամբ Իթթիհատ վէ Թէրազզը կուսակցութեան ղեկավարներ Նիագիի և Էնվերի, ըմբոստութիւն կը բարձրացնեն Մանասթըրի կայազօրին մէջ 1908 թուականի Յուլիս 10-ին: Փաստօրէն այդ օրը հռչակուեցաւ Օսմանեան Սահմանադրութիւնը՝ «Սահմանադրութեան Վարչութեան Վերանորոգումի Որոշում» անուան տակ:

Սուլթան Ապտուլ Համիտը ընդունեց ըմբոստ զինուորականներուն առաջարկած պայմանները և Իթթիհատ կուսակցութեան հետ գործակցելու համակերպեցաւ և աստիճանաբար գործադիր իշխանութիւնը լրիւ անցաւ «Ժէօն Թուրքեր»ու (Երիտասարդ Թուրքերու) ղեկավարութեան ձեռքը,

1. Հարկ կը տեսնեմ ուղղել Հ. Պէրպէրեանի գրածը՝ (տես «Յուշամատեան», էջ 99) և յայտնել թէ՛ միայն Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը «սրտանց փարած էր» Իթթիհատին, Հնչակեան կուսակցութիւնը երբևէ չէ մօտեցած Իթթիհատ վէ Թէրազզը կուսակցութեան:

ինչպէս սկսած էին կոչել իթթիհատ վէ Թէրագզը կուսակցութեան ղեկավարութիւնը:

Յատկանշական է և գովելի (որպէս քաղաքական հոտառութեան առկայութիւն), որ այս պատմական փաստը արձանագրուած է մեր «Յուշամատեան Քիլիսի Հայոց» արժէքաւոր պատմա-ազգագրական հատորին մէջ և յետագային համարուանելի է:

Նոյն այդ «Երխտասարդ Թուրքեր»-ը—իթթիհատականներու հրապարակ նետած՝ «Ատէլէթ, Մուսավաթ, Ախաուէթ» կարգախօսը՝ (Արդարութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն) (փոխ առնուած 1789—ի ֆրանսական մեծ Յեղափոխութեան կոչերէն) ստեղծած էր համաժողովրդային խանդավառութեան հիւանդագին զեղումներ՝ Հայ-Թուրք «եղբայրական» համախմբումներ հրապարակներու, փողոցներու, տուներու մէջ, ուր չափազանց էր Հայերու խանդավառութիւնը, գինովութիւնը և ... դիւրահաւատութիւնը:

Շատ չանցած, յաջորդ օրերուն ու շաբաթներուն իսկ Ապտուլ Համիտը և զինուորականութիւնը գրգռեցին իսլամ ժողովուրդին մոլեռանդութիւնը, եղած շարժումը ցոյց տալով որպէս հակախլամական բնույթի շարժում, իսլամ մոլեռանդները լարելով քրիստոնեաներուն, յատկապէս Հայերուն դէմ:

Ամբողջ Թուրքիոյ մէջ այս լարուած հակաքրիստոնէական, հակահայկական, երկրի ղեկավարութեան կողմէ քաջալերուած տազնապալի դրութիւնը շարունակուեցաւ մինչև 1909 թուականի սկիզբները և վերջապէս 1909 թուականի Ապրիլ 1—ին բոլոր Հայերուն համար վերէն հրամայուած ջարդը սկսաւ Կիլիկիոյ կեդրոն Ատանայէն, ուր օրեր առաջ սկսած էին հակահայկական խլրտումները, ինչպէս կը գրէ Հ. Պէրպէրեանը¹:

Այդ ինչպէ՞ս եղաւ, որ երէկ դեռ փողոցներու մէջ եղբայ-

1. Յուշամատեան..., էջ 100:

րական գիրկախառնումներով գինովցող ժողովուրդին մէջ եղբայրասպան Չարդեր կը սկսուին: Ուշադրութիւն դարձուցեք «հրամայուած» բառին վրայ, քանզի այդ մէկ բառը կը բացայայտէ ամենայն գաղտնիք՝ իր էութեան ու խորութեան մէջ:

Պատմական փաստ է, որ Իթթիհատը՝ «Երիտ Թուրքեր»ը երկրին մէջ ամէն իշխանութիւն արդէն իրենց ձեռքը կեդրոնացուցած էին 1908 Յուլիսին կատարուած ըմբոստութիւն-«Յեղափոխութենէն» իվեր, երբ Մանասթըրէն և Սելանիկէն դուրս ելած զօրքերը Մահմուտ Շէվքէթ փաշայի ղեկավարութեամբ մտած էին Պոլիս ու պաշարած Սուլթան Համիտի նստատեղի Ելլտըզի Պալատը: Արդէն բոլորի բերանն էր ժողովրդական դարձած գովերգը՝

«Mafmut Şevket Paşa—Sen Binler Yasha»

(Մահմուտ Շէվքէթ Փաշա, Դուն հազար (տարիներ) ապրի՛ր):

Բայց ո՞վ էր Մ. Շէվքէթ փաշան: Նոյն ինքն՝ Սելանիկցի «Հրեայ ցեղէն մահմետականացած վաճառականներու» սերունդէն «տէօնմէ» (խլամացած Հրեայ) գինուորական մը: Ան է, որ «հրամայուած» Չարդերը կազմակերպելէ և իրագործել տալէ յետոյ, իբր թէ «կարգ ու կանոնը վերահաստատելու համար» վաշտ մը գինուոր կը ղրկէ Ատանա:

— «Սակայն այդ գինուորներուն յայտնուելը քաղաքին մէջ, կը գրէ Շ. Թ. Թորոսեանը, ազդանշան կը դառնայ Ատանայի երկրորդ, իր չափերով ահաւոր Չարդի համար: Ապրիլ 12—ին, կէսօրից յետոյ, երբ նոր ժամանած զօրքը դեռ Քըլլա Մէյտանի զօրանոցը չէր տեղաւորուած՝ կրակոցները կը սկսին: Շուտով կրակոցները կը դառնան համընդհանուր և փաստօրէն կոտորածը կը վերսկսի: Չարդերին անմիջական մասնակցութիւն են ունենում նաև նոր ժամանած կանոնաւոր զօրամասերը»¹:

1. Շ. Թ. Թորոսյան, Կիլիկիայի Հայերի Ազգային Ազատագրական Շարժումները 1919—1920 թթ., Երևան, 1987, էջ 30—31:

Հանքարձուծող Պէրպէրեանը իր հերթին այդ կապակցութեամբ կը գրէ:

– Ատանայի Չարդը կրկնուեցաւ: Մահմուտ Շէվքէթ փաշա զինուորական վաշտ մը ղրկեց հոն խաղաղութիւնը վերահաստատելու համար, որ տեղւոյն Հայութեան կողմէ ընդունուեցաւ ծափահարութիւններով: Սակայն հասնող զինուորները, խառնուելով խուժանին՝ նախադէպէն հարիւրապատիկ աւելի վայրագ և կատաղի Չարդ մը կազմակերպեցին: Եկեղեցիներ, դպրոցներ, վաճառատուններ հրդեհուեցան, մեծ ու պզտիկ, այր և կին խողխողուեցան, կործանուեցաւ և վերջ գտաւ հայաբնակ Ատանան»¹:

Այդ դէպքերու դժոխային իրադարձութիւններու կապակցութեամբ ստեղծուած է ծանօթ ողբերգը՝ «Ողբն Ատանայի»:

«Կոտորածն անգութ ... Հայերը կորան

Աւերակ դարձաւ շքեղ Ատանան»:

Շ. Թ. Թորոսեանը հիմնուելով արխիւային նիւթերու վրայ կը յայտնէ, թէ՛ «Կիլիկիահայութեան կոտորածի ծրագիրը նախօրօք էր յղացուել ու մշակուել: Չարդերին նախորդող օրը, 1909 թ. Մարտի 31-ին Ատանայի վալիի (նահանգապետի) նախագահութեամբ տեղի էր ունեցել նահանգական խորհրդի նիստ, որտեղ որոշուել էր կոտորած սկսել Ապրիլ 1-ին: Չարդերն սկսելու վերաբերեալ Ատանայից յատուկ գրութիւններ են ուղարկուել գաւառները: Չարդի նախօրեակին և ընթացքին բոլոր մահմետականները փաթթոցաւորուած էին Հայերից զանազանուելու համար»²:

Կոտորածներու նախօրէին Իթիհատական իշխանութիւնները, որոնք 1908 Յուլիսէն իվեր երկրի իսկական տէրերն էին, մահմետական բնակչութեան բաժներ էին մեծ

1. Յուշամատեն..., էջ 100-101:

2. Շ. Թ. Թորոսյան, Կիլիկիայի..., էջ 29:

քանակութեամբ զէնք և Փայասի բանտէն դուրս արձակած էին շուրջ 500 ոճրագործներ: «Ապրիլ 1-ին սկսուած կոտորածը կը տևէ մինչև Ապրիլ 4-ը, երբ Զատկուայ տօներու կապակցութեամբ փակուած հայկական դպրոցները, խանութները, արհեստանոցները վերաբացուած են: Թուրք խուժանը հնարաւոր բոլոր միջոցներով զինուած (հրազէն, կացին, դաշոյն, մանգաղ, եղան ևն) մոլլաների ուղեկցութեամբ ողողում է Ատանայի շուկան և գլխաւոր փողոցները: Խուժանը աստիճանաբար դուրս է գալիս շուկայի սահմաններից և ընդգըրկում ամբողջ քաղաքը»¹:

Կոտորածներ տեղի ունեցան նաև Ատանայի նահանգի բոլոր գաւառները՝ Տարսոն, Միսիս, Օսմանիէ, Հասան Պէյլի, էքսլէզ ևն: Նաև՝ Հայէպի նահանգի շատ հայաբնակ քաղաքներ՝ Մարաշ, Այնթապ, Անտիոք, Քէսասպ, Մուէտիա (Մուսա լեռ), Պէյլան, Այաս, Փայաս ևն: Զոհուեցան շուրջ 30 հազար Հայեր, որուն 20 հազարը միայն Ատանայի նահանգին մէջ: «Կիլիկիոյ Հայութեան կրած միայն նիւթական վնասը, թրքական կառավարութեան տուեալներով հասած էր միայն 96 000 օսմանեան հնչուն ոսկիի, իսկ Օսմանեան Մեծլիսի (խորհրդարանի) անդամ Հ. Պապիկեանի կողմից Պոլսոյ իշխանութիւններին ներկայացուած տեղեկագրի հաշուումներով՝ Կիլիկիոյ Հայերուն նիւթական վնասը երեք միլիոն օսմանեան ոսկուց պակաս չէր»²:

Ահա՛, այս եղաւ արիւնոտ հաշուեկշիռը Երիտթուրքերու-իթթիհատականներու կողմէ Թուրքիոյ իշխանութիւնը ձեռք առնելու յաջորդ ամիսներուն իսկ կազմակերպուած, ծրագրուած և ի գործ դրուած «Ատանայի կոտորածներուն», իթթիհատականներ, որոնք հրապարակ իջան բոլոր ազգերու, դաւանանքներու համար անխտիր՝ «Արդարութեան,

1. Շ. Թ. Թորոսյան,- Կիլիկիայի..., էջ 30:

2. Շ. Թ. Թորոսյան,- Կիլիկիայի..., էջ 33:

Հաւասարութեան, Եղբայրութեան» ստապատիր, կեղծ կարգախօսներով:

Բարեբախտաբար, ինչպէս կը նշէ Շ. Թ. Թորոսեանը, «Այս բոլորի կողքին չի կարելի հպարտութեամբ չնշել Զէյթունի, Հաճընի, Սիսի, Տէօրթ–Եօլի, Ֆընտըճաքի, Շէյխ Մուրատի, Քեսապի ինքնապաշտպանական կռիւները, որոնց շնորհիւ անխուսափելի Չարդից ու կոտորածից փրկուեցին հազարաւոր անմեղ կեանքեր»¹:

Հ. Պէրպէրեանը նոյնպէս կը հաստատէ, որ «Սիս, Հաճըն, Տէօրթ–Եօլ, Գարապազար, Ֆէքէ և Շէյխ Մուրատ ինքնապաշտպանութիւն կատարեցին և որով ազատ մնացին կոտորածէ»²:

Ատանայի կոտորածները ցոյց տուին աշխարհին առջև, որ Իթթիհատականները Ապտուլ Համիտի հայաչինչ քաղաքականութեան շարունակողներն են, բան մը, որ բացայայտ կերպով ցոյց պիտի տային մի քանի տարի յետոյ:

Իսկ ի՞նչ դրութեան մէջ էր Քիլիսի Հայութիւնը այդ համատարած արհաւիրքի օրերուն: Հ. Պէրպէրեանը կը գրէ այդ կապակցութեամբ.

– «Ահա՛, այս արհաւոր օրերուն, երբ շրջակայ քաղաքներու Հայութիւնը կը կոտորուէր ու կը Չարդուէր, Քիլիսի Հայութիւնը կ'անցընէր սոսկալի արհաղեցիկ օրեր: Շուկաները գոցուած էին և ամէն մարդ իր տունը քաշուած՝ սպանդանոցի ոչխարներուն պէս իր օրհասը կը սպասէր: Ժամ առ ժամ, արհաւորի մէջ կը սպասէր Չարդի սկսուելուն»³:

Այդ օրերուն Քիլիսի մէջ, փաստօրէն, Չարդ, կոտորած չսկսաւ, տեղի չունեցաւ: Ինչպէ՞ս և ինչո՞ւ: Այս կապակցութեամբ լսենք մեր հայրենակից, ազգային գործիչ և ականա-

1. Շ. Թ. Թորոսյան, – Կիլիկիայի..., էջ 39:

2. Յուշամատեն..., էջ 100:

3. Յուշամատեն..., էջ 101:

տես Համբարձում Պէրպէրեանի մեկնաբանութիւնը.

– «Արդարութիւնը կը պահանջէ, որ հոս արձանագրենք իրականութիւնը: Սարսափի այդ օրերուն գտնուեցան տեղացի թուրք աղաներ և էֆէնտիներ, որ հոգևով, սրտով հակառակեցան Չարդի գաղափարին և հոգի ի բռին աշխատեցան առաջքն առնելու պատահելիք որևէ դէպքի: Հեռատեսութեամբ, թէ՞ կարգ մը հայ անհատներու հետ իրենց ունեցած բարեկամութեան սիրոյն, կամ թէ՛ հայկական թաղերու մէջ բնական ըլլալով Հայերու հանդէպ համակիր ոգի մը ստացած ըլլալնո՞ւն: Յամենայն դէպս, բոլորն ալ ունեցան իրենց ազդեցութիւնը»:

Հ. Պէրպէրեանը այդ «Աղաներէն և էֆէնտիներէն» առանձնացնելով մէկը, կը շարունակէ իր մեկնաբանութիւնը.

– «Մասնաւոր չիշատակութեան և երախտագիտութեան արժանի է մանաւանդ՝ Մեծ Ճամիի (մզկիթի) իմամ և Օսմանեան խորհրդարանի երեսփոխան, աստուածավախ հոճայի մը՝ Հաճի Մուսթաֆա էֆէնտիին եռանդագին և անձնուէր ծառայութիւնը, որ շուկաներու մէջ և մզկիթէ մզկիթ, վազն ի՛ վազ, ազդու խոսքերով, քարոզներով, խրատներով և սպառնալիքներով զսպեց ու հանգստացուց մոլեգնած թուրք հորդաներու զայրոյթն ու շարժումը ... Ու այսպիսով, Քիլիսի Հայութիւնը պահուեցաւ և պաշտպանուեցաւ մինչև (1909) Ապրիլ 14–ը, երբ տեղի ունեցաւ Ապտուլ Համիտի գահընկեցութիւնը»¹:

1909 թուկանի Ապրիլին Քիլիսի Հայութեան կոտորածէ, Չարդէ գերծ մնալու կապակցութեամբ Հ. Պէրպէրեանի զգալի չափով ենթակայական և որոշ անհատներու «հայասիրութեան» վերագրուած մեկնաբանութենէն յետոյ, տեսնենք, թէ այդ մասին ի՞նչ կարծիք ունի Քիլիսցի մտաւորական Գրիգոր Ճ. Խորոզեանը, որ իր գաղափարակից Քիլիսցի Հնչակ-

1. Յուշամատեն..., էջ 101:

եան նահատակ Յակոբ Պասմաճեանի մասին գրելով, կը յայտնէ.

– «Երեսփոխանական ընտրութեանց (Օսմանեան խորհրդարանի) ատեն տեղւոյն (Քիլիսի) Իթթիհատականներուն դէմ բռուն պայքար մղող միակ անձը ինքը՝ Յակոբ Պասմաճեանը եղած է ... Ատանայի ջարդի միջոցին, երբ Օսմանիէի և Հասան Պէլլիի ջարդերը տեղի կ'ունենային, Հայէպէն արգիլուած գէնքեր բերելով երիտասարդութեան բաշխողը և ինքնապաշտպանութեան խումբեր պատրաստողը Հնչակեան Մասնաճիւղը եղաւ, որուն ղեկավարը ինքն էր: Առանց չափազանցութեան սա իրողութիւն է, թէ 1909-ին Քիլիսը Ատանայի բախտին ենթարկուելէ վերկողը Յակոբ Պասմաճեանը եղաւ հետևեալ պարագաներու տակ»¹:

Գրիգոր Խորոզեանը կը յայտնէ, թէ Քիլիսի Թուրք Համիտական ջոջերը միացած Իթթիհատական կուսակցութեան անդամներուն հետ Քիլիս քաղաքէն դուրս այգիի մը մէջ ժողով գումարած էին ջարդի, կոտորածի ծրագրերը մշակելու և օրը որոշելու համար: Յակոբ Պասմաճեանը իր սերտ Թուրք բարեկամներէն հանդիսացող, քաղաքի երևելիներէն, ոչ-Իթթիհատական Աֆիի Էֆէնտիին բարեկամական թախանձանքով կը ղրկէ այդ ժողովի ծրագրին տեղեակ ըլլալու նպատակով: Աֆիի Էֆէնտիին շուտով քաղաք կը վերադառնայ և ուրիշ շատ մը արդարամիտ ու Հայերու բարեկամ Թուրք երևելիներու հետ միասին կ'երթան քաղաքի Գալմագամին (կառավարիչին) քով, կը բացատրեն Քիլիսի մէջ Հայերու ջարդ կազմակերպելու վտանգաւոր հետևանքները, ճնշում կը բանեցնեն անոր վրայ, կը սպառնան և կը պահանջեն, որ հարկ եղած կարգադրութիւնները բոլոր միջոցներով ընէ, որպէսզի Քիլիսի Հայ դրացի ժողովուրդը արիւնացեղութենէ վրկուի:

1. Յուշամատեան..., էջ 108-109:

Ինչպէս կը տեսնենք, Գրիգոր Խորոզեանի մեկնարանումը՝ քաղաքական տեսանկիւնէ դիտուած, կը համընկնի Համբարձում Պէրսպէրեանի տեսակէտի հետ: Քիլիսի մէջ ևս ջարդեր կազմակերպելու Իթթիհատական ծրագիրը կը ձախողի շնորհիւ քաղաքի արդարամիտ ու Հայերու բարեկամ թուրք երեւելիներու, ազդեցիկ աղաներու, էֆէնտիներու հայտնապատ ազնիւ դիրքաւորման՝ յատկապէս Քիլիսի իսլամ կրօնապետ՝ Իմամ Հաճի Մուսթաֆա էֆէնտիի և այլոց, որոնց՝ աջակցի մարդկային արդար վերաբերմունքի մղողներու շարքին զգալի դեռ կատարած է Իթթիհատականներուն դէմ երեսփոխանական ընտրապայքար մղած՝ Հնչակեան նահատակ մարտիկ Քիլիսցի Յակոբ Պասմաճեանը:

* * *

Թ. ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ 1915-1918 ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

Կովկասէն մինչև Պալքանները, Պարսից ծոցէն մինչև Ատլանտեանի ափերը տարածուած Օսմանեան լաջնածաւալ ու բազմազգ Կայսրութիւնը 19-րդ դարու առաջին կէսէն սկսած արդէն ճարձատելու սկսած էր: Պալքաններու մէջ Յունաստանը իր դարաւոր լուծը թոթափեր էր 1829-ին՝ հռչակելով իր անկախութիւնը: Ափրիկէի մէջ Ֆրանսան գրաւած էր Ալճերիան, իսկ Եգիպտոսը փաստօրէն անկախ գոյավիճակ կը վայելէր՝ 1830-ին Մամլուք զօրավարներ Մուհամմէտ Ալիի և անոր որդի Իպրահիմ Փաշայի կողմէ Բարձրագոյն Դրան դէմ ըմբոստութեան դրոշ բարձրացուցած և մինչև Թուրքիոյ սիրտը յաղթական արշաւանքներ կատարած ըլլալու հետևանքով: Թէ՛ Պալքաններու քրիստոնեայ ստրկացուած ազգերը, թէ՛ արաբական աշխարհի մահմետական, բայց ոչ-թուրք ցեղերը, ժողովուրդները հակա-թուրք ու անջատողական եռուզեռի մէջ էին: Սուլթաններու կառավարութեան համա-խալամական երազները իրականութիւն դառնալու քիչ հիմքեր ունէին: Հետևաբար, Երլտրզի Պալատի թուրանական դահակալները մտածեցին Օսմանեան Կայսրութիւնը լրիւ քայքայումէ փրկելու միակ միջոցը՝ Պոսոյ Սուլթանին մականին տակ միացնել բոլոր թուրքալեզու, թուրքացեղ հաւաքականութիւնները Կովկասի և Կեդրոնական Ասիոյ՝ իրականացնելով համաթուրանական դարաւոր երազը:

Այդ մեծապետական երազը, ծրագիրը իրականացնելու առջև կանգնած առաջին և միակ խոչընդոտը՝ Արաբատէն մինչև Տաւրոս ու Ամանոս, Հայկական լեռնաշխարհին վրայ իր բնօրրանին մէջ ստրկացուած հայ ժողովուրդն էր՝ Հայ

ազգը: Հետևաբար, Օսմանեան Կայսրութեան փրկութեան համար պետք էր վերացնել այդ միակ խոչընդոտը, աշխարհի երեսնէն վերացնել Հայերը, բնաջնջել Հայ ազգը:

Եւ այսպէս, 1890-ական թուականներու Համիտեան ջարդերու հայաչինչ հետևանքներէն համեմատաբար զերծ մնացած Կիլիկիոյ հայաբնակ վայրերու բնակիչները (Ջէյթուհի և այլ վայրերու ինքնապաշտպանական մարտերու շնորհիւ) համեմատաբար ավելի բարօք վիճակի մէջ կը գտնուէին: Հարկ էր Կիլիկիոյ Հայերն ալ անդամահատել: Եւ այդ անարգ պաշտօնը ստանձնեցին Համիտի հայաչինչ քաղաքականութիւնը շարունակող ու գերազանցող՝ 1908-էն իվեր երկրի իշխանութիւնը իրենց ձեռքը առած Իթթիհատական-Երիտ թուրքերը, որոնց շարժման գլուխը անցած էին «Հրեայ ցեղէն մահմետականացած Սելանիկցի վաճառականները», ինչպէս դիպուկ կերպով կը բնութագրէր Համբարձում Պէրպլեանը:

«Հայկական Հարց»ին վերջնական լուծումը տալու համար համաթուրականութեան Երիտ թուրքական ղեկավարները, Իթթիհատականները կը սպասէին յարմար առիթի: Եւ յարմարագոյն առիթը ներկայացաւ, երբ 1914 թուականի Օգոստոսի 1-ին շղթայագերծուեցաւ Առաջին համաշխարհային պատերազմը և թուրքիան որպէս Կայգերական Գերմանիոյ դաշնակից ներքաշուեցաւ այդ համաշխարհային արիւնայեղութեան մէջ՝ ընդդէմ Ֆրանսայի, Անգլիոյ և Ռուսաստանի Դաշնակիցներու ճակատին:

Պատերազմական վիճակի իրադրութեան «օրինական» հիմքի վրայ ամբողջ թուրքիոյ մէջ զինուորական տարիքի բոլոր այր մարդիկ բռնի բանակ տարուեցան, իսկ Հայ տղամարդիկը առանց զէնքի, հաւաքագրեցին, հաւաքեցին «Ամէլէթ թապուրու» (բանուորական ջոկատներ) կոչուած միաւորներու մէջ, որպէսզի հայաբնակ շրջաններուն մէջ Հայերու ըմբոստական շարժումներուն առաջքն առնուի: Այնուհետև,

այդ անդէն «բանուորական ջոկատներ»ը բնաջնջուեցան խըմբակային ու զանգուածային ջարդերով, տեղերուն վրայ:

Վերջապէս 1915 թուականի Ապրիլին (13-ին՝ հին Տոմարով, 24-ին նոր Տոմարով) Պոլսոյ մէջ ձերբակալուեցան բոլոր Հայ աչքառու մաւորականներն ու երեւելիները, այսպիսով սկիզբը դնելով Հայոց 1915 թուականի մեծ Եղեռնին, որը պիտի հանդիսանար Հայոց Յեղասպանութեան վերջնական փուլը՝ շարունակուելով մինչև 1920, 1921 և 1922 թուականները՝ Արևելեան Հայաստանի, Կիլիկիոյ և Չմիւռնիոյ շրջանի Հայոց զանգուածային ջարդերով՝ իրագործուած Երիտ Թուրքերու գործը շարունակող «Նոր Թուրքիոյ» Մուսթաֆա Քեմալով, ինքը նոյնպէս Իթթիհատական և մահմետականացած Սելանիկցի Հրեայ:

Քիլիսի Հայութիւնը չէր կրնար գերծ մնալ Եղեռնի ամենակուլ արհաւիրքէն, քանզի Քիլիսը աշխարհագրականօրէն կը գտնուէր դէպի Տէր-Էլ-Չօրի սպանդանոցը տանող իսլահիէ, ինթիլլի, Գաթմա, Հալէպ, Մէսքէնէ, Ռաքքա, միջանցքին կիզակէտին վրայ (Քիլիսը Պաղտատի երկաթգծի (Katma) Գաթմա կայարանէն միայն 15 քիլօմէթր հիւսիս կը գտնուի):

Քիլիսի Հայութիւնը Եղեռնի նախօրէին կը ներկայացընէր հետեւեալ պատկերը՝ պետական վիճակագրական տուեաններով.

- Հայ Առաքելական (Էրմէնի միլլէթի)¹ 3724 անձ:
- Հայ Կաթողիկէ (Կաթոլիկ միլլէթի) 327 անձ:
- Հայ Բողոքական (Բորտեսթան միլլէթի).... 342 անձ:
- Գումար..... 4393 անձ

Հասկնալի քաղաքական դրդապատճառներով՝ Օսման-

1. Օսմանեան վիճակագրական տուեաններուն մէջ «Էրմէնի Միլլէթի» անուան տակ կը հասկցուի միայն Հայ Առաքելական անձը, համաձայն ոչ-խրամ համայնքները կրօնա-դաւանական «միլլէթ»ներու բաժանելու սկզբունքին:

եան պետական վիճակագրական տուեալները միշտ իրականութենէն պակաս ցոյց տուած են Հայերու թուաքանակը հայաբնակ վայրերուն մէջ: Քիլիսի եկեղեցւոյ Տոմարական տուեալներով 1914–1915 թուականներուն Քիլիսի մէջ գոյութիւն ունեցած են 1 050 հայ առաքելական ընտանիքներ, մօտ 5250 անձ: Կաթողիկէ և Բողոքական Հայերու թիւը պետական վիճակագրական տուեալներէն շատ աւելի բարձր եղած է¹: Ջ. Կիրակոսեանի «Առաջին Համաշխարհային Պատերազմը և Արևմտահայութիւնը» գրքին մէջ արձանագրուած է.

«1915 թուականի Յուլիսի վերջին՝ ականատեսը Հայէպից հաղորդում էր. Այնթապի ու Քիլիսի գաղթը սկսուած է: ... Այնթապը ունէր 32 հազար, իսկ Քիլիսը՝ 6 000 հայ բնակիչ»²:

«Տեղահանութիւն» կոչեցին թուրք իթթիհատական իշխանութիւնները այս ճիւղային հայաչինչ գործողութեանց սկզբնաւորումը, քանզի, կ'ըսէին պաշտօնական հաղորդագրութեան մէջ՝ «Օսմանեան հայրենիքին դաւաճանելու ընդունակ բոլոր Հայերը՝ այր, կին, ծեր, մանուկ, կրնան թշնամ իրին՝ Ռուսերուն կողմը անցնիլ և թուրքիոյ դէմ կռուիլ, ուրեմն հարկ է պատերազմական գործողութիւններու շրջաններէն» տեղափոխել բոլորը աւելի «ապահով»? (ճիշտ այդպէս!) վայրեր:

Տարագրութիւն, գաղթականութիւն (թրք. «Մուհաճիրլիք») կ'ըսէին մեր մեծերը այդ օրերուն: Մեր հայրենակից Համբարձում Պէրպէրեանը այդ օրերու կապակցութեամբ կը գրէ.

– «Քիլիսի Հայոց գաղթականութիւնը սկսած էր տակաւին: Զէյթունէն, Մարաշէն ու այլ վայրերէն գաղթականներ կու գային Քիլիս, գիշեր մը քաղաքէն դուրս մնալէն ետքը,

1. Յուշամատեն..., էջ 2–3:

2. Ջ. Կիրակոսեան, Առաջին Համաշխարհային Պատերազմը և Արևմտահայութիւնը», Երևան, 1965, էջ 332–333:

կը ղրկուէին ... Թուրքերը կ'ըսէին, որ այս գաղթականները տէրութեան դէմ ըմբոստացող մարդիկ են և կառավարութիւնը զիրենք պատժելու համար տեղափոխութիւն կը կատարէ: ... Քիլիսի Հայոց գաղթը սկսաւ 1915-ի վեցերորդ ամիսը: Հեռուէն եկող գաղթականներէն կ'իմանայինք, կը տեղեկանայինք, թէ խուզարկութեան ենթարկուած ընտանիքներուն օր մը առաջ կը հաղորդուէր գաղթական ելլելու հրամանը և յաջորդ օրը անոնք՝ 30-40 ընտանիքներ խուճապով և լաց ու կոծով ճամբայ կը հանուէին դէպի Գաթմայի կայարանը»¹:

Այսպէս, տարբեր կողմերէ տեղահանուած Հայեր խումբ-խումբ կը հասնէին Գաթմայի դաշտավայրերուն վրայ, ինչպէս Քիլիսէն տեղահանուածները, հոն կը մնային որոշ ժամանակ, ուղղակի բացօթեայ՝ արևին տակ կամ վրաններուն երջև, անպատսպար, սրտաճմլիկ վիճակի մէջ: Այնուհետև, բազմաթիւ խումբերով, գնացքով կը ղրկուէին Հալէպի վրայով զանազան ուղղութիւններով դէպի Արաբիոյ խորերը, անորոշ ճակատագրով, անպաշտպան, անապահով: Շատեր, Հալէպ չհասած, նախորդ Միւսլիմիէ կայարանը կ'իջեցուէին գնացքէն և հետիոտն կը ղրկուէին դէպի Ռաքքա, Մէսքէնէ, Տէր-էլ-Չօր, Սուրիական անապատին խորերը:

Այդ ուղղութեամբ տարուող, ղրկուող բազմահազար հայ տարագրեալներու մասին հայերէն թէ տարբեր լեզուներով մամուլն ու պատմական և յուշագրական հրատարակութիւնները դժոխային դէպքերու տեսարաններու նկարագրութիւններով լեցուած են, զորս կրկնելու կարիքը չենք տեսներ այստեղ: Յամենայն դէպս, գիտա-հետազոտական շահագրգռուածութիւն ունեցող ընթերցողներու համար կրնանք յիշեցնել Արամ Անտոնեանի վաւերագրական արժէք ներկայացնող «Մեծ Ոճիրը» (Հայկական Վերջին Կոտորածները և Թալէադ

1. Յուշամատեն..., էջ 148-149:

Փաշա) գիրքը¹: Նաև՝ մատենագիտական հազուագիւտ երկ՝ «Զայն Տառապելոց» ժողովածուն, հեղինակ՝ Պետրոս Տօնապետեան²: Գրքին խորագիրն է՝ «Այս է Արձան Հայ Տանջանաց 1915-1918» և կը պարունակէ բռնազաղթի և Տէր-Զօրի մահուան ճամբարներէն հրաշքով փրկուած, տարբեր տարիքի ու սեռի 280 Հայերու սրտամորմոք նամակները: Այդ նամակներէն տասնեակ մը արտատպուած են Աւետիս Փափազեանի վերջերս լոյս ընծայուած «Յեղասպանութիւն և Գոյատեւման Պայքար» ուսումնասիրութեան մէջ³:

Յոյժ շահեկան է նաև՝ Օսմանեան պաշտօնատար՝ Արաբ Ֆայէզ էլ-Ղոսէյնի ականատեսի վկայութիւններու գրքոյկը՝ «Կոտորածները Թրքահայաստանի Մէջ», գրուած 1916-ին Պոմպէյ, Հնդկաստան, Ֆրանսերէնի թարգմանուած 1917-ին, վերահրատարակուած 1965-ին, Պէյրութ⁴:

Բարեբախտաբար, որոշ խումբեր հնարաւորութիւնը ունեցան այդ գեհեհային վերջնակէտէն տարբեր ուղղութեամբ ղրկուելու: Մօտ 200 Քիլիսցի ընտանիքներ ղրկուեցան Մա'ան և Սուխրա (հարաւային Յորդանան՝ Ամմանէն հարաւ), նշուած է «Յուշամատեան Քիլիսի Հայոց»ի մէջ, ուր Արաբ շեյխերու պաշտպանութեան և բարեացակամ վերաբերմունքին շնորհիւ չորս տարի անոնք ապրեցան առանց հալածանքի կամ մասնաւոր նեղութեան ենթարկուելու, մինչև որ վերադարձան Քիլիս»⁵: Քիլիսցի ուրիշ ընտանիքներ ղրկուեցան Համայի և Հօմսի կողմերը՝ մանաւանդ Սելիմիէ՝ Համայէն արևելք,

1. Ա. Անտոնեան, Մեծ Ոճիրը, Պոսթըն, 1921, տպարան «Պահակ», (վերատպուած լուսապատճենահանման եղանակով՝ Երևան, 1990 թ.):

2. Զայն Տառապելոց, Փարիզ 1922, Տպարան Յակոբ Բ. Թիւրապեան:

3. Աւետիս Փափազեան, Յեղասպանութիւն և Գոյատեւման Պայքար, Երևան, 2000, էջ 100-111:

4. Faiez el-Ghocéin, Les Massacres en Arménie Turquie, Beyrouth, 1965.

5. Յուշամատեան..., էջ 149:

ուր «Իսմաիլի» ազատախոհ մահամետական բնակչութիւնը ու մանաւանդ գայմագամը (կառավարիչը) հոգատար և մարդկայնական վերաբերմունք ցոյց տուած է Հայ տարագիրներուն: Այդպիսի ազնիւ ու արդար վերաբերմունքի մասին անձամբ վկայութիւն լսած եմ Տէր-Խորէնեան (մօրաքրորջա) ընտանիքէն, որուն աւագ որդին՝ Դպրապետ Յակոբ Տէր-Խորէնեանը վայելած է քաղաքի կառավարիչին հովանաւորած նուագախումբին ղեկավարը դառնալու առանձնաշնորհումը:

Քիլիսի որոշ ընտանիքներ, որոնք նախօրօք Հայէպ հաստատուած անմիջական հարազատներ՝ քոյր, եղբայր ևն, կամ առևտրական ու այլ սերտ կապեր ունէին Հայէպի հետ, կրցան Հայէպ մնալ Եղեռնի օրերուն և իրենց օրերը կերպով մը անցուցին անմիջական մահուան սպառնալիքէն հեռու:

Հայէպ մնացին նաև ընտանիքները այն Քիլիսցիներուն, որոնց զաւակը որպէս սպայ (բժիշկ, դեղագործ ևն) հաւաքագրուած էին Օսմանեան բանակին մէջ: Յատուկ չիշատակման արժանի է նաև հետևեալ փաստը: Ինչպէս Կիլիկիոյ հայաբնակ այլ քաղաքներու պարագային, Քիլիսի մէջ նոյնպէս, որպէս որակեալ արհեստաւորներ պահուեցան մի քանի ընտանիքներ, ինչպէս օրինակ «Մաքինիատ Յովհաննէսին» (Տաղլեան) ընտանիքը: Պատերազմի չորս տարիներու ընթացքին ան պահուեցաւ Քիլիսի մէջ, որպէսզի հնարաւոր ըլլայ աշխատեցնել քաղաքի բոլոր մեքենական ալրաղացները: Կենդանի փաստ այն մասին, որ Քիլիսի բոլոր արհեստները Հայերու ձեռքն էին և «քաղաքին սրտի երակը՝ հայ ժողովուրդն էր»:

1914 Օգոստոսին սկսած համաշխարհային պատերազմը աւելի քան չորս տարի տևեց, Թուրքիան պարտուեցաւ յատկապէս Սուրիա-Պաղեստինի ճակատներուն վրայ վճռական ճակատամարտներ կորսնցնելով: Այդ հաղթանակին մէջ բաժին ունէին նաև ֆրանսական Դաշնակից բանակի շարքերուն

մէջ կռուող Հայկական Լեգէոնի կամաւորները, յատկապէս Պաղեստինի ճակատի վրայ Արարացի ճակատամարտի (1918 թ. Սեպտեմբեր 19-ի) յաղթանակով աւարտին մէջ: Պարտուած Թուրքիան զինադադար խնդրեց, որը ստորագրուեցաւ 1918 թուականի Հոկտեմբեր 30-ին, հիւսիսային Եգէականի Մուտրոս կղզիին վրայ, Յունաստան: Այդ զինադադարին նախորդող օրերուն Դաշնակից զօրքերը արդէն մտեր էին Հալէպ, յաջորդ օրերուն նաև՝ Քիլիս: Տեղահանուած Հայերու վերապորոնները խումբ առ խումբ կը վերադառնային Քիլիս՝ Հալէպի վրայով:

Տէր-Զօր աքսորուած քիլիսցիներէն շատ քիչեր վերադարձան: Նուազագոյն 200-300 Քիլիսցիներ նահատակուած էին այդ կողմերը և ընդհանուր հաշուով Քիլիսի Հայութեան մէկ չորրորդը՝ աւելի քան 1500 անձ կորած, մեռած, նահատակուած էր աքսորի ճամբաներուն վրայ: Իսկ Քիլիսի Հայութեան կրած նիւթական վնասները տեղահանութեան և Եղեռնի հետևանքով անչափելի ու անհաշուելի էին:

Նիւթական վնասներու հաշուեկշիռը պատրաստելու համար յանձնախումբեր պատրաստուեցան Դաշնակից (բրիտանական) զօրահրամանատարութեան նախաձեռնութեամբ: Վեց-եօթ ամիս տևած այդ աշխատանքը իզուր անցաւ, քանզի Անգլիացիներէն յետոյ, Ֆրանսացիները եկան, որպէս Դաշնակից զինուորական գրաւման բանակ: Շուտով քաղաքական իրադրութիւնը հիմնովին փոխուեցաւ՝ Քեմալական հրոսակներու կիլիկիոյ հայաբնակ քաղաքները, նաև Քիլիս ներթափանցման հետևանքով: Այդ տարիներու իրավիճակին հանգամանօրէն կ'անդրադառնանք յաջորդ՝ «Քիլիսի Հայութիւնը Յետ-Եղեռնեան Տարիներուն 1918-1921» գլուխով:

* * *

Ժ. ՔԻԼԻՍԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՏ-ԵՂԵՌՆԵԱՆ 1918-1921 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՐՏԱԳԱՂԹ

1914 թ. Օգոստոսին սկսած համաշխարհային պատերազմի զինուորական գործողութիւնները Թուրքիոյ ճակատին վրայ վերջ գտան 1918 թ. Հոկտեմբեր 30-ին Մուտրոսի զինադադարի պայմանագրի ստորագրութեամբ:

Այդ յաղթական աւարտին նախորդող ռազմական գործողութիւններու հակիրճ վերատեսութիւնը կրնայ օգտակար ըլլալ յետ-պատերազմեան տարիներու քաղաքական վերիվայրումները աւելի պարզորոշ տեսնելու տեսակէտէն: Արևելեան, Կովկասեան-ռուսական ճակատի ռազմական գործողութիւնները զանց կ'առնենք, քանի որ անոնք Կիլիկիոյ ռազմաքաղաքական յետագայ իրադրութեանց հետ ուղղակի կապ չունին:

Այսպէս, 1914-ի վերջերը Դաշնակիցներէն Մեծն Բրիտանիան արդէն ցամաքահանում կատարած էր Օսմանեան Կայսրութեան հարաւ-արևեալեան տիրոջ Միջագետքի Պասրա նաւահանգիստի շրջանը: 1916-ի առաջին օրերէն Արաբիոյ ցեղախումբերը ապստամբութիւն բարձրացուցած էին Պոլսոյ Սուլթանին դէմ՝ էմիր Ֆեյսալը Հիճազի Թագաւոր յայտարարելով: 1917-ի Մարտին Բրիտանական զօրքերը Միջագետքի Պաղտատ քաղաքը մտած էին և Եգիպտոսէն՝ Սուէզ ջրանցքը կտրելով ու Սինայի անապատէն անցնելով՝ զօրավար Ալլէնպիի (Allenby) 7-րդ «Եգիպտական Կորպուսը» արդէն մտած էր Պաղեստին և դրաւած Երուսաղէմ սուրբ քաղաքը: 1918-ի Սեպտեմբերին դէպի Դամասկոս յառաջացող Դաշնակից ուժերու առջև նահանջող թրքական «Երլտըրըմ»

Օրտու» զօրամիաւորման օգնութեան հասած էին գերմանական զրահապատ գումարտակներ: Շարք մը ծանր պարտութիւնները արդէն բարոյսլքելու սկսած էին թրքական զօրքերը: Սեպտեմբեր 18-էն 19 տեղի ունեցաւ ճակատումը թուրք-գերմանական ուժերու և զօրավար Ալլէնպիի Դաշնակից ուժերուն միջև Պաղեստինի Նապլուս քաղաքին մօտակայ Արարայի բարձունքին (Արաբերէն՝ Ռաֆայթ Ուահրարա) վրայ: Այնտեղ, թուրք-գերմանական ճակատը ճեղքելու մի քանի փորձերէ յետոյ, զօրավար Ալլէնպին գրոհի մէջ նետեց Դաշնակից ցօրագունդերու կազմի մէջ մտնող Հայկական Լեգէոնի՝ մարտիկները: Մի-քանի ժամ տևած մարտերէ յետոյ, Հայ Լեգէոնականները կոտրեցին թշնամիին դիմադրութիւնը և տիրացան ռազմագիտական այդ կարևոր բարձունքին, որուն հետևանքով Դաշնակից զօրքերը հալածեցին նահանջող թշնամին և 1918 Հոկտեմբեր 1-ին մտան Դամասկոս, Հոկտեմբեր 6-ին՝ Պէյրութ, իսկ Հոկտեմբեր 26-ին Ալլէնպիին հաղթական զօրագունդերը մտան Հալէպ ու յաջորդ օրերուն՝ Քիլիս, Այնթապ, Մարաշ: Ռազմական գործողութիւնները բուն թուրքիոյ տարածքին հասած ըլլալուն՝ Պարտուած թուրքիան խնդրեց զինադադար, որը ստորագրուեցաւ 1918 Հոկտեմբեր 30-ին հիւսիսային Եկէականի Լեմնոս կղզիի Մուտրոս նավահանգիստին վրայ:

Զինադադարին նախորդող օրերուն արդէն Հալէպէն Քիլիս հասած էին Ալլէնպիի զօրաբանակի յառաջամարտիկները, իսկ Դեկտեմբերի սկիզբը Քիլիսի մէջ կայացօր հաստատեցին

1. Հայկական Լեգէոն, կազմուեցաւ 1916 թ. Լոնտոնի մէջ Սալքսֆիքօ և Հայ Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարի միջև կնքուած համաձայնագրի հիման վրայ: Հայ Լեգէոնականները պիտի մասնակցէին թուրք բանակի դէմ կռիւներուն Սուրիա-Պաղեստինեան ճակատի վրայ: Հայ Լեգէոնականները մարտական մկրտութիւն ստացան 1918 Սեպտեմբեր 19-ին Արարայի ճակատամարտի ընթացքին:

Տե՛ս «Հայկական Հարց Հանրագիտարան», Երևան, 1996, էջ 226:



Հայկական Լեգէոնի Քիլիսցի կամաւորներ:

Բրիտանական բանակի Հնդկական¹ մի քանի գումարտակ: Անոնք Քիլիս մնացին մինչև 1919 թուականի Հոկտեմբեր ամիսը, երբ Սալքս-Փիքո-Պողոս Նուպար համաձայնագրի հիման վրայ ֆրանսական զորքերու կազմի մէջ ընդգրկուած Հայկական Լեգէոնի կամաւորները ֆրանսական զորքերու հետ եկան փոխարինելու Բրիտանական գրաւման զորքերն ու իշխանութիւնները: Տողերուս գրողը, անձամբ, կը լիչէ, որ այդ օրերուն մեր տունը յաճախ կը տեսնուէր Լեգէոնական

1. 1918 թուականին Հնդկաստանը դեռ մաս կը կազմէր Բրիտանական կայսրութեան: Անկախ երկիր դարձաւ 1948-ին:

3-րդ գումարտակի ենթասպաներէն՝ Գէորգ Չավուչ անունով մէկը, որ հօրս հետ բարեկամացեր էր:

Հայ Լեզէոնականները Դաշնակից ուժերու կազմին մէջ մասնակցած էին ո՛չ միայն Արարալի ճակատամարտի յաղթական ելքին 1918 Սեպտեմբեր 18–19–ին, այլ նաև Սուրիոյ և Լիբանանի Դամասկոս, Պէյրութ, Հալէպ, Անտիոք, Ալեքսանտրէթ քաղաքներու ազատագրման թրքական զօրքերու ձեռքէն: Յատկանշական ու խորհրդանշական էր, երբ բրիտանական ռազմաճակատը առաջին անգամ Հայ Լեզէոնականները ցամաք ոտք դրին Կիլիկեան առաջին նաւահանգիստ Ալեքսանտրէթի մէջ և անկէ Տէօրթ–Եօլի (Զորք–Մարզպանի) վրայով անցան Կիլիկիոյ խորերը:

Հայկական Լեզէոնի չորս տարբեր գումարտակներուն մէջ գտնուած են հետևեալ Քիլիսցի կամաւոր քաջերը.

1. Տքթ. Հայկազուն Նալպանտեան, Ժնևի համալսարանէն վկայեալ բժիշկ, նահատակուած ճակատի վրայ: 2. Մարգիս Զղչանեան, 3. Գէորգ Ուզուն Մարգիսեան, 4. Յարութիւն Աբիկեան, 5. Տիգրան Կիւրիւնլեան, 6. Թորոս Քէլլօղլեան, 7. Ներսէս Ֆուրունճեան, 8. Տիգրան Ապուլաֆեան, 9. Գրիգոր Մկրեան, 10. Կէպուչ Թաթարեան, 11. Իսկէնտէր Պայրամեան, 12. Միհրան Գրիգորեան, 13. Գէորգ Այնթապլեան, 14. Կիւլլիւ անունով երիտասարդ մը:

Հայ Լեզէոնականները ֆրանսական Դաշնակից զօրքերու կազմի մէջ մասնակցեցան թուրքական ուժերուն դէմ պատերազմական գործողութիւններուն Սուրիա–Պաղեստինեան ճակատին վրայ, ինչպէս Արարալի յաղթական ճակատամարտին և այլուր:

Լեզէոնի կազմի մէջ կար չորս գումարտակ, 4 000 զինուոր, կազմուած՝ Մուսա Լերան հերոսամարտի մասնակիցներու և Ամերիկայէն ու Եւրոպայէն եկած Հայ կամաւորներու ուժերով: Կազմաւորման և զինուորավարժութեան կեդրոնները եղան Կիպրոս և Բօր–Սալիս (Եգիպտոս):

Քիլիս վերադարձող Լեզէոնական կամաւորներէն՝ Սարգիս Զղչանեանի կենսագրականէն կը քաղենք Քիլիսցի Հայ կամաւորներու խումբին անցուցած ողիսականին մասին հետեւեալը.

– Երբ Քիլիսէն տարագրուեցանք, շոգեկառքով (գնացքով) ղրկուեցանք Յորդանանի Թֆիլէ քաղաքին մօտ էյմէ գիւղը: Մի քանի ամիս ետք այդ գիւղը գրաւեցաւ Շէրիֆ Ապտալլայի զօրքերուն կողմէ: 1916–ի սկզբէն իվեր Արաբ ցեղախումբերը ըմբոստութիւն բարձրացուցած էին սուլթանական Թուրքիոյ դէմ: Տեղուցն թուրք իշխանութիւններուն հետ մենք ալ գերի բռնուեցանք որպէս թրքահպատակներ: ... Այնտեղի գաղթական Հայ երևելիներէն ոմանք Շէրիֆին հասկցուցին Հայերու դրութիւնը: (Հետեւաբար) շատ մը Հայ երիտասարդներ կամաւոր գրուեցան Շէրիֆի բանակին՝ կռուելու Թուրքերու դէմ: Մօտ երեսուն կամաւորներ անցանք Շէրիֆի բանակատեղին, ուր գտանք ուրիշ Հայ կամաւորներ, որոնցմով մեր թիւը հասաւ 101–ի: Հոս իմացանք, որ Ֆրանսական դրօշի տակ Հայ կամաւորական բանակ մը կազմուած է: Ընդ փոյթ որոշեցինք մեկնիլ Կիպրոս: Շէրիֆ Ֆէյսալի կարգադրութեամբ և օժանդակութեամբ ճամբայ ելանք դէպի Կիպրոս: Սակայն, իմանալով, որ Բօր–Սալիտի մէջ ալ կամաւորական գունդեր կը կազմուին, նախընտրեցինք մեկնիլ Եգիպտոս: Բօր–Սալիտի մէջ երեք ամիս զինավարժութիւն կատարելէ ետք, զրահաւոր նաւով մը ղրկուեցանք Ալեքսանտրէթ: Հոս, մեզմով ալ, յառաջ եկաւ հազար հոգինոց կամաւորական բանակ մը, որ կոչուեցաւ Չորրորդ Պաթալյօն (գումարտակ)¹:

* * *

1. Յուշամատեն..., էջ 172-173:

Ինչպիսին էր ժողովուրդի վիճակը Քիլիսի ու շրջակայքի մէջ 1919-ի առաջին օրերուն և յաջորդ ամիսներուն:

Պէտք է ըսենք, որ Բրիտանական Դաշնակից զրաւման ուժերը տարագրութենէ տուն վերադարձող Հայերու հաւաքման տեսակէտէն բաւական օգտակար գործունէութիւն ունեցան: Ի դէպ, հարկ է նշել, որ Մուտրոսի զինադադարի պայմանագրի գաղտնի Յաւելուածի 6-րդ յօդուածը կը վերաբերէր տարագիր Հայերու հայրենադարձութեանը: Յիշեալ յօդուածի տրամադրութեանց համաձայն՝ Արևելքի մէջ գործող Դաշնակից զօրքերու ընդհանուր հրամանատարութիւնը պէտք է կազմակերպէր այն Հայերու վերադարձը կիլիկիա, որոնք կ'ուզէին վերադառնալ իրենց ծննդավայրը: Ըստ այնմ՝ Պէյրութ, Հալէպ, Ալեքսանտրէթ և Քիլիս-Գաթմա վայրերուն մէջ այդ նպատակի համար ստեղծուեցան կեդրոնավայրեր և տասնեակ հազարաւոր Հայեր Արաբական երկիրներէն կը վերադառնային երկաթգծով կիլիկիա՝ Դամասկոս-Հալէպ-Գաթմա-Քիլիս-Ատանա գծով: Բացի այդ, շատ Քիլիսցիներ, ընտանեօք իրենց սեփական միջոցներով, Հալէպէն իրենց ազգականներու մօտէն կրցած էին Քիլիս վերադառնալ մինչև Մուտրոսի զինադադարի օրերը:

1919-ի առաջին օրերէն սկսեալ տարագրութենէն տուն վերադարձող Հայերու հաւաքման ուղղութեամբ Դաշնակից զրաւման իշխանութիւնները որոշ գործունէութիւն ունեցան: Այսպէս, Քիլիսը, Գաթմայի երկաթուղային կայարանի շրջանակը, Ազգըը հաւաքման կեդրոններ դարձան: Այլ և այլ վայրերէն տասնեակ հազարաւոր վերապրողներ Եղեռնի տանջարաններէն գալով կը համախմբուէին այդ կեդրոններուն մէջ:

Ծայրագոյն թշուառութեան մատնուած ընտանիքներ բաց դաշտերու մէջ, պատառոտուած վրաններու տակ կը սպասէին ... Անոնցմէ ոմանք կը բախտաւորուէին արտօնութիւն ստանալ Քիլիսի մէջ տեղաւորուելու և բնակուելու

հոն: Բացի այդ, Քիլիսի մօտակայ շատ գիւղերու մէջ կային Հայ կիներ, աղջիկներ, յաճախ անչափահաս մանուկներ ... Նաև, մեծ թիւով կիներ, աղջիկներ լեցուած էին թրքական հարէմներուն մէջ: Անոնց փրկութեան, ազատման ուղղութեամբ նոյնպէս որոշ գործ կատարեցին Դաշնակից բրիտանական զինուորական ուժերը, որոնց հետ համագործակցեցան Հ.Բ.Ը.Մ. — ը (Բարեգործականը) և Near East Relief կազմակերպութիւնները: Այդ միջոցներով և Բարեգործականի ջանքերով որոշ չափով դիւրացաւ տուն վերադարձողներու ճամբորդութիւնն ու տեղաւորումը:

Եղեռնէն վերապրած և Քիլիս վերադարձած Հայերը հազիւ թէ տեղաւորուած էին Թուրքերէն ետ գրաւուած իրենց տուները, անմիջապէս նախաձեռնեցին կազմութեանը «Ազգային Միութեան» Հայ Առաքելական, Հայ Բողոքական (Աւետարանական) և Հայ Կաթողիկէ համայնքներու գործակցութեամբ: Հիմնական նպատակն էր՝ նախ Միացեալ Ազգային վարժարան մը բանալ և յետոյ չքաւոր ազգայիններուն օժանդակութեան գործը կազմակերպել: Այդ գործին նախաձեռնողները եղան քաղաքապետարանի պաշտօնեայ Դաւիթ Աղամեանը և Բողոքականաց պատուելին, որոնք անձամբ դիմեցին Քիլիս տեղակայուած բրիտանական զօրքերու հրամանատարին, անոր պարզեցին տարագրութենէն վերադարձող Հայութեան ընդհանուր վիճակը և դպրոց մը բանալու անհրաժեշտութիւնը: Անգլիացի հրամանատարը խոստացաւ հարկ եղածը ընել թէ՛ միացեալ վարժարան մը բանալու, թէ՛ ժողովուրդին նիւթական վիճակը բարելաւելու ուղղութեամբ:

Հետևաբար կը կազմուի «Ազգային Միութեան» առաջին ղեկավար գործադիր մարմինը, որուն մաս կը կազմեն վերոյիշեալ Դաւիթ Աղամեանը և արդէն Քիլիս վերադարձած Քիլիսի երևելի Հայերէն Աւետիս Աղա Պայրամեանը, Յովհաննէս Թէրզեանը և Եագուպ ու Եուսուֆ Շիթիլեանները: Ծնըն-

դավայր վերադարձող Հայերը՝ իրենց բոլոր գույքերէն դատարկուած, թալանուած գտան թէ՛ եկեղեցին, թէ՛ դպրոցը: Ամէն ինչ կողոպտուած, անհետացած էր: Նոյնիսկ եկեղեցւոյ զանգուածային զանգակը զանգակատունէն վար նետուած ու անյայտացած էր:

Ազգային Միութեան գործադիր մարմնի ջանքերով նախ կը գտնուի եկեղեցւոյ գլխաւոր դրան բանալին, որը ի պահ դրուած էր Քիլիսի թուրք երևելիներէն Ռուհի Զատէ Ալի էֆէնտիին քով: Եկեղեցւոյ զանգակը կը յայտնաբերուի ուրիշ թուրքի մը տունէն, ուր զանգակը կը գործածուէր որպէս կովերուն կեր տալու մսուր: Դպրոցին նստարան, գրասեղանները ևս, ինչպէս եկեղեցւոյ զանգակը, վերադարձնել հնարաւոր կը դառնայ ժանտարմերիայի պետի միջոցով: Զանգակը զանգակատունէն վար նետելու հետեանքով ճաքած, կոտրած էր մասամբ: Զինագործ-երկաթագործ Յովհաննէս Միւլահեանը հարկ եղած նորոգութիւնը կ'ընէ և յաջորդ օրերուն մեծ հանդիսութեամբ զանգակը կը բարձրացուի իր տեղը՝ հիւսիսային կողմի զանգակատան վրայ: Մատաղցու ոչխարներու մորթուելէն հետոյ Քիլիսի Հայոց Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ զանգակը կը սկսի ղողանջել և Հայութիւնը հոգևոր վերածնունդի երջանիկ պահեր կ'ապրի:

Յաջորդ օրերուն աքսորէն Քիլիս կը վերադառնայ հոգևոր հովիւ Տէր Վահան քահանայ թովմասեանը: Քաջ հովիւ, նուիրեալ քահանայ Տէր Սահակ Մոմճեանը, Կիլիկիոյ կաթողիկոսին առաջարկին ընդառաջելով՝ իր հօտին խաչատանջ խլեակներուն հետ հասած էր մինչև Տէր-Զօր և հիւժուած ու ընկճուած՝ վախճանած էր Հայէպ 1915-ի Սեպտեմբերին ու թաղուած հոն՝ Հայէպի Հայոց Ազգային գերեզմանատանը: Տէր Վահանին Քիլիս ժամանման օրերէն սկսեալ Քիլիսի Սբ. Յովհաննէս տաճարի վերականգնուած զանգակատունէն առտու իրիկուն կը սկսի ղողանջել վերանորոգուած ու վերակենդանացած զանգակը՝ աղօթքի ու քրիստոնէական

պաշտամունքի հրաւիրելով վերընձիւղուած Հայութիւնը: Մեր սուրբ տաճարի զանգակատունէն դէպի հեռուները տարածուող ավետաբեր ղողանջները կը հասնին նաև ականջին Քիլիսցի այն դժբախտ Հայուհիներուն, որոնք գերեզմարուած՝ եղեռնի օրերուն, դեռ կը մնային արգելափակուած այլազգիներու տուներէն ներս՝ Քիլիսի շրջակայ գիւղերուն մէջ: Լսելով իրենց եկեղեցւոյ զանգակին ղողանջները և վստահ ըլլալով, որ հարազատները աքսորէն Քիլիս վերադարձած են արդէն, անոնք կը սկսին ամէն օր խումբ խումբ փախչիլ ու գալ Քիլիս: Մի քանի շաբթուայ մէջ այլազգիներու քովէն փախած, եկած կանանց թիւը կը հասնի արեւի քան յիսունի և հարկ կը տեսնուի կազմակերպել, բնալ որբանոց-այրիանոց մը: Այդ այրիանոց-որբանոցին հոգատարութիւնը բնականօրէն կը ստանձնէ Ազգային Միութեան վարիչ մարմինը: Կ'արժէ չիշատակել, որ այդ այրիանոց-որբանոցին հոգածու «Մայրիկը» կը դառնայ Քիլիսցի յայտնի դայեակ՝ տիկին Թրվանտա Յարութիւնեանը:

Ազգային Միութիւնը Դաշնակից զօրքերու հրամանատարութեան հետ աշխատանք կը տանի շարունակելու այլազգիներու տուները մնացած որբերը, այրիները հաւաքելու գործը: Ի դէպ, պէտք է չիշել, որ այդ գործը կը մտնէր Դաշնակիցներու պարտականութիւններուն մէջ՝ համաձայն 1918 Հոկտեմբեր 30-ին ստորագրուած Մուտրոսի Զինադադարի պայմանագրին կից գաղտնի Յաւելուածի 6-րդ Յօդուածի: Որբանոց-այրիանոցի պատասպարեալները որոշ ժամանակ կը պահուին Քիլիսի մէջ՝ Ազգային Միութեան հոգատարութեան ներքոյ: Այնուհետև անոնք մաս առ մաս կը փոխադրուին Հալէպ Ահարոն Զրահեան Պատուելիին որբանոցը, որը կը հովանաւորուէր Դաշնակից զօրքերու գլխաւոր հրամանատարութեան կողմանէ: Այստեղ հարկ կը համարենք չիշատակել, որ կանանց Քիլիսէն Հալէպ փոխադրութիւնը մինչև Ահարոն Պատուելիին որբանոցը սիրայօժար կը

կատարուէր Քիլիսցի հմուտ կառապան Յովհաննէս Պարոնեանի միջոցով:

Ազգային Միացեալ վարժարանը կը բացուի եկեղեցւոյ շրջափակին մէջ և տնօրէնութիւնը կը յանձնուի՝ երկար ժամանակ, 1908-էն մինչև 1915, Քիլիսի մէջ որպէս վիրաբոյժ աշխատած Տքթ. Կարապետ Միսիրեանի եղբօր՝ փրոֆ. Յովսէփ Միսիրեանին, Ազգային Միութեան վարչութեան վերահսկողութեան ներքոյ: Քիլիսի անգլիացի զօրահրամանատարը զսլորոցին կ'օժանդակէ, իր խոստումին համաձայն, տարեկան 125 օսմանեան ոսկի գումարով: Ազգային Միութեան խողովակով զօրահրամանատարը որոշ գումար մըն ալ կը յատկացնէ նաև չքաւոր ընտանիքներուն կարիքներուն համար:

Դպրոցին ուսուցիչները, տնօրէն փրոֆ. Յովսէփ Միսիրեանին հետ, կ'ըլլան հետևեալները.

— Համբարձում Պէրպէրեան, Վահան Ենիգօմշուեան, Սարգիս Ենիգօմշուեան, Գրիգոր Մարաշլեան, Սարգիս Թաշճեան: Վերջինս Հարաւային Ամերիկայէն որպէս կամաւոր միացած ըլլալով Հայկական Լեգէոնին, Քիլիս հասած էր՝ Ալեքսանտրէթ Դաշնակից ռազմանաւէն իջեցուած Հայ Լեգէոնականներու գումարտակին մաս կազմելով:

Քիլիսի Ազգային Միութեան գործունէութիւնը տևեց մինչև 1921 թուականի Ամառը, երբ Քեմալական հրոսակներու Քիլիս ներթափանցման հետևանքով քաղաքական լարուած վիճակ ստեղծուած էր արդէն: Մինչ այդ, առաջին տարուայ ընթացքին՝ երկու ամիսը անգամ մը Ազգային Միութեան ղեկավարութեան կազմը փոփոխութեան կ'ենթարկուէր, թոյլ տալու համար, որ երեք յարանուանութիւններէն ալ տարբեր ազգայիններ ծառայեն այդ համա-քիլիսցիական ազգային գործին: Անհրաժեշտ կը համարենք այստեղ պատմութեան համար արձանագրել անունները բոլոր անոնց, որոնք մաս կազմեցին Քիլիսի Հայոց Ազգային Միութեան ղեկավարու-

թեան, հետևելով «Յուշամատեան Քիլիսի Հայոց» հայրենակցական պատմագրքին էջ 177-ի վրայ տրուած ցուցակին¹.

– Դաւիթ Արամեան, Պէշիր Գասպարեան, Բէզուզ Սերոբեան, Նուրիկ Տէր Յովհաննէսեան, Զաքար Տէտէեան, Միհրան Քէշիշեան, Անդրէաս Քէշիշեան, Եիւսիւֆ Շիթիլեան, Յովհաննէս Էքմէքճեան, Տիգրան Պայրամեան, Յովհաննէս Պայրամեան, Աւետիս Պայրամեան, Համբարձում Պէրպէրեան, Հաճի Յովսէփ Գասպարեան, Արամ Աթթարեան, Գրիգոր Աթթարեան:

Տէր Վահան քհյ. Թովմասեանը և Բողոքականաց Պատուելին՝ միշտ մասնակցած են «Ազգային Միութեան» ղեկավարութեան աշխատանքներուն որպէս նախագահներ:

Յատկանշական է, որ Ազգային Միութեան ղեկավարութեան անդամները վերջին անգամ ընտրուած են ուղղակի ժողովուրդին կողմէն, հետևեալ կազմով.

– Աղէկ Աղա Ենիգօմշուեան, Համբարձում Պէրպէրեան, Պէշիր Գասպարեան, Բըզդալլա Մարտինի, Միհրան Քէշիշեան, Նուրիկ Տէր Յովհաննէսեան, Զաքար Տէտէեան, Յարութիւն Էքմէքճեան, Յարութիւն Շամամեան և Յովհաննէս Աղա Պայրամեան:

Այդ կազմին գործունէութիւնը կը շարունակուի մինչև 1921-ի ամառը, երբ շատեր վատթարացող քաղաքական դրութեան պտճառով Քիլիսէն կը հեռանային դէպի Հալէպ:

Միացեալ Ազգային վարժարանը շարունակուեցաւ մինչև 1921-ի գարունը: Դպրոցին նիւթական կարիքներուն օժանդակեց Հ.Բ.Ը.Մ. –ի 1920-ին վերակազմուած Քիլիսի Մասնաճիւղի վարիչ մարմինը:

Միացեալ Ազգային վարժարանի Հոգաբարձութեան անդամները եղած են հետևեալ ազգայինները.

– Թորոս Կ. Վարպետեան, Եագուպ Շիթիլեան, Լևոն

1. Յուշամատեան..., էջ 177–178:

Գարակէօզեան, Յովհաննէս Էքմէքճեան, Րեզուզ Սերոբեան
և Լևոն Քէլէշեան:

Որբախնամ Մարմինը կազմուած էր հետևեալ ազգա-
յիններէ:

– Մարաշցի Յովհաննէս Ետալեան, Յովհաննէս Սիւ-
լահեան, Րզզաւլա Մարտինի և ուսուցիչ Աւետիս Խոճա
Թէփիրեան:

* * *

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԵՒ ՔԻԼԻՍԻ ՄԷՉ 1920-1921 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Ժողովուրդին վիճակը և քաղաքական իրադրութիւնը
ինչպիսի՞ն էր ընդհանրապէս Կիլիկիոյ, նաև Քիլիսի մէջ,
1920-1921 թուականներուն:

Այս կապակցութեամբ «Յուշամատեան Քիլիսի Հայոց»ին
մէջ գրուած է ամփոփ ու հակիրճ.

– «1918-1921, երեք-չորս տարիներ Քիլիսի Հայերը
ապրեցան միջակ կեանք մը, ո՛չ ազատ, ո՛չ հալածական:
Սակայն երբ Այնթապի ինքնապաշտպանութեան¹ կռիւները
սկսան, Քիլիսի մէջ ևս տիրեց յարձակումի ու ջարդի
սարսափը: Հնարաւորութեան սահմաններուն մէջ, Հայ
երիտասարդները ինքնապաշտպանութեան պատրաստու-
թիւններ տեսան: Տուներու, թաղերու մէջ դիրքեր շինեցին,
խումբեր կազմեցին, խմբապետներ նշանակեցին: Թուրքերը

1. Այնթապի Հայերու պաշտպանական մարտեր թուրք (քեմալական)
ջարդարաներու դէմ՝ 1920 Ապրիլ 1-էն մինչև 1921 փետրուար 8,-Տես
«Հայկական Համառօտ Հանրագիտարան», հատոր 1, էջ 173:

սկսան գիշերանց Հայոց տուները մտնել, վախցնել, կողոպտել և սպաննութիւններ կատարել»¹:

Միացն այսքանը, ուրիշ ո՛չ մէկ մանրամասնութիւն:

Հետեւաբար, կը գրէ Հ. Պէրպէրեանը, «... Նկատելով, որ տիրող վտանգաւոր վատ կացութեան հետեւանքով, շատ մը հայ ընտանիքներ Քիլիսէն գաղթած էին և գաղթելու վրայ էին դէպի Հալէպ, ես ալ ընտանիքս դրկած էի Հալէպ և կ'ապրէի առանձին» ... Որոշ ժամանակ անց, ինքն ալ կ'երթայ Գաթմա և գնացքով այնտեղէն կ'անցնի Հալէպ, ապահով կեանքի ի խնդիր:

«Ազգային Միութեան» վերջին ընտրեալ ղեկավարութեան կարևոր անդամ հանդիսացող և «Յուշամատեան»ի հեղինակ Հ. Պէրպէրեանը ո՛չ մէկ տող չի գրեր, թէ՛ ինչո՞ւ և ինչպէ՞ս Քիլիսի Հայութիւնը հասաւ այդ խղճալի օրերուն Դաշնակից «փրկարար» Անգլիացիներու, Ֆրանսացիներու կողմէ ամբողջ Կիլիկիոյ, ներառեալ Քիլիսի գրաւման օրերուն:

Ընթերցողիս այդպիսի կենսական հարցերուն պատասխանելու համար, հարկ կը համարեմ պատմական թուուցիկ յետադարձ հայացքով վերադառնալ 1918 թուականի Հոկտեմբեր 30-ին կնքուած Մուտրոսի Զինադադրի պայմանագրին: Այդ պայմանագրի՝

– 5-րդ Յօդուծով՝ Սուլթանական (Թուրքիոյ) կառավարութիւնը կը պարտաւորուէր անմիջապէս զօրացրել թրքական բանակը, իսկ՝

– 16-րդ Յօդուածով՝ կը պարտաւորուէր թրքական բոլոր զօրքերը դուրս բերել Կիլիկիայէն, որ 1916 թուականի Սայքս-Փիքո-Պօլոս Նուպար համաձայնագրի դրոյթներով՝ Դաշնակիցներու յաղթանակէն յետոյ Կիլիկիոյ Հայերուն խոստացուած էր տալ ինքնավարութիւն՝ Ֆրանսայի հովանա-

1. Յուշամատեան..., էջ 153:

Լորուժեան (mandat) ներքոյ:

Ի կատարումն այդ 16-րդ Յօդուածի, Մուտրոսի Զինադադարէն միայն երեք օր յետոյ՝ 1918 Նոյեմբեր 2-ին բրիտանական ռազմանաւերը խարխախ կը նետեն Ալեքսանտրէթի (Հայոց) Ծոցի մէջ և բրիտանական ռազմածովային ուժերը կը գրաւեն Ալեքսանտրէթի նաւահանգիստը և շրջանը: Նոյեմբեր 28-ին ալ կը հանուի Հայկական Լեզէոնը, որը ստեղծուած էր Սալքս-Փիքօ-Պօղոս Նուպար համաձայնագրի հիման վրայ: Ըստ այդ համաձայնագրի դրոյթներուն, Հայկական Լեզէոնի մարտիկներուն իրաւունք չնորհուած էր առաջինը ոտք դնելու պատիւը իրենց հայրենիքի հողին վրայ: Լեզէոնի չորս գումարտակներէն երկուքը ծովով կը շարունակեն մինչև Մերսին նաւահանգիստը, և խորանալով երկրի ներսը՝ յաջորդ օր կը մտնեն Ատանա: Գումարտակներէն մէկը՝ շարժուելով Ալեքսանտրէթէն հիւսիս կը գրաւէ Տէօրթ-Եօլը (Զորք Մարզպան), Թոփրագ Գալէ, Իսլահիէ, անկէ շարժուելով դէպի Քիլիս: Իսկ երրորդ գումարակը, գնդապետ Ռումիոյի հրամանատարութեամբ կը գրաւէ Մերսինը, Տարսոնը և Պոզանթին¹:

Դեռ Մուտրոսի պայմանագիրը չկնքուած, 1918 Հոկտեմբեր 26-ին, զօրավար Ալլէնպիի բրիտանական զօրքերը Հայէպ քաղաքը գրաւելուն յաջորդ օրն իսկ մտան նաև Քիլիս և մնացին մօտաւորապէս մինչև 1919-ի աշունը: Երբ ֆրանսական զօրքերը եկան փոխարինելու բրիտանական զօրքերը, անոնց հետ Քիլիս մտաւ նաև Հայկական Լեզէոնէն փոքր գունդ մը:

Կիլիկիոյ մէջ, Մուտրոսի Զինադադարէն յետոյ, հակառակ բրիտանական, այնուհետև ֆրանսական զօրքերու ներկայութեան, 1920-1921 թուականներուն քաղաքական իրադրութեան անկայունութեան և ներքին անապահովութեան հիմնա-

1. Paul du Véou, - La Passion de la Cilicie 1919-1922, Paris 1954, p. 239.

կան պատճառը այն է, որ ի խախտումն Մուտրոսի պայմանագրի 5-րդ Յօդուածի (որը կը պահանջէր անմիջապէս զօրացրել թրքական բանակը), Կիլիկիոյ ու անոր յարակից շրջաններուն մէջ դեռ գոյութիւն ունէին շարք մը չզինաթափուած թրքական զօրամասեր, ինչպէս Հաշէմ Պէյի և ուրիշներու 3 000 ու աւելի զինուած անձնակազմով ժամտարմերիան: Անոնց դէմ, Կիլիկիոյ ու Սուրիոյ սահմաններուն մօտ Ֆրանսան, բացի Հայկական Լեգէոնի չորս գումարտակներէն ո՛չ մէկ զինուած ուժ ունէր: Թուրքական ամբողջ բանակ մը, իր լրիւ զէնք ու զինամթերքով մնացեր էր չզինաթափուած Կիլիկիայէն արևելք ընկած երկրամասին վրայ, Եփրատ և Տիգրիս գետերուն միջև, ի խախտումն Մուտրոսի պայմանագրի 5-րդ Յօդուածի:

1919 թուականի Յունուարի վերջերուն Փարիզի մէջ կը բացուի համաշխարհային պատերազմի հաշտութեան վեհաժողովը, ուր Դաշնակիցներու Գերագոյն Խորհուրդը որոշում կ'ընդունի Հայաստանը, Սուրիան¹, Պաղեստինը, Արաբիան և Միջագետքը անջատել Օսմանեան Կայսրութենէն: Փետրուարին, Յունաստանի պահանջով և Դաշնակից պետութիւններու որոշումով՝ յունական զօրքերը կը գրաւեն Իզմիր քաղաքն ու ամբողջ շրջակայքը:

Թուրքիոյ համար նուաստացուցիչ Մուտրոսի պայմանագրի ստորագրումը Սուլթանի կառավարութեան կողմէ, Դաշնակից զօրքերու կողմէ Կիլիկիոյ ու շրջակայքի, մինչև Եդեսիա (Ուրֆա) գրաւումը ու մանաւանդ Իզմիրի գրաւումը Յունաստանի բանակին կողմէ մեծ դժգոհութիւն և բողոքի հուժկու ալիք բարձրացուցած էին դեռ չզինաթափուած

1. Սուրիան կ'անցնի Ֆրանսայի հոգատարութեան-mandat-ի ներքոյ և զօրավար Gourand-ն կը նշանակուի Haut-Commissaire de la République Française en Syrie, Liban et Cilicie (Ֆրանսիայի Բարձր Կոմիսար Սուրիոյ, Լիբանանի և Կիլիկիոյ մէջ):

Թրքական զորագունդերու պաշտպանութեան և հովանիին տակ գտնուող Թուրքիոյ արևելեան նահանգներու մէջ: Այնտեղ՝ Եղեռնի օրերուն բնաջնջուած հայ զանգուածներու տեղը գրաւած Թուրք-Թաթար ամբոխները ոտքի ելած էին: Էնվերի և Մուսթաֆա Բեմալի զօրքերը և անոնց կողմէ կազմակերպուած հրոսակներու («չէթէ»ներու) ջոկատները սկսած էին գործողութիւններ՝ «օտար բռնագրաւողներու» դէմ «ազգային պատերազմ» (Milli Savaş) սկսելով:

Կարևոր հանգամանք է այն իրողութիւնը, որ միջազգային իրադրութիւնը յետպատերազմեան այլ տարիներուն Թուրքիոյ համար շատ նպաստաւոր ընթացք ստացած էր Ռուսաստանի մէջ Պոլշեիկեան՝ 1917 թ. յեղափոխութեան հետևանքով:

Ձարական Ռուսաստանը իր համաձայնութիւնը տուած էր 1915-ին (Անգլո-Ֆրանս-Ռուսական համաձայնագրով) Օսմանեան Կայսրութեան ասիական տարածքները Թուրքիայէն բաժանելու ծրագրի վերաբերեալ: Իսկ նոր, Պոլշեիկեան յեղափոխութեան Ռուսաստանը դէմ էր Օսմանեան Կայսրութեան տարածքներու բաժանման և ո՛չ միայն դէմ էր, այլ՝ պատրաստ էր օգնելու «ազգային պատերազմի» ելած Թուրք ժողովուրդին¹:

Միւս կողմէ, համաշխարհային պատերազմի ընթացքին Դաշնակից երկու մեծ տերութիւնները՝ Ֆրանսան և Մեծն Բրիտանիան, որոնք ստորագրած էին Օսմանեան Թուրքիոյ ասիական տարածքները բաժանելու ձգտող 1916-ի Սալքս-Փիքօ գաղտնի համաձայնագիրը, այժմ՝ իրենց յաղթանակով Թուրքիոյ պարտութենէն և Մուտրոսի զինադադարի ստորագրութենէն յետոյ, սկսած էին տարբեր ուղղութիւններով քաղաքականութիւն վարել, տարակարծիք ըլլալով Թուրքիոյ նկատմամբ:

1. Ռ. Սահակեան, Թուրք-Ֆրանսիական Յարաբերութիւնները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան 1970, էջ 42:

Անգլիան, Օսմանեան Կայսրութիւնը ծուռնկի բերելէ անմիջապէս յետոյ ձեռնամուխ եղած էր Թուրքիոյ բաժանմանը և արդէն գրաւած էր Միջագետքը, Պարսաստանը, Սուրիան և հասած մինչև Մուսուլի նաւթահորերը: Իսկ Ֆրանսան, ընդհակառակը, արդէն հանդէս կու գար Թուրքիոյ մասնատմանը ու պետական ինքնուրոյնութեան վերացման դէմ:

Հիմնական պատճառը քաղաքական, դիւանագիտական այս նոր գործընթացի՝ Մրցակցութիւն այլ երկու Դաշնակից տէրութիւններու միջև Մերձաւոր Արևելքի մէջ իրենց տնտեսական, ապա և՛ ռազմա-քաղաքական սեփական շահերը ապահովելու նպատակով:

Յատկապէս Թուրքիոյ նկատմամբ Ֆրանսայի առանձին շահագրգռութիւնը պէտք է բացատրել Օսմանեան Կայսրութեան մէջ Ֆրանսայի՝ ֆրանսական կապիտալի-դրամագլուխի տիրող, գերակշռող դիրքի պատճառով: Անհրաժեշտ էր պատերազմէն յետոյ ալ, Թուրքիոյ պարտութենէն յետոյ ալ պահպանել Նոր Թուրքիոյ մէջ ֆրանսական կապիտալի տիրապետող դիրքը: Թուրքիոյ դրամատուները, երկաթուղիները, նաւահանգիստները, հանքերը և Օսմանեան ծխախոտի ձեռնարկութիւններու վարչութիւնը—«*Régie des Tabacs de l'Empire Ottoman*» ֆրանսական դրամատէրերու հսկողութեան տակ կը գտնուէին¹:

Ահա՛ թէ ինչու երբ Թուրքիոյ «ազգային պատերազմի» ոգեշնչող ու նախաձեռնող Մուսթաֆա Քեմալի կողմէ 1919 թուականի Յուլիսի 23-ին բացուեցաւ Թուրքիոյ ազգային պատերազմի ծրագիրը մշակելու նպատակադրուած էրզրումի համաժողովը, Սայքս-Փիքօ համաձայնագրի հեղինակակից նոյն ինքն պարոն Ժորժ Փիքօն—*Georges Picot*, Ֆրանսայի կառավարութեան կողմէ գնաց էրզրում՝ Նոր Թուրքիոյ հետ

1. Ռ. Սահակեան, — Թուրք-Ֆրանսիական Յարաբերութիւնները ..., էջ 58—60:

բանակցելու համար: Մ. Քեմալի կողմէ նախաձեռնուած էրզրումի համաժողովին յաջորդեց Սըվազի համաժողովը Սեպտեմբեր 4-էն 8, 1919 թ., որը հանդէս եկաւ ո՛չ միայն Օսմանյան Կայսրութեան արևելեան վիլայէթներու, այլ՝ ընդհանրապէս Օսմանեան Կայսրութեան ամբողջ հողամասերու, ներառեալ Հայկական Կիլիկիան, անձեռնմխելիութեան և միասնականութեան նշանաբանով: Սվազի համաժողովի անունով, Մ. Քեմալը Սուլթանին ուղղուած հեռագրով կը յայտնէր, թէ Համաժողովի Մանիֆեստով հուշակուած «Ազգային Ուխտ»ի սկզբունքներուն հիման վրայ կը մերժուէր Սուլթանի կառավարութեան կողմէ ընդունուած և ստորագրուած Մուտրոսի զինադադարի պայմանագիրը և «կրկին կը հաստատէր, թէ հասած է պատմական այն պահը, երբ թուրք ժողովուրդը ինք կը որոշի իր բախտը՝ Ազգային պատերազմ սկսելով օտար բռնազրաւողների դէմ»¹:

Այդ «ազգային պատերազմը» յաջողութեամբ յառաջ տանելուն Մ. Քեմալին օգնեց Դաշնակից մեծ պետութիւններու՝ Ֆրանսայի և Մեծն Բրիտանիայի միջև սկսած մրցակցութիւնը և մանաւանդ Խորհրդային Ռուսաստանի կողմէ թուրքիոյ նկատմամբ բարեկամական դիրքաւորումը:

Նախ Մ. Քեմալի համար մեծ նուաճում էր արևելեան ճակատի վրայ, Կովկասի մէջ ձեռք բերած յաղթանակներով Պաթումի ու Կարսի պայմանագրերը և Հայաստանի Հանրապետութեան խորհրդային դառնալը: Բացի այդ, 1921 Մարտ 16-ին, Մոսկուայի մէջ կնքուած Ռուս-թրքական պայմանագրով, Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը կը հրաժարուէր Ձարական Ռուսաստանի և Օսմանեան թուրքիայի միջև կնքուած բոլոր նախկին պայմանագրերու իրաւունքներէն, արտօնութիւններէն, դրամական պահանջներէն:

1. Ռ. Սահակեան, թուրք-ֆրանսիական Յարաբերութիւնները ..., էջ 52:

Աւելին, ընդառաջելով Քեմալական Թուրքիոյ խնդրանքին, Խորհրդային կառավարութիւնը որոշեց Թուրքիային անվերադարձ կերպով յատկացնել, նուիրել տասը միլիոն ոսկի ռուբլի չափով օժանդակութիւն, ինչպէս նաև զէնք ու զինամթերք¹, որոնք առաջին հերթին գործածուեցան Կիլիկիոյ մէջ՝ Հայերուն դէմ: Արդարև, Ֆրանսական Հանրապետութեան կառավարութեան կողմէ Նոր Թուրքիոյ հետ անջատ հաշտութեան պայմանագիր կնքելու բազմաթիւ փորձերու հետևանքով, Ֆրանսան խրախուսած եղաւ Քեմալականները՝ իրենց «ազգային պատերազմ»ը սկսելու Կիլիկիոյ ճակատէն, փաստօրէն՝ Հայերու դէմ Խորհրդային Ռուսաստանէն ստացուած զէնք—ուսուցմամթերքով ու դրամով:

Այս վերջին զգայուն հարցին կ'անդրադառնանք, տողերուս գրողի անձնական փորձառութեան Յուշերու վկայակոչման առիթով, երբ շարադրենք Քիլիսի մէջ 1921—ին քեմալական հրոսակներու «չէթէ»ներու ներխուժման դէմ Հայերու ինքնապաշտպանութեան Մարմնի գործունէութիւնը:

Ֆրանսական կառավարութեան պարտողական քաղաքական, դիւանագիտական գործընթացը Մուսթաֆա Քեմալի Թուրքիոյ նկատմամբ և դատապարտելի, ուխտադրուժ վերաբերմունքը Կիլիկիոյ Հայութեան հանդէպ հարկադրեցին, որ Կիլիկիոյ ծերունագարդ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը անձամբ մեկնի Փարիզ 1920 թ. Մարտ—Ապրիլ ամիսներուն՝ խնդրելու Ֆրանսայի նախագահ Փօլ Տեչանելէն, որ Կիլիկիոյ Հայոց հանդէպ այդ ուխտադրուժ քաղաքականութիւնը փոփոխութեան ենթարկուի²: Սակայն, այդ կարեկցութիւն և օգնութիւն հայցող կաթողիկոսական առաքելութիւնը

1. Ռ. Սահակեան, — Սովետա—Թուրքական Յարաբերութիւնների Պատմութեան Հակադիտական Լուսաբանումը Ժամանակակից Թուրք Պատմագրութեան մէջ, Երևան, 1964, էջ 18:

2. V. V., — Pour Micux Connaitre les Arméniens du Liban et de la Syrie, Beyrouth, 1931, p. 32—33:

չի կարողացաւ ոչ մէկ ձևով փոխել տալ Ֆրանսայի թրքամէտ քաղաքականութիւնը, որը պատճառ դարձաւ Կիլիկիոյ Հայերուն երկրորդ անգամ եղեռնի ենթարկուելուն: Ի դէպ, այդ երկրորդ Եղեռնը իրաւամբ կոչուած է «Կիլիկիոյ Գողգոթան» (*La Passion de la Cilicie*)՝ Կիլիկիոյ մէջ ֆրանսական զօրքերու բարձրաստիճան քաղաքական սպայ՝ Կոմս Փօլ-տիւ-Վեուի-Paul du Véou-ի համանուն արժեքաւոր, ականատեսի վկայութիւններու գրքին մէջ¹:

Արդարև, նախորդ դիւանագիտական անյաջողութիւններէն յետոյ (Լոնտոնի 1921 թ. Կոնֆերանսին և 1921 թ. Մարտ 9-ին Թուրք-Ֆրանսական անջատ համաձայնագիր ևն), որոնք արդիւնք էին Մեծն Բրիտանիայի և Ֆրանսայի միջև մղուող սուր մրցակցութեան, վերջապէս 1921 թուականի Հոկտեմբեր 20-ին Ֆրանսայի ներկայացուցիչ Ֆրանքլին Պուլլոնը (*Franklin Bouillon*) ստորագրեց Անքարայի Ֆրանս-Թուրքական Պայմանագիրը հետևեալ յօդուածներով, որոնք այդ պայմանագիրը փաստօրէն կը դարձնէին հաշտութեան անջատ համաձայնագիր համաշխարհային պատերազմին պարտուած Թուրքիոյ հետ.

Յօդուած 1.— Պատերազմական վիճակը Ֆրանսայի և Թուրքիոյ միջև դադրեցուած է:

Յօդուած 3.— Ներկայ համաձայնագրի ստորագրութենէն երկու ամիս յետոյ՝ թուրքական զօրքերը կը քաշուին 8-րդ յօդուածով նշուած գիծէն հիւսիս, իսկ ֆրանսական զօրքերը՝ հարաւ:

Յօդուած 8.— Երրորդ յօդուածով լիշատակուած գիծը սահմանուած և ճշգրտուած է հետևեալ ձևով.

— Սահմանային գիծը կ'անցնի (Միջերկրական ծովուն վրայ) Փայաս քաղաքէն անմիջապէս հարաւ և կ'ուղղուի դէպի Մէյտան-էքպէզ (երկաթուղային կայարանը և բնակա-

1. *Paul du Véou, - La Passion de la Cilicie 1919-1922, Paris 1954:*

վայրը [Թողնելով Սուրիային): Այնտեղէն կը թեքուի դէպի հարաւ-արեւելք, այն հաշուով, որ Սուրիային կը թողնուի Տէյր-Սովվան բնակավայրը, իսկ Թուրքիային՝ Գարնապին և Քիլիս քաղաքը և կը միանայ երկաթուղագիծին՝ Չոպան-Պէյ կայարանին մօտ ... Այնուհետև գիծը կ'անցնի Պաղտատի երկաթուղիով ... մինչև Տիգրիս գետին միանալը:

Այսպիսով, Քիլիս քաղաքը կը մնար Թուրքիոյ սահմաններէն ներս և յետագային Թուրքիոյ ի նպաստ կատարուած սահմանագծի ուղղումներով՝ անկիւնաւոր ոլորան մը կը ստեղծուէր Քիլիսէն հարաւ ինկած դաշտերուն մէջ, Ազէզէն հիւսիս (Տե՛ս քարտէզը-էջ 231):

Անքարայի 1921 Հոկտեմբեր 20-ին կնքուած համաձայնագրէն առաջ, Կիլիկիոյ մէջ Ֆրանսայի վարած հակա-Հայ, ուխտադրուծ քաղաքականութեան հետեւանքով 1920 թուականի Յունուարէն փետրուար տեղի ունեցած էր Մարաշի աղէտը ... ուր Քեմալի հրոսակներու և զօրքերու բարբարոսութեան զոհ գացած էին հազարաւոր Հայեր՝ ֆրանսական զօրքերու այդ քաղաքէն ինքնակամ, անփառունակ նահանջին հետեւանքով: 1920 Մարտին սկսած Հաճընի Հայոց հերոսական ինքնապաշտպանութիւնը վերջ գտած էր Հոկտեմբերին, նոյն ֆրանսական զօրքերու դաւաճանութեան հետեւանքով ութ հազար Հայերու անխնայ և օրհասական բնաջնջումով:

Սայքս-Փիքո-Պողոս Նուպար համաձայնագրով Կիլիկիոյ Հայերուն խոստացուած էր ինքնավարութիւն Դաշնակիցներու լաղթանակէն յետոյ: Այդ հիման վրայ 1920 Օգոստոս 4-ին, Ատանայի մէջ Կիլիկիոյ Հայոց Ազգային Միութեան նախագահ Միհրան Տամատեանը Կիլիկիոյ ինքնավարութեան Ակտը հռչակեց պաշտօնապէս: Սակայն, նոյն օրն իսկ, խայտառակ ու կոպիտ ձևով այդ Ակտը չեղեալ լացտարարուեցաւ՝ Ֆրանսական Հանրապետութեան Սուրիոյ, Լիբանանի և Կիլիկիոյ մէջ Բարձր Կոմիսար զօրավար Կուրոյի Ատանայի մէջ ներ-



1921 թ. Հիլանեմբեր 20-ի Ցրանս-թրքական պայմանագրի Եզրուած 8-ով
 Թուրք-Աուրիական սահմանադիմը:

կայացուցիչ՝ Գնդապետ Պրէմոնի—Brémond—կողմէ՛:

1920 Ապրիլի 1—ին, Քիլիսի անմիջական հարևան Այնթապի մէջ սկսած էր Հայոց հերոսական ինքնապաշտպանութիւնը քեմալական հրոսակներու և կանոնաւոր զօրքերու յարձակումներուն դէմ: Ինքնապաշտպանութիւնը յաղթականօրէն շարունակուեցաւ մինչև 1921—ի Փետրուար 8—ը, հակառակ ֆրանսական զինուորական իշխանութեանց անփառունակ, անտարբեր ու յարափոփոխ քաղաքականութեան և ուխտադրուժ վերաբերմունքին: Մանկական յիշողութեանս մէջ դեռ վառ մնացած է՝ հօրս բարեկամ և մեր տունը յաճախ տեսնող Հայ Լեզէոնական Գէորգ Չավուշի յայտարարութիւնը այն մասին, որ նոյն օրերուն Քիլիսէն Այնթապ օդնութեան փութացող Հայկական Լեզէոնի կամաւորներու գունդը կէս ճամբէն ետ դարձուած ու կայացօրին մէջ արգելափակուած էր: Այնթապի ինքնապաշտպանութեան կռիւններուն կապակցութեամբ «Յուշամատեան Քիլիսի Հայոց» գրքին մէջ արձանագրուած է.

— «Երբ Այնթապի ինքնապաշտպանութեան կռիւնները սկսան, Քիլիսի մէջ ևս տիրեց յարձակումի ու ջարդի սարսափը: ... Հայ երիտասարդները ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ տեսան: Տուներու և թաղերու մէջ դիրքեր շինեցին, խումբեր կազմեցին, և խմբապետներ նշանակեցին»: Ուրիշ ո՛չ մէկ մանրամասնութիւն չի տրուիր այդ երիտասարդներու ինքնապաշտպանութեան պատրաստութիւններուն վերաբերեալ: Ինչո՞ւ ... Որովհետև, այդ օրերուն «Յուշամատեան»ի հեղինակը, քաղաքական տագնապալի իրադրութեան լաւատեղեակ, զգոյշ ու պահպանողական ազգային գործիչ, արդէն իր ընտանիքը Հալէպ դրկած էր և ինքն ալ մի քանի օր յետոյ Գաթմալի կայարանէն դնացքով Հալէպ մեկնած էր, ինչպէս ինք կը գրէ՛:

1. Շ. Թ. Թորոսյան, — Կիլիկիայի..., էջ 245—252:

2. Յուշամատեան..., էջ 154:

Ահա, թէ ինչու ընթերցողիս բարեհաճ ուշադրութեանը կ'ուզեմ յանձնել այն ինչ ես անձամբ, տեսած, լսած և իմ արդէն 7-8 տարեկան մանուկիս պայծառ լիշողութեանս մէջ պահած եմ այդ 1920-21 թուականներու պատմական տաղ-նապալի օրերէն: Լսած եմ անձամբ իմ անմիջական հարա-գատներէս՝ հօրմէս՝ Աւետիս Աղա Պայրամեան և մօրեղբօրմէս՝ ուսուցիչ Սարգիս Ենիգօմշուեանէն, որոնք երկուքն ալ Քիլիսի Հայոց Ինքնապաշտպանութեան Մարմնի ղեկավարներէն եղած են 1920-1921 թուականներուն:

Սարգիս Ենիգօմշուեանը, որպէս Հալէպի Տար-ուլ-Մաուլլիմ Պետական Վարժապետանոցի շրջանաւարտ և բարձրագոյն կրթութեան տէր, պատերազմի յայտարարու-թեան օրը Օսմանեան բանակ կանչուած է և որպէս սպայ ծառայած է Պաղեստինի ճակատին վրայ: 1917-ին գերի ինկած Դաշնակից յաղթական ուժերուն ձեռքը ու գերի տարուած է Եգիպտոս: Այնուհետև, Սալքս-ֆիքս-Պօղոս Նուպար համաձայ-նագրի տրամադրութեանց հիման վրայ ազատ արձակուած և իր ծնդավայրը՝ Քիլիսի վերադարձած է: Սարգիս Ենիգօմ-շուեանը թողած է հակիրճ յուշագրական նօթեր, այդ օրերուն վերաբերեալ: Ըստ այդ տեղեկութեանց, 1920-21 թուականնե-րուն, Քիլիսի Հայոց Ազգային Միութեան ղեկավարութենէն անկախ ու գաղտնի, նախապատրաստութիւններ տեսնուած են երիտասարդներու կողմէ՝ ինքնապաշտպանութեան Մար-մին մը ստեղծելու համար Քիլիսի մէջ, հաշուի առնելով Մարաշէն, Հաճընէն ու Ատանայէն հասնող տագնապալի լուրերը և ֆրանսական իշխանութիւններու երկդիմի յարա-բերութիւնները թուրքերուն հետ:

Այդ Մարմինը նախաձեռնողները եղած են Օսմանեան բանակի նախկին սպայ Սարգիս Ենիգօմշուեանը-Հնչակեան, Սարգիսի Հալէպի Վարժապետանոցէն դասընկեր՝ Գրիգոր Մարաշլեանը-Դաշնակցական, Քիլիսի յայտնի Պայրամեան տոհմէն երևելի՝ Աւետիս Աղա Պայրամեանը և այդ օրերուն

Քիլիս հաստատուած Ուրֆացի բժիշկ Քէթէնճեանը (Դաշ-
նակցական): Այս ազգայինները, խորհրդակցելով նաև Ազգա-
յին Միութեան իրենց կողմէ վստահելի նկատուած անդամնե-
րուն հետ, կ'անցնին աշխատանքի: Նախ կը կազմակերպեն
քաղաքին հարաւարեւելեան կողմի՝ հայկական Եկեղեցիներու
(Սբ. Յովհաննէս, Բողոքականաց և Հայ Կաթողիկէ) շրջանին
մէջ համախմբուած Հայ ընտանիքներուն երիտասարդները
բաժնելով խումբերու, նշանակելով խմբապետներ: Անոնց
ինքնաբերաբար կու գան միանալու Քիլիսի բուն հայկական՝
«Աշըտ» (Աշոտ) Թաղի տղաքը: Իսկ քաղաքի հիւսիս-արե-
մըտեան և հիւսիսային Աղ-ձուրունլը Թաղի և Ղարա-Տաշ
բլուրներու լանջերու Հայ ընտանիքները արդէն իրենց տու-
ները լքելով՝ եկած, տեղափոխուած էին իրենց ազգական-
ներուն քով՝ Եկեղեցիներու Թաղերուն կողմը: Ես անձամբ
կը յիշեմ, 1921-ի սկիզբը, հեռանալով մեր «Պայքամեան-
ներու» կամ «Լեռնցոց Թաղի» (Տաղլը Մահելլէսի) մեր
հօրենական տունէն գացինք 1921-ի գարնան մեր ազգական
Յովհաննէս Պերթիկեանենց տունը, որ կը գտնուէր Ղարա-
Տաշ բլուրներու լանջին: Սակայն, որոշ ժամանակ յետոյ,
երբ դիշեր մը Քեմալի «չէթէ»ները բլուրի բարձունքէն իջան
մեր բակը և երկրորդ յարկի սենեակին դրան ետին ապաս-
տանած Մարիամ նորահարսը սպաննուեցաւ այդ դրան բանա-
լիին ծակէն արձակուած «չէթէ»ի գնդակէն, յաջորդ օրերուն
տեղափոխուեցանք հօրաքրոջս՝ Լուսիա Վարպետեանին տու-
նը, Բողոքականաց եկեղեցիին քովերը: Հօրաքրոջս ամուսինը՝
կարուճ Վարպետեան, բողոքական համայնքէն, արդէն ընտա-
նիքը առած ու Հալէպ գացած էր:

Ինքնապաշտպանութեան Մարմինը եկեղեցիներու շրջա-
կայ Թաղերուն մէջ համախմբուած ընտանիքներուն երիտա-
սարդները խումբերու բաժնած էր ըստ Թաղերու, փողոց-
ներու: Ամէն մէկ խումբին խմբապետ մը նշանակուած էր՝
ամենախիզախ և կազմակերպուած երիտասարդներէն: Տար-

բեր փողոցներու մուտքերը փակուած էին զանազան տրամադրելի նիւթերով՝ գերաններ, աւելորդ կահոյք, չորացած ծառեր, խոշոր քարեր ևն, որոնցմով կազմուած էին պատնէշներ: Յարմարագոյն անկիւնները «դիրքեր» շինուեցան, որոնց վրայ գիշեր-ցերեկ զինուած խմբապետներ պահակ կանգնեցան, այդպիսի «դիրք» մը շինուած էր կեդրոնական շուկայէն «պազարէն» դէպի Սբ. Յովհաննէս եկեղեցին եկող ճամբուն կէսին: Իրար կպած հացկական տուներուն բակերուն միջև անցքեր բացուեցան՝ ինքնապաշտպանութեան Մարմնի անդամներու և խմբապետներու աւելի ապահով ու արագ երթևեկութեան նպատակով:

Թէև կազմակերպուած յարձակումներ տեղի չունեցան թուրքերուն կողմէ, սակայն դուրսէն եկած քեմալական «չէթէ»ներու ներխուժում, ներթափանցում հացկական դիրքերէն, պատնէշներէն ներս յաճախ կը փորձուէր, կը կատարուէր: Այդպիսի դէպքերէն մէկուն մասին կը յիշեմ ինքնապաշտպանութեան Մարմնի ղեկավարներէն՝ հօրս Աւետիս Աղա Պայրամեանի պատմածը:

Գիշեր էր, արդէն տեղափոխուած էինք Բողոքականաց եկեղեցիին քովերը գտնուող Լուսիս (Վարպետեան) հօրաքրօջս տունը: Երեխաներս կէսքուն, կէսարթուն էինք, երբ հայրս տանիքին վրայ բացուող փոքր լուսամուտէն ներս ցատկելով՝ փափսուքով մօրս հետ խօսելու սկսաւ (թրքերէն)։

– Այսօր մեր թաղերը մտած երկու թուրք չէթէ գերի բռնեցինք ... Երեսնուն նայիս՝ կտոր մը չոր հաց տալդ կուգայ ... Մեր տղոց ըսի–«Խուզարկեցէք այս լակոտները ... » և ին՞չ ... Անոնց գրպաններէն ռուսական «ալթուն» ոսկիներ դուրս թափուեցան և ուսերնուն եղած հրացաններն ալ ռուսական «Մօսին» էին:

Այս զգայացունց փաստը արձանագրելով, անհրաժեշտ կը համարեմ փոքր շեղում մը կատարել 1919–1921 թուականներուն Քիլիսի Հայոց կեանքին ու իրավիճակին նուիրուած

այս գլուխի նիւթէն և կարևոր ներդրում մը կատարել ընդհանրապէս Կիլիկիոյ Հայութեան 1919-1921 թուականներու աղետալի պատմութեան մէջ՝ հրապարակելով ու հրատարակելով Սփիւռքի Հայկական կեանքէն ներս անհաւատալի ըլլալու չափ քիչ ծանօթ պատմական հետեւեալ փաստը:

1921 թուականին Խորհրդային Ռուսաստանի կառավարութեան կողմէ Քեմալական թուրքիոյ նուիրուած 10 միլիոն ոսկի ռուբլին և մեծաքանակ զէնքն ու զինամթերքը թող տուին, որ Քեմալը իր «ազգային պատերազմը» սկսի Կիլիկիոյ ճակատէն՝ բնաջնջելով երկրի տէր Հայերը Մարաշի, Հաճընի, Զէյթունի, Ատանայի մէջ և այլուր:

Խորհրդահայ պատմաբան Ռուբէն Գ. Սահակեանի 1964 թուին Երևան լոյս տեսած՝ «Սովետա-թուրքական Յարաբերութիւնների Պատմութեան Հակազիտական Լուսաբանումը Ժամանակակից Թուրք Պատմագրութեան Մէջ» գրքի (Երևան, 1964) էջ 18, բառացի գրուած է.

«1921 թ. Մարտի 16-ին Մոսկուայում ստորագրուած պայմանագրով ... Սովետական կառավարութիւնը համաձայնունեց թուրքիային *անվերադարձ* կերպով յատկացնել տաս միլիոն ոսկի ռուբլու չափով ֆինանսական օգնութիւն, ինչպէս նաև՝ զէնք— 33 275 հրացան (Մօսին), 57 986 000 փամփուշտ, 327 զնդացի, 54 թնդանօթ, 129 479 արկ, 1 500 սուր, 20 000 հակակազ և մեծ քանակութեամբ ռազմական այլ սպառազինութիւն՝ այդ թվում ծովային երկու կործանիչ»: Այս տեղեկութիւնները քաղուած են «Խորհրդային միութեան Արտաքին Քաղաքականութեան Փաստաթուղթերը» Արխիւլային Ժողովածուէն, հատոր երկու, էջ 675:

Ռուբէն Սահակեանի հետ եղած ենք գիտական աշխատակից—գործընկերներ 1962-էն մինչև 1972 թուականը Խորհրդային Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արևելագիտութեան ինստիտուտի կազմի մէջ: 1962 թուականին, օր մը՝ երբ որպէս Քիլիկացի-Կիլիկեցի ինձմէ տեղեկութիւններ

կը խնդրէր 1919–1921 թուականներուն Կիլիկիոյ քաղաքական անձուղարձերուն մասին, ի միջի ալլոց Ռ. Սահակեանին պատմեցի հօրս կողմէ կատարուած վերոնշեալ յայտարարութիւնը՝ Քիլիս հասած քեմալական չէթէ-ներու մասին և անոնց գրպաններէն հանուած ռուսական ոսկի ռուբլիներու ու ուսերէն վար առնուած ռուսական «Մօսին» հրացաններու մասին ...: Ան թերահաւատութեամբ ընդունեց ըսածս ... Սակայն, երկու տարի յետոյ՝ 1964–ին երբ լոյս տեսաւ իր վերջիշեալ «Սովետա–Թուրքական Յարաբերութիւնների ...» գիրքը, Ռ. Սահակեանը զիս շնորհաւորեց և յայտնեց թէ իր գրքին մէջ հրապարակուած են իմ տուած տեղեկութիւնները՝ պաշտօնապէս, վաւերագրերով հաստատելով հօրս՝ Աւետիս Աղա Պայրամեանի 1921–ին կատարած յայտարարութիւնը:

Այժմ վերադառնանք Քիլիսի Հայոց Ինքնապաշտպանութեան Մարմնի գործունէութեանը: Շնորհիւ այդ Մարմնի՝ կազմ պատրաստ ըլլալուն և որևէ արտաքին չարձակման միջամտութեան առաջքն առնելու կարողունակութեան և աջալուրջ հսկողութեան, Քիլիսի մէջ քեմալական հրոսակներու կամ քաղաքի մոլեռանդ թուրքերու կողմէ հրահրուած որևէ լուրջ խառնակութիւն, ընդհարում տեղի չունեցաւ, բացի ստորև նկարագրուելիք զգայացունց դէպքէն:


1921 թուականի ամառուայ վերջերն էր: Եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող Արուսեակ վարժարանի մեր արդէն փակուած Մանկապարտէզին առջև կը թափառէինք ես ու ինձմէ երեք տարով մեծ Յովսէփ եղբայրս: Խճողում կար եկեղեցւոյ շուրջ և մարդիկ՝ Քիլիսցի և ոչ–Քիլիսցի «գաղթականներ» կ'երթևեկէին այս ու այն կողմ: Մանկապարտէզի առաջին չարկի սենեակի երկաթեայ ճաղերով պատուհանը բաց էր: Եղբօրս ծնկներուն վրայ բարձրանալով ներս նայեցայ ... և ի՛նչ ... Քանի մը «գաղթականներ» արիւնլուայ, անշարժ գետնին փռուած էին ... «Մեռած են, սպաննուած են», ըսին: ... Մահուան հետ դէմ առ դէմ, առաջին հանդիպումս էր

մանուկ հասակիս: Յետոյ, մեծերէն իմացանք, լսեցինք եղելութեան մանրամասնութիւնը:

Զէյթունէն դէպի Քիլիս ճամբայ ելած խումբ մը Զէյթունցիներ, Թուրք-քեմալական չէթէներու հետ բազմիցս հանդիպում ունենալով՝ կռուելով, զոհեր տալով կը հասնին Քիլիսի մօտերը, ուր դարձեալ չէթէներու սարքած ծուղակի մէջ կ'իյնան, կը կռուին, զոհեր կու տան և վերջապէս փախուստի կը մատնեն չէթէները: Դէպքին լուրը կը հասնի Քիլիս: Անմիջապէս ինքնապաշտպանութեան Մարմնին կողմէ զինեալ երիտասարդներու 30 հոգինոց խումբ մը կը փութայ Քիլիսէն կէս ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Պայթագ կոչուած ջաղացքին շրջանը: Մեր զինեալները կը հալածեն փախչող չէթէներուն խումբը և ապահովութեամբ կ'առաջնորդէն Զէյթունցիներու խումբը դէպի Քիլիսի Սբ. Յովհաննէս եկեղեցին, իրենց հետ բերելով վերջին զոհերուն մարմինները, որ մենք՝ եղբօրս հետ տեսած էինք մեր Մանկապարտէզի ներքեի յարկի սենեակներուն մէջ, գետինը փռուած:

Հերոս Զէյթունի Ազատուած Բեկորները (տե՛ս խմբանրկարը 239 էջ, նկարուած 1921 Սեպտեմբեր 1-ին, եկեղեցւոյ գլխաւոր մուտքին առջև) Քիլիսի Ազգային Միութեան հոգատարութեան խնամքին կ'արժանանան մօտ երեք շաբաթ, վիրաւորները կը խնամուին: Զոհուածները յաջորդ օրերուն, սաւաններու մէջ փաթթուած, բաց սալակներու վրայ դրուած կը տարուին Քիլիսի Հայոց Ազգային գերեզմանատունը, Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ արևելեան կողմը՝ նախկին հայաբնակ, այդ օրերուն արդէն ավերակներու վերածուած իլէզլի աւանը չհասած և կը թաղուին եղբայրական փոսերու մէջ: «Ես ալ ներկայ էի անոնց թաղման, կ'ըսէր Յովսէփ եղբայրս, մի քանի իմ տարիքի տղաներ մէջն էինք յուղարկաւորութեան թափօրին, որպէս «մոմ բռնող», շապիկներ հագած»:

Օրեր չստոյ, Ազգային Միութեան կարգադրութեամբ և ինքնապաշտպանութեան Մարմնի ջանքերով՝ «Հերոս Զէյ-



Հերոս Ջեյթուհի Ազատուած Բեկորներ Գիլիսի Սբ. Յովհաննէս
Եկեղեցւոյ Բակին Ձեջ 1 Սեպտեմբեր, 1921-ին:

Թունի ազատուած» և վերապրող բեկորները ձիակառքերով կը փոխադրուին Գաթմայի կայարանը՝ Ֆրանսական զօրքերու և Հայ Լեզէոնականներու պաշտպանութեան տակ, ուրկէ կը մեկնին Հայէպ:

Ստորև, հակիրճ նկարագրականը Ձէյթունցի քաջերու այդ խումբին ողբասականին՝ մինչև Քիլիս հասնիլը, պատմուած՝ այդ Ձէյթունցիներու խումբէն Գէորգ Քաչարեանի կողմէ և գրի առնուած մեր «Յուշամատեան»ի հեղինակակից Տէր Խորէն Աւագ քահանայ Ներսէսեանի կողմէ:

– 1921 Յունիսի սկիզբը Ձէյթունցիներու մօտ 300 հոգինոց (86 ընտանիք) խումբ մը ճամբայ կ'ելլէ դէպի Քիլիս: Խումբին մէջ կային 100–է աւելի զինուած երիտասարդներ: Ճամբու ընթացքին խումբը բազմիցս ճակատամներ կ'ունենայ թուրք–քեմալական չէթէներուն հետ: Միշտ կռուելով ու զոհեր տալով, երեք ամիսէն, մօտաւորապէս 200 զոհեր տալէ յետոյ, հարիւր հոգինոց մնացած խումբը, Օգոստոսի վերջերը կը հասնի Քիլիսէն կէս ժամ մնացած՝ «Պայթազ» կոչուած ջաղացքին մօտ: Այստեղ կը հանդիպին 12 հոգինոց թուրքերու խումբի մը, որոնք որպէս ճամբորդ կը ձևանան ու կը թելադրեն, որ Քիլիս չերթան: Անոնց հեռանալէն ետք, անոնց կողմէն ղրկուած երկու թուրք պատանիներ խօսքի կը բռնեն Ձէյթունցիներու խումբը՝ անոնց յառաջ շարժիլը ուշացնելու նպատակով: Մինչ այդ, մօտակայ բարձունքի մը վրայէն լսելի կ'ըլլայ հայաբարբառ ձայն մը՝

– «Հայ գաղթականներ, մենք Հայ ենք, Ֆրանսացիներու կողմէն ղրկուած ենք ձեզ պաշտպանելու համար, մի՛ վախնաք, եկէ՛ք մեր քով»:

Եկած հրաւերին ճշտութիւնը ստուգելու համար Գրիգոր Միլիկեան անունով երիտասարդ մը կը ղրկուի հոն: Ան՝ քիչ վերջ վերադառնալով, խումբէն մէկուն մաքուր հայերէն խօսիլը և հայու նմանած ըլլալը կը յայտնէ: Ապա, խմբապետ Յովհաննէս էֆ. Սիմոնեանը կը մեկնի անձնապէս աւելի որոշ

գաղափար մը կազմելու համար: Երբ կը հասնի այդ խումբին մօտ, զէնքերու համազարկ և իրարանցում տեղի կ'ունենայ: Հայ գաղթականները կը հասկնան, որ անոնք չէթէներ եղած են, և խմբապետը սպաննուեցաւ ու իրենք ալ ծուղակի մէջ ինկած և վտանգի մէջ են: Ուստի փութով կը դիրքաւորուին պաշտպանուելու համար խաբեբայ չէթէներէն: Տասնըմէկ հոգինոց խումբ մը երիտասարդներ բարձունքի մը կըտին դիրքաւորուելու պահուն, գնդակի տեղատարափի բռնուելով, կը զոհուին բոլորն ալ: Խումբին մնացեալ անդամները կէս ժամ տևող կռիւէ մը յետոյ, փախուստի կը մատնեն չէթէները: Երկու ժամ ետք լուրը կը հասնի Քիլիս, որուն վրայ Քիլիսէն 30 զինուած երիտասարդներ կը հասնին տեղուոյն վրայ և Զէյթունցի գաղթականները ապահով կը հասցնեն Քիլիսի Սբ. Յովհաննէս եկեղեցին¹:

Ինչպէս արդէն լիշատակեցինք, Զէյթունցի գաղթականներու այս խումբը, 17 օր Քիլիս մնալէն յետոյ կը փոխադրուի Քիլիսի մօտիկ Գաթմայի երկաթգծի կայարանը և այնտեղէն գնացքով կը հասնի Հալէպ:

Պարզ է, որ քաղաքական այս տազնապալի իրադրութեան և մանաւանդ՝ 1921 թուականի Հոկտեմբեր 20-էն յետոյ, երբ Անքարայի մէջ ստորագրուեցաւ Ֆրանս-Թուրքական պայմանագիրը, որուն հետևանքով Ֆրանսսան կը լքէր Կիլիկիոյ Հայերը իրենց բախտին՝ քեմալական ջարդարարներու ձեռքը, Քիլիսի Հայոց մեծամասնութիւնը արդէն սկսած էր հեռանալ իր բնօրրանէն: Ֆրանս-Թուրքական վերոյիշեալ պայմանագրի 6-րդ Յօդուածով «փոքրամասնութիւններու իրաւունքները կ'երաշխաւորուին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի կառավարութեան կողմէ» յայտարարութիւնը սնամէջ և իրաւական արժէքէ զուրկ էր:

Մինչև 1921 թ. վերջին օրերը, շատ քիչ թիւով Հայեր

1. Յուշամատեն..., էջ 179-181:

մնացած էին Քիլիսի մէջ: Կը յիշեմ՝ մեր ընտանիքը ևս, երեխաներս, մայրս և մօտիկ ազգական երկու կանայք Քիլիսէն մեկնեցանք 1921 թ. Դեկտեմբերի վերջին օրը, անցնելով քաղաքէն դուրս քեմալական իրարջաջորդ երկու սահմանային ստուգման կէտերէ: Հասկնալի է, որ հայրս դեռ մնացեր էր Քիլիսի մէջ, որպէս ինքնապաշտպանութեան Մարմնի ղեկավարներէն մէկը: Ան մեզի միացաւ ամիսներ յետոյ՝ Հալէպ:

Քիլիսի Հայոց Սբ. Յովհաննէս եկեղեցւոյ Տոմարը, (ուր արձանագրուած են Ծնունդ—Մկրտութիւնները, Ամուսնութիւնները, Մահերը Քիլիսի Հայերուն), այժմ կը գտնուի Հալէպի Առաջնորդարանի Արխիւներուն մէջ: 1990 թուականին Հալէպ այցելութեանս առթիւ յատկապէս գացի ուսումնասիրելու մեր ծննդավայրի Տոմարը, որպէս պատմական վաւերացութեամբ և աղբիւր Քիլիսի Հայոց դարաւոր Պատմութեան համար:

Այդ Տոմարի մէջ արձանագրուած է, որ 1922 թուականի առաջին երկու երեք ամիսներու ընթացքին Սբ. Յովհաննէս եկեղեցիին մէջ կատարուած են մէկ—երկու տասնեակ մկրտութիւններ ... որմէ յետոյ յաւիտեան փակուած է Կիլիզա—Քիլիսի Հայոց Պատմութեան էջը:

Եւ որպէսզի ո՛չ մէկ հետք չմնայ Հայերու դարաւոր գոյութենէն ու ներկայութենէն այդ քաղաքին մէջ, 1925 թուականին քեմալական թուրք իշխանութիւնները ուժանակով (*dynameite*—ով) պայթեցնելով քանդած, ոչնչացուցած են Քիլիսի 1873—ին օծուած Սուրբ Յովհաննէս Հոյակերտ տաճարը, որը որպէս Հայոց Ոգիի ու Հաւատքի անսասան ամրոց՝ կը տիրէր Քիլիսի ու շրջակայքի վրայ:

Կրկնակի Յեղասպանութենէն յետոյ՝ մշակութային Յեղասպանութիւն, որ կը շարունակուի մինչև օրս:

* * *

SUMMARY

KILIZA (Ciliza)-ARMENIAN KILIS

A HISTORICAL SURVEY

(Low Middle Ages-1922 AD)

KILIS (KILIZA-CILIZA) a city in Lower Cilicia, bordering Syria, 60 km north of Aleppo, inhabited by Armenians since the first centuries of Christianity until 1922 AD, when the survivors of the 1915-1918 Genocide left forever their birthplace, following the signing of the French-Turkish Ankara Agreement of Oct. 20, 1921.

This land of Cilicia has always been inhabited mainly by Greeks, Assyrians, Armenians, and Hebrews, as attested by Assyrian, Greek, Latin and Armenian historical sources. That is why a study of the historical past of the Kilis Armenians has to begin with a brief and concise overview of the political evolution of the land called KILIKIA by the Greeks and Armenians and Cilicia by the Romans.

Situated along the northeastern shores of the Mediterranean sea, protected by the Taurus mountain range in the north, extending until both slopes of the Amanus mountains, Cilicia's geographical coordinates are:

36⁰-38⁰ northern latitude, 33⁰-38⁰ eastern longitude.

It was called Hilakku by the Assyrian-Babylonians and had an independent kingdom called "Kizzuwatna" (1550-1350 BC), engulfed shortly by the Hittite empire, subsequently ruled by Assyrians and Persians, it was finally occupied by Alexander of Macedonia at the end of 4th century BC. Tigranes the Great, King of Armenia occupied the southern part of Cilicia where Kilis was situated and incorporated it in the Armenian Kingdom, with the northern part of Syria, Pompey overruled Cilicia and made it a Roman Province. This situation lasted until the 4th century AD when the Roman Empire was split in two parts and Cilicia fell in the Eastern Roman Empire,

Byzantium.

The advent of Christianity put Cilicia on prominence. Apostle Paul was a Cilician, born in Tarse (Tarsus), he began all his three journeys of the propagation of the new faith, from Antioch, passing through the lands where Kilis and Aintab are, and founding “assemblies of people” neophytes and proselytes” which were called “EKLISIA “ in Greek and “KNISHTO-KNISHET” in Aramaean, both meaning-CHURCH. According to a Roman chronicler, when St. John Chrysostom was exiled in Cilicia (405 AD) he met there a multitude of Armenians who had princes, bishops, churches and monasteries of their own.

When the Arab invaders entered Northern Syria and Lower Cilicia, they met a furious resistance by the Armenian population. The Arab Emir Sayf-ed-Dovleh occupied Aleppo in 963 AD. Soon after the Byzantine general Bardas Phocas, an Armenian, on his way to liberate Aleppo from the Arabs, occupied the town of **Kilis in 985 AD**, according to the Syrian chronicler Yahia, bishop of Antioch. As a result of the Arab-Byzantium wars during the 8th to 10-th centuries, many Armenians were resettled in Cilicia and the Catholicos Khachik Arsharoony (973-992 AD) created new dioceses in Cilicia.

The Seljuk-Turk invasions of eastern Armenia caused a new wave of Armenians to resettle in Cilicia. In later years, the governor of Cilicia was the Armenian prince Ablgharib-Artsroony. Another Armenian prince, Philardos Varazhnoony occupied Antioch in 1078 AD and soon after he annexed to his fief Azaz, Kilis and Gooris.

The era of the Armenian Great Principality of Cilicia began in 1080 AD, when the Armenian prince Rupène secured its independence from Byzantium, after a victorious uprising against Vasil II. In 1198 AD, the prince Leon, of Rupenian lineage was crowned as “King of All Armenians and the Province of Cilicians” on the Armenian Christmas day, in St. Sophia Armenian cathedral of Tarse (Tarsus).

During the following decades, the Armenian Kingdom of Cilicia had to stand up against the neighboring Crusaders’ principalities, and counties, non-friendly relations. The Mongol-Tatar tribes, coming from the steppes of Central Asia, began their incursions in

Asia Minor and Cilicia about the end of the 11-th century.

Thanks to assiduous and subtle diplomatic endeavors, the Armenian Kingdom of Cilicia succeeded to secure the friendship, and soon after, the alliance of the main Mongol tribes. Between 1256 and 1262 AD the Armenian Army neutralized the infiltration of the Seljuk-Turkmen sultanate of Konia from the north and cleared from all enemies the eastern regions of Lower Cilicia, with Marash, Aintab and Kilis, subsequently advancing in northern Syria as far as Aleppo, which entered under the administration of the Armenian Kingdom.

The Arab Ayyoubian sultanate of Egypt was actually ruled by the Mameluks (who were the principal military forces battling against the Christian Crusaders) invaded the Armenian (Christian) Kingdom of Cilicia. The King Hethoom had to sign a peace agreement with the Egyptians in 1285, because the Mongol allies failed to show any assistance. Enter Timur Lenk (Tamerlane) from central Asia. His hordes infiltrate Cilicia, a historic battle takes place in 1287 AD near Kilis, around the fortified city of Azaz, between Timur's & and Egypt's Melik Zaher Sultan's forces. Azaz is destroyed to its foundations and its inhabitants, Armenians and others, flee to the nearby Kilis and resettle there.

When Timur Lenk takes his hordes to the north, the Egyptians once more invade Lower Cilicia, from Kilis and Aintab, as far as the seaport of Alexandretta. The Egyptians met the heroic resistance of the Armenian forces, were defeated at the battle of the port city of Ayas and asked for a peace agreement with king Hethoom.

Wishing to end this ever-changing and insecure political situation and in the hope of getting assistance from Christian Europe, a "National Assembly" was convened in the capital city of Sis, in 1307 AD. The assembly decided to say yes to the Pope's invitation to join the Roman Catholic Church. But the people in large rejected this decision made under the pressure of the Latinists' leadership in the Royal Palace.

An internal struggle began between the two sides. Besides, the news of that decision strained the relations of the Armenian Kingdom with its Mahometan neighboring sultanates and emirates. They

interpreted that decision as an invitation to the Crusaders to once more invade the Holy Lands. A second National Assembly was convened in 1316, this time in Adana, under the pressure of the Pope himself.

The decision to join the Roman Catholic Church resulted in the deepening of the disunion in the Nation and the dampening of the popular will of resistance to the enemies.

The Egyptians invaded Cilicia in 1318 and in 1320. New negotiations with the Europeans incited the neighboring Ayyoubian Emirate of Aleppo and Egyptian sultanate of Cairo to launch a full-fledged attack on the Armenian kingdom of Cilicia. An army of 12,000 soldiers from Cairo joined the 15000 troops from Aleppo, encircled the capital city of Sis in January 1375 AD. After a heroic resistance to the enemy during a three months siege, the capital city's garrison surrendered on April 1375 AD, obtaining a safeguard for the King Leon VI, who was taken prisoner to Cairo.

This was the dramatic end to the three centuries of the Armenian Kingdom of Cilicia and the fall of the Armenian statehood.

After the fall of Sis, the grandson of King Constantine, the general Constantine struggled for self-rule against the foreign invaders until 1424. The See of the Armenian Catholicossate was transferred to Echmiadzin in 1441. But self-ruling mountainous enclaves like Zeythoon, Hajin persisted until the mid-nineteenth century.

The Ottoman Turks subdued the Turkmen and Seljuk Sultanates all around Cilicia, took the Byzantium capital Constantinople, in 1453 AD and finally occupied Cilicia in 1487 AD. But for a long period of time the "De facto" power was in the hands of local warlords who waged an autocratic personal rule. A warlord called "Djampolad" ruled Kilis district. He had been a Frank chevalier named Jean-Paul, converted to Islam for the circumstance.

In 1506 AD, the Ottoman Sultan Yavooz Selim defeated the Aleppo emirate's forces and the whole region including Kilis passed under the Ottoman Turkish administration. During the following decades the Empire was in an upheaval caused by the uprising of outlaws and fanatics, like the "Jalalis".

In 1820 the viceroy of Egypt Mohammed Ali's forces marched victoriously beyond Cilicia until Konia, the heart of Turkey. His son and successor, Ibrahim Pasha set garrison in Kilis in 1832 and ruled ferociously until 1840. After the withdrawal of Ibrahim Pasha's forces from Cilicia and northern Syria the Sultan gradually reestablished the Ottoman power in the region.

With the new administrative divisions, Cilicia was divided into two vilayets (provinces)-Adana and Aleppo vilayets. Marash, Aintab and Kilis "kaza"s (counties) became part of the Aleppo vilayet. Kilis remained a kaza of the Aleppo vilayat (Syria) until the October 1921 AD. French-Turkish Agreement, when it was left within the new Kemalist Turkey's frontiers.

This ends the brief overview of the political evolution of the land called Kilikia, Cilicia.

KILIS (CILIZA) KILISA-KILIS

These successive forms illustrate the linguistic phonetically evolution of the original Aramaean (Assyrian) name KNISHTO-KNISHET, which literally means assembly, gathering, congregation of people, believers, as the English word church is meant to be.

In fact, according to the annals of the Scriptures, the first followers of Jesus-Christ, the first Christians, assembled in congregation in the metropolis of the Holy Lands, Antioch, and called their gathering, their "assembly of believers" of the new faith of Jesus Christ EKLESIA, in Greek and KNISHTO-KNISHET, in Aramaean.

It is a historical fact, that the everyday spoken language in the time of Jesus Christ was the Aramaean. As a matter of fact, Aramaean is spoken even nowadays in the mountainous Syrian vilage of Ma'aloulah, near Damascus.

The Arabic word for church is KNISSET; KNISEH. The Hebrew word

KENESET derives from the same Semitic Aramaean word KNISHTO-KNISHET

The Armenian word YEGEGHETSY is an evolution of the Greek word EKLESIA. As for the English word “church” it derives from the Gothic KYRIKO (cf. German KIRCHE).

As a conclusion, we must say that the homonym Kiliza-CILIZA-KILIS has its historical etymology in KNISHTO-KNISET-KLISET, which became KLISA-KILIS.

The Saint John- (Sourp-Hovhannes)
Medieval Monastery and The New Church
Built in 1856-73AD.)

According to Assyrian, Greek and Latin trustworthy historical sources Armenian monasteries and convents sprang up in Northern Syria and Lower Cilicia beginning 5-th century, given that Assyrians, Armenians, Greeks, Hebrews always populated that part of the Near East. One of those monasteries was the Saint John (Sourp Hovhannes) Monastery of Kiliza-Ciliza-Kilis.

In fact, it was a monasterial center. It had a spacious tile covered sanctuary, 3-4 steps dug in excavated earth, surrounded by monks' dens, a learning center and rooms where parish priests and celibate monks-“Vartabed's” worked, taught, copied holy books and illuminated manuscripts. Every morning and evening people from all around came to worship in the church sanctuary.

Young students and future priests learned, studied classic Armenian “Krapar” in the learning center and were trained to paint colophons and illustrate parchment manuscripts.

In the scriptural center scribes were busy with copying liturgical books and learning Armenian Church liturgy. Saint John's

monasterial center trained parish priests and celibate religious scholars who served in Kilis and the neighboring villages, towns and even in Sis, the see of Cilician Armenian Catholicosate.

As a matter of fact Hovhannes III Kilis-tsy Catholicos of the Great House of Cilicia during the years 1525 to 1539 AD and Sahag I Meykhanajian, Kilis-tsy, Catholicos of the Great House of Cilicia during the years 1674-1686 AD, were two of the prominent monks of the St. John's monastery of Kiliza-Kilis.

Because of the worsening social and political situation of the Armenian communities in the Ottoman Empire during and after the 16-th and 17-th centuries (persecutions of Armenians, unlawfulness etc.) the activities of the monasterial center declined gradually and the sanctuary served only as a worshipping place.

In the mid 19th century, with the re-awakening of the Armenian ethnic self-consciousness all around the Ottoman Empire, as well as the cultural-educational renaissance, Kilis Armenians decided to build a new, modern sanctuary, a cathedral on the same grounds of the monastery St. John's.

The building works began in 1856 with the factual, material participation of all the Kilis-tsy Armenians and lasted about 17 years, until 1873, when the Prelate of the Aleppo diocese, Bishop Megrdoch Vehabedian consecrated the monumental, high-rise modern building.

The building with a huge dome and two bell-towers was designed by a Bolse-tsy architect in Byzantine style and not according to the traditional Armenian Church building art.

(See the photo of the cathedral on the cover of the book).

The Educational -Cultural Life of Kilis Armenians

Beginning with the first decades of the nineteenth century, the Ottoman government undertook the necessary measures to imple-

ment a modern state educational system based on the European model. Educators and specialists were invited from Western Europe to create state schools.

The Sultan recognized the Armenian Patriarchate in Constantinople as a representative body for all the Armenian communities of the Ottoman Empire. The Sultan informed the Armenian Patriarchate that authorization was granted to the Armenian Christian communities of the Empire to open community ethnic Armenian schools near Armenian churches and monasteries. Consequently, the Patriarchate informed accordingly, in 1860 all the Armenian communities throughout Turkey and Cilicia.

The Prelate of the Aleppo diocese, Bishop M. Vehabedian took the initiative to implement that decision in Kilis. On September 1st, 1884, the "Levonian Cultural Association" was created. Soon becoming a 500-member national-community organization it founded the "National Levonian-School", which was followed by the "Zabelian" girls' school, which was sponsored by the "Zabelian Ladies Association", a 250-member guild.

One after another, cultural associations bearing names such as Haigazian, Aroussiak and Loussasirats, sponsored and opened schools bearing the names of the sponsor committees. Even a school for young, working adults was opened. The "Loussasirats" national school, had a student corps numbering 1500, 1000 boys, 500 girls in 1903-1904. The principal was a young graduate of the Central Turkey (Aintab) American College. Even instruction in the English language was included in the curriculum.

Bishop Vehabedian, during his pastoral visits to the Kilis Armenians Congregation, had introduced the system of public lectures called "Auditions" (Lussaran), followed by current events news information and an "artistic" part (music, declamations etc.)

That system, having acquired an all-around popularity, was continued by the school pedagogical staff every Sunday afternoon in the school hall. Those were the activities in which the St. John's Armenian Apostolic Church parishioners and community were involved.

As for the Armenian Evangelic (Protestant) community of

Kilis, they had their stone-built modern church, a prosperous and socially active congregation and a high school for boys and girls, with college graduate teachers. Even students from the Armenian Catholic and Greek Orthodox communities attended the renowned Armenian Protestant School.

The Armenian Catholic community had an elementary school directed by Kilis-born celibate priests (Vartabeds) or teachers and religious leaders from Aleppo or the Armenian Catholic monastery of Bzommar (Lebanon).

Here are the names of the outstanding ecclesiastical, social- educational and cultural figures, which have forever left their imprint upon the life of Kilis Armenians:

- 1- Hovhannes III, Kilis-tsy, Catholicos of the Great House of Cilicia, from 1525 to 1539.
- 2- Sahag I, Meykhanejian, Kilis-tsy, Catholicos of the Great House of Cilicia, from 1674 to 1689.
- 3- Vartan Vartabed Aykeg-tsy, Maratha-tsy (district of Kilis), outstanding Armenian scholar, religious leader, theologian, writer, preacher, moralist, 13-th-14-th centuries.
- 4- Bishop Megerdich Vehabedian, Aleppo Diocese Prelate, initiator of Kilis Armenians', educational, cultural renaissance.
- 5- Father Vahan Tovmasian, Archipriest, educator, popular national leader and beloved parish priests.
- 6- Father Sahag Momjian, progressive educator, dedicated popular priest and servant.
- 7- Hampartsoum Berberian, educator, dedicated national leader, lawyer and author of " **Hooshamadyan**" (Kilis Armenians' Ethno-Compatriotic Remembrance Book).
- 9- Sumpat Ghazelian, teacher, progressive educator, national-social outstanding figure.

The Leading Role of the Armenians In the City of Kilis

“The Armenians were the main artery pumping blood to the life of Kilis... All the artisans of the city were Armenians”, is stated in the Kilis Armenians “Hooshamadyan”.

In fact, the Surgeon general of the city, as well as the official pharmacist and all the other physicians, pharmacists and dentists were all Armenians, even the only midwife of the town was a medical college graduate Armenian woman. Not a single Turk in the health care area.

In the sector of arts and crafts, all the artisans of the city—blacksmiths, carpenters, builders, iron, copper, zinc specialists, jewelers, goldsmiths, tailors, weavers etc. were all Armenians, not a single Turk in that sector either.

The town had four mechanically operated flour-mills and an Armenian, Hovhannes Daghljan, the renowned “Makinist” Hovhannes” was the only specialist to operate them, so that the Turks kept him in Kilis during the years of the Genocide, 1915-1918, because they couldn’t do otherwise.

The olive oil pressing mills, as well as the olive oil soap making shops were kept and operated by Armenians, as well as wine making and aniseed spirits liquors making were the specialty of Armenians only, as the Mahometan Turks were not permitted to do those crafts, but liked to drink wine and “raki” ...in secret.

Political and Social Organizations of Kilis Armenians

The educational and cultural re-awakening of all the Armenian communities of the Ottoman Empire in the second half of the nineteenth century gave way to a revival of Armenian national-eth-

nic self-consciousness and political awareness. The feeling and the pride of national-ethnic identity resulted in the urge to attain political self-determination. The means to get to that point were the necessity to form and to create political associations and organizations.

The first steps in that direction were taken in the recently created National-ethnic schools, especially during the young adults evening classes, under the leadership of progressively inclined teachers Berj Momjian and Sumpat Ghazelian.

Thus the Hunchakian Youth Association was born, which became formally a branch of the Hunchakian (Social Democrat) party in Kilis, on the initiative of Dr. Enfiyajian, Hagop Basmajian, Sumpat Ghazelian and all the members of the Soulthan Chaprastian family in 1890 AD. In the creation of that political organization some factors played a decisive influence:

First, the close and permanent relations of Kilis Armenians with Zeythoun. National progressive leaders from Zeythoun, Aghassi and Muleh often visited Kilis. Kilis-tsy young volunteers, led by Avedis Ohanian took part in the heroic uprising of Zeythoun in the 1890-ies.

Besides, Kilis had been during those years the center for transferring correspondence, arms, and ammunitions from the port city of Alexandretta to Zeythoun and from Zeythoun. It is related that a Kilis Armenian activist went to Alexandretta by foot for fifteen days, having in his shoes a sensitive letter to deliver.

Two of the twenty Hunchakian patriots hung in Constantinople in June 1915 were the Kills-tsies Hagop Basmajian and Tovmas Tovmassian.

Besides the Hunchakian party organization, they had in Kilis a restricted formation of "Tashnaktsoutioun" (Armenian Revolutionary Federation).

No "Ramgavar" group existed, as the party was founded in October 1921.

The A.G.B.U. (Armenian General Benevolent Union) "Parekordzagan" had its chapter created in Kilis for the first time on July 1-st 1911. On November 24, 1912 a new leadership of the chap-

ter was elected. During the Genocide (deportation) years, 1915-1918 it is clear that there was no activity. But in 1919, when the surviving Kilis-tsies began to come back home, the center of the A.G.B.U. sent humanitarian assistance through the Aleppo chapter. The Kilis chapter had a membership of about 100 people. With the "evacuation" of Cilicia in 1921, the chapter ends its activity.

Kilis Armenians During the 1895-1896 Hamidian Massacres and the 1909-Adana- (Cilicia) Massacres

The massacres of Armenians in almost all Armenian populated cities and towns of the Ottoman Empire, as a means on the way of implementing the realization of the Pan-Touranist scheme were in fact the beginning of the Genocide of the Armenian Nation. It started in Constantinople in autumn of the year 1895 and spread in the following months into all parts of the Empire.

It was in 1896 that the Cilician Armenians have been struck. In Kilis the massacres began on March 8, 1896. First, the killer mobs attacked all the Armenians who were present in the bazaar and soon after they took the direction of the Armenian Church, encircled the church and school building, attacking the students and the teachers... The teachers H. Berberian and S. Ghazelian give eyewitness accounts of the events.

Other Armenians were attacked and killed on the streets and in the neighboring vineyards. In all, 75 Armenians were killed, others injured.

A list of the names of the martyrs is given in this book.

European consuls arrived from Aleppo to investigate and they encouraged the Armenians to ask for reparations... From whom? It was nonsense. Instead, after the consuls left, Armenian notables were

arrested as “instigators of trouble”.

That was not all. Future massacres were in the making. The Pan-Touranist “Ittihad” party had seized the power in Constantinople, in 1908, under the slogans of “Justice, Brotherhood and Equality” for all Ottoman subjects, Moslems and Christians... But, soon after, in April 1909, widespread barbaric massacre were organized in Adana and all around the other cities of Cilicia. That was the second wave of the Genocide of the Armenian Nation, in pursuance of the Pan-Touranist utopian scheme.

Fortunately no massacres took place in Kilis this time. Analysis of the factors leading to that end is given and discussed by eyewitness intellectuals of that historic period.

Kilis Armenians During The Genocide Years 1915-1918

World War I flared up in 1914. Turkey was in war. For the “Young Turks”-Ittihad government of Turkey that was the best moment to give a “final-solution” to the Armenian Question. Deportations, atrocities, killings, massacres began under to cover of the “war situation”.

North Syrian steppes and deserts between Aleppo and Der-el-Zor became routes to hell and death camps.

The deportation of the Kilis Armenians began in June 1915; most of them were deported towards Der-el-Zor, some families were fortunate to be sent toward central and southern Syria, or Jordan.

Families having close relatives in Aleppo remained in Aleppo. Those skilled artisans, specialists whom the Turks needed very much for their services, were kept in Kilis. After the war it was estimated that about 300 Kilis Armenian families, around 1500 people perished- were missing, killed, lost or starved.

Kilis Armenians During the Years 1919-1921

The war ended, Turkey was defeated, and a cease-fire agreement was signed on October 30, 1918 in Mudros. Victorious allied forces, under the command of General Allenby entered northern Syria and Cilicia, including Kilis. Survivors of the Genocide return home. Reorganization of the national community life is urgent.

A "National Union" organization is created, with representations of Apostolic, Protestant and Catholic communities of Kilis Armenians. Churches, a "national school", an orphanage and a "widows shelter" are opened.

Along with allied forces, volunteers of the Armenian Legion enter Cilicia and Kilis. Here is a list of the Kilis-tsy volunteers of the Armenian Legion:

Dr. Haigazoun Nalbandian (killed in action), Sarkis Zughchanian, Kevork Ouzoun-Sarkissian, Haroutune Apikian, Dikran Guirunian, Thoros Kelloghlian, Nerses Fourounjian, Dikran Aboulafian, Krikor Megerian, Gevoush Tatarian, Iskender Bairamian, Nishan Krikorian, Kevork Aintablian and Gioullu...

Sudden changes occur on the international political horizon: Bolshevik revolution in Russia, new Russian-Turkish and French-Turkish diplomatic relations.

Kemalist Turkish National Movement rises and French-Turkish negotiations begin (with Mustafa Kemal) in view of abandoning Cilicia and the Armenians to the nationalist new Turkey of Kemal.

In the first months of 1921, Kemalist militiamen "cheteh"s intrusions in Kilis begin. Self-defense battles against Kemalists began in Aintab. Relocation of all Kilis Armenians in the Christian-Armenian sector of the city, around St. John cathedral was effected.

A self-defense organization is created in Kilis; barricades are set up between Armenian and Turkish sectors.

Self-defense fighters are in control of the barricades and the main critical points between the opposite sectors.

Self-defense guards arrest kemalist “cheteh”s . They have Russian “Mossin” rifles and pockets full of Russians ruble gold pieces.

Zeythoun Armenian refugees arrive near Kilis, self-defense fighters from Kilis go to their rescue and bring them into the Armenian Church, after pursuing the fleeing Kemalist “cheteh”s.

Armenian families are already leaving Kilis for Aleppo. An Agreement is signed in Ankara between France and Kemalist Turkey on October 20,1921. France is abandoning Cilicia and the Armenians for the sake of safeguarding France’s economic interests in Kemalist Turkey. The exodus of all Kilis Armenians ends in the first months of 1922.

They go to fill up the ranks of the new Armenian Diaspora.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

- Ալիշան, Հ. Ղ., – Սիսուևան, վենետիկ, 1885:
- Աճառեան Հ. Ա., – Հայոց Լեզուի Պատմութիւն, հատոր 2, Երևան, 1951:
- Աճառեան Հ. Ա., – Հայ Բարբառագիտութիւն, Էմինեան Ազգագրական Ժողովածու, Մոսկուա–Նոր Նախիջևան, 1911:
- Աճառեան Հ. Ա., – Արմատական Բառարան, հատոր 2, Երևան, 1973:
- Անտոնեան Ա., – Մեծ Ոճիրը, Պոսթըն, 1921, (վերահրատարակուած) Երևան, 1990 թ.:
- Ակադեմիա, ՍՍՀ, Պատմութեան Ինստիտուտ, – Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր 3, Երևան, 1976:
- Չուրախեան Մ. Կ., – Ճալալիների Շարժումը և Հայ Ժողովրդի Վիճակը Օսմանեան Կայսրութեան մէջ 16–17–րդ դ.դ., Երևան, 1966:
- Թորոսյան Շ. Թ., – Կիլիկիայի Հայերի Ազգային Ազատագրական Շարժումները 1919–1920 թթ., Երևան, 1987:
- Համառոտ Հայկական Հանրագիտարան, – 1–3, Երևան, 1990, 1995, 1999:
- Հայ Դատի Հանրագիտարան, – Երևան, 1996:
- Կիրակոսեան Ջ., – Առաջին Համաշխարհային Պատերազմը և Արևմտահայութիւնը, Երևան, 1965:
- Կիրակոսեան Ջ., – Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ, Երևան, 1982:
- Ղարիբեան Ա., – Հայերէնի Նորայայտ Բարբառների Մի Նոր Խումբ, Երևան, 1958:
- Նապիկեան Գ. Ա., – Արևմտահայ Մանկավարժական

- Միտքն ու Դպրոցը Երևան, 1969:*
- Պայրամեան Ա. Ա., – Ալեքսանտրէթի Սանճաքի Հարցը
և Միջազգային Դիւանագիտութիւնը
1918-1939 թթ., Անթիլիաս, 1999:
- Պէրպլէրեան, Հ. և Ներսէսեան Խ. Ա. քահանայ, – Յուշա-
մատեան Քիլիսի Հայոց, Պէյրութ, 1969:
- Սահակեան Ռ. Գ., – Թուրք-Ֆրանսիական Յարաբերու-
թիւնները և Կիլիկիան 1919-1921 թթ.,
Երևան 1970:
- Սահակեան Ռ. Գ., – Սովետ-թուրքական Յարաբերու-
թիւնների Պատմութեան Հակադիտա-
կան Լուսաբանումը Ժամանակակից
Թուրք Պատմագրութեան Մէջ, Երևան,
1964:
- Վարժապետեան Ս., – Հայերը Լիբանանի Մէջ, Պէյրութ,
1956.
- Տէր Ղապարեան Յ., – Հայկական Կիլիկիա, Անթիլիաս,
1966.
- Փափապեան Ա., – Յեղասպանութիւն և Գոյատևման
Պայքար, Երևան, 2000:
- Տրնապետեան Պ. – *Զայն Տառապելոց, Փարիզ 1922:*
Dédéyan, G., – Histoire des Arméniens, Toulouse, 1982.
Thorossian H., – Histoire de l'Arménie et du Peuple
Arménien, Paris, 1957.
- Mutafian C., – La Cilicie au Carrefour des Empires, Tomes 1,**
2, Paris, 1988.
- Torigian, Sh., – The Armenian Question and International Law,*
Beyrouth, 1973.
- Véou, Paul du, – La Passion de la Cilicie 1919-1922, Paris,*
1954.
- V. V., – Pour Mieux Connaître les Arméniens du Liban et de la**
Syrie, Beyrouth, 1931.

FAIEZ EL_GHOCÉIN, — Les Massacres en Arménie Turque, Bombay, 1916—Traduit de l'Arabe par A. EL-G, 1917, Nouvelle Edition, Beyrouth, 1965.

* * *

Որպէս վաւերագրական սկզբնաղբիւր, գրքիս մէջ օգտագործուած են՝

1. Տոմար քիլիսի Հայոց Սբ. Յովհաննէս Եկեղեցւոյ, — 19-րդ դարի սկիզբէն մինչև 1922 թուականը:
(Տոմարը ի պահ դրուած է Հալէպի (Բերիոյ) Թեմի Առաջնորդարանի Արխիւններուն մէջ):
2. Աղբիւրագիտական «Յուշամատեան Քիլիսի Հայոց» երկասիրութեան մէջ ընդգրկուած «Յուշերը» Հ. Պէրպէրեանի և Ս. Ղազէլեանի, նաև՝
3. Ա. Ա. Պայրամեանի 1919-1922 թթ. անձնական Յուշերը:

* * *

Հայկական Համառօտ Հանրագիտարանի Յարգելի Խմբագրութեան, Երեւան

Ներքոստորագրեալս՝ Ալիշան Աւետիսի Պայրամեան, նախկին գիտաշխատակից Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի, հեղինակ՝ նոյն ինստիտուտի կողմէ 1998-ին հրատարակուած «Ալեքսանտրէթի Սանճաքի Հարցը եւ Միջսպգային Դիւանագիտութիւնը 1936-1939 թթ.» ուսումնասիրութեան (Արաբերէն թարգմանութեամբ լոյս տեսած 1993-ին, Դամասկոս) եւ Արեւմտահայերէն հրատարակուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կողմէ 1999-ին (Անթիլիաս), պիտի ուզէի խնդրանքս ներկայացուցած ըլլալ Արեւելագիտութեան Ինստիտուտի Տնօրէն, Դոկտոր, Պրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսեանի ձեռամբ:

Խնդրանքս հետեւեալն է: Կիլիկիոյ Բիլիս քաղաքը ծնընդավայրս է: Դժբախտաբար, Քիլիս քաղաքի եւ Քիլիսի Հայութեան մասին ո՛չ մէկ յիշատակում գոյութիւն ունի «Հայկական Սովետական Հանրագիտարանին» մէջ:

Ահա թէ ինչու պիտի խնդրէի յաւերժ մոռացութենէ փրկել Կիլիկիոյ այդ փոքր քաղաքի Հայութեան անցեալը եւ իմ կողմէս պատրաստուած «Բիլիս» բառ-յօդուածը ընդգրկել մեր «Հայկական Համառօտ Հանրագիտարան»ի 4-րդ, վերջին հատորի ծրագրուող, պատրաստուող նիւթերուն մէջ:

Նամակիս կը կցեմ «Քիլիս» բառ-յօդուածը և երկու լուսանկար (Քիլիսի եկեղեցին եւ Քիլիս քաղաքի համայնապատկերը):

Կանխայայտ շնորհակալութեամբ,
Յարգանօք,

Մարտ, 2000 թ.

Los Angeles

Ալիշան Ա. Պայրամեան

ՔԻԼԻՍ

Քիլիս (*Ciliza*—Կիլիզա), քաղաք դաշտային Կիլիկիայում, Ալնիթապից հարավ, Թուրքիա—Սիրիա սահմանադժին վրա, Հալեպից 62 կմ. ուղիղ գծով հյուսիս: Բաղդադի երկաթգիծը Քիլիս գաւառի միջով է անցնում:

Գավառը, շուրջ 11 000 քառ. կմ. տարածութեամբ, բլրոտ է հյուսիսային և արևմտյան կողմերը. արևելյան և հարավային մասերը՝ անծայրածիր դաշտեր ծածկուած այգեստաններով եւ ձիթաստաններով:

Քիլիսը առաջին անգամ հիշատակված է 985 թ., երբ բյուզանդացի զորավար Բարդաս Ֆոկասը գրավում է Քիլիսը (*Ciliza*): Քիլիսի շրջակա հայաբնակ գլխավոր ավան—վանքերը եղած են հետևյալները՝

Իլեպի, արևելյան կողմը, այժմ լրիվ ավերակ.

Կուռիս (*Cyrrhos*), արևմտյան կողմը, այժմ թրքաբնակ՝ Շէյխ—Խորոզ.

Մարաթա (Առակագիր վարդան Այգեկցիի ծննդավայրը), հարավային կողմը՝ այժմ քրդաբնակ:

Քիլիսի Սբ. Հովհաննես եկեղեցիին տեղը նախապես գոյություն ունեցած է գետնափոր Սբ. Հովհաննես վանք—դպրատուն—գրչատուն: Այդ վանքի վարդապետներից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի աթոռին բազմած են Հովհաննես Գ. Կաթողիկոս Քիլիսցի—Կայծակն (1525—1539) և Մահակ Ա. Կաթողիկոս Քիլիսցի Մեյխանեճյան (1674—1686):

Խաչակիրների օրով Քիլիսը մտել է Անտիոքի պրենցության, այնուհետև՝ Եդեսիայի դքսության սահմանների մէջ:

Վերջապես Քիլիսին տիրել է Ֆրանկ ասպետ Ժան—Պոլը, որը մահմետականանալով դարձել է ձան—Պոլատ մենատեր

իշխանը քաղաքին: Նրա սերունդը ժառանգաբար հարատևում է մինչև օրս, տարածվելով մինչև Լիբանանի ձախարթ տոհմը:

Օսմանյան շրջանից սկսած՝ Քիլիսի գավառը (Կազան) մաս կազմած է Հալեպի նահանգի (Վիլայեթի):

1908-ի վիճակագրության համաձայն Քիլիսի բնակչությունը եղած է 28 000-30 000 մարդ: Քիլիսի Հայոց եկեղեցվոց Տոմարական արձանագրությանց համաձայն Քիլիսի մեջ եղել է միայն Հայ Առաքելական 1 050 ընտանիք: Նաև եղել է 50-60 ընտանիք Հայ Կաթողիկե, 50-60 ընտանիք Հայ Բողոքական:

Բացի Հայերից ու Թուրքերից Քիլիսի մեջ ու շրջակայքում ապրել են Հույներ, Արաբներ, Քրդեր, Հրեաներ, Թյուրքմեններ և այլն: Քաղաքի հարավային կողմի բնակչությունը եղած է արաբախօս:

Քիլիսի Հայերը զբաղվում էին արհեստներով-ոսկերչուցություն, երկաթագործություն, պղնձագործություն, կահագործություն, մեքենագործություն, դերձակություն, կոշկակարություն և այլն, նաև՝ առևտուրով: Հատկանշական է, որ Քիլիսի բոլոր արհեստները Հայերի ձեռքում էին: Քիլիսի ամեն մի ընտանիք ուներ քաղաքամերձ փոքր կամ մեծ այգեստան-խաղողի այգի:

Քիլիսի Հայոց մայր եկեղեցին՝ Սուրբ Հովհաննես կառուցված է նախկին գետնափոր վանքին տեղը 1856-ից մինչև 1972 Պոլսեցի Հակոբ Խալֆե ճարտարապետի կողմից: Օծումը կատարված է 1873-ին, Մկրտիչ եպիսկոպոս Վեհապետյանի կողմից:

Հայ Կաթողիկեները և Հայ Բողոքականները նոյնպես ունեին քարաշեն եկեղեցիներ: Կար նաև Հունաց եկեղեցի և Հրեաների տաճար:

Հայերը ունեցած են մի քանի նախակրթարաններ և վերջին տարիները Միացյալ Ազգային Վարժարանը, որի շրջանավարտները իրենց ուսումը շարունակում էին Այն-

Թապի Կեդրոնական Թուրքիո (Ամերիկյան) Գոլենճը և Հալե-
պի Նահանգային Վարժապետանոցում (Տար ու Մուսլիմին):

Հայ Կաթողիկէները և Հայ Բողոքականները ևս ունենին
իրենց նախակրթարանները՝ իրենց եկեղեցվո կից:

Քիլիսի մեջ նախաեղեռնյան տարիներին գործած են
հետևյալ մշակութային ընկերությունները՝ Արուսյակյան
Ընկերություն, Լևոնյան Դպրոցասիրաց Ընկերություն և
Հայկազյան Ընկերություն:

1911-ին ստեղծված է Հ.Բ.Ը.Մ. -ի Քիլիսի մասնաճյուղ:

1900 թվից սկսած Քիլիսի մեջ գործած է Հնչակյան
Երիտասարդական Կազմակերպություն:

Քիլիսի Հայերը բռնի տեղահանվեցին 1915 թ. Մա-
լիս-Հունիս ամիսներին դեպի Հալեպ, Այնտեղից Տէր Զոր և
Սիրայի հարավային կողմերը:

Եղեռնից վերապրողները, 1918 թ. վերջերից սկսած
վերադարձան Քիլիս: Ժողովուրդը անցավ վերաշինության
աշխատանքներին: Կազմվեց «Ազգային Միություն»՝ Հայ
Առաքելական, Հայ Կաթողիկէ և Հայ Բողոքական համայնք-
ների գործակցությամբ: Եկեղեցիները, դպրոցները վերաբաց-
վեցին:

Երկար չտևեց այդ խաղաղ վիճակը և դրությունը
վատացավ, երբ Քեմալական հրոսակները (չեթե) Քիլիս
հասան: Տիրեց նոր ջարդերի սպառնալիք և սարսափ:

Հարևան Այնթապի ինքնապաշտպանության կռիվների
սկսելուն զուգահեռ (1920 Ապրիլին) Քիլիսի մեջ Հայ երիտա-
սարդները, նախկին զինվորականների ղեկավարությամբ
դիմեցին ինքնապաշտպանության միջոցառումների-տու-
ների, թաղերի մեջ դիրքեր, պատնէշներ շինվեցին, խմբեր
կազմվեցին, խմբապետներ նշանակվեցին:

Երբ 1921 Հոկտեմբերին Ֆրանս-թրքական Անկարայի
պայմանագրով Ֆրանսիան որոշեց լքել Կիլիկիան և Կիլի-
կիայի Հայությունը, Քիլիսի Հայերը նույնպես ստիպվեցին

բունել երկրորդ անգամ արտագաղթի ճամբան, դեպի Հալեպ ու ավելի հեռուները:

1922 թ. առաջին ամիսներին արդեն ո՛չ մեկ հայ չէր մնացել Քիլիսի մեջ:

1925-ին քեմալական իշխանությունները ուժանակով պայթեցրին—քանդեցին Քիլիսի Սբ. Հովհաննես եկեղեցվո հոյակապ շենքը, որը տիրականորեն իշխում էր քաղաքի ու շրջակայքի համայնապատկերի վրա, ցանկանալով ջնջել հայության ամեն մի հետք Քիլիսի վրայից:

Ալիշան Աւետիսի Պայրամյան

Գրականություն.—

1.— Յուշամատեան Քիլիսի Հայոց, Պէյրուս 1969:

2.— Ռ. Գ. Սահակյան, — Թուրք-Ֆրանսիական հարաբե-
րությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան 1970:

3.— Claude Mutafian, — La Cilicie au Carrefour des Empires,
Tome I, Paris 1988:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախաբան	7
Ա. Ներածություն, – Կիլիկիա, Պատմա-քաղաքական ակնարկ, հին դարերէն մինչև 1922 թ.	11
Բ. Կիլիկա (CILIZA) – Քիլիս տեղանունան ծագման մասին վարկածներ	25
Գ. Կիլիկա - Քիլիսի Միջնագարեան Սուրբ Յովհաննէս Վանք-Գրչատուն-Դպրատունը և 1873-ին օծուած նոր Սբ. Յովհաննէս Տաճարը...	33
Դ. Քիլիսի Հայոց Կրթա-Մշակութային Կեանքը և Կրթա-Մշակութային Կեանքի Երախտաւորները	43
Ե. Հայոց Առաջատար Դերը Քիլիս Քաղաքի Կեանքին Մէջ	123
Զ. Քիլիսի Հայոց Խօսակցական լեզուն	141
Է. Քիլիսի Հայոց Հասարակական-Քաղաքական Կազմակերպութիւնները	162
Ը. Քիլիսի Հայութիւնը 1895-96 թթ. և 1909 թ. Ատանայի (Կիլիկիոյ) Կոտորածներու Օրերուն...	181
Թ. Քիլիսի Հայութիւնը 1915-1918 Եղեռնի Տարիներուն	202
Ժ. Քիլիսի Հայութիւնը Յետ-Եղեռնեան՝ 1918-1921 Տարիներուն և Արտագաղթ	210
Summary – Ամփոփում (Անգլերէն)	243
Օգտագործուած աղբիւրներ	258
«Հայկական Համառօտ Հանրագիտարան»ի Խմբագրութեան, Երևան, ուղարկուած նամակի և «Քիլիս» բառ-յօդուածի պատճէն	261

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՄԱՍԻՆ

ՊԱՅՐԱՄԵԱՆ ԱԼԻՇԱՆ, ՈՐԴԻ ԱԵՏԵՏԻՍԻ

Ծնեալ 1914-ին, Քիլիս (Կիլիկիա):
Կրթություն՝ Նախնական եւ Գոլէճա-
կան-Հալէպ, Բարձրագոյն՝ Պէյրութ, Եւրո-
պա, Հայաստան:

Ունի յիսուն եւ աւելի տարիներու
մանկավարժական-գիտահետազոտական
աշխատանքի փաստակ՝ սկսած Հալէպէն
եւ մինչեւ Լիբանան, Պաղեստին, Հայաս-
տան, Ֆրանսա, Ամերիկա:



1946-էն 1972՝ Հայաստան, Երեւանի
Օտար Լեզուներու Պետական Մանկավար-
ժական Ինստիտուտ եւ Երեւանի Պետական Համալսարան՝ Ֆրանսե-
րէնի եւ անգլերէնի պրոֆէսոր:

Հայաստանի Գիտություններու Ակադեմիայի Արեւելագիտութեան
Ինստիտուտի Գիտահետազոտական աշխատակից:

Հեղինակ է Ֆրանսերէն եւ անգլերէն լեզուագիտական ուսումնա-
սիրութիւններու եւ ուսումնական ձեռնարկներու: Նաեւ՝ «Ալեքսան-
տըրէթի Սանճաքի Հարցը եւ Միջպագային Դիւանագիտութիւնը
1936-1939 թթ.» մենագրութեան:

Լոյս տեսած են սոյն մենագրութեան՝

– Արաբերէն թարգմանութիւնը, 1993, Դամասկոս:

– Արեւելահայերէն բնագիրը, Երեւան-Ակադեմիա, 1998:

– Արեւմտահայերէն վերամշակուած եւ բարելաւուած հրատա-
րակութիւնը, 1999, Անթիլիաս:

Անտիպ են՝

– Ժամանակակից Սուրիոյ Պատմութեան Ուրուագծեր-երկու
հատոր:

– Լեզուագիտական-մեթոտական ուսումնասիրութիւններ:

1973-ին հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ:

Այժմ կը բնակի Կլիւտլէյլ, Բալիֆորնիա:

ԱԼԻՇԱՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ
ԿԻԼԻՋԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԻԼԻՍ
Պատմական Ուրուագիծ

Հրատարակչության գլխ. տնօրեն՝ ՍՈՎՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնօրեն՝ ՍԱՇԱ ՄԱՍՏԱԿԱՆՅԱՆ

Համակարգչային շարվածքը
և նկարների ձևավորումը՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆԻ
Սրբագրիչ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 16,75 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 600
Գինը՝ պայմանագրային

«Չանգակ-97» հրատարակչություն
Երևան 375010, Վարդանանց փակուղի 8
Հեռ. 54-89-32: E-mail: zangak@arminco.com

•Չանգակ-97• հրատ. տպարան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0067096

A $\bar{\pi}$
86224

